

ԹԱՐ ՃՐՁԱՆ.

II ՏԵ՛Ր



ԴՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՏԵԿԱՆ ԵԽ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 7

ՅՈՒՆԻՉՈ

1902

—••••—

ԹԻ ՖԼԻՇ

Տիպոգրաֆія Груз. Издат. Т—ва. | Տպարան. Կրտսեր Հրատ. Ընկերութեան.
1902

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 7

| | Երևան |
|---|-------|
| 1. ԱՆՁՈՒԳԱԿԱՆԸ, պատմուածք Լեօփ | 5 |
| 2. ԱՍՏՂԵՐ ՇՈՂՈՒՆ, բանաստ. Նեկրասովի, թարգմ. Ալ. Շատուրեանի | 84 |
| 3. ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բօրդօփ, թարգման. Հ. Առաքելեանի | 86 |
| 4. ԵՍ ՈՐ ՄԵՌՆԻՄ... բանաստեղծութիւն Աւ. Իսահակեանի | 144 |
| 5. ԶՀՈՒԻ-ՔՈՒՇԱՆ, վէպ Շահրիարի | 147 |
| 6. ԱԻՍՉ ԵՒ ԱՍՏՂԵՐ, բանաստ. Ֆրուզի, թարգմ. Յակոբեանի | 173 |
| 7. ՆՈՐ-ԶՈՒՂԱՑԻ ԿՊՐՈՅՆԵՐԸ, Տիգրան Աբգաւրեանցի . . | 174 |
| 8. ԱՂԹԱՄԱՐ, Նկարագրութիւն | 181 |
| 9. ՑՆՈՐՔՆԵՐ ԵՒ ԵՐԱԶՆԵՐ, պատմուածք Օ. Շրէյնլիփ, թարգմ. Յ. Տ.-Դ. | 188 |
| 10. ՍՏ. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ | 193 |
| 11. ԵԵՐՈՊԱՑԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՓՈՅՑ ՎԻՃԱԿԱ-ԳՐՈՒԹԻՒՆԸ | 202 |
| 12. ՀԵՆՐԻԿ ԻԲՍԵՆ, յօդ. Վ. Նալբանդեանի | 204 |
| 13. ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ. — (23) Ս. Ս. «Բնագիտական զրոյցներ», Ա. Ս. — (24) Լ. Հ. «Թա. Նազարեանց», Լ. Ս. — (25) Բժ. Ա. Բուզուզեան, «Երիտասարդութիւն և Ծերութիւն» Բն. 26) Գ. Շերենց, «Երբավարեր», Խ. | 217 |
| 14. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Մեր զրական զործիշների և հասո-րակութեան մէջ փոխադարձ դժգոհութիւնը. — Ովէ ար-դարը և ով մեղաւորը. — Գրականութեան և հասարա-կութեան փոխադարձ կախումը. — Խոնչ է պահանջնում ժամանակակից. — պայմաններում իր կոչման բարձրու-թեան վրայ կանգնած մի օրգան հրատարակելու հա-մար. — Անզօր գանգատներ և կաղմակերպուած գործու-նէութիւն՝ զրած նպատակին հասնելու համար. Լ. Ս. + Քանդակողործ Մ. Անտովօլսկի. — Դ. Պ. Նանօվակի. — Զեմս-տվօների կողմից անշարժ կավերի վիճակագրութիւնը կաղմելու հարցը. — Մուրհակների մասին նոր կանոնա-դրութիւն. — Ամուսնութիւնից գորս ծնուած զաւակների իրաւունքները. — Գիւղատնու, բարտքմ. համար կաղմած նուանձին խորհրդակցութեան որոշումները | 220 |
| | 228 |

Դար Հրաշման Առարի

Հրատ. XIV առարի

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՏԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 7

ՅՈՒԼԻՅՈ

1902



ԹԻՖԼԻՍ

Տիպոգրաֆія Груз. Издат. Т—ва. | Տպարան Վրաց Հրատ. Ընկերութեան,
1902

Дозволено цензурою. Тифлисъ, 31 июля 1902 года.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 7

| | Երես |
|--|------|
| 1. ԱՆՁՈՒԹԱԿԱՆԸ, պատմուածք Լեօի . | 5 |
| 2. ԱՍՏՂԵՐ ՇՈՂՈՒՆ, բանաստ. Նեկրասովի, թարգմ. | |
| Ա. Ծատուրեանի . | 84 |
| 3. ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բօրդոի, թարգման. | |
| Հ. Առաքելեանի . | 86 |
| 4. ԵՍ ՈՐ ՄԵՌՆԻՄ... բանաստեղծութիւն Ա. Խահակեանի | 144 |
| 5. ԶՀՈՒԴ-ՔՈՒՇԱՆ, վէպ Շահրիարի . | 147 |
| 6. ԱԻՍԶ ԵՒ ԱՍՏՂԵՐ, բանաստ. Ֆրուգի, թարգմ. | |
| Յ. Յակոբեանի . | 173 |
| 7. ՆՈՐ-ԶՈՒԳԱՅԻ ԴՊՐՈՑՆԵՐԸ, Տիգրան Արքարեանցի . | 174 |
| 8. ԱՂԹԱՄԱՐ, նկարագրութիւն . | 181 |
| 9. ՑՆՈՐԲՆԵՐ ԵՒ ԵՐԱԶՆԵՐ, պատմուածք Օ. Շրեյների, | |
| թարգմ. Յ. Տ. Դ. . | 188 |
| 10. ՍՏ. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ . | 193 |
| 11. ԵԵՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄՍՈՒՈՏ ՎԻՃԱԿԱ- | |
| ԳՐՈՒԹԻՒՆԸ . | 202 |
| 12. ՀԵՆՐԻԿ ԻԲՍԵՆ, յօդ. Վ. Նալբանդեանի . | 204 |
| 13. ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ. — (23) Ս. Ս. «ԲՆԱԳԻՄՈՒԱԿԱՆ ՎՐՈՎԳՆԵՐ», | |
| 1. Ս.—24) Լ. Օ. «ՍՊ. ՆԱԳԱՐԵԱՆց», 1. Ս.—25) ԲԺ. Ա. | |
| Բուշուզեան, «ՍՐԻՄԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ և ԾԵՐՈՒԹԻՒՆ» ԲԱ. | |
| 26) Գ. Շերենց, «ՍՐԻՄԱՎԱՅՐԵՐ», X. . | 217 |
| 14. ՆԵՐԲԻՆ ՏԵՍԱՌԻԹԻՒՆ. — Մեր գրական գործիչների և հասա- | |
| րակութեան մէջ փոխադարձ դժողովութիւնը. — Ո՞վէ ար- | |
| դարը և ով՝ մեղաստորը. — Գրականութեան և հասարա- | |
| կութեան փոխադարձ կախումը. — Ի՞նչ է պահանջւում | |
| ժամանակակից պայմաններում իր կոչման բարձրու- | |
| թեան վրայ կանգնած մի օրգան հրատարակելու հա- | |
| մար. — Անզօր զանգատներ և կազմակերպուած գործու- | |
| նէութիւն՝ զրած նպատակին հասնելու համար. 1. Ս. | 220 |
| † Քանդակագործ Մ. Անտոկոլսկի. — † Կ. Պ. Եանօվսկի. — Զեմս- | |
| տվօների կողմից անշարժ կայքերի վիճակագրութիւնը | |
| կաղմելու հարցը. — Մուրհակների մասին նոր կանոնա- | |
| դրութիւն. — Ամուսնութիւնից զուր ծնուած զաւակների | |
| իրաւունքները. — Գիշառնուտ. բարոքմ. համար կազմած | |
| Առանձին խորհրդակցութեան որոշումները . | 228 |

| |
|--|
| 15. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Եռապետիան դաշնակցութեան վերանորոգումը. — Ֆոխաղարձ ասպահվագրութեան սփո- տեմը Նորապայում. — Գաշնակցութիւններ և բարեկամա- կան համաձայնութիւններ. — Անզլիալի գաշնակիցնե- րը. — Անզլիալի զապուած զերակառարութիւնը Արեւել- եան հարցում. — Երոպական հասարակական կարծիքի մէջ առաջ եկած փոփոխութիւնը. — Մակեդոնական հար- ցը. — Բրիտանէլում կայացած հայասէրների կօնդրէսը. — Օրմաննեան պատ. հրաժարականը: Ա. Ա. 234 |
| Պ օ լ ս ի թ ե ր թ ե ր ի ց. Սաի ժառանգաւորաց դպրոցը. — Կիլիկիալի կաթողիկոսական հարցը 244 |
| 15. † ԱՐՍԵՆ ԱՐՓԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՏԸՆԵԱՆ 246 |
| 16. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 248 |
| 17. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄՄԻՑ 254 |
| 18. ՑԱՅՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 255 |
| 19. ՑԱՒԵԼՈՒԱԾ «ՕՐԱՄՈՒՏԻՆ», վեպ Ի. Ա. Տուրգենեվի. 113—128 |

ԱՆՁՈՒ ԳԱԿԱՆԸ

I

Երկաթուղու մի երկրորդական կայարանից սկսւում
էր պօստային հասարակ ճանապարհը, որ ունէր մօտ
70 վերստ երկարութիւն և նոյն իսկ պաշտօնական
գրադրութիւնների մէջ ստացել էր «խուլ» անունը:

Շատ արդարացի էր այդ անունը: Եթէ ճանա-
պարհները մի երկրի զարկերակներն են, ապա ուրեմն
սակաւարիւն ու մեռած բան էր այս երկիրը, այնքան
չնշին ու աննկատելի էր նրա զարկերակը...

Աշնան կէսից մինչեւ գարնան սկիզբը երթեւե-
կութիւնը համարեա բոլորովին դադարում էր ձիւների
և ցեխերի պատճառով. միայն արքունական պօստն էր,
որ շաբաթը մի անդամ, նշանակած օրը, գնում էր եր-
կաթուղու կայարանը և վերադառնում էր ձիերի վրայ
բարձած: Իսկ երբ գարնանային արեւը չօրացնում էր
հողը, այն ժամանակ իջեւանից իջեւան էին գնում
կանաչ դոյնով ներկած նահապետական եռածի սայլակ-
ները, որոնք իրանց անիւներով ակօսում էին լեռնային
ճանապարհի ելեէջները:

Հին, սեւացած իջեւանների մօտ գտնուող գիւղե-
րը, չը նայած որ ճանապարհը գոյութիւն ունէր շատ
վաղուց, մի առանձին հետաքրքրութեամբ էին վերա-
բերում այդ կանաչ արկղերին. ամեն անդամ, երբ ա-
նիւները որոտում էին քարքարոտ ճանապարհին, դուրս

Էին վազում հետաքրքրուղներ և իմանում էին թէ
այդ ով է, որ ճանապարհորդում է սայլակով։ Մի-
այն մի անգամ—հինդ թէ վեց տարի էր անցել այժմ
այդ ժամանակից—կանաչ սայլակների տեղ երեւան ե-
կան գեղեցիկ, փափուկ կառքեր։ Նահանգապետը այցե-
լութեան էր եկել, իջեւանները սպիտակեցրել էին այդ
առիթով, ճանապարհի վտանգաւոր տեղերը կարգի էին
բերել։ Դա մի չը տեսնուած երեւյթ էր և ճանա-
պարհի վրայ ապրող ժողովուրդը սկսեց ժամանակը
հաշուել «նահանգապետի եկած տարուց»։

Յունիսեան մի պարզ ու սիրուն օր յայտնի դար-
ձաւ որ կրկնւում է նոյն անսովոր երեւոյթը։ Ճանա-
պարհով գնում էր մեծ ֆուրգօն, որ չափից դուրս
մեծ բեռն ունէր։ Նրա վրայ նստած երեք տղամարդիկ
—մի խոհարար և երկու ծառայ—պատմում էին թէ
ով է գալիս, և իջեւաններից լուրը անցնում էր հարե-
ւան բոլոր գիւղերը։

Պատմում էին մի աներեւակայելի հարստութեան
մասին, որ պիտի անցնէր այս ճանապարհով։ Դա մի
մարդ է, աշխարհի առաջին մարդը, որի հետ է և ըն-
տանիքը։ Խնշու է գալիս։ Այստեղ պատմութիւնները
առասպելական չափեր էին ընդունում։ Գալիս է, ա-
սում էին, լաւութիւններ անելու։ Նա այդպէս է, խեղ-
ճերի մասին է մտածում և շատ առատ ձեռք ունի։

Մի գիւղում այնքան զարմանալի բաներ պատմե-
ցին, որ տիրացուն պարտք համարեց գիւղը բաց անել,
որպէս զի իմանայ թէ ինչ կը լինի, դուցէ եկողը նեռն
է։ Քահանան, խրախուսուելով գրբացի բարեյաջող
գուշակութիւնից, պատրաստուեց փիլոնով գնալ մեծ
մարդու առաջը և բարեխօսել...

Երեք օրից յետոյ երևացին կառքերը։

—Աստուած, սրանց էլ ես հողից չինել, բացական-
չեց պօստային իջևանի մեր վերակացուն, երբ կառքե-
րը ներս մտան պարսպապատ մեծ բագը։

Երեք մաքուր պսպղուն կառքեր։ Թէև անդորրութիւն

Էր տիրում ճանապարհի ամբողջ երկարութեան վրայ, բայց ձիաւոր պահապանների գլխաւորը, ի պատիւ այդքան նշանաւոր ընտանիքի, երկու ձիաւոր էր նշանակել, որոնցից մէկը առջևից էր արշաւում, միւսը ետեւից. թէ ձիաւորները, թէ ինչևանները դժուար էին հաւատում, որ այդ կառքերը չեն սխալուած, իսկոր գնում են գաւառական այն խեղճ քաղաքը, որ այս ճանապարհի վերջն էր կազմում:

Եւ սակայն, դա իրողութիւն էր, որ միանման մեզմ զօղանջիւնով տարածամ էին ձիանների անթիւ բոժոժմները:

Առջևից գնացող կառքում, սպիտակ բարձերի վրայ, նստած էր մի զոյգ։ Նա որ կրում է այնչափ կախարդական անունը, ալեխառնամազերով մի գեղեցիկ տղամարդ է, որ ժպտում է, հէնց որ մի մարդ է տեսնում։ Միւսը նրա կեանքի ընկերուհին է, մի սևաչեայ տիկին, որ իր ամուսնուց շատ ջահիլ է երեւում։

Մնացած կառքերում զետեղուած է մեծ ընտանիքը. երկու աղջիկ, մի տղայ, մի ծծկեր երեխոյ և ծառայող կանանց ամբողջ խումբը. դաստիարակչուհին, նաժիշտներ ծծմայր:

Սևաչեայ տիկինը առաջին անգամն է տեսնում այս գաշտերը, արտերը, լեռնային բարձրութիւնները, որոնց վրայ թագաւորում էր գեղեցիկ, առատ, զով յունիսը։ Առաջին անգամն է տեսնում և խոնարհ, բարի, թէև շատ անտաշ մարդկանց, որոնք ամեն տեսակ պատիւներ են անում անծանօթ ճանապարհորդին։ Մի իջևանում մի պառաւ գեղջկուհի մի մեծ աման մածուն մատուցեց և ասաց. «Կեր, քեզ մատաղ, գոմչի մածուն է, հայն էլ նոր եմ թխել»։ Որքան պարզ ու հաւատացող մարդիկ։ Բաւական էր միայն խօսք սկսել նրանց հետ... Մէկը արտասուելով պատմում էր որ անցեալ օր իր աղջիկը մեռաւ ծննդաբերութեան ժամանակ. միւսը հաշում էր թէ որքան ապօրէն հարկեր են առել գիւղից, մի երրորդը ծածուկ գանգատուում էր տանու-

տէրի կամ դատաւորների գէմ: Երեխաներ, որոնք միամբար պատմում էին ամեն մանր մունք բաներ, բաց էին անում իրանց ամբողջ սիրտը:

Եւ երբ կառքը հեռացնում էր ամուսիներին այդ սրտառուչ ցոյցերից, տիկինը ասում էր.

— Լաւ է, ժօղէֆ... Դու զուր չէիր այսքան գովում քո հայրենիքը:

Ժօղէֆը, ալեխառն մազերով այն գերտւկ և գեղեցիկ տղամարդը, խոշոր աչքերը գարձնում էր իր կնոջ վրայ և խանդաղանտանքով պատասխանում էր.

— Ես քեզ ասում էի... Եւ յիշում ես որտեղ.— Նվէյցարիայում, Տիրոլում, Միջերկրականի ափերին՝ Նայիր, Լիւսի, անկեղծօրէն խոստովանիր, գեղեցիկ չեն այս տեղերը: Պակասութիւնն այն է միայն, որ մեր մարդիկ աղքատ են, տգէտ...

II

Եւ Լիւսին նայում էր: Իսկ ինքը, ժօղէֆը, ամբողջովին հայրենի բնութեան դիրկն էր մտել:

Երեւում էին տեսարաններ, որոնք հին ծանօթների պէս խօսեցնում էին նրա սիրտը: Շատ անգամ մի օր և հին քարուանսարայ կամ գերեզմանատուն հեռու անցեալից գուրս էին քաշում յիշողութիւններ: Ոչինչ, ոչինչ չէ փոխուել: Բայց որքան ժամանակ է անցել այն օրից, երբ նա գնում էր այս ծանալարհով, գնում էր, ինքն էլ չիմանալով թէ ուր, ինչու համար...

Երեսուն տարի: Մի ամբողջ կեանք: Որքան փոփոխութիւններ են եղել այդ ժամանակամիջոցում մարդկանց մէջ: Քանիսներն են մեռել և քանիսները ծնուել, մեծացել: Բայց երկիրը չէ փոխել իր կերպարանքը: Այս հին, քարքարոտ, ծուռ ու մուռ ծանապարհը նոյնն է մնացել: Նոյն են գոմի սայլերը: գարձեալ անտանելի կերպով ճռնչում են նրանց ահագին անիւները:

Ահա ծանօթ գիւղերը, որոնք տարածուած են

լեռնային լանջերի վրայ։ Ոչինչ չէ փոխուել և նրանց մէջ։ Նոյն ազբը, նոյն նեղ փողոցները, գետնի տակից նայող տները։ Նոյնն են և մարդիկ։ Հագուստը, խօսքը, հայհոյանքը—ոչ մի փոփոխութիւն...

Այդ իսկ բաներն էր նա տեսնում այն անմոռանալի օրը, երեսուն տարի առաջ, երբ նստած գոմշի սալլում՝ հեռանում էր հայրենիքից, տանելով իր սրտի մէջ մի ուխտ—չը վերադառնալ տուն, մինչեւ որ... մինչեւ որ... նա ինքն էլ չը գիտէր թէ մինչեւ երբ, միայն այն էր զգում որ պէտք է մարդ գառնալ։ Նրա գրպանում սեւ կոպէկ չը կար։ Դիւղացիները իրանց սայլերով օղի էին տանում մի հեռաւոր քաղաք։ Եւ նա, այն ժամանակ խեղճ ու անճար Օսէփ, կարողացաւ մի կերպ քաղցրացնել սայլապանների սիրաը, տեղաւորուեց ահագին տիկերի կողքում, պայմանաւորուելով ճանապարհի մեծ մասը ստով գնալ և կատարել փոքրաւորի բոլոր պարտականութիւնները։ Դիւղացիները իրանց հացով էին պահում նրան։ 10—12 օր տեւեց ճանապարհորդութիւնը։ Օղու տկերը վերջ ի վերջոյ Օսէփի մէջ այն իդէալը ստեղծեցին, որ չը պէտք է տուն վերադառնալ մինչեւ որ օղավաճառի խանութ բաց անելու համար հարկաւոր մի գումար չը ձեռք բերուի։

Այդ գումարը այժմ է այնքան ծիծաղելի թւում «Փօղէփ Պապ և որդի» առեւտրական տան գլխաւորին... Բայց այն ժամանակ...

Յիշում է նա սայլապանների մէջ ամենից հասակաւորին, որի անունը Առուշան էր։ Այդ ծեր ու քաջ ծերունին, որ ունէր ամբողջ կրծքի կէսը ծածկող մի փառաւոր, սպիտակ միրուք, կարաւանի պահապան հըսրւշտակն էր։ Նա էր ցոյց տալիս իջեւանելու տեղերը, գիշերը պահապան էր կարգում՝ ապրանքի վրայ հսկելու համար։ Որքան արթուն մարդ էր։ Մի թեթեւ ձայն, անդամ քնած ընկերի մի խոր հառաջանքը զարթեցնում էր նրան։ Քանի անդամ, կէս գիշերին, երբ հարկաւոր էր ճանապարհ ընկնել, նա կամաց խփել է Օսէփի կող-

քին, գարթեցրել է ընից և ասել. «Ճնաշէն, դարդ ունեցող մարդը ծտի քուն պիտի ունենայ»:

Նա ինքը շատ դարդ ունեցող էր, այդ երբէք չէր ծածկում, և մի մի անգամ, երբ մենակ էր մնում, քթի տակ ինչ որ տիուր երգ էր երգում Այդպիսի ժամանակ նա դուրս էր թափում իր սրտի ցաւերը, հառաչում էր, սիրտ կտրատող ախ էր քաշում: Իսկ մի անգամ նա, նստած կրակի առաջ, իր տրեխն էր կարկատում և քթի տակ ինքն իր համար բայաթի էր ասում. յանկարծ դողաց նրա ալեւոր գլուխը, երգը ողբի փոխուեց և նա կիսատ թողնելով իր գործը, վեր կացաւ, բոբիկ ոտներով հեռու քաշուեց, սրբելով աչքերը:

Զարմանալի էր այդ խոշոր ու պնդակազմ ծերունին: Օսէֆը չը կարողացաւ խմանալ նրա դարդերից և ոչ մէկը: Առուշանը տղամարդ էր և ամեն մի կաժնակերի մօտ բերան չէր բաց անի: Բացի դրանից նա խնայում էր ջահիլին, չէր ուզում որ սա, գեռ ոչինչ չը տեսած աշխարհում, դարդերի թոյնը խմէր: Եւ ասում էր. «Աշխարհը ամբողջապէս ցաւ է. մըջիւնն էլ դարդի տէր է: Խնչ օգուտ, որ դու էլ խմանաս, Օսէփ, թէ ինչեր են կրծքիս տախտակի տակ: Աւելի լաւ է, քո դարդն էլ ինձ տուր, էլի ես կը տանեմ»: Ու դողդոջիւն ձայնով արտասանում էր իր սիրած երգի վերջը, որ ասում էր. «Այդ էլ ես կը տանեմ, ես կը տանեմ»:

Յետոյ միայն, երբ տեղ հասան, Օսէփը խմացաւ սայլապաններից որ ծեր մարդու ցաւը, խսկապէս, շատ մեծ է: Նրա հարուստ տունը քանդել էր վաշխառուն, նրա միակ արու որդուն սպանել էր գիւղի «ջառռահը»: Որդին կատաղել էր վաշխառուի անաստուածութեան վրայ, հիւանդացաւ և զառանցում էր, բղաւելով. «Թողէք, ես պիտի սպանեմ, կտոր կտոր անեմ»: Եկաւ ջառռահը, ասաց որ նա խելագարուել է և միակ ճարը ծեծն է: Եւ ծեծողը հայրն էր, ինքը Առուշանը. գիւղում ոչ ոք այդքան քաջութիւն չունէր: Խնչպէս էր ծեծում հայրը համոզուած՝ թէ բժշկում է իր սիրելի

որդուն. կապել էր սիւնին, դալար ճիպոտներ էր ջարդում, իսկ հիւանդի բառաչոցը լսում էր գիւղի ծայրում: Երկու օր շարունակուեց այս տանջանքը, բայց ջառահար ասում էր թէ դեռ քիչ է: Յանկարծ Առուշանը տեսնում է որ որդին ուշաթափուեց. դէն է գցում ճիպոտները և գրկում է որդու կապտած գիակը: Կէս օր չը բաշած, նա մեռաւ: Խեղճ Առուշան: Նրա կրծքի վրայ հիմա, երեխ, մի դազ խոտ է բուսել. բայց նա ասում էր որ նոյն իսկ այդ ժամանակ էլ չի մոռանայ իր դարդերը...

III

Այս յիշողութիւնները, որոնք այսօր յանկարծ զարթեցին այդքան ուժեղ կերպով, ընդհատեց սեաչեայ լիւսին:

Նա բռնեց իր ամուսնու թերց և, աշխատելով դուրս նայել կառքի միջից, հիացած բացականչեց.
—Փօղէֆ, Փօղէֆ... ահ որքան գեղեցիկ է, Աստուած իմ...

Կառքերը կանգնեցին, տիկինը իսկոյն ցած իջաւ:
Նրան այդքան յափշտակողը մի փոքրիկ, սպիտակ ուլ էր, որ ճանապարհի կողքին, մի բարձր տեղ, խոտ էր ուտում: Տիկինը գնաց գէպի նրան, բայց նա փախաւ: Երեխաններն էլ ցած իջան կառքերից և ուրախ աղաղակներով վազեցին իրանց մօր ետեից: Նրանց առջնում, ընդարձակ լանջիվայրի վրայ, փոսւած էր այծերի հօտը: Հովիւր, գիւղացի մի մանուկ, կանգնած էր հօտի մէջ և յենուած իր երկար մահակի ծայրին՝ անտարբերութեամբ նայում էր այդ զարմանալի մարդկանց, որոնք մի ակնթարթում այնպիսի աղմուկ բարձրացրին: Նրա շունը նոյնպիսի անտարբերութիւն էր ցոյց տալիս, սեղմուած իր տիրոջ ոտների մօտ:

Տիկինը կանչեց փոքրիկ հովուին, զանազան նշաններով գէպի իրան հրաւիրեց, հասկացնելով որ փող պիտի

տայց Բայց փոքրիկ վայրենու անտարբերութիւնը յաղթել անկարելի էր: Վերջապէս, պահապան ձիաւորներից մէկը կանչեց և իր ձին քշեց գէպի բարձր: Նրան ճանաչեց մանուկը և սարսափահար փախաւ. բայց շունը իր տիրոջ վախկոտութիւնը չունէր և առաջ գալով, սկսեց արիաբար հաշել: Տիկին Լիւսին շուտ հասկացաւ թէ ինչ տպաւորութիւն են գործում երեխայի վրայ ձիաւորի մորակը, հրացանը և ոստիկանական նշանները, ու խնդրեց նրան հեռանալ: Կառապաններից մէկը, որ մօտիկ դիւզից էր, ձայն տուեց և հասկացրեց որ վախելու բան չը կայ: Մի կերպ բանակցութիւն սկզ-սեցին հոգուի հետ. նա մօտ եկաւ, և տիկինը ան-ձամբ նրան մի թղթագրամ տուեց, վերցրեց ուլը: Նա գրկեց ձիւնափայլ, սիրուն անասունին, չոյեց նրա փոքրիկ գլուխը ու տալով իր որդուն՝ սքանչացած առաց.

— Ի՞նչ սիրունն է, Միշէլ. պահիր նա չի մերժի ընդունել քեզանից շաքարահաց:

Երեխան, որ ունէր իր մօր նուրբ կազմուածքը, խոշոր ու թուլս աչքերը, նոյնպիսի հրճուանքով գրկեց ուլիկի գլուխը, մտաւ իր կառքը և հրամայեց աղախ-նին հանել թղթի տոպրակը, որի մէջ շաքարահաց կար:

Կառապանները, ձիաւոր պահապանները այնքան հիացած էին իրանց տեսածի վրայ, որ շարժուել չէին ուղում և խօսք սկսեցին տիկնոջ և միւս ճանապարհորդ-ների հետ:

Իսկ Ժօղէֆը կանգնած էր այն բարձր տեղը, ուր առաջին անգամ աեսան ուլին: Նա նայում էր հօտին, աչքով չափում էր այն տարածութիւնը, որ երկու բոլէ առաջ բաժանում էր նրա կնոջը հոգուի շանից: Նոյն իսկ վտանգը չը վախեցրեց Լիւսին. նոյն իսկ գաղանից չը փախաւ նա, որպէս զի ցոյց տայ թէ որբան բարի է գէպի իր ամուսնու հայրենիքը, իսկ ինչպէս էր

վարւում գիւղացի երեխայի հետ... Որքան քաղցրութիւն, որքոն ուշագրութիւն...

Խիստ զգացուած իբրեւ հայր, ամուսին և մանաւանդ իբրև հայրենիքի պարտաճանաչ սրդի, նա իջաւ ճանապարհը, համբուրեց Միշէլին, որ գրկած ունէր ուլը, տեսաւ կառապանների և ձիաւորների ժպտուն, հիացած գէմքերը. լսեց նրանց խօսակցութիւնը և, հազիւ պահելով արաստոնքները, մտաւ կառքի մէջ:

Ծերունի Առուշանը իր գարդերի հետ կուլ գնաց այդ անսահման ինքնաբաւականութեան մէջ։ Այժմ ուրիշ յիշողութիւններ է զարթեցնում հայրենի ընութիւնը։ Լիւսին ինչ-որ բան է պատմում, ցոյց տալով սրածայր, կանաչ սարը, որ երեւում էր արեւմուտքում։ Բայց ամուսինը անուշագրութեամբ է լսում նրան, գրլիսով հաւանութեան նշաններ է անում, երբեմն շատ անտեղի կերպով։

Նա հեռուից տեսաւ այն տեղը, որ ամենից շատ սիրելի էր նրան։

IV

Փոքրիկ գետակի ափին, կանաչ մարդագետնի մէջ, գեռ կանգուն է հինաւուրց մեծ ծառը։ Նա էլ նոյնն է, ինչպէս երեսուն տարի առաջ։ Նոյնն է մնացել նաև հաստ ու կարող ճիւղերի տակ ապաստանած տնակը։

Կարծես երէկ էր այն օրը, երբ նա վերջին անգամ տեսաւ այս տեղը և վերջին հրաժեշտը տուեց իր հօրաքրոջը ու նրա ամուսնուն, պայտար Մարկոսին։ Հօրաքոյրը համբուրում էր, լաց էր լինում, իսկ Մարկոսը ժպտալով օրհնում էր, բարի ճանապարհ ցանկանում։ Խեղճ մարդ. քանի անգամնա ասաց որ պէտք է ժիր լինել, աշխարհը դժակ է, տղայ է հարկաւոր, որ գանակ գառնայ։ Այժմ էլ մնում է տնակի դռան կողքին սեւ ցեխից շինած այն բարձր տեղը, ուր նըստում էր Մարկոսը՝ իր պայտերը ծեծելու համար։ Ար-

գեօք կենդանի՞ է նա։ Այն ժամանակ նա յիսուն տարեկան մարդ էր։ Եւ միթէ դեռ այժմ էլ մուրճը դարձեալ նրա ձեռքումն է և օր ու դիշեր իր հարուածներն է յիշեցնում ամբողջ շրջակայքին...

Բայց լուս է տնակը. Նրա առաջ չեն երևում մարդիկ, թափուած յարդ չը կայ, հաւերը քթութ չեն անում։ Ամայի է հօրաքրոջ տունը։

Պայտար Մարկոսը այս անկիւնն էր ընտրել իր գործի համար։ Նրա գիւղը երկու վերստաշափ հեռու է այստեղից։ Գոհ չէր Մարկոսը։ Նրա յաճախորդներն էին մեծ ճանապարհով անցնող գիւղացիները, որոնք առնում էին պայտեր կամ հէնց այդտեղ պայտել էին տալիս իրանց անասուններին։ Բայց ինչ արած։ Մի ահագին ընտանիք, երեխանները անչափահաս։ Եւ որքան էր աշխատում խեղճ մարդը։ Կէս գիշերին զարթնում էր, վառում էր նաւթի ճրագը և քաշուելով տան մի անկիւնը, սկսկում էր երկաթ ծեծեր։ Մի և նոյն յարկի տակ քնած էին երեխանները. շատ անդամ էր պատահում, որ տան մէջ գիշերում էին և պայտարի յաճախորդների անասունները։ Խեղճ հօրաքոյրը որքան էր չարչարում. միշտ ձեռքը գործի մէջ, սրբում էր անասունների ազբը, սրբում էր, բայց գալիս էին նոր հիւրեր և էլի նոյնը...

Եւ սակայն այդ խարխուլ ու հոտած տնակը որքան գեղեցիկ և հրապուրիչ էր Օսէփի համար։ Ամեն անդամ, երբ նա փախչում էր տանից, փախչում էր իր մեծ ժամագրքից, որի կէսն անդամ չը վերջացրեց, նրան այստեղ սպասում էր հօրաքրոջ գդուանքը։ Յերեկը այդ լայնարձակ գաշտերը, լանջերը, իսկ գիշերը — հօրաքրոջ ծոցը. սրանք այնպիսի քաղցրութիւններ էին, որ նա իր յօժար կամքով երբէք տուն չէր վերադառնում. գալիս էր հայրը, բարկանում էր, լաց ու ծեծով տանում։ Քանի անդամ, տէրտերի առաջ չոքած իր դասը սերտելիս, նրա սիրտը պատռուել է ուղեցել, յիշելով այս գետակի պաղ ջուրը։ Նրան ծեծում էին

դպրոցում, ծեծում էին տանը. միայն այստեղ, պայտարի անակում, մերկ երեխաների, սիրող հօրաքրոջ շըլանում ծեծ չը կար...

Այժմ ուր են նրանք:

Կառքերը կանգնեցին մեծ ծառի տակ: Այստեղ ձիաները պիտի հանգիստ առնեին, գարի ուտէին: Շորեր փուեցին տնակի ետևում; կանաչ խոտի վրայ. Լիւսին կարդադրեց ուտելու բան հանել կողովից: Բայց ֆօղէֆին փորձանքի մէջ էր դցում հետաքրքրութիւնը: Ծաերը ծլվում էին տնակի բաշերի վրայ. ինչպէս այն ժամանակ, այժմ էլ պատերի արանքում ծլել էր գարին: Քիչ հեռու, ճանապարհոց վերև, երեւում էր մի նորաշն խանութ, որի առջև հաւաքուել էին մի քանի հատ գիւղացին: Միթէ նրանցից ոչ ոք չէ կարող ասել թէ ինչ եղաւ պայտար Մարկոսը:

Որքն մեծ էր այս մենաւոր ու լուռ աւերակի ոյժը: Նոյն իսկ տերեւները իրանց մեղմ սօսափիւնով դրդում էին թէ լաւ է իմանալը, հարց ու փորձ անելը: Եւ նա ուզում էր անպատճառ կանչել գիւղացիներից մէկին կամ երկուսին, որոնք աւելի տարիքով էին: Բայց այդ րոպէին Լիւսին նստեց նրա կողքին, առելով:

—Յոդնել ենք ամենքս... Բայց ի՞նչ սիրուն անկիւն է: Ինչու երկաթուղի չեն շինում այս կողմերում:

—Ո՞վ պիտի չինէ, Լիւսի:

—Աղքատութիւն... հա, ի՞նչ սարսափելի է աղքատութիւնը քո հայրենիքում, ֆօղէֆ... Միշտ այսպէս էր:

—Միշտ:

—Օ՛, խեղճեր...

Ֆօղէֆը համաձայն էր որ այստեղ ամենը խեղճ են: Բայց այդ վայրիեանին—զարմանալի վայրկեան—նա ոչինչ վատութիւն չը տեսաւ այն բանի մէջ, որ ամենքը խեղճ են: Ի՞նչ վատութիւն կը լինէր, եթէ Լիւսին իմանար որ իր ամուսինը այս իսկ խրճիթում է

անցկացրել իր մանկութեան ամենասիրուն օրերը:

Պայտար Մարկոսը, հօրաքոյրը, երեխաները և ինը, այժմեան Ֆօղէֆ Պապը, դիշերում էին գրաստների հետ միասին...

Ասել այդ: Գետակը, կապոյտ երկինքը, ծտերը հասկացնում էին որ ամօթ չէ ասելլը: Եւ նա լսեց դըրանց, սկսում է: Այս տունը նա շատ է տեսել, այս կանաչ խոտերի մէջ շատ է խաղացել...

Բայց գրանից հեռու չը գնաց: Այդ մարդու զարմանալի բախտի յատկութիւններից մէկն էլ այն էր, որ նա ժամանակին էր հասկանում թէ աւելորդ ոգեւորութիւնը—զուտ վնաս է: Նա գիտէր ժամանակին լոել: Լիւսիի բարակ յօնքերը, հետաքրքրութեամբ նայող սեւ աչքերը, շրթունքները յիշեցրին նրան մայրաքաղաքի շքեղ սալօնը և այն անմոռանալի երեկոն, որ այնքան ահագին յեղափոխութիւն մտցրեց նրա կեանքի մէջ:

Հաւաքուած էր հիւրերի մեծ բազմութիւն: Երեկոյթի թագուհին բարձրահասակ, սեւաչեայ օրիորդն էր, որի վարդագոյն զգեստը, վերին աստիճանի վայելուց ու բարեկիրթ շարժուածքը մեծ ու լուսաւոր դահլիճի մէջ դիւթում էին ամենքին: Ինքը, Փօղէֆը, այդ ժամանակ հրապարակում արդէն խոշոր գրամատէրի անուն էր հանել: Ամեն տեղ այդ անունը արտասանւում էր պատկառանքով, և փարթամ սալօնն էլ զգում էր թէ ով է նա, որ նստած է առեւտրական աշխարհի յայտնի գործիչների շարքում: Նրան մեծարում էին տիկինները ու օրիորդները, ամեն քայլափոխում նա հանդիպում էր հաճոյական ժպիտների, սիրալիր ուշագրութեան, բարեկամ լինելու անկեղծ ցանկութեան: Միայն երեկոյթի թագուհին էր անտարբեր. միայն նա էր, որ կարծես չէր էլ նկատում այդ նշանաւոր հիւրին: Երբ նա, մի մի զիջանելով երիտասարդների թախանձանքներին, նստում էր դաշնամուրի առաջ և նուագում էր, երբեմն և երգում մի շատ քնքոյշ ձայնով, Փօղէֆին այնպէս էր թւում թէ նա այդ բոլորով ուզում է ցոյց

տալ որ ինքը շատ բարձր է, շատ անմատչելի է նոյն իսկ գրամական առիւծների համար։ Այդ միտքը նրան հանգստութիւն չը տուեց ամբողջ գիշերը, և միւս օրը օրիորդի ծնողները ստացան առաջարկութիւն, որը և ընդունուեց իսկոն, անպայման։ Լիւսին եկաւ ապացուցանելու իր ամուսնուն որ կուսական հպարտութիւնը անցաւոր է, և տղամարդը, թէև նա լինի արդէն սպիտակող մազերի շրջանում; նուաճելու շատ միջոցներ ունի, մանաւանդ երբ այսքան հարուստ է։

Եւ այս նուաճուածը մի աննման գիւտ էր վաճառականի տան համար։ Լիւսին մոտաւ առատութեան մէջ, նրա հրամաններին էին սպասում ամուսնու միլիօնները։ Բայց փառաւոր ապարանքի մէջ ոչինչ ազնուական կարգ, ոչինչ բարձր ճաշակ չը կար. ամեն ինչ տոգորուած էր գուեհկութեամբ։ Դա այնքան վիրաւորական էր, որ Լիւսին սկզբում իրան մի նահատակ էր համարում։ Նա մայրաքաղաքի հին, նշանաւոր ընտանիքի զաւակ էր և մեծացել էր ուրիշ այդ տեսակ ընտանիքների շրջանում։ Նոյն իսկ ասում էին թէ նա մօր կողմից հանդիսանում է մի բաւական զուտ ազնուական համարեա անհետացած արեան ժառանգ։ Եւ հաւանական էր, որ այդպէս լինի, քանի որ Լիւսին բնական, անկեղծ ատելութիւն ունէր դէպի ամեն ինչ, որ գաւառական գուեհկութիւնն էր յիշեցնում։

Ու նահատակը մի հսկայական գործ սկսեց։ Պէտք էր նախ և առաջ տաշել, կոկել իր ամուսնուն, և նա այդ բանը սկսեց եռանդով։ Անհետացաւ գիւղական Օսէփ անունը. նրա գուները լայն բացուեցան բարձր դասակարգի առաջ։ Ժօղէֆը աշակերտում էր նրան մի նորագարձի ֆանատիկոսութեամբ։ Նա իւրացնում էր նոր ձեւեր, սովորեց ֆրանսերէն խօսելը. և թէև նրա կրթութիւնը ժամագրքի բառորդից դէնը չէր անցել, բայց այնքան ուշիմ ու հասկացող էր, որ անհեթեթութիւններ չէր յայտնում, օրինակ չէր ասի թէ երկիրը գնդաձեւ չէ։ Հետզհետէ նա վերածնուեց.

իր կնոջ սալօնում եղած խօսակցութիւնների ազդեցութեան տակ նա յանկարծ գտաւ որ իր Պապանեան ազգանունը առաջացել է Պապ անունով մէկից, որ մի ինչոր ժամանակ տանուտէր է եղել մի ինչոր գիւռմ և կրիւներ է մղել ինչոր խանի դէմ: Լիւսին այդ վկայութեան հիման վրայ ազնուացբեց և իր ամուսնու ծագումը և այնուհետեւ հինաւուրց քաջ Պապը վկայում էր որ այս առեւտրական նշանաւոր Փիրմայի մէջ արիստօկրատական երակներ էլ կան: Իր շատ հեռաւոր և շատ կասկածելի նախահօր այդ վկայութիւնը ժօղէփը ամրացնում էր իր անձնական ծառայութիւններով: Նա բարձրահնչիւն բարեգործութիւններ էր անում, ուրոտում՝ էր լրագիրների ու դանազան ընդհանուր ժողովների մէջ, և տոհմային թանկագին արկղիկի մէջ դարսուում էին պատուաւոր անդամութեան ոսկեզօծ վկայագրեր, շնորհակալական ուղերձներ, ընկերութիւնների մեդալներ, մասնաւոր անձանց այնպիսի նամակներ, որոնց մէջ «ազնուական», «վսեմաշուր», «իշխան» բառերն էին երեւում: Կային նոյն իսկ երկու չքանչան, որոնցից մէկը աւստրիական: Այս վերջինը ժօղէփը ստացաւ այն խոշոր նուիրաբերութեան համար, որ նա արաւ կայսերական տան անդամներից մէկի հովանաւորութեան տակ գտնուող մի մարդասիրական ընկերութեան Վիեննայում, երբ ծնուեց Միշելը: Այդ օրուանից «ժօղէփ Պապ» Փիրմայի վրայ աւելացաւ և «որդի» մասնիկը:

Ահա ինչեր արաւ Լիւսին:

Պայտար Մարկոսի աւերակի մօտ մի բոպէ կար, երբ այդ բոլորը մոռացուելու վրայ էր: Բայց, ինչպէս առացինք, ժօղէփը վտանգը ժամանակին հասկանալու բարեբախտութիւնն ունէր: Եւ նա բաւականացաւ յայտնելով որ ինքը այստեղ շատ է խաղացել, մի հանդամնք, որ վիրաւորական չէր թէ համարեա անհետացած ազնուական արեան ներկայացուցիչ տիկնոջ և

թէ ինչոր խանի դէմ կռիւներ մղած Պապի ժառանգի համար...

V

Մինչեւ ճանապարհուելը գեռ ժամանակ կար: Երեխաները ցանկութիւն յայտնեցին ճաշը գետակի ձուրում ուտելու: Ամենքը գնացին այնտեղ: Բայց այդ սիրուն ձորը շուտապ մոռացնել տուեց երեխաներին իրանց առջեւ դրած ուտելիղինները, և նրանք գնացին վազվը զեղելու թիթեռնիկների ետեւից, ծաղիկներ քաղելու: Երկու ամուսինները խորին բաւականութեամբ դիտում էին կայտառ, առողջ երեխաներին. նոյն իսկ ծծկերն էլ ուրախ աղաղակում էր ծծմօր դրկում: Մեծ աղջիկը, որ արդէն 14 տարեկան հասակում էր, գտնելով մի սիրուն, մեծ ծաղիկ, կանչեց իր դաստիարակչուհուն, որ մի ջահէլ ֆրանսուհի էր: Նրանց աղաղակները մի բան յիշեցրին հօրը, և նա ասաց.

— Ֆաննի, դու էլի հայերէն չը սովորեցար... Մի քանի բառ դիտես, և ի՞նչ, այնտեղ մո՞ւնջ պիտի մնաս:

Աղջիկն ու ֆրանսուհին մի վայրկեան զարմացած նայեցին նրան, յետոյ Ֆաննին հեգնաբար ծիծաղեց և երկուսը խոնարհուեցան ծաղկի վրայ:

Լիւսին մեղմացրեց Ֆաննիի այդ անպարկեշտ վարմունքը, բացատրելով իր ամուսնուն որ ինքը դիտմամբ չէ թողնում ուրիշ լեզու սովորել: Զը պէտք է փշացնել երեխայի արտասանութիւնը. նա հրաշալի խօսում է ֆրանսերէն, իսկ ֆրանսերէնը այնքան նուրբ է և երաժշտական, որ հայերէն կոշտ բառերը միայն ծոմոել, աղճատել կարող են երեխայի փափուկ լեզուն:

Հայրը համաձայնեց, նա երբէք չէր էլ հակառակուել իր կնոջ: Մի բաժակ էլ խմելով իր առաջեւ դըրուած դիմուց, նա առաջարկեց Լիւսիին քիչ անցնել ձորով:

—Այստեղ մի փոքրիկ ջրվէժ կայ և մի հրաշալի աղբիւր, ասաց նա, առաջարկելով իր թեւը:

Երեխաները գնացին ճնողների ետեւից:

Չորը գնալով նեղանում էր. երկու կողմից բարձրանում էին սեւ ժայռերի պատերը Վերեւում, կապոյ երկնքի տակ, թփեր ու ծառեր, ապա հսկայական սեւ պատեր, իսկ այստեղ, ներքեւում ջրեր, խոտեր, բարձրահասակ բոյսեր: Խմեցին աղբրի ջրից, հիացան: Դիմին իր աղբեցութիւնն էր ցոյց տալիս, ստուերախիտ ձոր, մեղմ վշոց, տերեւների սօսափիւն: Եւ բնութիւնը դարձեալ յաղթահարեց տաշած ու յղկած ժօղէֆին: Դարձեալ չքանում է տարիների երկար շարքը:

Դիւթական ոյժ. նա իւրաքանչիւր խոտի մէջ է, խօսում է իւրաքանչիւր քարի կտորի միջլոց, որի վրայով թափւում են գետակի փոքրիկ, խոխոջուն ալիքները, և, կարծես, հարցնում է. միթէ Օսէփը չէ, նա, որ մի ժամանակ այնքան լաց էր լինում այս տեղերի համար: Ապա ջրվէժը: Նա, ինչպէս և այն ժամանակ, աղմուկով գահավիժում է սեւ ժայռերի պատռուածքից, ամբողջովին փրփուր է, և թփերը վերեւից կախ են ընկել նրա վրայ: Ամենքի սիրած տեղն է: Գալիս են մեծ ճանապարհով անցնողները, գալիս են և գիւղից: Զովանալու, հանգստանալու տեղ: Այժմ գեռ ցուրտ է, բայց յուղիսեան միջօրէին ի՞նչ հրաշալի բան է մերկանալ, նստել ժայռի տակ և թոյլ տալ որ ջուրը երկար ծեծէ մէջըդ ու ուսերդ...

Քիչ բարձրում, ժայռի ուսին, թփեր են և այդտեղ երեւում են երկու երեխայ: Կարծես հօրաքրոջ երեխաներն են, Սօնան ու Ասլանը. էլի կիսամերկ, մի հատ շապիկ հագած, կեղտու ու սեւ: Նրանք նայում են ապշած, ճիշտ այնպէս, ինչպէս Սօնան ու Ասլանը այն ժամանակ. մնում է որ նրանք բաց անեն իրանց բերանները և կանչեն. «Օսէփ»...

Ժօղէփը աշխատում է չը նայել նրանց: Նստում է ջրի ափին և իր ձեռնափայտը մեկնում է դէպի ջրվէժը,

դիտում է թէ ինչպէս սպիտակ շիթերը ծեծում են փայտը։ Իսկ Լիւսին կանչեց գիւղական երեխաներին, ասաց որ բաղցը բան պիտի տայ։ Նրանք, ի հարկէ, տեղից չը շարժուեցան։ Այն ժամանակ տիկինը, բռնելով Միշէլի ձիւնափայլ ու բնբոյշ ձեռքից, դնաց դէպի նրանց մի նեղ կածանով, որ գետակի միւս ափից էր սկսում։ Վայրենիներից մէկը, տղան, վեր թռաւ ու փոքրիկ գազանի նման մնաւ թփերի մէջ։ Լիւսին փորձեց խօսել միւսի հետ։ Նա հարց ու փորձ է անում նրա հօր ու մօր մասին—ոչինչ պատասխան։ սկսում է ձայնով յանդիմանել թէ ինչո՞ւ չէ շորերը հագել, երեւը լուացել—աղջիկը շարունակ պլշած նրան է նայում...»

Եւ տիկինը թողեց նրան, դարձաւ Միշէլին։ Ցոյց տալով կիսամերկ երեխային, նա Փրանսերէն լեզունվ հասկացնում է նրան որ գիւղում այդպէս են։ ապրում են հողի մէջ, չունեն մահճակալ, այնքան աղքատ են, խեղճ... Միշէլը խելօք երեխայ էր և չէր մոռացել որ մայրիկը մի քանի անդամ էլ տարել է իրան աղքատների մօտ։ Նա ընդհատեց մօր խօսքը, ասաց որ գիտէ թէ ինչ պիտի անէ իր պէս մի երեխան։ Ու գրպանից մի շաքարահաց հանելով, մեկնեց դէպի խեղճ աղջիկը։ Սա մի ակնթարթում խլեց այդ ընծան։ Բայց դեռ չէր հասկացել թէ ինչ պէտք է անել նրան, երբ թփերի միջից դուրս սողաց տղան, նստեց աղջկայ կողքին և ասաց։

—Բեր միասին նայենք...

Լիւսին նոր տեսաւ թէ ինչ է այդ՝ տղան և սարսափահար յետ գարձաւ, ցած վազեց, համարեա ձեռքի վրայ տանելով Միշէլին, կարծես փախցնում էր նրան օձի բերանից։

—Ի՞նչ կայ, ի՞նչ պատահեց, բացականչեց ժօղէֆը, մի ակնթարթում վեր թռչելով տեղից և ցատկելով գետակի միւս ափը։

Նրա կինը առաջին վայրկեան չը կարողացաւ պահովիս, 1902.

տասխանել, միայն յետ նայեց, աեսաւ որ երեխաները իրանց տեղն են և արդէն կռւում են շաքարահացի վրայ:

—Ա՞հ... արտասանեց նա փորձանքից ազատուածի նման և նրա հպարտ աչքերը սարսափի հետ խառն մի զզուանք արտայայտեցին:

—Ի՞նչ էր, ի՞նչ եղաւ:

—Այն տղայի ամբողջ երեսը, ձեռքերն ու ոտները ծածկուած են վէրքերով...

—Եւ Միշէլլ ձեռք տուեց նրան:

—Ո՛չ հայրիկ, կանչեց Միշէլլ:

—Փառք Աստուծու... Շատ չը նայեցիր:

—Երեւի ծաղիկ է, նոր է լաւանում, ասաց Լիւսին.—և այդ դրութեան մէջ բաց են թողել երեխային, տկլոր, այս քամու մէջ, ջրերի մօտ... Վայրենիներ են ապրում այստեղ, ի՞նչ է:

Փօգէֆը չը պատասխանեց, շտապով հեռացրեց ամենքին այդ տեղից: Ճանապարհին Միշէլլ պատմեց նրան թէ ինչ էր արել ինքը: Երբ հասան պայտարի տնակին, կառապաններին հրաման տրուեց իսկոյն պատրաստուել ճանապարհուելու: Մի անգամ էլ իր գլուխ մէջ առնելով Միշէլլին և համբուրելով նրա ջուխու թշշերը, Փօգէֆը դարձաւ իր կնոջը, հանդսացրեց նրան և ապա ասաց.

—Բարերարութիւն անելլ լաւ է, սիրելիս, բայց չը պէտք է այդ ժամանակ ինքնամոռացութեան հասնել: Խնդրում եմ որ առաջ քեզ տեսնես, յետոյ ուրիշներին...

Նա յայտնեց որ մի ժամի ճանապարհ հաղիւ լինի մնացած:

Բայց դու անպատճառտ ես, Լիւսի, աւելացրեց նա:

—Ի՞նչ պիտի լինէր:

—Գոնէ ծածկոյներդ փոխէլք: Մեղ կը դիմաւորեն, դիսեմ...

— Գուցէ և աղ ու հացնվ, հարցրեց տիկինը հեգնաբար:

— Ծիծաղելու բան չը կայ: Մեր անունով այստեղ երդւում են:

Հարկաւոր եղաւ բաց անել բաղմաթիւ կապոցներ, քըքրել արկղիկներ, բարկանալ աղախինների վրայ: Լիւսին ու Թաննին նոր ծածկոցներ հագան, փոխեցին իւրանց գլխարկները: Մէշէլի շորերը բոլորովին փոխեցին: Ժօղէֆն էլ դէն դրեց իր գլխարկը և պսպղուն ցիլինդր ծածկեց:

— Միշէլը կը նստի մեզ հետ, վճռեց տիկինը. — ուն էլ նրա կողքին: Գեղեցիկ կը լինի, չէ, ժօղէֆ... Կառքերը աւելի արագ էին ոլանում:

VI

Բլուրի գլխից երեւաց ծառերի մէջ թաղուած տըների բաղմութիւնը: Իրիկնապահի երկար ստուերները ծածկել էին նրա մի մասը. միւս մասի վրայ դեռ փայլում էր արեւը, մի հեղ ու ծոյլ անդորրութեան դրոշմ հաղորդելով նրան:

Դա էր գաւառական այն փոքրիկ քաղաքը, ուր Պապ ամուսինները վճռել էին անցկացնել ամառը:

Ամենը նրան էին նայում մեծ ուշադրութեամբ, ամենը սպասողական գիրքի մէջ էին և լուռ. նոյն իսկ աղախիններն էլ զդում էին որ մի բան պիտի տեղի ունենայ: Երկու ամուսինները հովանաւորող բարեհաճ ժպիտներ էին արձակում: Մինչեւ իսկ Միշէլը, այդ սիրուն երեխան էլ, աջ ու ձախ էր նայում: հասկանալով որ կայ մի բան, որին պէտք է հաւանական տալ:

Ճանապարհը թեքուեց գէպի ձախ: Մի պտոյտ էր մնում, տների բաղմութիւնը ծածկուեց: Հանդիսաւոր բողէից առաջ, ինչպէս այդ լինում է միշտ, Լիւսին ու ժօղէֆը, առանց միմեանց նայելու, ինքնաբերաբար, աղատութիւն տուին իրանց սրտի զեղումներին:

—ԱՇ, այն երեխան, բացականչեց Լիւսին մի աըլ-խուր շեշտովք—Զեմ կարողանում մոռանալ... Այն դը-րութեան մէջ, ոտաբոբիկ, գլխաբաց, միայն մի կեղտոտ շոր կար ականջներին կապած... Սարսափելի է...

—Իսկ ես մինչեւ երկինք շնորհակալ եմ քեզանից, սիրելիս, որ իմ պատճառով գու այստեղ ես, այսպիսի հանգամանքների մէջ... Երբէք չեմ մոռանայ. Երեխա-ները, թէև հեռու աշխարհի ծնունդներ, այնպէս լաւ հասկանում են որ իրանց հօր երկիրն էլ պէտք է սի-րել... Հիմա էլ ացքիս առջև են այն կապոցները, որ պատրաստում էին Միշէլը, ֆաննին...

Նա կռացաւ, մատների ծայրը դիպցրեց երեխայի ծնօտին, համբուրեց մատները և հարցրեց.

—Բոլոր փողերդ վերցրիր, Միշէլ.

—Եւ Թօգինն էլ. նա գեռ փոքրիկ է, չը դիտէ. Ես յետոյ կը հաւաքեմ փող և կը վերադարձնեմ նրա բա-ժինը:

—Սիրելի զաւակներս... Այդ բոլորը, ի հարկէ, ձեր մօրից է: Երջանիկ էք, փոքրիկներս...

—Թէ որ բո ջրվէժից անփորձ պըծնենք:

—Դու գեռ վախում ես: Երեկոյեան բժշկին լսոր-հըրդի հրաւիրի՞ր:

—Այն, պէտք է: Ո՞վ դիտէ, վարակումը հարիւր ու մի պատճառից է լինում:

—Մեծ է Աստծու ողորմութիւնը: Բայց աղաչում եմ, Լիւսի, զգոյշ եղիր...

Անիւը խփեց գաւառական քաղաքի առաջին քա-րին: Սկսուեց մի ինչո՞ր փողոց, որ ամայի էր:

Ոչ ոք չըկայ: Բոժոժների զօղանջիւնը, կառքերի գլրդոցը մի քանի երեխաներ են հաւաքում, որոնք սկսում են վազվել կառքերի առջևից ու ետեից և կառապանները սկսում են քշել նրանց իրանց երկար մորակներովք: Մի մի բացւում է որևէ դրան կամ պա-տուհանի փեղկը և նրա ետեից ամօթխածութեամբ նայում է մի աղջիկ կամ կին: Պատահեց մի արհեստու-

ւոր, որ ծռուեց մի կողմ, սեղմուեց ցանկապատին և ձեռքը կրծքին դրած անցաւ, պատիւ անելով անծանօթ, բայց ըստ երեսյթին մեծ մարդկանց:

Եւ այսպէս—երկու, երեք փողոց, ժօղէֆը շուտ յիշեց, որ գաւառական քաղաքի սիրտը հրապարակն է, ուստի շարունակեց բարեհոգի հանդարտ ու սպասող մնալ:

Հրապարակում մեծ բազմութիւն կար: Կիրակնամուտի երեկոն էր, արհեստաւորները, մշակները նոր էին վերջացրել իրանց աշխատութիւնը և այժմ խօսում էին անցկացրած շաբաթուայ մասին, հաշիւներ էին վերջացնում: Կառքերը արտասովոր բաներ էին այդտեղ և մեծ իրարանցում պատճառեցին, նրանք շարժւում էին գանդաղ, իսկ հրապարակի բոլոր կողմերից կուտառում էին գործից նոր գուրու եկած տխուր ու մրոտ մարդիկ, խոնւում էին միասին՝ անծանօթ մարդկանց և նրանց կառքերը տեսնելու համար: Նրանց մէջ երեւում էին և լաւ հագնուածներ. դրանք խանութպաններ էին, որոնք չէին կարողացել զսպել իրանց հետաքրքրութիւնը: Կարծես ծովային հրէշներ էին մտել այդ խաղաղ ու միամիտ անկիւնը և եթէ կառքերը ամբողջ գիշեր կանգնէին այդտեղ, ամբոխը չէր հեռանայ, կը շարունակէր գիտել նրանց վայրենիներին յատուկ հետաքրքրութեամբ:

—Էշեր...

Այս խօսքը ակամայ գուրս թռաւ ժօղէֆի բերանից:

Նա գիտէր արդէն, որ սպասել աւելորդ է, բայց տեսնելով իր կնոջը. որ շարունակում էր նոյն սպասողական դիրքի մէջ մնալ, մի ակնթարթում բռնուեց և մաղձը եռ եկաւ նրա մէջ: Բայց այդ միջոցին կառքը քիչ կանդ է առնում և մի մարդ, մի հատ մարդ, առաջ է վազում; վերջնում է գլխարկը, խոնարհ երկրպագութիւններ է անում և ասում է.

—Բարի գալուստ... բարով, հազար բարով եկաք...

Լիւսին նրա վրայ է դարձնում իր բարեհաճ ժպիտ-ները, նայում է իր ամուսնուն, Սա չը գիտէ թէ ինչ է կատարում, և բարկացած հարցնում էր.

—Ժողովրդի կողմից...

Անձանօթը, շարունակելով գլուխ տալ, ասում է խղճալի ձայնով.

—Եկայ ինքս... Շնորհ էք բերել մեղ մօտ, բարի գալուստ... Մեր իշխանն էք, մենք պարտաւոր ենք...

—Շնորհակալ եմ, շտապով արտասանում է ժօղէֆը և բղաւում է կառապանի վրայ:

Ամբոխը ճեղքւում է, ճանապարհ տալիս:

—Ա՞յս էր, հարցրեց Լիւսին:

—Էշեր... Նորից մոռում է նրա ամուսինը:

Նա շըգիտէր թէ ինչպէս պիտի կարողանայ մոռանալ այս անպատւութիւնը:

VII

Բայց ինչու այսպէս եղաւ:

Մտնենք, ընթերցող, այս մեծ տունը; ուր շատ մարդիկ մտան: Ժօղէֆ Պապի գալուց ընդամենը երկու ժամ. է անցել, բայց այստեղ արդէն ժողով է դումարուած հէնց այդ դէպքի առիթով: Եւ անպարտաճանաչ չեն բաղաքացիները. հաւաքուել են ամենքը, որոնք հրաւէր են ստացել: Ոչ մի դասակարգ չէ մոռացուել և ազան ու արհեստաւորը, պաշտօնաթող չինօմնիկն ու խանութպանը միասին են. ասում են, լսում են:

Ժողովը գեռ չէ բացուել: Սպասում են տիրացու Գաբրիէլին, որ մի թուղթ պիտի բերէ: Լսեցէք մասնաւոր խօսակցութիւնները, եւ գուք չէք ասի թէ գաւառական փոքրիկ բաղաքում չը կայ հասարակութիւն, այն էլ այն տեսակ հասարակութիւն, որ չը գիտէ թէ ինչ ցաւեր ունի եւ ինչ օգուտներ կարող է ստանալ:

Քաղցր յոյսերով ու մեծամեծ ակնկալութիւններով լի է Միրզա-բէկի այս մեծ դահլիճը, ուր մարդիկ ման

Են գալիս, խմբւում են, վիճում տաքացած, միմեանց համոզում։ Ստեղծագործող միտք, այն, ամեն տեղ կայ, քաղաքակրթական ծրագիրները ամեն տեղ են հասել։ Վերացրէք նիւթական միջոցների տանջող հարցը, և դուք կը տեսնէք, որ նոյն իսկ այս տեսակ խուլ անկիւնում միտքը գործ է գառնում։

Այսպէս են հաւատացնում այն անունները, որոնք արտասանւում են Միրզաւբէկի դահլիճի մէջ։ Հիւանդանոց, արհեստագիտական գպրոց, գրադարան, աղքատանոց... Արանք աւելի առաջաւոր գասակարգին մատչելի հասկացողութիւններ էին. բայց հասարակ մարդիկ էլ դիտել են տարիների ընթացքում, հասկացել են թէ ինչ չունեն և ինչ պիտի ունենան։ Դետակի վրայ կամուրջ չը կայ, գարնանը և աշնանը որքան է տանջում հասարակութիւնը։ Զրի ճանապարհը վազուց է փչացել և այժմ ջուր են վերցնում հեռու մի ազբիւրից. Ջուր բերողները գլխաւորապէս կանայք են. հասկանալի է թէ այն հեռու տեղը ի՞նչ անկարգութիւններ են կարող պատահել, և պատահել էլ են։ Կօշկակար Ոսկանը արծարծում էր իր վաղեմի միտքը—կառուցանել սրբատաշ քարերից մի լաւ բաղնիս մեծ ու լայն աւաղաններով և հինգից ոչ աւել առանձին սենեակներով։ Ծախսի ու մուտքի հաշվուները արել էր նաև շատ հեշտութեամբ ապացուցանում էր, որ եթէ օրական միջին թւով հինգ մարդ էլ լողանայ, դարձեալ օգուտ կը լինէր։ Իսկ ներկարար կարապետը այն մտքին էր, որ պէտք է տարեկան որոշ գումարներ յատկացնել եկեղեցիներին և այնուհետև միանգամայն վերացնել աղքատութիւնը։

Մեղք է, հաւատացնում էր նա։ Մեղք է ոչ միայն աղքատը, այլ և ողորմութիւն տուաղը։ Թող հաշուեն տեսնեն որքան հաց է դուրս գնում աներից երբեւ ո,

զորմութիւն. եթէ դուրս չը դայ այդ հացը, ժողովուրդը աւելի հարուստ կը լինի: Եւ բացի դրանից, աղքատների մեծագոյն մասը աչք ունի: Մտնում են նրանք ամեն ժամանակ: Պատահում է, տանտիկինը կամ նրա հարսը կամ շափահաս աղջիկը դլուխը բաց է արել, ուզում է լուանալ, աղքատը դիտմամբ կանգնում է, մտիկ է տալիս նրա հոլանի թեւերին, բաց պարանոցին: Նատերը այնքան աներես են, որ կանգնում են երկար, նոյն իսկ բաժին ստանալուց յետոյ, նայում են, աչքով ուտել են ուզում: Անպատւութիւն է դա, ժողովուրդը ճար չունի և ակամայ լուռ է մընում: Պէտք է աղքատներին հեռացնել դռներից...

Եւ էլ շատ ուրիշ ծրագիրներ, խրատներ էին երեւան եկել: Ամենքը գիտէին, որ այդ պակասութիւնները կարելի է վերացնել և կարելի է միայն այժմ: Անող կար: Ներկայ էր կախարդական ոյժի տէրը, որի մի խօսքը բաւական էր հրաշքներ գործելու համար:

Խօսքն ու դատողութիւնը հէնց այդ զարմանալի մարդու, այդ կախարդիչ հարուստի շուրջն են պտըտում: Ինչե՛ր էին պատմում նրա մասին: Պատմում էին, ապշում, երկնքին փառք տալիս: Ոչինչ շափազնցութիւն անտեղի չէր կարող լինել արդ հիացած դաւառացիների համար: «Փօզէֆ Պապ և որդի» առեւտրական տան միայն Ստամբուլի բաժինը, ասում էին, պարտը է տալիս թիւրքաց փաղիշահին: Ինչպէս դիւզացին գալիս է ոսկերիչ Գրիգորի մօտ, նրանից պարտը է առնում թղթով, այնպէս էլ փաշան ուղիղ գնում է Պապի գրասենեակը, քսակներով ոսկի է տանում սուլթանի համար և տոկոսներն էլ այս գլխից տալիս է: Դեռ չը կայ, չէ եղել, ասում էին, հաշիւ, որ իմանայ նրա հարատութեան չափը: Սովորական համրիչները նրա գործի մէջ պէտքական չեն, այնքան մեծ են նրա թուանշանները: Տանողները, բերողները հարիւրաւոր են և ով գիտէ, եթէ կէսն էլ գողանան, չի իմացուի: Իսքը, Փօզէֆ Պապը, տարուայ մեծ մա-

սը հեռու է լինում իր գործերից։ Պարիզում տուն է առել, այնտեղ է բնակում։ Նրա գլխաւոր կառավարիչը մի մարդ է, որ մի փոքրիկ թագաւոր է իր ստացած ռոճկով և իր դիրքով։

Բայց ամենից պանչելին այն է, որ այդ մարդը, ասում էին, բոլորովին կշապել է փողից։ Աստուած տուել է, սար ու ձոր լցրել։ Էկմա նա բարի գործեր է կատարում։ Տեղ չը կայ, ասում էին, ուր նա մի յիշտակ թողած չը լինի։ Եւ ինչ գժուարութիւն կայ նրա համար, ուղենայ—ամբողջ աշխարհը կը լիացնէ։

Ահա թէ ինչ հոյակապ որդի ունի գաւառական այս խեղճ անկիւնը։ Հոյակապ որդին սիրում է իր աղքատ հայրենիքը։ Վազուց այստեղի մարդկանց ականջին էին հասնում արտասունք շարժող լուրեր։ Ժօղէֆ Պապը, նա, որի պարտականները թագաւորներ են, շատ անդամ է կարօտով յիշել Սպիտակ աղքիւրը, Երեցի թումբը, ո. Դէորդի մատուռը։ Այդ սիրուն տեղերը, վերջ ի վերջոյ, քաշել, բերել էին մեծ մարդուն։ Նա այժմ այստեղ է։ Քանի կենդանի էր մեծ գիտնական քահանայ Տէր-Մեսրոպը, գաւառական քաղաքը յաճախ ընծաներ էր ստանում Ժօղէֆից։ Քահանան նրա ուսուցիչն է եղել, և բաւական էր, որ նա մի նամակ գրեր, մի պակասութիւն յայտնէր, Ժօղէֆը իսկոյն կը կատարէր նրա ցանկութիւնը և նամակով էլ կը յայտնէր թէ Աստուծով դեռ շատ լաւ մտադրութիւններ ունի իր հայրենիքի վերաբերմամբ։ Եւ այժմ այդ մտադրութիւնների հետ յիշատակում էին գումարներ, այն էլ ինչ գումարներ, հարիւր հազար, երէք հարիւր հազար...

—Հանաք է դառել փողը... վրդովուած բացականչում էր ոսկերիչ Դրիգորը, նա, որից գիւղացիները պարտը էին վերցնում։

Նրան գժուացնում էր այն, որ այդպիսի թեթեւամտութեամբ խաղում են փողի հետ։ Հարիւր հազար մի գիւղատնտեսական դպրոցի համար։ կարելի բան

Էր։ Անպատւում են փողը։ Հարիւր հազար... արտասանելն անդամ սարսափելի է։

Եւ վաշխառուն, վերին աստիճանի դառնացած, թքում էր ու հայհոյանքներ թափում...

VIII

Եկաւ տիրացու Գաբրիէլը, ժողովը իսկոյն բացուեց։ Նախագահում էր տանտէրը, Միրզաւբէկը։

—Գտար, տիրացու, հարցրեց նա։

Առաջ անցաւ մի կոլոր ու հաստ մարդ, պուտիպէս կարմիր գէմքով և զզով։

—Գտայ, պատասխանեց նա մի հեգնական հպարտութեամբ, որ ծիծաղ պատճառեց մի քանիսներին։

—Փառք Աստուծու, բացականչեց նախագահը. ստանալով տիրացուից մի թուղթ։ —Եւ բառը, ասում ես, շատ զօրաւոր է ու գեղեցիկ, հա։

—Այն, ես գտայ նրան ողորմածահոգի մեծ գիտնական Տէր-Մեսրոպի գրուածքների մէջ։ Ամբողջ օրը որոնում էի, հազիւ գտայ...

Ժողովը խնդրեց որ տիրացուն ծանօթացնէ իր այդ գիւտի հետ։

Տիրացու Գաբրիէլը կանգնեց մէջ տեղ և ձեռքը դնելով բերանի աջ անկիւնին, արտասանեց վանկվանկ։

—Անզուգական...

Բառը, իսկ որ, մեծ տպաւորութիւն գործեց։ Շատերը աշխատեցին կրկնել. բայց չէին կարողանում. և տիրացուն ստիպուած եղաւ աւելի բարձր ու դանդաղ կերպով ասել.

Անզուգական.,.

Նախագահը վերջ գրեց ժողովականների քրթմնջիւններին, ասելով.

—Մենք անգիր անելու համար չենք այստեղ հաւաքուել. ով ուզում է սովորել, կարող է վաղը, միւս

օրը տիրացու Գաբրիէլի դպրոցը գնալ։ Բառը ինձ շատ լաւ է թւում և խրթին էլ է։ Տիրացնւ, բացատրիր։

Տիրացուն հասկացրեց բառի միտքը, պատմեց թէ ինչ հանգամանքների մէջ է գործ ածել նրան մեծ գիտնական Տէր-Մեսրոպը, ինչպէս էր նա բացատրում միտքը։

— Շատ լաւ, ասաց նտխագահը. — այդ բառը հօկան այս թղթի մէջ։

— Այն, դրած է ճակատին, խոշոր տառերով։

— Պէտք է, տիրացու, հասկացնել նրան որ այս բառը Տէր-Մեսրոպինն է. դա շատ կազդէ. նրա ուսուցիչն է...

— Եւ շատ յարգում է հանգուցեալին, աւելացրեց տիրացուն, գլխով հաւանութեան նշաններ անելով։

Կարդացուեց թուղթը.

Տիրացու Գաբրիէլը յօրինել էր մի ուղերձ՝ «Առ անզուգական բարերարն» վերնագրով։ Դրա մէջ տիրացուի բոլոր հայրենակիցները, մեծից սկսած մինչեւ փորիը, իրանց անսահման ցանկութիւններն էին յայտնում Պապ իշխանապետի վեհազն ժառանգ Փօղէֆի շնորհաբեր գալստեան առիթով։ Նկարագրուած էր թէ երախտագիտութեան, հիացման որքան ու որքան բուռն զգացմունքներ են յուզում բոլոր սրտերը, տեսնելով տիեզերահռչակ մարդուն հայրենի ընտանիքի ծոցում։ Մի երկար շարք բարեմաղթութիւններից յետոյ, որսնք նուիրուած էին թէ անզուգականին, թէ նրա պատուական կողակցին և թէ այդ երկուսի «իշխանատոհմ» ճետերին», ուղերձը մօտենում էր իր վախճանին դարձեալ մեծի ու փոքրի հիացմունքների նկարագրութեամբ։ Այնուհետեւ գալիս էին մի քանի տողեր, որոնց մէջ տիրացու Գաբրիէլը ցոյց էր տուել գրչի ճարպիկութիւնը։ Յիշեցնելով Աւետարանի «քանքարաթագոյց ծառային», նու ասում էր, որ իրանք չեն լինի «ծառայք անպիտանք, այլ կաշխատեն ապացուցանել, որ «արժանի է մշակն վարձու իւրում»։

Ունկնդիրները ոչինչ առարկութիւն չունեին։
— Ենորհակալութիւն տիրացու Գաբրիէլին, առա-
ջարկեց նախագահը։

Աղմկալի հաւանութիւնների մէջ լսուեց գինեվա-
ճառ Մարգարի ձայնը։

— Գովասանքներով ջուալ չի լցնուի, Միրզա-բէկ,
ասաց այդ շիլ մարդը։ Ես իմ կողմից մի կուժ կար-
միր գինի եմ նուիրում տիրացու Գաբրիէլին։ Գիտես,
տիրացու, քո սիրած գինուց, № 11 տակառից։

Ենորհակալութիւն յայտնեցին և գինեվաճառին,
իսկ մի քանիմները խոստացան «տեսներ» ափրացուին։

— Եատ ուրախալի է, որ մեր հասարակութիւնը
այսքան ոգեւորուել գիտէ, ասաց նախագահը։ — Մենք
հասարակութիւն ենք կազմում այս բոպէին և Մարգա-
րի նուէրը ցոյց է տալիս, որ պատրաստ ենք հասարա-
կական բարիքի համար նոյն իսկ անձնական գոհովու-
թիւններ էլ անել։

Նախագահն էլ որոտածայն շնորհակալութիւններ
ստացաւ։

Ապա երեք մարդ ընտրեցին, որոնք պիտի ներ-
կայացնէին ուղերձը։

Հնարուածներից մէկը դաւառական քաղաքի գե-
պուտատն էր, մի երիտասարդ մարդ, որ թէկ տեղացի
էր, բայց երկար տարիներ բացակայ էր եղել հայրենի-
քից և երեք տարի առաջ վերադարձել էր՝ տեղացի մի
հարուստ կալուածատիրոջ գործերը կառավարելու պաշ-
տօնով։

Նա կանգնեց և ասաց.

— Ենորհակալութիւն եմ յայտնում ինձ ընտրողնե-
րին։ Այդպիսի մի պատգամաւորութիւնը, որից մեր
հասարակութիւնը սպասում է օգուտներ, պատուաբեր
է ինձ համար։ Բայց, պ. նախագահ, կը ինդրէի նորից
այստեղ արծարծել այն հարցը, որը ես երէկ այստեղ
յարուցի։ Արդեօք շատ չենք ոգեւորում։ և դրանով
չենք մնասում մեզ։ Մեր յարգելի հիւրին մենք չենք

ճանաչում. գուցէ մեր այս ցոյցերով վիրաւորում ենք նրան...

Բարձրացաւ աղմուկ, դժգոհութիւն։ Երիտասարդ դեպուտատի դէմ վազուց կազմուել էր ընդդիմա դիր կուսակցութիւն, որ իր պարտքն էր համարում չը հաւանել նրան։ Այսօր այդ հակառակութիւնը աւելի զօրեղ էր, երեւի կուսակցութեան պարագլուխները այսօր լաւ էին աշխատել։

Նախագահը հասկացաւ այդ և պատասխանեց.

— Պարոն Քարհանեան, գուք էլի խանգարում էք հասարակութեան բարի ձեռնարկութիւնը։ Երէկ ձեղ լսեցին, թէն չեմ կարծում, որ դրանից մի օգուտ ստացած լինենք։ Տեսնում էք, ալ. Աւետիսը երէկուանից խոռվել է և այժմ ժողովի էլ չէ եկել։ Նա այնքան աշխատում էր, որ ձեր ասածը չընդունուի...

— Ես դարձեալ իմ ասածի վրայ եմ և միշտ կը լինեմ, ալ. նախագահ, — պատասխանեց Քարհանեանը տաք կերպով։ — Ես ասում էի, որ կան հանգամանքներ, երբ պէտք է չափ ու սահման ճանաչել։ Պարոն Ժօղէֆ Պապի մասին ես էլ շատ բաներ եմ լսել և լաւ բաներ. լսել եմ և հաւատում եմ, որ նա մեծ բարերար է, կարող է անդին բարիքներ անել ոչ միայն մեզ, այլ և մեզ պէս շատ ու շատ տեղերին։ Բարերարութիւնը, պարոններ, բոլոր մարդկաց յատուկ մի մեծագործութիւն չէ։ Մեծ բանը կարող է կատարել մեծ հոգին։ Իսկ այդպիսի հոգիները առհասարակ լինում են համեստ, նայում են իրանց արածների վրայ իբրև շատ հասարակ բաների վրայ։ Իւրաքանչիւր աղմկաշատ ցոյց պիտի վիրաւորէ մեծագործ սիրտը ինքը, ըրիստոնէական զգացմնւնքը, դէմ է այդ աղմուկներին։ Անողը, տուողը չէ նայում թէ ինչ կասեն ստացողները։ Երէկ ես ասացի այս բաները և, չնորհակալ եմ, հասարակութիւնը լսեց ինձ։ Ես հաւատացած եմ այս բուպէին էլ, որ մենք լաւ բան ենք արել, հանդէսներով ու բահանայական խմբով չը գիմաւորելով պ. Պապին,

ինչպէս առաջարկում էին մի քանիսը։ Նա անպատճառ պիտի վիրաւորուէր. նա պիտի հասկսնար, որ եթէ մենք աղ ու հաց ենք մատուցանում, ահագին բազմութիւն ենք կուտում՝ նրա առաջ, պատճառն այն է, որ մենք նրանից անպատճառ մի բան ստանալ ենք ուզում։ Ամօթ է, երբ հասարակութիւնը վաճառքի է հանում իր համակրութիւնները, ամօթ է, երբ նա ցոյցեր անելու իր կարողութիւնը հրապարակ է բերում մուրացկանի մաքով։ Ցոյց տուէք, պարոններ, թէ դուք գիտէք գնահատել ձեր համակրութիւնները և բարերարների համեստութիւնը։ Սա, ի հարկէ, չէ նշանակում թէ մենք պիտի անշնորհակալ լինենք խողի նման։ Սպասենք, երբ պ. Պապի գեղեցիկ մտադրութիւններից մէկը կ'իրականանայ մեզ մօտ, այն ժամանակ, ի հարկէ, երախտագիտութեան և շնորհակալութեան անկեղծ ցոյցեր կը լինեն մեր ամենքիս կողմից։ Ահա այս պատճառներով իմ խորհուրդն է, որ այս անդամ էլ համեստութեան չափը չը մոռանանք...

Այդ երկար ճառը լսեցին ուշադրութեամբ—Քարհանեանը կարողանում էր շատ լաւ խօսել։ Բայց յետոյ էլի դժգոհութեան տղմուկ բարձրացաւ։

— Գուցէ այդպէս չէ, և մենք այս բոպէին ձեռքից տալիս ենք մի շատ գեղեցիկ առիթ, ասաց ժողովականներից մէկը։

— Ո՛չ, անհնարին է ընդունել, հաւատացնում էր մի սրիշը.—մարդը ամեն տեղ իշխաններին վայել պատիւներ է ստանում։

— Միայն մենք պիտի ցոյց տանք մեր կոպտութիւնը... Զուր չէ որ մենք այսքան խեղճ ենք։

Նախագահը իր կողմից էլ յայտնեց, որ համաձայն չէ պ. Քարհանեանի հետ։

— Իսկ ուր թագյնենք հասարակութեան այս ոչ գեւորութիւնը,—առաց նա. — Երբ էք տեսել այսակսի բազմամասդ ժողով։ Ասում էք՝ մեծ որտերը վիրաւորուել գիտեն. իսկ ինձ յայտնի է, որ այդպիսի սրտերը

յուղւում էլ են և առատաձեռնութիւնը շատ անգամ այդ յուղմունքի աստիճանից է կախուած։ Մեր պարագն է ինդրել, աղաչել, որովհետեւ խեղճ ենք։ Ցաւագարը բժշկի մօտ պիտի գնայ. բայց մենք այնքան հպարտ հիւանդ ենք, որ նստում ենք տանը և ուզում ենք, որ բժիշկը ինքը գայ մեղ մօտ ու ինքը հարցնէ թէ ինչ ցաւ ունենք։

Նախագահը բոլորովին ջարդեց Քարհանեանին։ Ժողովը միաձայն պահանջեց չը լսել այդ պարոնին։

— Խոնարհւում եմ հասարակութեան պահանջի առաջ, ասաց նա. — բայց ժողովը գոնէ պիտի որոշէ թէ ինչ պակասութիւնների վրայ պէտք է հրաւիրել բարերարի ուշագրութիւնը։

Վեր կացան ծրագիր ունեցողները. բայց գարբինների համքարի գլխաւոր Սիմօնը առաջ ընկաւ. Նա հասարակ արհեստաւորներից չէր և հերթը նրան տըրւեց։ Թէեւ նա ունէր իր սեփական արհեստանոցը, բայց ինքը չէր աշխատում. ճարպիկ ու հմուտ վարպետ էր, տարիների ընթացքում այնքան փող էր յետ դրել, որ չթեղէնի խանութ էր բաց արել իր որդու համար և հէնց այդ պատճառով էլ մեծ հեղինակութիւն ունէր արհեստաւորների մէջ։ Քարհանեանի ուկտեալ հակառակորդներից էր և հասարակական ժողովներում շատ աղմուկներ էր յարուցել։

— Մենք կարողութիւն չունենք ձեր նոր նշանակած հարկը տալու, ասաց նա գիմելով Քարհանեանին։ — Տեսնում էք այս բոլոր արհեստաւորներին. ամենքը ինձ հետ են...

Մի քանի ձայներ հաստատեցին որ նա ճիշտ է ասում։

— Հարկ ես չեմ դրել, — պատասխանեց Քարհանեանը — ես այդպիսի իրաւունք չունիմ էլ։ Հասարակական համախօսականով սահմանուած է կամաւոր տուրք. իւրաքանչիւր տուն ամիսը տալիս է հինգ կուպէկ, ուրեմն, տարին վաթսուն կոպէկ։ Մենք հաշուել

ենք և իմացել, որ այդ գումարը հեշտութեամբ կարող են տալ հինգ հարիւր տներ, մնացածներին, իբրեւ չունեւորների, ազատել ենք այդ վճարից:

Դարբին Սիմօնը իսկոյն պատասխանեց.

—Վաթսուն կոպէկը փող է, այն էլ մեծ փող, որ արհամարհել չէ կարելի: Մեր քաղաքը արհեստաւորների քաղաք է: Մենք աւելորդ երեք հարիւր ուուրկի պիտի տանք: Ինչու պիտի մեզանից այդքան փող դուրս գնայ: Բարերարը կը տայ, եթէ խնդրենք:

—Բայց դա ամօթ է... Երեք հարիւր ուուրլով մենք մի քանի գործ պիտի կատարենք.—պիտի մաքրենք մեր փողոցները, երեք նոր լապտեր գնենք, հարկերի գրասենեակի համար տուն վարձենք: Սրանք մանր հարկաւորութիւններ են, ինչպէս կարելի է խնդրել մեր յարգելի հիւրին որ նա վերցնէ մեր այդ ծախսերը: Հինգ կոպէկը մեծ փող չէ. մենք պէտք է սովորենք ինքներս էլ մի բան անել մեզ համար: Ամեն անդամ ժօղէֆ Պապը այստեղ ըլ պիտի մնայ, իսկ վաղը կարող է պատահել մի այլ հարկաւորութիւն. Երբ հինգ կոպէկով կարելի է մեր ցաւին գարման անել, ինչու դիմենք ուրիշն խնդրենք:

Դարբին Սիմօնը չը համոզուեց: Մեծամասնութիւնը նրա կողմն էր:

—Մենք չունենք, թող մեզ այդ լաւութիւնն անեն, մեծ փող չէ, ասում էին այս ու այն կողմից:

Նախագահը վերջացրեց վիճաբանութիւնները, առելով որ պէտք է կատարել հասարակութեան կամքը:

Իսկ հասարակութիւնը դրանից յետոյ սկսեց պահանջել որ մի քանի ուրիշ տուրքեր էլ յանձն առնէ բարերարը: Ուսումնարանին ժողովուրդը տալիս էր տարին հարիւր ուուրլի. բանտին՝ վառելիքի համար հարիւր երեսուն ուուրլի. փողոցների լուսաւորութիւնը հարիւր ուուրլուց աւել էր նստում, հարկահանն ու նրա դրագիրը ստանում էին մօտ երկու հարիւր քսան ուուրլի. երկու սենեակ էր վարձւում ստիկանական պրիստաւի

դիւանի համար. այժմ պահանջում էին երրորդ սենեակ էլ աւելացնել, ուր պիտի պահուեն ձերբակալուածները. Դարբին Սիմոնը պահանջում էր խնդրել որ այդ բոլորը բարերարը տայ:

—Խնդրել, խնդրել, կանչում էին արհեստաւորները:

—Ես այդ տեսակ բաների համար չեմ գնայ խընդրելու, ասաց Քարհանեանը,

—Իրաւունք չունիք, դուք մեր ներկայացուցին էք:

—Միթէ ձեր ներկայացուցիչը պարտաւորութիւն է յանձն առել աշխատելու որ ձեր ուտելի հացն էլ ուրիշները տան:

—Այդ հարկաւոր չէ. դու միայն ազատիր մեզ հարկերից—և մենք շատ լաւ կ'ապրենք:

—Պարսններ, միթէ մենք չունենք աւելի մեծ պակասութիւններ, որոնց վերացնելու համար միջոց չունինք և երեք չենք ունենայ և որոնց համար իսկ որ հարկաւոր է մի բարերար: Խնդրենք մի մեծ բան, մի մշտական բարերարութիւն. ամենքդ գիտէք մեր պակասութիւնները. քիչ առաջ, քանի որ ժողովը չէր սկսուած, շատերդ էիր խօսում դրանց մասին:

Դարբին Սիմոնը և մեծամեծներից ոսկերիչ Դրիգորը յայտնեցին հասարակութեան կողմից, որ ունենալով պակասութիւններ, գարձեալ կարելի է ապրել, ինչպէս ապրել են մինչեւ այսօր: Ժողովուրդը թեթեւութիւն է խնդրում: և եթէ բարերարը մի հինգ կամ տասը տարի ազատէ ժողովուրդը այդ տուրքերից, շատ մեծ բան կը լինի. իսկական բարերարութիւնը հէնց գա է: Ոսկերիչ Դրիգորը մի հիանալի օրինակ էլ բերեց:

—Ասենք թէ իմ գրպանից տարին 15 ոսւրլի է դուրս գալիս՝ գլխահարկի, քաղաքային տուրքերի համար: Եթէ մէկը գայ և ինձ ասէ թէ «դու միայն 10

ռուբլի տուր, մնացած 5-ը ես կը տամ», դա կը նշանակէ թէ այդ մարդը ինձ հարիւր ռուբլի է պարզեւում և այդ վողք գնում է իմ անունով բանկում։ որովհետեւ ով որ բանկում հարիւր ռուբլի ունի, նա տարին 5 ռուբլի տոկոս է ստանում։

Սրամիտ հաշիւր ամեն կողմից հաւանութիւնների արժանացաւ. ամեն մէկին այնպէս էր թւում թէ արդէն բանկում ունի հարիւր ռուբլի, որ ընծայել է ժօղէֆ Պապը։

—Մեզ մեղադրում էք, որ ուզում ենք լաւ ապրել, բացականչեց գինեվաճառ Մարդարք։

—Միթէ քեզ համար էլ դժուար է տարին երեքշորս ռուբլի աւել տալ, հարցրեց Քարհանեանը։

—Ինչո՞ւ է դժուար Փառք Աստուծու, ունեմ... Բայց եթէ չը տամ, միթէ վատ կը լինի ինձ համար։ Պարոն Քարհանեան, եթէ դու մի տեղ չորս ռուբլի գտնես, կարծեմ դէն չես դցի, գրպանիդ տեղը գիշտես...։

Ընդհանուր ծիծաղ առաջացաւ։ Կօշկակար Ոսկանը ժողովի առաջ հրաժարուեց իր ծրագրեց։ Նրա օրինակին հետեւեցին մսադործ Սեթը, ներկարար Կարապետը։

—Ամենից առաջ մենք պէտք է լաւ լինենք, ասաց այս վերջինը։ Ժողովը իմաստուն է։

Նախադահը շտապեց վերջացնել ժողովը, որպէս զի այլ ևս տարածայնութիւններ չը լինեն։ Քարհանեանին նա ասաց, որ խօսելու իրաւունք չի տայ և հրավիրեց ստորագրել ուղերձը։ Չը ստորագրեց միայն Քարհանեանը, նա պնդեց իր հրաժարականի վրայ, և նրա տեղ ընտրուեց ոսկերիչ Գրիգորը։

Դարբին Սիմոնին քիչ էր մնում որ ձեռքերի վրայ դուրս տանեն գահին թիւ։ Դժգոհ մարդ չը կար. բանկի հարիւր ռուբլին ոչ ոքին աւելորդ չէր թւում..։

IX

Անբողջ գաւառական անկիւնը գիտէ որ ժօղէֆ
Պապը այսօր առաջին անգամն է տանից դուրս եկել
և ուղիղ գնացել է եկեղեցի:

Նա մենակ էր. կինն ու երեխաները յոգնած էին
երէկվայ ճանապարհորդութիւնից: Պատարագի աւետա-
րանը նա համբուրեց: Կանգնած էր ամենքից առաջ,
դողիրների ետևում: Դանձանակ հաւաքողները ակնա-
ծութեամբ կանգ էին առնում նրա առաջ և այդ մի-
ջոցին ազօթող բազմութեան աչքերը նրա վրայ էին
յառած: Երբ գանձանակ հաւաքողները հեռանում էին
նրանից, եկեղեցում սկսում էր մի հանդարտքրթմնջոց:
Աւելի համարձակները հարցնում էին քահանայից կամ
տիրացուներից թէ որքան տուեց և, ստանալով շատ
գոհացուցիչ պատասխան, հաղորդում էին իրանց մօտ
կանգնածներին: Ազօթող շարքերի առջեւով անցնում
էին այն թղթադրամները, որ գրել էր թարախում այն
գեղեցիկ հագնուած պարոնը և ամենքը զմայլուած նրան
էին նայում: Հպարտանում ու ամեն բարիքներ մաղ-
թում նրա համար:

Ժամից յետոյ ժողովրդի մի մասը սպասում էր
բակում, որպէս զի տեսնէ հռչակաւոր մարդը: Բայց
նո այդ միջոցին խօսում էր երէցփոխի, աւագ քահա-
նայի և մի քանի եկեղեցասէր մարդկանց հետ: Թօսակ-
ցութեան նիւթը եկեղեցու պակասութիւններն էին.
Երէցփոխը պատմում էր, անթիւ անգամ շնորհակալու-
թիւններ յայտնեց նրա ուղարկած նուէրների համար:
Պատմեցին թէ որքան գոհ և ուրախ էր հանգուցեալ
մեծ գիտնական Տէր-Մեսրոպը, որի նամակների հե-
տեանքն էին այդ նուէրները:

— Բայց ուր են նրանք, ես չեմ տեսնում, ասաց
ժօղէֆը:

Երէցփոխը առաջնորդեց նրան դէպի իր խորանը

և ցոյց տուեց նրա կողքին կախ արած պատկերը, առելով.

—Ահա մէկը:

Ժօղէֆը հաւանութեան նշան արաւ։ Ստեփանոս Նախավկայի քարկոծման պատկերն էր, յայտնի նկարչի գործ։ Նա պատմեց թէ ինչ գումարով է առել պատկերը, որքան դժուար էր նրան այսքան հեռու տեղ ուղարկելլ։ Երէցփոխը հաստատում էր նրա խօսքերի ճշմարտութիւնը, քահանան անդադար բարեմաղթութիւններ էր անում։ Իսկ նուիրատուն այդ ժամանակ կարդում էր պատկերի տակ իր գրել տուած արձանադրութիւնը։ Հասնելով մի տեղի, նա կանգ տռաւ, յօնքերը կնճռեց և հարցրեց մի խիստ ձայնով.

—Այս ի՞նչ բան է։

Արձանադրութեան այն տեղը, ուր յիշատակուած էր նուիրատուի ազգատոհմը, այրուած էր։

—Մոմն է այրել, բացատրեց քահանան։

—Դիտեմ, ինձ յայտնի է, ասաց երէցփոխը։

—Այսպէս էր պահում մարդու յիշատակը, կծու կերպով հարցրեց Ժօղէֆը, ոչինչ միիթարութիւն չը զգալով այն հանգամանքից, որ այրողը մոմն է եղել և երէցփոխը գիտէ այդ։

Եւ նա կամեցաւ իմանալ թէ երբ է պատահել այդ բանը։

—Մի տարուց աւել, բացականչեց նա, լսելով երէցփոխի պատասխանը։—Եւ այդքան ժամանակ դուք թողեցիք այսպէս, անյիշատակ, մոռացուած։

Նրա ճակատի երակը ուռեց, կապտաւուն գոյն ընդունեց։ Խոշոր աչքերն էլ վկայում էին թէ որքան շատ է նա բարկացել։ Երէցփոխը հազիւ կարողացաւ արտասանել.

—Ես նորոգել կը տայի, բայց այստեղ այդ գործը իմացող չը կայ։

—Ուրեմն, պարտաւոր էիք լաւ նայել։

—Ես նայում եմ միշտ, հէնց դրա համար էլ իմ

խորանի մօտ եմ կախել։ Փորձանքը պատահել է այն ժամանակ, երբ ես այստեղ չէի։ Երբ եկայ ժամհարը պատմեց. շատ ափսոսացի, բայց ինչ անէի...

Մարդկանց փոքրիկ խումբը, որ ներկայ էր այդ խօսակյութեան, տեսաւ թէ ինչքան ծանր բան է եղել մեծ մարդու բարկութիւնը։ Նրա հայեացքի առաջ հալւում էին մարդիկ, զգալով, որ նա իրաւունք ունի, որ մեղաւորը եկեղեցու պաշտօնեաներն են։ Բոպէական լուսթիւնից յետոյ ժօղէֆը նորից զննեց այրուած տեղը և պահանջեց ժամհարին։

Եկաւ նա, մի վիթխարի ծերունի, ժանի պէս սպիտակ ահազին միրուքով, որ ծածկում էր նրա ամբողջ կուրծքը։ Խոնարհութեամբ գլուխ տալով բարերարին, նա այսպէս պատմեց այդ դժբախտ դէպքը։

— Դանիէլենց պառաւն արաւ։ Որդին ազատուել էր մեծ վորձանքից. գետով անցնելիս, վարարած ջուրը վերցնում է նրան, տանում։ Եթէ մի թուրք երկու րոպէ ուշ հասած լինէր, նա կը խեղդուէր անպատճառ։ Պառաւը վաղեց եկեղեցի, մի ջուխտ մոմ առաւ ինձանից։ Խեղճը համարեա կոյր է, թոռնն է նրան ման ածում։ Միւս ժամանակները նա ինձ էր տալիս մոմերը, ինդրում որ վառեմ իր ուզած տեղերում։ Բայց այս անգամ ասաց թէ իր ձեռքով պիտի վառէ որ սիրտը հանգստանայ։ Զանգակի ժամանակն էր, ես գնացի զանգակատուն։ Վերագարձայ և տեսայ այս բանը։ Պառաւը փոխանակ մոմը մոմակալի մէջ դնելու, կպցը-րել է պատկերի շրջանակին։ Մոմը ծռուել է և այդպէս այրել։ Դեռ լաւ որ շուտ հասայ. կարող էր ամբողջ պատկերը այրուել...

Ժօղէֆը զայրացաւ մանաւանդ այն վերջին խօսքերից, որոնք արտասանուեցան մի վիրաւորական սառնութեամբ։

— Պատճառը, ուրեմն, դու ես,— գոչեց նա բռունյը ուեղմելով և մի բայլ առաջանալով դէպի ժամհարը։ Եերունին անվրդով մնաց, կանգնած էր ուղիղ,

նայում էր անթարթ աչքերով։ Նա երգուեց եկեղեցու սրբութիւններով, որ դէպքը այդպէս է պատահել, որ դանգակը պէտք էր տալ։

—Կարող էիր յետաձգել, կարող էիր առաջ նայել, պահպանել պատկերը, ապա դնալ գործիդ։

—Բայց ժամը մնում էր. քահանաները, ժողովուրդը պահանջում էին...

—Դու դեռ ինձ պատասխաններ ես տալիս, գոռաց իշխանաւորը, նոյն իսկ մոռանալով թէ որտեղ է գտնվում։

Մի քանիսը բռնեցին ժամնարին, յետ քաշեցին և պատուիրեցին լռել։ Բայց իզուր, ծերունու աներեսութիւնը արդէն վերջացրել էր ամեն ինչ։ Ժօղէֆին այլ ևս պատկերը չէր այնքան վրդովեցնում, որքան այդ պատասխանները։ Նա տեղեկացաւ երէցփոխից որ ժամնարը այստեղի բնիկներից չէ, յանդիմանեց նրան որ թողնելով բուն քաղաքացիներին, զանազան եկուորների են պաշտօն տալիս ու հրամայեց որ այսօր և եթ արձակեն նրան։

Երկրորդ նուէրը նոյնպէս մի պատկեր էր ի յիշատակ Սիւզանի ծննդեան։ Նա կախուած էր կանանց բաժնում, մի նեղլիկ պատուհանի կողքին։ Պատուհանը ծածկուած էր և պատկերը համարեա կորած էր խաւարի մէջ։

Ժօղէֆը լուռ կանգնեց նրա առաջ։ Սուրբը, կարծես, գանգատուում էր նրան, այնքան տխուր ու վըշտահար էր նրա դէմքը մթութեան մէջ։ Երէցփոխը և քահանան ուզեցին հասկացնել որ պատուհանը նոր է փակուած դրսի մի ինչ որ կարկատանի համար, որ շուտով կը բացուի և այն ժամանակ խաւարը, ի հարկէ, կը չըանայ։

—Հէնց սկզբից այստեղ էր պատկերը, հարցրեց նուիրողը մի խուլ ձայնով։

Եւ ստանալով դրական պատասխան, նա ծանր կերպով շարժեց գլուխը և ասաց.

— Շնորհակալ եմ, շատ շնորհակալ եմ... Լաւ պահել էք մեր յիշատակը... Այս պատկերի առաջ մարդէլ չէ կանգնել...

Նա կուացաւ, տնտղեց մոմակալը:

— Մոմ էլ չէ վառուել... Երէցփոխ, շատ շնորհակալ եմ... Ժօղէֆ Պապի յիշատակի համար այս մոռացուած, աննկատելի անկիւնն էք գցել եկեղեցու մէջ... Շնորհակալ եմ:

Նա դուրս գնաց հիւսիսային դռներից և արագ քայլերով հեռացաւ...

Եկեղեցու բակում մնացածների համար այլ ևս ոչ մի կասկած չը մնաց, որ նա սաստիկ դժգոհ է։ Երկար խօսում էին այդ մասին և ամենքը վկայում էին որ նա իրաւունք ունի, մեղաւորը ժողովուրդն է։

Նոյն օրը երեկոյեան եղեղեցու ամբողջ քահանայական միաբանութիւնը ներկայացաւ Պապին, օրհնեց նըրանց տունն ու ընտանիքը։ Լիւսին պատկառանքով մօտեցաւ աւագ քահանայի աջին, երեխաները մի մի նշխարը ստացան։

Թէյի վրայ աւագ քահանան խօսք սկսեց բարերարների և բարեգործութիւնների մասին։ Ժօղէֆը գանգատների մի ամբողջ ծրար բաց արաւ, ասաց որ իր հայրենի քաղաքը դժբախտ է և դժբախտ այն պատճառով, որ սպանում է ամեն մէկի ջերմեռանդութիւնը, յոյսերը ի՞նչպէս էր նա գալիս իր հայրենիքը և ի՞նչ տեսաւ։ Նա խօսեց պատկերների մասին, ասաց որ նոյն իսկ ժամհարը չէ հառկանում թէ ինչպէս պէտք է վարուել մի մարդու հետ, որին աշխարհն է ճանաչում։ Եւ լիւսին միանգամայն համամիտ էր նրա հետ։

Աւագ քահանան, հեզ դէմքով ու ծանրախօս մի մարդ, աշխատում էր մեղմացնել երկու ամուսինների ստացած վատ տպաւորութիւնը։ Այնուամենայնիւ, Ժօղէֆը վճռական կերպով յայտնեց որ չարժէ մի բան անել այստեղի համար, բանի որ մարդիկ այդպէս են։ Եւ այդ վճռականութիւնը այնքան ազդու էր, որ աւագ

քահանան, դուրս գալով նրա մօտից, հարկաւոր համարեց իսկոյն և եթ տեսնուել Միրզա-բէկի հետ:

Թէև մուժ գիշեր էր, բայց գաւառական քաղաքի բոլոր նշանաւոր մարդիկ հաւաքուեցան Միրզա-բէկի տունը: Խորհուրդը հասաւ այն եղակացութեան, որ ուսկերիչ Գրիգորը մեծ սխալ է գործել, համոզելով իր ընկերակից պատգամաւորներին թէ ուղերձը պէտք է ներկայացնել եկեղեցուց վերագառնալուց յետոյ: Մի և նոյն ժամանակ նա շատ խելացի է վարուել, որ, իմանալով եկեղեցում պատահածը, աւելորդ էր համարել ներկայանալ Ժօղէֆին այնպիսի ժամանակ, երբ նա զայրացած էր, դժգոհ: Ու վճռեց որ պատգամաւորները քիչ էլ սպասեն, մինչեւ որ կ'իմացուէր թէ ինչ կարելի է անել...

X

Ի՞նչ անել:

Տեսնում էին ամենքը, որ Ժօղէֆ Պապից կարելի է ստանալ, տեսնում էին որ նա այստեղ եկել է՝ բաժանելու համար: Նրա տունը գարձել էր, ինչպէս ասում են, ուխտատեղի, այնքան շատ էին այնտեղ գընացողները: Դնում, խնդրում էին խեղճերը, կարօտները: Եւ ստանում էին, ոչ ոք դատարկաձեռն չէր մընում: Ստացողները հրաշալի լուրեր էին տարածում ամեն տեղ: Տիկին Լիւսին անձամբ խօսեցնում էր, տեղեկութիւններ էր իմանում և դրանց համեմատ բաց էր անում իր քսակը: Նա իր ձեռքով մի կոյտ շորեր էր տուել չորս որբ ունեցող մի մօր: Երկու բեռն ալիւր էր ուղարկել մի թշուառ հիւանդի:

Իսկ հասարակութիւնը...

Ամենից առաջ նա պիտի լինէր, բայց բարերարը չէր տեսնում նրան և չէր ուղում տեսնել: Պատգամաւորութիւնը երկու երեք անդամ փորձեց ներկայանալ, բայց մերժում ստացաւ: Դա ցոյց էր տալիս, ու Ժօ-

զեֆ Պապը հեշտութեամբ չէ մոռանում և մանաւանդ չէ ներում:

Իսկ ներողութեան արժանանալու համար հասարակութիւնը նոյն իսկ ծանր զօհերից չը քաշուեց: Բոլորովին հեշտ բան չէր հաշտուել այն մտքի հետ, թէ ժամհար Մելքոնմը պիտի հեռացուի եկեղեցու դռնից, այն տեղից, ուր նա կանգնած էր քսան և վեց տարի... Բայց ճար չը կար:

Երբ վիթխարի ծերունին լսեց իր մասին կայացրած վճիռը, լաց եղաւ եկեղեցու դռների առաջ: Լաց եղաւ և ծերերի ու պառաների այն դասակարգը, որ մինչեւ գերեզման մտնելը վերջացնում է իր բոլոր աշխարհային հաշիւները, դառնում է ազօթող, միայն եկեղեցու գործերով է հետաքրքրում: Այդ դասակարգի համար չէր կարող լինել եկեղեցու բակ առանց ժամհար Մելքոնմի... Կայ մէկը, որ փոխարինէ նրան: Խոնարհ մեծի ու փոքրի տռաջ, քաղցրախօս, սիրող, օրհնութիւնների անսպառ շտեմարան, նա պատիւներ էր ստանում ժողովրդից, մի քահանայի արժան պատիւներ: Թէև անդրադէտ էր նա, բայց սովորել էր ազօթքներ, երբեմն երգում էր քահանայի հետ: Կանայք միաբերան վճռեցին՝ որ եկեղեցին տիրել է ժամհար Մելքոնմի հեռանալուց յետոյ: Շատերը խնդրում էին նրան որ առ ժամանակ եկեղեցի չը գայ, որովհետեւ շատ մարդ չունէր այնքան անտարբեր սիրտ, որ չը յուղուէր այն տեսարանից, երբ երեխաները, վազելով նրա ետեւից, կանչում էին՝ «պապիկ, պապիկ. նշխար տուր», իսկ նա դողդոջիւն ձայնով պատասխանում էր որ պապիկը այլ ևս ժամհար չէ...

Ընդհանուր ափսոսանքների մէջ աննկատելի անցաւ երեցփոխի հրաժարականը: Նա էլ մեղաւոր էր, և հեռացաւ իր կամքով, լցուած մի ջերմ սիրով դէպի հասարակութեան բարիքները:

Պատգամաւորութեան համար հարթուեց ճանա-

պարհը։ Բայց այդպէս թւում էր։ Մի նոր մերժում ևս, և ամենը հարցնում էին. «Հիմա ի՞նչ անել»,

Մի օր էլ այդ հարցը կլանեց։ Իմացել էին, որ միայն Աւետիս անունով մարդն է անարդել մտնում Ժօղէֆ Պապի տունը, ուր նա կարճ միջոցում «փրանց մարդ» էր դառել.

Հասարակութեան մեծերը նրան դիմեցին։

—Լսեցիք մի յիմարի խօսքերին, այժմ զղացէք, ասաց Աւետիսը։ —Շատ մեծ բաներ կորցրիք։

Մեծերը խնդրում էին նրա միջնորդութիւնը, իսկ նա ահագին գժուարութիւններ էր յարուցանում։

—Յիշում էր, ինձ մենակ թողեցիք։ Քարհանեանը խելօք է, ասում էիք դուք։ Տեսաք։ Աւետիսը, որ մի քանիսների աչքի փուշն է դարձել այն պատճառով, որ այլ ևս հարուստ չէ, մենակ գնաց, բարի գալուստ մաղթեց։ Եթէ ամենքս գնայինք, նա հիմա մեր մէջ նստած կը լինէր. կը լսէր մեզ։

Մեծերը յայտնեցին, որ անցածը անցել է։ Երկար յորդորում էին նրան հասարակութեան այդ լաւութիւնն անել, առաջնորդել պատգամաւորներին։ Աւետիսը, վերջապէս, յօժարուեց բարեխօսել, թէև չէր հաւատում թէ դրանից մի բան կը գոյանայ։ Նա միայն այն ժամանակ վերջ տուեց իր տխուր գուշակութիւններին, երբ մեծերը դրականապէս յայտնեցին որ միակ յոյսը նա է մնացել։

Եւ մի երեկոյ տեղի ունեցաւ հանդէսը։

Ժօղէֆ Պապի դահլիճը փառաւոր կերպով լուսաւորուած էր։ Վերեւի կողմում կանգնած էին երկու ամուսինները, որոնք հագել էին տօնական զգեստներ։ Տիկին Լիւսիի գագաթի վրայ, ճաշակով ոլորած թուխ մնացերի մէջ, այրւում էր խոշոր ադամանդեայ աստղը։ Ուկեղօծ ջահի ճրագները շացուցիչ փայլեր էին հանում այդ աստղից։ Ժօղէֆի կրծքի վրայ երեւում էր աւստրիական շքանշանը։

Ծնողների առաջ կանգնած էր Միշէլը՝ նաւազի

գեղեցիկ շորեր հագած, ֆաննին և միւս աղջիկը նըստած էին նրա ձախ կողմին:

Ներս մտան պատգամաւորները և շարուելով պատի տակ, խոնարհ կերպով գլուխ տուին և ստացան պատաժիսան նոյն ձեւով։ Աւետիսը, որ ամենքից յետոյ ներս մտաւ, առաջնորդեց պատգամաւորներին դէպի գալիճի վերեւը։ Ոսկերիչ Գրիգորը, սպիտակ մազերով և կարմիր թշերով մի լիբը մարդ, ներկայացրեց Ժօղէ-ֆին թուղթը։ Բայց սա հայեացըով ցոյց տուեց իր կնոջը, որ երկու մատի ծայրով վերցրեց ուղերձը, առւեց Միշէլին։

—Մեր հասարակութեան կողմից շնորհաւորում ենք ձեր գալուստը և յայտնում ենք մեր յատուկ շնորհակալութիւնները ձեր ուշադրութեան համար, որով պատուել էք մեզ։

Ժօղէֆը գլուխ տուեց, իսկ տիկինն ասաց.

—Շնորհակալ ենք, պարոններ։

Հանդէսը վերջացաւ։ Աւետիսը մի մի ներկայացրեց պատգամաւորներին, որոնք սեղմեցին ամուսինների և երեխաների ձեռքերը։

Տիկինը ինդրեց նստել։ Ծառան թէյ բերեց։ Լիւսին սիրալիր կերպով հիւրասիրում էր պատգամաւորներին. շիշերով խմիչքներ էր գնում նրանց առաջ, թըշուուածքներ էր առաջարկում։ Իսկ Ժօղէֆը, մոռացութեան տալով իրան հասցրած վիրաւորանքները, հարցու փորձ էր անում իր հայրենիքի որպիսութիւնների մասին։

—Այս, մի քանի բան յիշում եմ իմ մանկութիւնից, շատ բան էլ լսել եմ, ասաց նա։ Այս քանի օրն էլ պ. Աւետիսը, շնորհակալ եմ, շատ պատմութիւններ արաւ. այնպէս որ այժմ ես ձեզ ճանաչում եմ։

—Աստուած երկար կեանք տայ ձեզ, պատասխանեցին պատգամաւորները։

—Անցեալ տարիները, շարունակեց Ժօղէֆը, մի ֆրանսիացի ճանապարհորդ եկել էր այս կողմերը. բա-

ցի գիտուն լինելուց նա մի բաւական նշանաւոր առեւտրական տան հետ կապեր ուներ։ Վերադարձին նա գործով մտնում է մեր գրասենեակը։ Ինձ իմաց տուին որ կայ այսպիսի մի մարդ։ Հրաւիրեցի մօտս, պատիւներ արի, երկու ժամից աւելի խօսացի այս կողմերի մասին։ Տեսայ որ շատ էլ գոհ չէր։ Ես յայտնեցի որ իմ հայրենիքն է այդ երկիրը։ Բայց դա բաւական չէր. այստեղ նրա վրայ ոչ ոք ուշագրութիւն չէր դարձընել, ես մի մեծ երեկոյթ սարքեցի ի պատիւ նրա։ Նա փոխեց իր լեզուն և այնուհետեւ հիացած էր խօսում մեր երկրի մասին։ Մինչեւ իսկ առեւտրական լրագրում մի մեծ յօդուած տպեց, որի մէջ գովում էր այստեղի բերքերը, այստեղի մարդկանց։ Նա ձեզ ամենքիդ անուանեց հանճարեղ աշխատաւորներ և այդ խօսքերը հաստատելու համար գրեց իմ առեւտրական տան պատմութիւնը։ Դուք, ի հարկէ, չէք հասկանում...
—ի հարկէ, շտապով ասացին պատդամաւորները։

—Ասում եմ որ չէք հասկանում թէ ինչ նշանակութիւն ունի, երբ օտարները մեր մասին լաւ կարծիք են կազմում։ Եւրոպայում միայն լաւ բանն են սիրում։ Մտնում ես մի հասարակ գիւղ—ամեն ինչ մաքուր է և կարգին։ Իսկ այստեղ մարդիկ քնած են, չեն հասկանում և օտարի առաջ իսկոյն իրանց պակասութիւններն ու վատութիւններն են բաց անում։ Դա շատ վատ է։ Եթէ ֆրանսիացին. ինձ պատահած չը լիներ, ինչեր կը գրէր ձեր մասին։ Բայց ես նրան գովել տուի։ Մեր օգուար դա է։

—Անպատճառ, Ժօղէֆ-աղա, —ասաց ոսկերիչ Դրիգորը, թէյի մէջ կաթեցնելով ուօմը, որին շատ հաւանել էր. —մեզ համար շատ էք ցաւում, շատ էք աշխատում։ Ի՞նչպէս կարելի է որ մենք մոռանանք...
Խօսակցութեան մէջ մտաւ և տիկին Լիւսին։

—իմ ամուսինը մոռացաւ մի ուրիշ գործ։ Պարիզում քնակւում է անկիւրացի մի հայ, որ շատ կարդացած մարդ է։ Նա մի մեծ աշխատութիւն էր գրել

Փրանսերէն լեզուով Յովհան Մայրագոմեցու մասին,
այսինքն հաստատում էր, որ հայերը հերետիկոս չեն,
ինչպէս ասում են կաթոլիկները։ Ժօղէֆը իր ծախսով
հրատարակեց այդ գիրքը և հիմա էլ չեն համարձակուի
մեր եկեղեցու մասին վատ խօսել. այնտեղ հաստատ-
ուած է որ մենք հիմա էլ Լուսաւորչի զաւակներ ենք։
Այս պատճառով ժօղէֆը օրհնութեան թուղթ է ստա-
ցել Երուսաղէմի հայոց պատրիարքից։

—Կը ստանար, անպատճառ, հաստատեց ոսկերիչ
Գրիգորը, դիմելով իր ընկերներին։

Ժօղէֆը դուրս գնաց և ըոպէ չանցած՝ վերադար-
ձաւ, բերելով իր հետ գրքեր—Փրանսիացու յօդուածի
արտատպութիւնը և Մայրագոմեցու պատմութիւնը։ Նա
մի մի հատ տուեց պատգամաւորներին, որոնք որտա-
գին չնորհակալութիւններ յայտնեցին։

—Մեր հասարակութիւնը սպասում է ձեր ողոր-
մութիւններին, ասաց պատգամաւորներից մէկը, գըր-
քերը գնելով ծնկան վրայ։

—Հասարակութիւնը սպասում է, հարցրեց Ժօղէֆը։
Եւ իսկոյն աւելացրեց։

—Թող սպասէ...»

Այն ժամանակ ոսկերիչ Գրիգորը թոյլտութիւն
խնդրեց ներկայանալ մի ուրիշ անդամ և յայտնել հասա-
րակութեան մի խնդիրքը։

—Ես լսել եմ այդ մասին, պատասխանեց Ժօղէֆը։—
պարոն Աւետիսը պատմեց՝ թէ ինչ էք ուզում։ Խնդրեմ
նեղութիւն չը կրէք, ես ինքս կը մտածեմ այդ
մասին և կը պատասխանեմ հասարակութեան։

Այնուհետեւ պատգամաւորները հեռացան իրանց
նուիրած գրքերի հետ։ Իսկ Ժօղէֆը ի նշան իր բարե-
հաճութեան պահեց Աւետիսին ընթրիքի և ամեն ան-
դամ, երբ խօսք էր լինում հասարակութեան ուղերձի
մասին, նա ասում էր.

—Վատեր կան... Պէտք է մկրտել...

XI

Հաշտութիւնը կայացած էր։ Նշանները մէկ մէկ երևում էին։

Սպիտակ աղբիւրի մի բաժակ ջուրը, որ խմեց Փօզ զէփ Պապը, հրաշքների սկիզբը բաց արեց։ Մի զարմանալի արագութեամբ աղբիւրի մօտ պատրաստուեցան շինութեան նիւթերը։ Վրաններ շինուեցան բանուորների համոր և մի գեղեցիկ առաւօտ, թռչունների երգերի հետ, սկսուեց աշխատութիւնը։ Գործում էին բանն ու բրիչը, որմնագիրները շտապեցնում էին ցեխ պատրաստող մշակներին, բարտաշները յղկում; գեղեցկացնում էին ճակատի բարերը։

Երկու շաբթուայ ընթացքում պատրաստ էր ամեն ինչ։ Աղբիւրի վրայ կանգնեցրած էր մի փոքրիկ գմբէթաձեւ շինութիւն։ Ջրի համար շինուած էր մի փոքրիկ աւաղան։ Իսկ աղբիւրի կողքին, հինաւուրց ծառի տակ, կառուցուած էր մի հասարակ, բայց լայնարձակ տուն, ուր աղբիւրի ջրին կարօտ մարդիկ կարող էին ապաստան գտնել անձրեւի տակ կամ գիշերել։

Կիրակի օր էր։ Պատրագը, որ դարձեալ Փօզէփ Պապինն էր, սովորական ժամից շուա սկսուեց և շուտ էլ վերջացաւ։ Զիւարների մի մեծ խումբ դնում էր երկու կառքերի ետևից, որոնց մէջ զետեղուած էր բարերարի ընտանիքը։ Հետեւակ մարդկանց մի բազմութիւն վաղուց էր ճանապարհուել։

Դրանք հրաւէր ստացածներն էին։ Փօզէփ Պապը մեծ ճաշկեցոյթ ունէր աղբիւրի մօտ։ Վաղ առաւօտեանից այնտեղ գործի էին կտել խոհարարները, ծառաների մի ամբողջ խումբ։ Սայլերով էին տեղ հասցրել սեղանի պատրաստութիւնները, մթերքները, գինին ու արաղը։ Պատրաստուել էր չը տեսնուած կեր ու խումբ։

Գաւառական բաղարը բոլորովին դատարկուել էր։ Հասարակ մարդիկ, այսինքն այնպիսիները, որոնք շատ

հեռու էին ժօղէֆ Պապի հրաւէրներին արժանանալու բախտից, շտապով ճաշեցին իրանց տներում և խումբ խումբ գնացին դէպի աղբիւրի կողմերը՝ հեռուից հանդիսատես լինելու համար:

Հրապարակում մենակ կանգնած էր Քարհանեանը: Նրան չէին հրաւիրել:

Շատերը, նրա սիրտը շահելու համար, ասացին որ դրա պատճառը պարզ է. նա չէ այցելել ժօղէֆին: Հասարակութեան բարձր դասը, պատղամաւորութեան ընդունելութիւնից յետոյ, առանձին այցելութիւն էր տուել նրան և բարի գալուստ մաղթել: Արժէր որ Քարհանեանն էլ, իբրեւ ամբողջ հասարակութեան պաշտօնական ներկայացուցիչ, քաղաքավարութեան և յարգանքի այդ պարտքը կատարէր: Բայց նա չուզեց այդ անել, ասելով թէ հասարակութեան պատիւր ամենից առաջ նրա ներկայացուցիչը պիտի պահպանէ:

Քարհանեանը բաւական էր համարել և այն, որ մի օր նրան հրապարակում ծանօթացրին իր հետ: Մի խումբ մարդիկ, օգտուելով ժօղէֆի ներկայութիւնից, խօսք էին բացել տեղային կարիքների մասին: Այդտեղ էլ Քարհանեանը հակաճառում էր, երկու անգամ ապացուցեց որ Պապը լաւ չէ ըմբռնում հարցերը: Դա արդէն անձնական վիրաւորանք էր, միւս խօսակիցները նկատեցին բարերարի գժողոհութիւնը, իրանք էլ դըժդոհ մնացին: Եւ իզուր այնուհետեւ աշխատում էին համոզել Քարհանեանին որ ձեռնտուն՝ գործողութեան այդ եղանակից ձեռք վերցնելը ու մի այցելութեամբ ամեն ինչ դրստելն է: Նա միշտ պատասխանում էր թէ՝ ոչ ոք իրաւունք չունի իր վրայ այդպիսի պարտաւութիւն դնել:

Ու ձեռք վերցրին նրանից, հաստատ համոզուելով որ քաղաքի ներկայացուցիչը մէկն է այն մարդկանցից, որոնց անուանում են «աղքատ ու հպարտ».

Այդպիսի աղքատ լինելը գժբախտութիւն է: Շատ են պատահում այդ գժբախտներից, բայց ինչ են նը-

րանք։ Ոչ ոք չէ խղճում, ոչ ոք չէ ասում թէ նրանք արժանի են որ և է կարեկցութեան։ Ազքատը հպարտ լինելու իրաւունքը չունի...

Վերջին օրերը «աղքատ ու հպարտ» ներկայացուցիչը ասաց մի բանի մարդկանց մէջ.

—Այցելութիւնները չեն օգնի։ Ես արդէն հասկանում եմ ամեն ինչ...

Եւ իրաւ նա հասկացել էր։

Տիրացու Գաբրիէլը, դինեվաճառների այդ սիրելին, որ օրերով հարբած էր լինում, չէ գնացել և չէր էլ կարող գնալ այցելութեան։ Բայց այսօրուայ խնջոյքին նա հրաւիրուած էր և հանդէսի գլխաւոր կարգադրուին էր։ Նա գրել էր մի ոտանաւոր, որի մէջ Սպիտակ աղբիւրը, լեզու առած, դիմում է անզուգական բարերարին և պատմում է թէ ինչ խեղճ բան էր ինքը առաջ և ինչ է դառնում այժմից։ Տիրացուն հնարել էր մի եղանակ էլ, որով երգել էր տալիս այդ ոտանաւորը։ Երգի իւրաքանչիւր տունը վերջանում էր այս տողերով։

Ե՞նձ տուն տուիր, ինձ լոյս տուիր, իմ պարծանք,

Մեծ բարերար, քեզ փառք, քեզ փառք, յաւէտ փառք...

Եւ երբ կառքերն ու ձիաւորները տեղ հասան, ամենքի առաջ բացուեց մի սիրուն տեսարան։ Տիրացուի աշակերտները ծաղիկների փունջերով զարդարել էին աւազանը, կանաչ ճիւղեր էին կախել շինութեան ճակատից։ Նրանք շարուած էին զոյգ-զոյգ, մի մի ծաղկեփունջ բռնած և սկսեցին երդը, որ արձագանք էր տալիս շրջակայ թաւուտներում։

Փօզէֆը շատ յուզուած էր։ Նա չիմացաւ թէ ինչպէս ողջունէ երեխաններին և կառքից իշնելիս կարողացաւ միայն ասել.

—Լիւսի, այդ երեխաններին... պատուիր։

Երգից յետոյ քահանայական դասը պաշտօն կատարեց, օրհնեց աղբիւրը, շինութիւնները։ Տիրացու Գաբրիէլի թանձը ձայնը որոտում էր, ինկի ծուխը

բարձրանում էր խիտ քուլաներով. դլխաբաց մի բազմութիւն, հրաշալի օր, ձորի գարաւոր ծառերը մեղմ կերպով օրորւում էին հանդարտ քամուց, ծառաները վազվում էին, ամանեղինների չըխկոցը լսւում էր մեծ, սպիտակ վրանից։ Հիացած էին ամենքը. Ժօղէֆը անդադար խաչ էր հանում երեսին, նրա երեխաները համբուրեցին Մաշտոցը, Լիւսին լաւ վարձատրեց քահանաներին ու տիրացուներին։

Պատրաստ էր նախաճաշը։ Ծառաները հրաւիրում էին հիւրերին, բայց շատերը գեռ գիտում էին շինութիւնները, գովում էին։ Տիրացու Գարբիէլը կանգնած էր աւազանի կողքին, գեռ չը գիտէր՝ արդեօք պէտի արժանանայ բարերարի հետ մի սեղանի վրայ ուտելու հրաւերին թէ ոչ։ Մինչեւ այդ նա ամեն մէկի խնդրանքով նորից և նորից կարդում էր գմբէթի ճակատին խոշոր տառերով փորագրած արձանագրութիւնը, տպամեծ հաճոյքով թարգմանում էր, հասկացնում թէ ինչ էին ասում այդ տողերը։ Խոկ տողերը ասում էին. «Այս աղբիւրը, վերակոչեցեալ Սպիտակի, իր հալալ արդիւնքով հանեց և կառուցեց անզուգական բարերար իշխանազն Փօղէֆ Պապը և ընծայեց ժողովրդին՝ զբօսանաց և զուարճութեանց աղագաւ։ Այս գերը յաւիտենական անջնջելի յիշատակ է նոյն վսեմաշուք բարերարի, նրա մեծատոհմ կողակից Լիւսի Խաթունի, աստուածասէր դաւակաց Թաննիի, Միշէլի, Սիւզանի և Բօղի»։

Տիրացուն ամեն անգամ աւելացնում էր որ դա իր շարադրութիւնն է։

— Բայց, տիրացու, այս աղբիւրը կար այստեղ, խոկ դրուած է թէ նա է հանել, համարձակուեց ասել մի ծերունի մարդ։

— Հանել է, ի հարկէ, առաջ ինչ էր աղբիւրը...

— Խօջա-Մարտիրոսն է հանել, և ես վկայ եմ, ականատես, շարունակեց ծերունին։ — Միասին որքան ենք եկել այստեղ... Աղբիւրը առաջ շատ վերեսում էր,

քարքարուտի մէջ և շատ քչերին էր մատչելի։ Խօջա-
Մարտիրոսը—Աստուած ողորմէ նրա հոգուն, լաւ մարդ
էր—իր ծոխսով հոգէ խողովակներ դրաւ, այնտեղից
աղբիւրը հանեց այս լաւ տեղը։ Շատ դժուար գործ
էր, և նա բաւական փող ծախսեց։ Մարդու լիշտակը
կորցնելը լաւ չէ...

—Է՛հ, բան չունիս հեգնութեամբ հարցրեց տիրու-
ցուն և ծերունու թեքից բռնելով, առաջ տարաւ, ցոյց
տուեց շրեղ սեղանը և ասաց.

—Խելք ունիս, նստիր, կեր, խմիր... ինչի՞դ է թէ
ով ինչ արաւ։

XII

Ամբողջ օրը կեր ու խում էր։ Մարդիկ լիացած,
ապշած էին անօրինակ առատութեան վրայ։ Ոչինչ չէր
խնայում Փօղէֆ Պապը. նրա հրամանով հացի կանչուե-
ցան և այն մարդիկ, որոնք հեռուից նայողներ էին։
Նրանց համար առանձին սեղան բացուեց ձորի միւս
կողմում։ Գինին հոսում էր ջրի նման։ Եւ արեգակը
մայր մոնելիս Սպիտակ աղբիւրի ձորը լցուած էր խը-
լայնող աղմուկով և աղաղակներով։

Իր հիւրերի շրջանում Փօղէֆը երկար ճառեց իր
տրամադրութիւնների մասին, ասաց որ անելու բան
կայ, բայց մի բանի պահանջներ էլ կան, որ պէտք է
կատարել։ Հասարակութիւնը, որ այդ օրը հարիւր ան-
գամ չնորհակալութիւն էր յայտնել, օրհնել էր, այժմ
այլ եւս խօսը չէր դժնում իր զգացմունքները յայտ-
նելու և միայն ոռնում էր, հաւատացնում որ ինքը
բարերարի հպատակն է։

—Մեր ձեռքը—ըստ Փեշը, որոտաձայն արտասանեց
Միրզա-բէկը, վերջին անգամ՝ առաջարկելով Փօղէֆի և
նրա ընտանիքի կենացը.—մենք ինդրուզներ ենք, արև
մեզ համար... ինչ որ լինի, չնորհակալ սրտով կ'ընդու-
նենք. իսկ վարձահատույցը Աստուած է...

Չորփ միւս կողմից կեցցէներ, շնորհակալութիւններ էր բղաւում ամբոխը: Նրա կողմից մի պատգամաւորութիւն ներկայացաւ և յայտնեց խոնարհ յարգանքներ:

— Մեծերին առհասարակ ծառայ ենք, ասացին պատգամաւորները.

— Իսկ դու, ժօղէֆ աղա, մեր գլխի տէրն եւս եւ ամբոխը ցոյց տուեց թէ ինչպէս գիտէ պատուել իր գլխի տիրոջը:

Մթնել էր բոլորսկին, երբ ժօղէֆի ընտանիքը կառք նստեց: Տիրացու Գաբրիէլը հաւաքեց իր աշակերտներին, թէ հազիւ էր կարողանում ոտի վրայ կանգնել, բայց կարողացաւ կատարել իր ծրագրի վերջին մասը: Իւրաքանչիւր աշակերտ մի վառած մոմ ստացաւ, և նորից հնչեց տիրացուի յօրինած երգը: Կառքերը գնում էին շատ դանդաղ: Նրանց հետեւում էին ձիւաւորները: Իսկ հետևակ ամբոխը, ցրուած մեծ տարածութեան վրայ, «ուռա» էր կանչում, պարեր էր սարգում կառքերի առաջ:

Այդովիսի բարձրածայն ցոյցերով բազմութիւնը մտաւ դաւառական քաղաքը: Նա դզրդաց, քունը, որ արդէն իջնում էր նրա վրայ, փախաւ և տներից դուրս եկան նոր խմբեր: Փողոցները լի էին ծայրէ ծայր, կառքերը մեծ դժուարութեամբ էին առաջ գնում: Նըրանց առջեւ յաճախ բենգալեան կրակներ էին վառւում, աւելի ևս գրգռելով ամբոխի սքանչելի տրամադրութիւնը: Իսկ տիրացուի երգեցիկ խումբը դեռ շարունակում էր հնչեցնել.

«Ինձ տուն տուիր, ինձ լոյս տուիր, իմ պարծանք,

Մեծ բարերար, քեզ փառք, քեզ փառք, յաւէտ փառք...»

Հանդէսը կանգ առտւ ժօղէֆ Պապի ընակարանի մօտ: Այդտեղ կուտուած բազմութիւնը դեռ երկար աղաղակում էր: Բարերարը մի քանի անգամ երեաց պատուհանում; շնորհակալութիւններ յայտնեց: Բայց ամբոխը չէր հեռանում:

Վերջապէս, փողոցի վրայ գտնուող պատշգամբը
գուրս եկաւ Միշէլը։ Նա փոխել էր շորերը, այժմ
աւելի գեղեցիկ էր հագնուած։

Տիրացու Գաբրիէլը իսկոյն վառեց բենդալեան
կարմիր ու կապօյտ կրակները։ Պատշգամբում առաջ
եկաւ Աւետիսը և բարձր ձայնով կանչեց.

— Ժողովներդ...

Տիրեց լոռութիւն։

— Ժողովներդ, այս փոքրիկ պարոնը նուիրում է
համբարին ուժ ոչխար և ուժ կուժ գինի։ Հացն և
ուրիշ պատրաստութիւններն էլ, ի հարկէ, կը լինեն։ Իր
անձնական միջոցներից է մեր բարերարի որդին այս
նուէրը տալիս։ Հինգ տարեկան հասակից մի փոքրիկ
արկղի մէջ էր գցում այն փողերը, որ իր ձեռքն էին
ընկնում։ Չեզ է տալիս, որ խմէք իր կենացը։

Ամբոխի մէջ ցնծութեան սոնոց բարձրացաւ։ Աւե-
տիսը խտաեց, բարձրացրեց երեխային, իսկ այսուղ,
ցածրում, բղաւում էին, օրհնում; սուլում էին, հըռ-
հըռում։

Բաւական գիշեր էր անցել, բայց գուառակուն
քաղաքի փողոցներում գեռ չէին լոել գոհ և ուրախ
մարդկանց ձայնները։ Մի տեղ տիրացու Գաբրիէլը կանգ-
նել էր չորս մարդկանց մէջ, չէր թոյլ տալիս որ նրանք
տեղից շարժուեն և անդադար կրկնում էր.

— Գինի ուրախ առնէ զմարդ...

XIII

Մի երկու շաբաթ էլ—և ժօղէֆ Պապը դարձաւ
գաւառական քաղաքի կուռքը։ Այդ ժամանակամիջոցում
տեղի ունեցան երկու մեծ տօնախմբութիւններ։ Տիկին
Լիւսին շքեղ երեկոյթ սարքեց տեղական կանացի սեռի
համար, իսկ համբարը երկու օր ու երկու գիշեր, Վար-
դավառի տօներին, Միշէլի անունով ուտում և խմում
էր գետակի մօտ, թանձր անտառի մէջ։

Երկու խնջոյքներն էլ, ինչ խօսք, չը տեսնուած քաներ էին։ Ասում էին՝ որ տիրացու Դաբրիէլը երկու հատ մեծ ոտանաւոր է գրում, մէկը կանանց կողմից, միւսը համբարի կողմից։

Կանայք խմբւում էին միասին, նկարագրում էին տիկին Լիւսիի զարդարանքները, մի մի թւում էին նրա քարերը, պատմում էին՝ թէ ինչպէս էր բացուած սեղանը, ինչ կերակուրներ, քաղցրեղէններ էին բերւում։ Բայց հիացմունքի առարկան ֆաննին էր։ Նա շատ էր աշխատում հայերէն խօսել, բայց չէր կարողանում և ծիծաղում էր։ Պատմում էին թէ ինչպէս նա մօտենում էր կանանցից մէկին, մատով ցոյց էր տալիս մի բան և դուով արտասանում էր. «Սա ի՞նչ է»։ Եւ, ստանալով պատասխան, դեռ մի բոսէ սկսում էր սովորել այդ անունը և ապա, յանկարծ թողնելով այդ բանը, դիմում էր ամենքին և ասում էր. «Մնուշ արէք»։ Նա այդպիսով հրճուանք էր պատճառում ամեն մէկին, և ամենքը երանի էին տալիս այն ծնողին, որ այսպիսի երեխայ կունենայ։ Շատ աղջիկներ արդէն սովորել էին ֆաննի, նրա մօր ձեռքը. ժօղէֆ Պապի տան կարգերը օրինակ էին դառնում շատերի համար։ Կանայք «մինչեւ երկինք» շնորհակալ էին տիկին Լիւսիից…

Համբարի քէֆը հօ առասպելական էր։ Երկու օր ու գիշեր այդ ահագին բազմութիւնը ոչ մի պակասութիւն չունէր. ուտում էր քնում, էլի վեր էր կենում, էլի ուտում էր, խմում։ Ամեռողջ դոյլերով գինի էին թափում հարբածների գլխին. մարդիկ գրազ էին գալիս թէ ով կը կարողանայ ուտել ոչխարի մի ազդը կամ դմակի կէսը։ Տանողը տանողի ետեից էր. փոքրիկ գիւղը, որ այդտեղից հեռու չէր, համբարից պակաս չը լիացաւ։ Բայց և այնպէս, քէֆի վերջում մնաց հացի և այլ ուտելիքների բաւական պաշար, որ բաժանեցին աղբատ արհեստաւորներին։ Եւ երբ մարդիկ այլ եւս ուտելու և խմելու ոյժ չունէին, համբարի դասերը իրանց դրօշակներով եկան, կանգնեցին Պապի պա-

առւհանների առաջ, զուռնան ածում՝ էր, պարողները
բազմաթիւ էին, իսկ սրտագին՝ շնորհակալութիւնների
ցոյցերը անսպառ:

Տօնախմբութիւնների միջոցին մոռացուել էին բո-
լոր ցաւերը։ Պատմում էին որ ժամհար Մելքումը, այդ-
ուրախութիւնները պատեհ առիթ համարելով, գնացել
էր իրան պատժողի տունը և այնտեղ յայտնել էր որ
իր ընաանիքը ուժ հոգուց է բազկացած, հաց չը կայ,
մուրալուց ամաչում էր ծերունին, ուստի և ինդրեց
իր անկիւնը եկեղեցու գոների մօտ Բայց նրան ճա-
նապարհ գրին կոպտութեամբ։ Պատմում էին այս
անցըը, բայց ովք էր ուշադրութիւն գարձնողը։ Ամբողջ
օրը թէ տներում, կանանց մէջ և գրամում, տղամարդ-
կանց մէջ, խօսքը խնջոքների մասին էր։ Ժամհար Մել-
քումը իսպառ մոռացուեց։

Նոյն կերպով հասարակ և բնական երևաց և մի
այլ լուր, որ արագութեամբ տարածուեց և մի քանի
օրում իրոզութիւն դարձաւ։ Տիրացու Գաբրիէլը բա-
հանայ էր ծեռնադրում։ Այդպէս էր կամեցել բարե-
րարը։

Միայն այս հանգամանքը բաւական էր որ մար-
դիկ հասկանան թէ ինչ հրաշագործ ոյժի տէր է ժօ-
զէֆ Պապը։ Տիրացու Գաբրիէլը արդէն երկու տաս-
նեակ տարի էր, ինչ սպասում էր բահանայութեան։
Բայց բահանայութիւնը տիրացուի համար անկարելի
բան էր—այսպէս էին վճռել ամենքը։ Այժմ պատմում
էին որ Պապի մի հեռադիրը երեք օրուայ մէջ վերա-
ցըրել էր բոլոր դժուարութիւնները։ Համաձայնութիւնը
կատարեալ էր, և տիրացուին մնում էր ճանապար-
հուել նշանակած տեղը՝ իր երազած աստիճանը ստա-
նալու համար։

Կային, սակայն, մարդիկ, որոնց դէմքերի վրայ
նկատում էր դժոհութիւն։ Այդ արդէն չափազան-
ցութիւն է, հաւատացնում էին նրանք մեծ ափոս-
սանքներով։

Այդպիսիների հետ էր մի օր խօսում Քարհանեանը:
—Թէե դա իմ անմիջական պարտաւորութիւնը
չէ—ասում էր նա—բայց ես կանեմ: Մի խնդրագրով
դիմենք հոգեոր վարչութեան, բացատրենք որ անհնա-
րին է մի այդպիսի դործ կատարելլը: Քանի առաջնորդ-
ների օրով արծարծուել է այդ խնդիրը և ամեն ան-
դամ բացասութեան է արժանացել: Գննութիւններ
են կատարուել, հաստատուել է որ այդ մարդը նոյն
իսկ մարմնական արտա ունի. իսկ հոգեկան արտաները
հօ ամենքին են յայտնի: Նա չէ, որ քնում է գինետը-
ներում... Ես հաւատացած եմ որ մեր աւագ քահանան
Տէր-Թոմասը, մեզանից շատ է հակառակ այդ բանին...

Խօսեցին Տէր-Թոմասի հետ: Նա չը ծածկեց որ
ինքն էլ անբաւական է, բայց ակնարկներով հասկաց-
րեց որ աւելորդ է հակառակութիւնը, քանի որ միջնոր-
դով ազգային բարերարն է:

—Նրան կը լսեն և ոչ թէ ձեզ, հազիւ կարսղա-
ցաւ արտասանել տէր հայրը:

Դա ոչինչ չէր նշանակում: Եւ Քարհանեանը ա-
սում էր.

—Մենք, այնուամենայնիւ, մեր պարտքը պիտի
կատարենք... պիտի բողոքենք:

Այդ արդէն շատ մուգ, անհասկանալի միտք էր:
Եւ նոյն օրը երեկոյեան միայն չորս հոգի էին կրկնում
այդ միտքը:

Քարհանեանը փորձեց համողել իշխան մարդկանց:
Նրանք էլ հաստատեցին, որ ճիշտ է, տիրացու Պաբ-
րիէլը քահանայ գառնալու ոչ մի իրաւունք չունի: Բայց
աւելացրին.

—Մենք այսուեզ ճայն չունենք: Քահանան աւելի
համքարին է հարկաւոր, իսկ համքարը նրան ուզաւմ է,
որովհետեւ այդպէս է կամենում Ժօղէֆ Պապը:

XIV

Համբարը, իսկ որ, այդպէս էր դատում։ Նա հասկանում էր իր օգուտը։ Այն օրը, երբ տիրացու Գաբրիէլը ճանապարհ ընկաւ նշանակուծ տեղը, մեծամեծներից և համբարի ներկայացուցիչներից դումարած մի փոքրիկ ժողովի առաջ Աւետիսը պարզ կերպով յայտնեց, որ Փօդէֆ Պապը ընդունում է հասարակութեան աղաչանքը։ Այդ օրուանից նա տալիս է մի դումար՝ հասարակութեան վրայ ծանրացած տուրքերը թեթեւայնելու համար։

Ժողովը իր ցնծութիւնները յայտնեց։

—Բայց, աւելացրեց Աւետիսը, նա չէր կամենայ բարերարութիւն անել մի տեղի, որ նրա կամբը կատարել չէ ուզում։

Աւետիսը չը յայտնեց թէ ինչ կամք է դա, այլ առաջարկեց մի հինգ հոգի ընտրել, որոնցից երեքը անպատճառ արհեստաւոր պիտի լինեն, որպէս զի դրանց հետ խօսէր բարերարը։

Պատգամաւորները իսկոյն ներկայացան։

—Պակասութիւններ շատ ունենք—այսպէս սկսեց Փօդէֆը։ —Ես գիտեմ, ամեն ինչ գրել եմ, հաշուել եմ։ Այժմեան ձեր պահանջները գատարկ բաներ են, և ես հէնց այժմ էլ կը կարգադրեմ։ Բայց ես մտածում եմ աւելի մեծ, աւելի օգտակար գործի մասին։ Աստուծու կարող օգնութեամբ այդ էլ կը լինի, յետոյ, մի ուրիշ ժամանակ։ Այսուեղ մարդ չը կայ, իսորհրդատու, հասկացնող մարդ եմ ասում։

Օրհնեցին նրան, նրա գործը, տունը, միտքը։

—Միայն ինձ զարմացնում է մի բան, —կծու, համարեա բարկացած ձայնով շարունակեց նա։ —Ես ձեզ լաւութիւն եմ անում, իսկ դուք ինձ հակառակ էք…

—Աստուծած մի արասցէ, սարսափած բացականչեց պատգամաւորներից մէկը։

Իսկ մնացածները սկսեցին հաւատացնել, որ այդպահիսի բան չը կայ և չի լինի:

—Կայ, կայ, դուք չեք հասկանում: Չեր հասարակութնան ներկայացուցիչը, նա, որ ձեր բերանն է համարւում, ինձ սասափիկ հակառակ է... Այդ չէ նշանակում որ դուք ամենքդ էք ինձ թշնամի: Հասկանալի պիտի լինի որ ես իմ հակառակորդներին լաւութիւն անել չեմ կարող...

Հարուածը շեշտակի էր: Լսողները հասկացան թէ ում մասին էր խօսքը և յանկարծակիի գալով, գլուխաները կախ արին յանցաւորների նման և ասելու խօսքը չը գտան:

Փողէֆը կանգնեց. աղերսաւորների խոնարհ ու բութ գէմքերը աւելի ևս գրգռեցին նրա բարկութիւնը և նա շարունակեց, յօնքերը մրտաելով.

—Դնացէք, առաջ ձեղ դրստեցէք, յետոյ մի բանի սպասեցէք... Զիմանաք թէ այստեղ երեխաներ կան, որոնց կարելի է խաբել: Այդ ամբարտաւանը, որին դուք ձեր գլուխն էք անուանում, չը բարեհաճեց ներկայանալ ինձ: Դնացէք...

Բայց պատգամաւորները չը կարողացան շարժուել: Սրտի գառնութեամբ նրանք տեսան որ բարերարը բաց արաւ հարեւան սենեակի դուռը և անյայտացաւ: Դահն լիճում տիրած ծանր լոռութեան մէջ հինգ գէմքեր միշմանց էին նայում: շուարած: Հարկաւոր էր մի խօսք, որ հանէր նրանց այդ գրութիւնից և այդ խօսքը գըտնողը մեծագլուխ Յարութիւնն էր:

—Եաւ էշեր ենք եղել, ասաց նա և միւս ընկերները մի քիչ կենդանացան, սկսեցին շարժուել, հասկանալ:

—Տեսնում էք, շուանակեց խօսողը, —ինքներս երբէք չէինք հասկանայ այս հասարակ բանը: Մահակ է հարկաւոր, որ զարնուի մեր ճակատին. այդ ժամանակ մենք կը հասկանանք...

Ամենքը համաձայն էին որ այդպէս է: Բայց ինչ անեն:

Տեղի ունեցաւ մի կարծ խորհուրդ։ Ընդունուեց Յարտօթիւնի տուաշարկութիւնը - չը հեռանալ այստեղից, ինդրել, ազաշել, որովհետեւ ահագին դործ է վիշանում։

Նրանք կանգնած սպասում էին, իսկ տան մէջ ոչ մի շարժողութիւն չէր նկատւում։ Մեծագլուխ Յարտօթիւնը ոտների մատների վրայ մօտեցաւ դահլիճի այն դռներին, որոնք տանում էին դէպի միւս սենեակները, ականչը դրեց բանալի ձեզքին և յուսահատութեամբ շարժեց իր մեծ գլուխը։ Ռոպէներ անցան, պատգամաւորների համբերութիւնը սպասուելու վրայ էր. նըրանք դատապարտում էին իրանց, հայհոյում։

—Վերջապէս գտան ելքը, ծան միւս ծայրից գալիս էր խոհարարի գանակների ձայնը։ Նա միս էր ձեռում։ Այդ ձայնը հանեց ներկայացուցիչներին դահլիճից, տարաւ մինչև խոհանոց։ Խոհարարը ուշ ուշագրութիւն դարձրեց իր այդ այցելուների վրայ։

—Խնդրում ենք քեզ, —ասաց Յարտօթիւնը, երբ նո դէն դրեց գանակները և երկու քայլ առաջ եկաւ, մի կերպ արա, որ իմաց տրուի մեծ աղային թէ մենք երկու խօսք ունինք ասելու։

—Իսկ գուք ով էք։

—Հասարակութեան ներկայացուցիչներ։

Խոհարարը աշխարհ տեսած մարդ էր և մանաւանդշատ բան սովորել էր ժօղէֆ Պապի խոհանոցում, ուր ծառայում էր երկար տարիներից ի վեր։ Հպարտութեամբ ձեռքը դնելով կողքին, նո մի քանի հարցեր տուեց այդ մարդկանց, որոնք պատասխանեցին յարդանքով, վերին աստիճանի քաղաքավարի կերպով։ Նա պատմեց թէ որքան լաւ և միւնոյն ժամանակ խիստ մարդ է ժօղէֆ Պապը, ինչեր է նա արել և ինչեր կարող է անել։ Պատգամաւորները խնդրեցին նրա աջակցութիւնը՝ գժուար գրութիւնից դուրս դալու համար։ Խոհարարը ի նշան բարեհաճութեան գլուխը երկու ան-

գամ շարժեց, ոլորելով իր հաստ ըեղերը և ապա մատով ցոյց տալով մի դուռ, ասաց.

—Երկու անգամ խփեցէք, այնտեղից մարդ դուրս կը գայ:

Ցոյց տուած տեղը ծառայի սենեակն էր: Երբ նա երևաց շէմքում, խոհարարը հասկացրեց նրան թէ ինչ պէտք է ասել աղային: Ներկայացուցիները նորից դահլիճ մտան: Երկար սպասեցին նրանք և երբ, վերջապէս, բացուեց գուռը, նրանք դլուխ տուին և միմեանց ետեից առացին:

—Մեզ ներիր, խնդրում ենք... Զենք հասկացել... Մեր մեղքն է. և դժուար բան չէ, նրա լեզուն մենք կը կտրենք:

—Նա անաստուած է, ասաց Փօղէֆը նոյն խիստ եղանակով:

—Ճշմարիտ է, նա մեծ պասին ու Զատկին էլ ժամ չէ գնում, հաստատեց Յարութիւնը:

—Նրա քեռին լութերական է: Խոհապէս դուք հայ քրիստոնեայ լինելով, այդպիսի մարդուն այնքան բարձր պաշտօն էք տուել: Մանաւանդ որ նա այստեղացի էլ չէ. նրա պապը, լոել եմ, Խօյից է եկել...

—Ճշմարիտ է, աղա... Մեզ ներիր... Անհասկացող մարդիկ ենք, բռի ապրած, բռի մեծացած:

—Իմ խօսքը խօսք է, լաւ իմացէք: Մինչև որ նա ըլ հեռանայ ձեր մէջից, ես ոչինչ չեմ կարող անել: Երկուսիդ մէկը. կամ ինձ կամ նրան...

—Բացի քեզանից ոչ ոքի չենք ճանաչում:

—Գնացէք, կը տեսնենք...

Այս խօսքերը արդէն մեծ յոյս էին ներշնչում պատգամաւորներին. և նրանք այլ ես աւելորդ համարեցին կանգնել ու աղաչել...

ռական խուլ քաղաքի նեղ ու ոլորուն փողոցների ծայրերում: Նա գեռ թոյլ էր, խեղդուած շշուկների մէջ էր մի գժղոյն կերպարանք ստանում: Շատերն էին նրանից երես դարձնում: բայց նա գնալով մեծանում էր մտնում ամեն անկիւն: Վարակումը սաստկացաւ, երբ նա հեռաւոր անկիւններից անցաւ հրապարակը, խուլ քրթմնջիւնից դարձաւ պարզ խօսք: Աշխատողները քիչ չեին. նրանք արծարծում էին անթեղի մէջ ծածկուած կայծերը և մի կարճ միջոցում պատրաստ էր մարդկանց մի բազմութիւն...

Պ. Քարհանեանը ուղիղ քայլերով գնաց այդ հոսանքի դէմ: Նա պատասխանում էր, ջրում էր, ծաղրում էր: Բայց խոռվութիւնը հարիւր բերան էր ստացել: Ժողովուրդը... այժմ մի խօսուն մեծութիւն էր: Պահանջում էր որ Քարհանեանը հեռանայ հասարակութեան բարիքի ճանապարհից, ուր խոչընդուա է հանդիսանում, յայտնում էր որ նա հարկաւոր չէ: Ազմուկը սաստկանում էր, որքան սաստիկ էր խօսում հասարակութեան ներկայացուցիչը: Նրան վիրաւորում էին կոշտութիւններով, նրա վրայ յանցանքներ էին դնում: բայց նա չէր տատանում:

—Այդքան հեշտութեամբ ես չեմ ընկնի, տառմ էր նա.—ով ուզում է որ հեռանամ, նա պիտի շտապէ հաստատել թէ որն է իմ մեղքը: Ես մի օր էլ չեմ մնայ, երբ ապացուցուած կը լինի որ մեղաւոր եմ:

Հաստատել, ապացուցանել... Բայց ինչպէս: Քարհանեանը աւելի համարձակ, աւելի անինայ էր դառնում օրէցօր: Նրան մեղագրում էին իբրև հասարակութեան թշնամու: բերում էին փաստեր, պատմում էին այն ամենը ինչ լսել էին, ինչ ճշմարիտ էր: Խոկ մեղագրուազը խօսում էր անզուգական բարերարի մասին մի լեզուով, որ սարսափ էր աղդում: Այդ հարուստն է պատճառը: այդ հարսւածը երկու կողէի է տալիս ու մի պուդ խունկ պահանջում: Նրանից բան

չի դուրս գայ. նրան խոկապէս բարելարուած մարշ
դիկ չեն հարկաւոր, այլ էժան երկրպագուներ:

Այդ մերկացումները սաստիացնում էին մարդկանց զայրոյթը: Հակառակորդները բազմանում էին անդադար, ոչ ոք չէր կարողանում անտարբեր լսել թէ ինչպէս չարախօսում են մեծ մարդուն, այդքան հռչակուած հարուստին: Երախտագիտութեան զգացմունը կատաղութիւն էր յարուցանում Քարհանեանի գէմի հանչպէս. Ժօղէփ Պապը ջնորհ անէ ու այսաեղ գայ ամիսներով ապրելու և նրա գէմ քարեր արձակեն: Եւ նվ է արձակողը:

—Դա ուզում է քանդել մեր տները... գրա համար մենք ոչինչ ենք: Ի՞նչ կայ գրա համար. անաստուած մարդ է, լութերական քեռի ունի, մեղանից չէ, մեր ցույն անտեղեակ է...

Քարհանեանցի անունն էլ չէին տալիս: Այդ խօսքերը օրի վրայ դառնում էին հառարակուան ճըշմարտութիւն: Ժողովներ էին սարքւում Աւետիսի տանը, ուր հաւաքւում էին արհեստաւորները: Հասարակութեան մեծամեծները աւելի յաճախ այցելում էին բարերարին և համոզւում օր մինչեւ Քարհանեանը չը հեռանայ, հասարակութիւնը զրկուած պիտի մնայ շատ բարիքներից: Յիշեցին որ մոսացութեան էին տուել մի դասակարգ, մանրավաճառներին: Դրանք համքարութիւն չունէին. և դրանց շտապեցին առանձին ուղարկել գետի ափը կեր ու խումի:

Խոկ նա, օրի գէմ այսքան պատրաստութիւններ էին տեսնում, առանց շտապելու, առանց շփոթուելու մտածում էր թէ ինչ հակահարուած կարող է հանել իր այնքան ուժեղ հակառակորդի գէմ: Մի քանի օր շարունակ նա աշխատում էր մի ծրագրի վրայ. և երբ բոլորովին պարզ ու վստահելի դարձաւ ենթադրութիւնները, նա գումարեց ժողով բոլոր դասակարգերի մարդկանցից: Նա հաւատում էր խօսքի ոյժին, համոզուած էր որ բացատրութիւնները, իրերի լօգիկան կը

լուսաւորեն շատ մտքեր և բաց կանեն շատ աչքեր։
Թէ շատերը չընդունեցին նրա հրաւերը, բայց նա
բաւական համարեց և այն բազմութիւնը, որ թափուել
էր դպրոցի մեծ սենեակը և բղաւում էր։

Վերջացնելով խօսակցութիւնը իր երկուերեք ըն-
կերների հետ, Քարհանեանը գարձու ժողովին և ա-
ռաց։

—Ինձ մեզադրում են ո՞յ ես չեմ թոյլ տալիս մի
հարուստ պարսնին վերցնել իր վրայ հասարակական
տուրքերի մի մասը։ Ես կամենում եմ ցոյց տալ ձեզ,
որ մեզ հարկաւոր չէ այդ հարուստի ողորմութիւնը։
Ես դաել եմ միջոցներ, բոլորովին կողմանի աղքիւրներ,
որոնցից կարող ենք հանել այդ տուրքերը և ձեզանից
ոչ մէկը ոչինչ չի տայ։ Այդպէս էիք դուք կամենում
և այդպէս է։ կարելի է անել։

Դիմելով իր ծրագրին, նա ասաց որ գաւառական
խուլ բազարը աւնի իր սեփական հողերը, բայց գրան-
ցից օգտաւում են մասնաւոր անհատներ։ ամեն մէկը
խլել է մի կտոր հող, կամ ծառեր է անկել կամ բան-
ջարանոց է շինել և օգուաներ է սուանում։ Կան ըն-
դարձակ տրօտամարդեր։ Գրանց խոսը հասարակու-
թեան հարստութիւնն է, որը խլում են զանազան մար-
դիկ, այսպէս, միայն Միրզա-բէկը քաղաքային հողերից
այնքան խոտ է հաւաքում, որ կարողանում է տեղային
կօղակների ձիաների խոտը տալ և սուանում է 725
առւբլի։ Իւրաքանչիւր մարդ, որ չունի սեփական տուն,
վարձ է տալիս նրան, ով ունի Այդպէս պիտի լինի և
հասարակական սեփականութիւնը։ Անհատը պիտի վարձ
տայ հասարակութեան, որովհետեւ հողերը հասարա-
կական են, իսկ անհատը հասարակութիւն չէ և հո-
ղերը պատկանում են ամենքին և ոչ թէ մէկին։

Նա հանեց մի թուղթ, կարգաց մի քանի թուա-
նշոններ, որոնք ցոյց էին տալիս թէ կարելի է բաւա-
կան մեծ եկամուտ սուանալ։

Լուսութիւնը, որ, վերջապէս, տիրեց սենեակում։

մի քանի մարդկանց ուշադրութիւնը դէպի այդ հաշիւները բարեյաջող նշաններ էին. նոյն իսկ մի քանի խրախուսական բացականչութիւններ լսուեցան։ Այդ պատճառով Քարհանեանը դիմեց մի շատ եռանդուն և համոզիչ շեշտի։

— Ի՞նքներդ դատեցէք, ասաց նա և լոեց։

Սկսուեց ամբոխի գոտը Դա մի խառն աղմուկ էր, որի մէջ անհնարին էր մի քան հասկանալ։ Ամեն մէկը աշխատում էր մի խօսք ասել, ձայն հանել։ Կարելի էր բարեհաճ տրամադրութեան նշաններ էլ նկատել մի քանի դէմքերի վրայ և մի քանի խօսքերի մէջ։ Կարելի էր ենթադրել թէ թուանշանները իրանց գործն են կատարել և Քարհանեանը կուսակիցներ կունենայ։ Բայց ամբոխը—ջրի մուկերեւոյթ է, որին երերում է ամեն մի քամի։ Մի քանի բոպէից յետոյ նա սկսեց ցոյց տալ աւելի որոշ դէմք։ Կային մարդիկ, որոնք անցնում էին Քարհանեանի ունկնդիրների շարքերով, ամեն մէկին մի քան էին ասում, յորդորում էին։ Տրամադրութիւնը փոխուեց։

Քարհանեանը, տեսնելով որ աղմուկը անվերջ պիտի լինի, բարձրացրեց իր ձայնը։

— Կարճ կորենը, ասաց նա։ — Կամենում էք գուք ձեր սեփական միջոցներով ձեր կարիքները հոդալ։ Զեղ հարկաւոր չէ դրա համար աչք դնել ուրիշի ողօրմութեան։ Դուք ազատ կը լինէք ձեր դործերի մէջ, ոչ ոք չի ասի թէ ձեր բարերարն է և ձեզ հրամաններ չի տայ։ Կամենում էք։

Նա նկատեց դրական պատասխանի նշաններ անող մի քանի ցոյցեր։ Բայց դրանք անհետացան այն բարձր աղաղակների մէջ, որոնք գալիս էին մի խմբից,

— Զէ, չենք ուզում։

— Ես ձեզ ցոյց տուի միջոցներ։

— Դու ուզում ես նոր հարկ դնել մեղ վրայ, ասաց գինեկաճառ Մարդարը։ — Օ՛, դու ամեն գիշեր մտածում ես թէ ինչպէս քերթես մեր կաշին։

— Բայց սա հարկ չէ, փորձեց նորից հասկացնել
Քարհանեանը:

— Ել ինչպէս է լինում հարկը. հօ նա եղջիւրներ
չէ ունենում... Ումից պիտի դուրս գայ քո հաշուած
վարձը. չէ որ դարձեալ մեր մարդկանցից:

Խառն աղաղակները հասկացրին որ մեծամասնու-
թիւնը այդպէս է կարծում:

Դուք ձեր օգուտը չէք հասկանում, յուզուած
ձայնով բացականչեց Քարհանեանը:

— Ճիշտ է, ասացին այս ու այն կողմից.— Ճիշտ է,
մենք յիմարներ ենք... մեր ներկայացուցիչն էլ պիտի
յիմար լինի մեզ պէս:

— Խելքը միայն քոնն է... դու չես հաւանում
մինչեւ անգամ ժօղէֆ Պապին...

— Այդ ով ասաց, հարցրեց մեծադլուխ Յարու-
թիւնը, աչքերով որսնելով այդ խօսքերը արտասանո-
վին.— Շատ լաւ ասաց, ես ու իմ հոգին, շարունակեց
նա, — ամեն մէկը կարծում է թէ ինքն է խելօքը: Բայց
մենք յիմար չենք, մենք մեր օգուտը աւելի լաւ ենք
հասկանում: Մենք ուզում ենք որ ուրիշի փողը գայ,
մտնէ մեր մէջ, դրսից այսպէս բաշել ենք ուզում:

Եւ նա երկու ձեռքով ցոյց տուեց թէ ինչպէս են
դրսից քաշում, բերում:

— Ուզում ենք, ուզում ենք, կանչեցին շատերը:

— Բայց ձեզ ձրի փող չեն տայ, կծու կերպով ար-
տասանեց Քարհանեանը:

— Տալիս են, եթէ դու չը լինես:

— Միայն այդ է իմ մեղքը:

— Ո՛չ, շատ մեղք կայ: Վեց ամիս է, դու մեզ հան-
դըստութիւն չես տալիս:

— Կաստակած էք, այն, տեսնում եմ: Երեխ դուք
շատ էիք նեղանում, երբ ես օր ու գիշեր որոնում էի
հասարակական կորած փողերը: Ես գտայ գողերին.
դրանցիցը մէկն այն է, որ այժմ նստած է ձեր բարե-
րարի կողքին... Նրա անունն է Աւետիս: Կերել է այդ

Աւետիսը ձեր հասարակութեան փողերը, հաշիւների մէջ ցոյց տալով թէ ապառիկ հարկեր են մնացել, այն էլ անյօյս ապառիկ։ Եւ այդ գողացած գումարը նորից բաժանել էին ձեզ վրայ, միայն ձեզանից էին պահանջում, որովհետև ձեր մեծամեծները տեղեակ էին այդ բաջադարձութեան և համաձայնուեցան լուռ մնալ, եթէ իրանցից ոչինչ չը պահանջեն։ Ես էի որ երկու ամիս շարունակ քրքրում էի այդ կեղտոտ գործը, մի առ մի հաստատեցի որ այդքան ապառիկ հարկ չէ մնացել։ Ես խայտառակեցի Աւետիսին և այն օրից նա ձեր պարտականն է և իմ մշնամին։ Այսօր նա վրէժ է հանում ձեր բարերարի օգնութեամբ...

Ամենքի տեղ խօսեց ոսկերիչ Դրիգորը։

—Մեր մարդը մեզանից օդուտ է ստացել. ոչինչ վասա չը կայ դրանից։ Նա յայտնի վաճառական էր, զնասուեց։ Մենք չենք կարող նրան ոտի տակ տրորել. կերել է մեր փողերը, իսկ նա էլ մեզանից մէկն է։

—Բայց գու հարիւր բուբլի էլ չը զիջեցիլ նրա պարտքից, բոլորը ստացար, տոկոսներով։ Հասարակութեան փողերով բարերարութիւն անել չէ կարելի...

Մեծագլուխ Յարութիւնը շտապեց յայտնել ներկայ եղողներին, որ Քարհանեանը այս ժողովը հրաւիրել է ամեն մէկին խայտառակելու համար։

—Հիմա էլ հերթը մեր աղա Դրիգորին հասաւ, ասաց նա. —Մի հարցնող լինի, թէ քո ինչ գործն է... Մենք գիտենք, մենք...

Այդ յանդիմանութեան հետևեց ամբոխի խուլաղմուկը։ Լսում էին ձայներ. «մենք գիտենք, մենք»...

—Մեծագլուխ Յարութիւն, կանչեց Քարհանեանը, —գու էլ շատ մաքուր չես հտսարակական փողերի հաշիւներում. քեզ աւելի ձեռնտու է լուելը։

Յարութիւնը սահմանիկ վիրաւորուեց և սկսեց հայհոյանը թափել այն մարդկանց գլխին, որոնք յօժարութիւն են ունեցել գալու այստեղ և լսելու լութերա-

կան քեռի ունեցող խոյեցուն։ Բարձրացաւ մի անհընարին ժխոր։ Քարհանեանը վերցրեց գլխարկը և որհամարհական հայեացքով չափելով հասարակութեան գլխաւորներին հեռացաւ, ասելով.

— Դուք ձերն արէք, ես — իմը։

Բայց հասարակութեան արածը աւելի կտրուկ էր։ Արդէն այնքան սաստկացել էր գրդումը, որ Քարհանեանը լաւ էր համարում մեծ մասամբ տանը մնալ։ Այդ միջնցում կազմուեց հանրագիր, որ ծածկուեց բազմաթիւ ստորագրութիւններով։ Դաւառապետին ներկայացաւ մի մեծ պատգամաւորութիւն, որ յայտնեց մի շարք գանգատներ գեպուտատի դէմ։ Նա անստուած է, նա խոռվարապ է, վասնգաւոր խօսքերից չէ փախչում։ Հասարակութիւնը առում է նրան և եթէ նա մնայ պաշտօնում, հետևանքների համար ոչ որ պատասխանատու չէ։

Փօզէֆ Պապն էլ անձամբ տեսակցութիւններ ունեցաւ, աշխատեց ուր և ինչպէս հարկաւոր էր։

Հարցը վճռուեց կարճ միջոցում։ Քարհանեանը հրաժարական չը տուեց, բայց նրան արձակեցին և նա գանգատ ներկայացրեց այդ կարգագրութեան դէմ, պահանջելով որ իր յանցանքը ապացուցուի։ Ասում էին թէ նրան կ'աջողուի իր պատիւը վերականգնել և նոյն իսկ պատժել իրան զրպարտողներին։ Բայց այդպիսի ելքը, թէ լինէր էլ, ոչ ոքին չէր վախեցնում։ Աւետիսը արդէն կազմել էր նրան վերջնականապէս լուեցնելու ծրագիրը, որ հաւանութիւն էր գտել Փօզէֆ Պապի կողմից։ Դա մի շատ աղղու միջոց էր և եթէ գործադրուէր, Քարհանեանը կը ձերբակարուէր և կը զրկուէր նոյն իսկ կալուածատիրոջ կառավարչի պաշտօնից...

XVI

Նորընծայ, Գարբիէլ քահանայի անդրանիկ պատարագը նուիրուած էր Փօզէֆ Պապի ամբողջ տոհմի հին և նոր ննջեցեալների յիշատակին։

Այդ օրը մեռելահաց տրուեց աղքատներին։ Պատարագիչ քահանան նստեց սեղանի գլխին և մինչեւ վերջը բոլոր սեղանակիցներին խմեցնում էր բարերարի կենացը։ Ճաշկերոյթը տեղի ունէր եկեղեցուն պատկանող մեծ պարտիզում։ Իսկ բարձր դասը ճաշում էր ժօղէֆի տանը։ Ներկայ էր ամբողջ քահանայական դասը. բարեմաղթութիւններին վերջ չը կար։ Տանտէրը շնորհակալութիւններ էր անում, խրատում էր։

Նա յայտնեց որ իր գնալու ժամանակն է։ Գնում է, բայց չի մոռանայ իր հայրենիքը, եթէ հայրենիքն էլ իրան չի մոռանայ։ Առ այժմ նա արտայայտեց մի ցանկութիւն. — Քարհանեանի տեղ պէտք է ընտրել Աւետիսին։

Հանդիսականները պլշեցին։ Հաւատացող դեռ չը կար. հանաք էին կարծում։

— Ես հասկանում եմ թէ ինչ եմ ասում, շարունակեց ժօղէֆը. — պ. Աւետիսը լի ու լի արժանացել է իմ համակրանքին, նա գիտէ ուղիղ ճանապարհը, նա չէ սխալում։ Երկու ամսից աւել է, ես նրա հետ բարեկամութիւն եմ անում (նա առանձնապէս շեշտեց «բարեկամութիւն» բառը) և... շատ շնորհակալ եմ։ Հասարակութիւնը եթէ կատարէ իմ ցանկութիւնը, իր համար լաւ կ'անէ։ Իմացէք միանդամից, որ ես ձեր պարտականը չեմ, ձեզ մուրհակ չունիմ տուած. իմ կամքը իմ փողի հետ է. ընդուննում էր...»

Սեղանակիցները, շնորհակալութիւններ յայտնելով, համաձայնութիւն տուին։

— Համաձայն եմ և ես, պատասխանեց ժօղէֆը. — Ես կ'ունենամ այստեղ իմ մարդուն և կը լսեմ նրան։

Ոչ ոքի համար գաղտնիք չէր թէ ով կը լինի նրա մարդը, բայց և այդպէս, Միրզա-բէկը շնորհակալութիւն արաւ ամբողջ հասարակութեան, մեծի ու փոքրի կողմից։

Այդ ժամանակ ժօղէֆը աւագ քահանային հրաւիրեց միւս սենեակը. Մի բոպէից յետոյ նրանք էլի վե-

րադարձան և քահանայական դասը կատարեց մեռել՝ ների յիշատակութեան պաշտօնը։ Վերջացնելով աղօթքը, աւագ քահանան ճառ ասաց.

—Սիրելի ժողովուրդ։ Մեր մեծանուն և անզուգական բարերար Ժօվէֆ Պապը նուիրում է մեր հասարակութեան երեք հարիւր բուրլի։ Այս մասին ծանուցումներ կը լինեն բոլոր եկեղեցիներում և շնորհակալութեան ուզերձ կը տպագրուի «Ծոխակի» մէջ։ Սա, ի հարկէ, այն ամենը չէ, ինչ մեզ համար մոռադիր է անել մեր պայծառափայլ հայրենակիցը։ Մենք ինքներս պիտի ցոյց տանք թէ ինչի ենք արժանի—այսպէս ինձ հասկացրեց անզուգական բարերարը, երբ մի քանի բոլէ առաջ խօսում էինք միւս սենեակում։ Ռւստի քահանայական պաշտօնովս յորդորում եմ ձեզ ամենքիով և միաբանութեամբ ապրել, հաշտ միալ, երկայնամիտ և համբերով լինել և միշտ յիշել որ հեռուում կայ մեր բարի անուան նախանձախնդիր մի այնպիսի մարդ, որպիսին է տշխարհածանօթ Ժօվէֆ Պապը։ Աստուած ի փառս իւրում ընդունեսցէ այս առատաձեռն բարերարութիւնները, որոնցով նա այնքան ժամանակ մեզ լիացրել է։

Ամեն մէկը մօտեցաւ Ժօվէֆին, սեղմեց նրա ձեռքը և լիուլի շնորհակալութիւններ յայտնեց։ Վերջին խօսքը բարերարինն էր. և նա ասաց.

—Մտքումն շատ բաներ կան։ Աստուած կանչեցէք որ կարողանամ անել։ Երեք հարիւրը կը յանձնուի պ. Աւետիսին, որ կը գործադրէ այդ գումարը իր ձեռքով, ձեր ցանկութեան համեմատ. դրա համար էլ հարկաւոր է որ նա լինի ձեր դեպուտատը։

Հետեւեալ երկու օրը գաւառական քաղաքի վրայ ծանրացել էր մի ինչոր գժղոհութիւն։ Ամեն բերան հիասթափումն էր արտայայտում։

—Ի՞նչ... էլի Աւետիս, Հօ հաղիւ էինք նրանից աղատուել։

Եւ յիշատակւում էին Աւետիսի գործերը, քննում
էին թէ ինչ տեսակ մարդ է նա:

—Նրա երեսի վրայ կաշի չը կայ, մարդու կաշի,
մսի կաշի: Նա կը ծախէ մեր տները, մեր երեխաներին:

Բայց այդպէս խօսողները լոռում էին, երբ գալիս
էր Փօզէֆ Պապի անունը: Բարերարի կամքն էր... ով
կարող էր հակառակուել:

Ի՞նքը, Աւետիսը, ման էր գալիս ուրախ ու անհոգ.
Ճիծաղում էր, ճիծաղեցնում:

—Առաջին մարդիկ դարձանք ես էլ, Տէր Գար-
րիելն էլ: Ո՞վ կը կարծէր... Ճիշտ է ասած. «Քարը, որ
անարդեցին շինողները, եղաւ անկիւնի դլուխ»: Մեզ
չէին հաւանում, բայց երկնքում Աստուած կայ... Այ-
սուհետեւ շատ կը հաւանէր մեղ. մեր պակասութիւն-
ներից մի հատն անդամ չէր տեսնի...

Ոմանք հարցնում էին.

—Ի՞նչ պիտի անես, Աւետիս, եթէ էլի չը հաւա-
նենք:

—Ի՞նչ պիտի անեմ, պատասխանում էր նա Ճի-
ծաղելով. — մի խեղճ մարդ եմ, բայց իմ մի նամակից
կը լինի կախուած ամեն ինչ: Ողորմի իմ հօրը, որ
գրել-կարդալ է սովորեցրել ինձ: Կը գրեմ «Հա», կը
լինի «Հա», կը գրեմ «չէ», «չէ» էլ կը լինի...

Մի երեկոյ Տէր Գաբրիէլը բռնեց Աւետիսին հրա-
պարակում և քաշելով նրան մի կողմ, ասաց.

—Մարդկանց սրտերը ճաքեցնում ես, իւնիթ.
գոնէ սպասէիր որ այդ փողի տոպրակը հեռանայ...

Աւետիսը ճիծաղեց:

—Ի՞նչ ես կարծում; տէրտէր, այսուհետեւ մի բան
կ'աղդէ նրա վրայ: Միամիտ մնացիր. կուշտը նա է, ով
իր բանը այն գլխից է տեսնում: Ես այդպէս եմ արել
և հաւատացիր, մեր բարերարը եթէ աշքով էլ տեսնէ,
չի հաւատայ... Երբ այսպէս է, ինչու ես էլ չը զուար-
ճանամ այս մարդկանց վրայ ճիծաղելով: Դու հօ գի-
տես ինչ օրեր եմ քաշել...

—Բաւական է, խենթ, ես նեղացայ քեզ պաշտպանելուց:

—Ի՞նչ վնաս, ես էլ քեզ համար եմ չարչարուել:
—Հասկանում եմ, բայց մի քիչ լեզուդ պահիր:
Այսօր շատ էին տրտնջում: Վատ կովի նման կաթը
տուել ես, հիմա ուզում ես մի աքացիով թափել լիբը
գաւաթը... Ես էգուցուանից կը սկսեմ ուրիշ կերպ բա-
ցատրել: Ե՞րբ է գնում մեր բարերարը:

—Նաբախ օրը:

—Զը դիտեմ թէ ինչպէս անեմ, սրանից հարկա-
ւոր է:

Նա ըթամատը քսեց ցուցամատի վրայ:

—Յիշեցրու, տէրտէր, ուխտատեղին: Նա խոստա-
ցել է:

—Օրհնեալ լինիս, լաւ միտս բերիր...

—Յիշեսջիր զմեզ...

—Ի՞նչ խօսք է... Լաւ քէֆ կը լինի այն ժամա-
նակ, երբ ես կը վերջացնեմ իմ գիրքը, որ նուիրուած
է նրան: Նկարագրում եմ նրա գալը, ժողովրդի ընդու-
նելութիւնը: Ի հարկէ, նրա հաշուով կը տպագրուի և
փողը ջրի պէս կը գայ...

—Ե՞րբ պիտի վերջացնես այդ զահրումարը:

—Օր ու գիշեր եմ անում, համբերիր...

Միւս օրը ահա ինչ էին ասում գաւառական քա-
ղաքում:

—Աւետիսը մեզ հարկաւոր է: Թող ինչ ուզում է
անիր: Թող բերել տայ փող մեր անունից ու ինքն
ուտէ—գա մի և նոյն է, փողը գարձեալ մեզ մօտ է
մնում: Եւ հօ բոլորը ինքը չը պիտի կլանէ. չէ որ բա-
րերարին այնպէս չէ կարելի խաբել, որ ոչինչ տեղ չը
հասնէ: Անպատճառ մի բան էլ մեզ կը մնայ, գա էլ
բաւական է մեզ: Բաւական է, որ մեր տուրքերի գոնէ
մի մասը տայ. քիչ էլ լինի այդ մասը գարձեալ աշխա-
տանք է... Մենք պիտի պատիւ տանք Աւետիսին,

քաղցր լինենք նրա հետ, որ նա էլ մեզ համար մի բան
աւելացնէ:

Այս մտքերի հեղինակը նորընծայ քահանան էր...

XVII

—Վերջին օրն էր ժօղէֆ Պապը անցկացնում իր
հայրենիքում: Դեռ լաւ չէր լուսացել այդ օրը, երբ
Աւետիսը վազեց իր վերջին ծառայութիւնները ան-
ձամբ մատուցանելու:

Խեղճ մարդը բոլորովին նման էր շշկուածի. ամ-
բողջ գիշերը չէր քնել ուրախութիւնից ու յուզմունքից:
Եւ կարելի էր քնել: Երէկ երեկոյեան, ընթրկից յե-
տոյ, երբ Աւետիսը սովորականի պէս բարի գիշեր էր
մաղթում բարերարի ընտանիքին և պատրաստում էր
տուն գնալ, ժօղէֆը յայտնեց, որ այսուհետեւ նա իր
ներկայացուցիչը կը լինի այս քաղաքում: և որովհետեւ
ժօղէֆ Պապի ներկայացուցիչը չէ կարող չը լինել պա-
տուաւոր, հեղինակաւոր մարդ, բոլոր հասարակական
գործերի մէջ ուժեղ ձայնի տէր, ուստի Աւետիսը այ-
սուհետեւ կը ստանայ վեց հարիւր ուուրդի տարեկան,
որպէս զի արժանաւոր կերպով ներկայացնէ քաղաքի
բարերարին:

Աւետիսը քիչ էր մնում որ լաց լինի: Նա սկսեց
իր երկրպագութիւնները, որոնք շարունակուեցան նոյն
իսկ ճանապարհին, երբ նա տուն էր գնում մենակ,
խաւարի մէջ: Երկրպագութիւններ էր անում նաև այժմ,
վաղ առաւօտեան, թէեւ բարերարը և նրա ընտանիքը
դեռ քնած էին: Նա հանդարտ վաղվզում էր, կապե-
լու, գարսելու կարգադրութիւններ էր անում, մեծ
մասը կատարում էր իր ձեռքով և մի և նոյն ժամա-
նակ շարունակ գլուխ էր տալիս, քաղցր խօսքեր էր
ասում: Խօհարարը, երկու ծառաները, աղախինները
լի ու լի վայելում էին այդ երկրպագութիւնները.
նոյն իսկ բակում աշխատող մշակ կարօն էլ հասկացաւ

որ Աւետիս աղան այսօր բոլորովին փոխուել է։ Նա հարցրեց թէ պէտք է բեռները այսօր կապել, իսկ Աւետիսը, փոխանակ պատասխանի, գլուխ տուեց նրան։ Զը գիտէր Կարօն թէ այդ ինչ հրաշը է։ Աւետիսը կակուզ էր մոմի պէս, առանց մատաղ գնալու մէկին չէր կարողանում երկու խօսք ասել...

Եւ այսպէս ամբողջ օրը։

Երեկոյեան սկսուեց մեծամեծների այցելութիւնը։ Բարի ճանապարհ էին մաղթում, խնդրում էին չը մոռանալ հայրենիքը և մի մի շնորհ բերել այնտեղ։

—Դիտէք որ մենք աղքատ մարդիկ ենք, ասաց Միրզա-բէկը. ձեր գալուստը մեղ որքան օգուտներ տուեց։

—Ես այստեղ վեց հազար թողեցի, պատասխանեց Ժօղէֆը։

—Շնորհակալ ենք։ Իսկ բարօյական օգուտը. Դրան հօ գնահատել անկարելի է...

—Եշխատել եմ որքան կարելի է շատ լաւութիւններ անել։ Անողը միայն ես չէի. կինս, երեխաներս ինձանից շատ էին ուրախ և պատրաստակամ։ Եթէ դուք տեսնէիք թէ ինչպէս էր մեծ երեխաս—Թաննին—սովորում հայերէն, որպէս զի կանանց խնձոյքի մէջ խօսէ ձեր ամուսինների և երեխաների հետ... Դա մեծ զոհաբերութիւն էր, որ արաւ կինս ձեր խաթրի համար։ Երեխան խօսում է ֆրանսերէն, իսկ ֆրանսերէնը այնքան նուրբ ու ընքոյշ լեզու է, որ հայերէնը իր կոշտ արտասանութեամբ նրան միայն փչացնել կարող է։ Կինս զոհեց ֆրանսերէնը. նա ինքն էր սովորեցնում հայերէն։ Եւ երեխան չարչարում էր... եթէ տեսնէիք...

—Օ՛, երբէք այդ չենք մոռանայ, բացականչեց Միրզա-բէկը. — մեր տներում միշտ խօսքը ձեր այս բարերարութիւնների մասին է և դրանք կ'ապրեն մեր մէջ յաւիտեան։ Զէինք տեսել, տեսանք...

—Շնորհակալ եմ։ Գոնէ ինձ համար միսիթարութիւն է, որ այստեղ, իմ ծննդավայրում, մենք անուն

թողեցինք։ Ես զարմանքից չորանում էի, երբ տեսնում էի կնոջս գիւղացի մերկ երեխաների, աղքատների հետ նա շատ բարձր տեղից է, սովոր չէ այդ շրջաններին...

— Գիտենք, գիտենք... ամեն ինչ լսել և իմացել ենք...

Թէև կասկած չը կար որ ամեն ինչ գիտէին, բայց ժօղէֆը սկսեց պատմել իրանց ճանապարհորդութիւնից սպիտակ ուլի և ջրվէժի երեխաների գէպքերը։ Նա չէր մոռացել և մոռանալ չէր էլ կարող թէ որպիսի կարճ տարածութիւն կար հովուի շան և տիկին կիւսի մէջ, բայց մանաւանդ թէ ինչպէս էր տիկինը վէրքերով պատած գիւղացի երեխային իր մօտ կանչում։

Երրորդ անգամն էր որ Միրզա-բէկը և միւս մեծամեծները լսում էին այդ պատմութիւնները։ Բայց այս անգամ էլ խորին ուշադրութիւն, հիացմունք և զարմանք ցոյց տուին և գարձեալ յայտնեցին որ ոչ ոք չի մոռանայ թէ այդ բոլորը տեղի է ունեցել ի սէր այստեղի խեղճ և կարօտ ժողովրդի։

Բարերարը շուտ շուտ յիշեցնում էր որ վերջին երեկոն է և խօսելու, պատիւներ անելու մի առանձին տրամադրութիւն էր ցոյց տալիս։ Այցելուներին նա հրաւիրեց սեղանատուն, ուր բացուած էր մրգեղէնի շքեղ սեղան։ Այդտեղ հիւրերի մէջ գուրս եկաւ և տիկին կիւսին։ Նա հագնուած էր մի առանձին շքեղութեամբ և նուրբ ճաշակով։ Սպիտակ շրջազգեստի մէջ նրա բարձր հասակը մի առանձին վեհութիւն էր ստացել. աղամանդներ փայլում էին նրա շքեղ թուխ մազերի մէջ, ականջների, պարանոցի վրայ։ Միրալիր ժը պիտներով նա ողջունեց ամեն մէկին և կանգնելով սեղանի վերեւում, իր ամուսնու կողքին, հրաւիրեց ուտել։

Աւետիսը բաց արեց շամպայնի շիշը։ Առաջին բաժակը ժօղէֆ Պապինն էր։ Նա խօսեց երկար, բարե-

մաղթութիւններ արաւ, ապա գալով իր գործերին,
յոյս յայտնեց որ իր ազբւրը լաւ կը պահպանուի:

—Զեղ համար պատրաստեցի զուարճութեան տեղ.
եթէ ամեն մի ջուր խմող յիշէ ինձ, այդքանն էլ բա-
ւական կը լինի:

—Կը յիշեն, ամենքը կը յիշեն, հաւատացրեց Միր-
զա-բէկը:

—Էլ բաներ կան, շարունակեց Պապը, կը մտա-
ծեմ...

Եւ մինչդեռ ամենքը օրհնում էին բարերարի կեան-
քը, նա յանկարծ մի բան յիշեց և բաժակը դնելով սե-
ղանի վրայ, ասաց.

—Ա՛հ, ես բոլորովին մոռացել էի սուրբ Գէորգի
մատուռը:

Նա երեսին խաչ հանեց, մի բանի թղթեր դուրս
բերեց ծոցի գրպանից, նայեց մի բանիսին և նորից
դնելով ծոցում, ասաց.

—Պ. Աւետիս, հարիւր ոռւբլի կը տաք Տէր Գաբ-
րիէլին սուրբ Գէորգի մատուռի համար:

Միրզա-բէկը նորից սքանչացած շնորհակալութիւն-
ներ արաւ և ապա հրաժեշտի ճառ ասաց, որ ուղղած
էր երկու ամուսիններին: Փօղէֆն ու Լիւսին դլխով
հաւանութեան նշաններ էին անում, իսկ երբ ճառը
վերջացաւ, մաղթելով գնացողներին ամեն տեսակ աջո-
ղութիւն, որպէս զի նրանք միշտ գութ ու ողորմու-
թիւն ունենան բոլոր կարօտների վրայ, Փօղէֆը կարճ
կերպով պատասխանեց.

—Մտքումն բաներ կան... Յոյս ունեմ որ մտքերս
չէք սպանի:

Հասարակութեան մեծամեծները երաշխաւորեցին
որ այդպիսի յանցանք գաւառական բաղաքը չի կատարի:

Երկու կողմից շնորհակալութիւններ, ողջոյններ:

XVIII

Առաւոտեան շատ կանուխ ժամն էր: Արեգակ գեռ
չը կար, բայց համբարների դրօշակները շարուել էին
ժօղէֆ Պապի դռների առաջ: Շտապով հաւաքւում էին
մարդիկ: Լսել էին որ շուտ պէտք է ճանապարհուեն,
բայց բաւական ժամանակ սպասեցին մինչև որ եկան
կառքերը:

Տէր-Գաբրիէլը կարգ ու կանոն էր պահպանում
դրսում, Աւետիսը անդադար ներս ու դուրս էր
անում: Մարդկանց խմբերից քիչ հեռու, մի տան
դստիկոնում, տեղաւորուել էր լուսանկարը և պատ-
րաստում էր իր գործիքները: Դա երեկ էր պատահա-
բար եկել գաւառական խուլ անկիւնը և Աւետիսի ու
Տէր-Գաբրիէլի հրաւերով պիտի նկարէր այս հրաժեշտի
հանդէսը:

Անցան րոպէներ... Աւետիսը դուրս վազեց և
կանչեց.

—Տէր հայր, պատրաստիր:

Տէր հայրը իսկոյն գործի կպաւ: Դրօշակները շա-
րեց մի կողմում, մարդկանց մի մեծ խումբ կանգնե-
ցրեց կառքերի շուրջը: Նա ձեռքով նշան արաւ և հա-
րսկան տան պարսպի մօտից առաջ անցաւ մի այլ խումբ
կանգնեց ժօղէֆի դռների առաջ: Միւս կողմից էլ
եկան ազքատ տղամարդիկ, կանայք ու երեխաներ,
կանգնեցին այդ խմբի կողքին:

Ուզիդ ժամի ութն էր, երբ ժօղէֆ Պապը, շրջա-
պատուած իր ընտանիքով, դուրս եկաւ: Տէր Գաբրիէլը
վերցրեց գլխարկը, «Պահպանիչ» ասաց: Ամենքը բաց
արին գլուխները:

Վերջացնելով աղօթքը, տէր հայրը հանեց ծոցից
մի թուղթ և կարդաց: Դա չնորհակալութեան ուղերձ
էր: Կարդացողի ձայնը յուզուած էր, ողբազին շեշտեր
էր արձակում:

Յուղուեց և Ժօղէֆ Պապը՝ Քահանան, թուղթը
տալով նրան, ասաց.

—Անզուգական բարերածք։ Այս ժամը, հրաժեշտի
այս սրտաճմիկ ժամը անտանելի կակիծ կը լինէր այս
ահագին ժողովրդի համար, եթէ ամենքը համոզուած
չը լինէին, որ քո սիրոն ու միտքը միշտ այստեղ կը
լինի։ Եւ մեր սրտերը վարդադոյն յոյսերով լցուած, կո-
չում են. «Քեզ բարի ճանապարհ, բարերածք»։

Ամբոխը գոռաց միաբերան։

—Բայց ներիր մեզ, եթէ այստեղ մի խոնարհ ա-
ղերսանքով գուցէ վիրաւորենք քո բնատուր հեղութիւ-
նը։ Մարդկային երախտագիտութիւնը մեր ամենքիս
մէջ հաստատել է մի տենչանք։ Մենք ուզում ենք որ
դու կանգնես մեր մէջ և չնորհես մեզ քո շուշը այն-
պէս, ինչպէս անում էիր ամեն ժամանակ։ Մենք ու-
զում ենք պատկերացնել քո բարերարութիւնները ոչ
թէ մեզ համար, —ոչ, մենք կարօտ չենք յուշարարների
մինչեւ գերեզման—այլ ապագայ սերունդների համար։

Ժօղէֆ Պապը գլուխ տուեց և լուռ հպատակուեց։
Նրան խողբեցին կանգնել այն խումբ մարդկանց մէջ,
որոնք վայելել էին նրա բարերարութիւնները։ Տիկին
Լիւսիի մօտ կանգնեցրին մի զառամեալ պառաւի, որի
աչքերը ոչինչ չէին տեսնում։ Ժօղէֆի հօրաքոյրն էր
դա, որի համար այժմ դնուած էր մի փոքրիկ տուն
և վարձուած էր մի մարդ, որ պիտի խնամէր նրան։
Միշէլլ, Ֆաննին, Գրանսուհին կանգնած էին խմբի մէջ
տեղում։

Ցնցուիներով պատած մի աղքատ երեխայ կանգ-
նած էր Ժօղէֆի առաջ գլուխը կախ արած, իսկ Ժօ-
ղէֆը որպէս թէ ոզորմութիւն է աալիս նրան։ Ալդ
վայրկեանն էր ընտրուած լուսանկարի համար։

Տէր Գաբրիէլը նշտն արաւ, ամենքը մի բոպէ լուռ
ու անշարժ մնացին։ Լուսանկարը ներս վազեց, քիչ
ժամանակից յետոյ էլի երեաց պատշգամբում և ոկուց
նորից յարդարել իր մեքենան։ Նկարը անաջող էր։

Քահանան ներողութիւն խնդրեց։ Ժողէֆից, յայտնեց որ հարկաւոր է որքան կարելի է պարզ ու գեղեցիկ նկար, որովհետև, նա պիտի գնումի այն գրքի մէջ, որ պատրաստում էր ինըը։ Ժօղէֆը միայն այդ բոպէին հառկացաւ որ իր վրայ մի պակասութիւն կայ և գոհ հութիւն յայտնեց որ նկարը չէ աջողուել։ Նա կանչեց Աւետիսին և ասաց որ պէտք է հանել աւստրիական շքանշանը։ Աւետիսը վազեց դէպի կառքերը, սկսեց այնտեղ որոնել արտասահմանեան պայուսակը։ Ժօղէֆը մտաւ տուն և երբ մի քանի ըսողէից յետոյ վերադարձաւ, նրա կրծքի վրայ դողում էր դեղին շքանշանը։

Նորից նշան արուեց Եւ այս անդամ լուսանկարը պատշգամիրի ծայրից հասկացրեց թէ կարելի է գնալ։ Լաւ նկար էր ստացուել։

Մինչև կառքերը շարժուելը Ժօղէֆը կանչեց Տէր Գարբիէլին և յայտնեց երկու բան. գրքի տպագրութեան համար նշանակեց հինգ հարիւր ոռութի, իսկ աղքատներին բաժանելու համար տուեց մի բսակ մանր արծաթ փող։

Ծանր ու դանդաղ կերպով կառքերը առաջ գընացին։ Ամբոխը «կեցցէ» էր կանչում։

—Մաքումն բաներ կան, բարձր ձայնով ասաց Ժօղէֆը, բարձրանալով տեղից և կիսով չափ առաջ խոնարհուելով, այնպէս որ աւստրիական շքանշանը կախուած էր և ճօճւում էր կառքի շարժումից։

Նորից որոտաց կեցցէն։ Զիաները արագացրին իրանց քայլերը։ Ամբոխը հեալով վազում էր. նա անցաւ փողոցներով, հասաւ այն տեղին, ուր վերջանում էին սնները և սկսում էր պօստային ճանապարհը։ Նորից կանգ առան։ Քահանան այլ ևս չը կար։ Նորից Ժօղէֆը, կիսով չափ բարձրանալով տեղից, ձեռքը տարաւ դէպի գլխարկը և արտասանեց։

—Մաքումն բաներ կան...

Ճանապարհի կողքին կանգնած մի խումբ երիտա-

սարդներ աղմկալից ցոյցերով մնաս բարով էին ասում։ Մէկը բարձրացրեց գինով լիքը մեծ փարչը, և ամենը աղաղակեցին.

—Քո կենացը...

Փօզէֆը մի քսանուհինգանոց գցեց կառքից, ասելով.

—Մի լաւ քէֆ, տղերք, իմ աղբիւրի մօտա Աղաղակները, կեցցէները, ուռուաները խառնուեցան միասին։

—Ասում էի քեզ, Լիւսի, որ մեզ այստեղ պաշտում են, խօսեց երջանիկ ամուսինը, երբ կառքերը բաւական հեռացել էին։ Լսնում ես, դեռ աղաղակում են։

Լիւսին հիմա որ հաւատում էր...

XIX

Աւետիսը բարերարներին ճանապարհ դրեց մինչեւ երկաթուղու կայարանը։ Փօզէֆը բաւական ժամանակ ունէր՝ նրան հրահանգներ տալու համար։

Այդ հրահանգներից գլխաւորը Քարհանեանին էր վերաբերում։ Փօզէֆը մօտակայ մեծ քաղաքում պիտի տեսնուէր կալուածատիբոջ հետ և պիտի անպատճառ հեռացնել տար նրա կառավարչին։ Նախատեսուած էր թէ ինչ պէտք է անել, եթէ այդ միջոցը չօգնէ։

Անցաւ ժամանակ։ Քարհանեանը այլ ևս պաշտօն չունէր, բայց չէր լոռում։ Ու նրա գէմ գործադրուեց ամենակարուկ միջոցը... Երկու օրուայ ընթացքում նախ կին գեպուտատը չքացաւ. ասում էին թէ նա հեռու տեղ է տարուել, իսկ նրա ընտանիքը օրուայ հացի կարօտ է։

Եւ այնուհետև խաղաղ ու անվրդով էր գաւառական փոքրիկ քաղաքը։ Անցնում են տարիներ, իսկ նա իր խեղճութեան մէջ գիտէ որ ունի անզուգական բարերար և որ այդ բարերարը մտքում բաներ ունի։

ԶԵ շտապում գաւառական քաղաքը, յուսով է։
Դրա ապացոյցն այն է, որ Աւետիսը հասարակութեան
առաջին մարդն է, առատ ու փափուկ կեանք է վա-
րում։ Երկու տարի է, ինչ նա անզուգական բարերա-
րի ներկայացուցիչը լինելու համար ստանում է վեց
հարիւրի տեղ՝ ութ հարիւր...

ԼԵՕ

Ա, Ե, Ր, Զ

ԱՍՏՎԵՐ ՇՈՂՈՒՆ...

(Նեկրասովից)

Աստղեր շողուն, աստղեր պայծառ,
Երկինք կապուտակ.
Շողշողում է և՛ խիտ անտառ
Լուսնի շողի տակ:

Զուրն է նայում, ջինջ հայելում
Անտառը նիրհած.
Անտառի լուռ թաւուտներում
Խաւարն է փոռուած:

Հընձւորներ են թլփերի մէջ
Խումբչխումբ նըստոտել,
Ծիծաղում են, խօսում անվերջ,
Խարոյէլ բորբոքել:

Արօտներում մորդահասակ
Շըզթան ոտքերին,
Թափառում է մըթնում մենակ՝
Դիւզի ճերմակ ձին:

Եւ իր երգն է զիլ ըսկսում
Աշխոյժ երգասան.
Խըմբի միջից դուրս է վազում
Գիւզի ջահէլ տղան:

Գըդակն առնում, օդն է նետում,
Բըռնում—աչքը փակ.
Հա, պարում է, հա թըռչկոտում,
Սուլում, զերդ սոխակ:

Զայն է տալիս երգին սիրուն
Լորին մարգերում:
Երգըն է գընում, մարում հեռուն,
Արձակ դաշտերում...

Լըճեր փայլուն, հարթ-հաւասար,
Անծայր, ճոխ վայրեր.
Ջըսածոցեր ջի՞նջ ու պայծառ
Ոսկի ճոխ արտեր:

Վերև—աստղեր, ներքեւ—դաշտեր,
Եղէդնի պուրակ...
Եւ բըղիսում են սըրտից երգեր
Ազատ, համարձակ:

Թարգմ. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ¹⁾

ՎԵՊ

ՀԱՆՐԻ ԲՕՐԴՈՒ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

I

—Աննէսի!...

Հազիւ գնացքը կանգ առաւ, որ Լիւսիէն Հալանդը արագ և թեթեւ ցայտեց մայթի վրայ: Պլէղը ձեռքին նա անհամբեր սպասում էր տեղ հասնելուն:

—Բարի լոյս, Ֆավերա, ինչպէս է հալդ—ասաց նա իրան ակնկալու ծերունի գիւղացուն: Այս եղանակը լաւ է ցանքի համար, այնպէս չէ:

—Այն, պարո՞ն տանուտէր, տաքութիւնը կենդանութիւն է տալիս հողին:

Երիտասարդը իրան կայտառ և ուրախ զգաց: Նա վերագառնում էր Պարիզից, ուր անց էր կացրել մի քանի ամիս, յունուարի 15-ից մինչեւ մայիսեան առաջին օրերը: Մեծ քաղաքից մեկնելու բոպէին անձրեւ էր դալիս, իսկ այստեղ Սավոյում արեւ էր, որ նոր էր դուրս եկել ձմերային թանձր մըշուչներից զարդարուն և կիզիչ: Նա մեծ հաճոքով տաքաշնում էր վագօնի մէջ ամբողջ գիշերը թմրած իր անդամները: Նա ուրախ էր, որ բնութիւնը այդպէս ուրախ ողջունում էր իրան և նա շտապում էր վերադասւնալ իր տունը և վերսկսել շինական կեանքը:

Նստելով գիւղացու սայլակառքի մէջ, նա յիշեց այն անհաճոյ տպաւորութիւնը, որ նախորդ տարին ունեցել էր նոյն պիսի պայմաններում:

—Ինչպէս մարդս փոխւում է—մտածեց նա: Ոչ մի բան ինձ դէպ իրան չէր քաշում այս երկրում: Երբ ես վերադարձայ այստեղ անդեալ տարի, ձանձրացած հեղդ կեսնքից, և

*) Տե՛ս «Մուրճ» № 6.

այդ կեանքը այնուամենայնիւ շարունակելու վճռականութեամբ,
ես կամենում էի ծախել կալուածս, որն ես արժանի չէի համա-
րել տեսնելու պատանեկութիւնից ի վեր Բայց չը ծախեցի և
այժմ ինձ հաճելի է ապրել այստեղ: Նոյն իսկ տանուաէրի այս
տիտղոսն, որով մեծարում են ինձ, հաճելի է և ես հասկանում
եմ նրա պատիւը ու օգտակարութիւնը:

Պայուսակները բեռնաւորելուց յետոյ երբ կառքը մեկնելու
վրայ էր, ալիսառն մօրուքով, դանդաղաքայլ մի մեծ պարսն
առաջանալով դէպի կայարանը ձայն տուեց Լիւսիէնին:

—Պարոն Հալանդ, պարոն Հալանդ!

—Դուք էք, պարոն Բրէնա:

—Գործը տարել ենք ամեն կերպով: Ձեր կառավարչից
իմացել էի, որ գուք ավել է գաք այս առաւօտեան: Ես ցանկա-
նում էի անձամբ հազորդել ձեզ, աւետիսը տալ ձեր համելու
բոպէին:

—Ճնորհակալ եմ. Երբ դատարանը տրծակեց իր վճիռը:

—Երէկ, օրուայ ամենաթարմ նորութիւնն է:

—Իմ ճնորհաւորութիւններս. սիրելի փաստարանս: Մէն-
թօնի համայնքը ձեզ է պարտական իր ջրանցքը: Ես ահա վե-
րադառնում եմ ծիչտ մայիսեան նիստերի սկզբին: Կիրակի ես
կառաջարկեմ իմ խորհրդին ձեզ ճնորհակալութիւն քուէարկել:

Ալեոր փաստաբանը, որ միրող չէր գովասանութիւնների,
թափ տուեց զլուխը, չը կամենալով ընդունել աւելին քան
ինքն կատարել էր:

—Յաջողութեան մի մեծ մասը ձեզ է պատկանում, պա-
րոն Հալանդ: Ձեր յիշատակիցիրը, որ ծառայեց հիմն իմ եղրա-
կացութիւնների և իմ պաշտպանողական ճառի համար, հիա-
նալի կերպով բացատրում էր զործի էութիւնը:

Նրանք ժամադիր եղան դատավճիռը կարգալու համար և
ժանդուած անիւններով սայլսկաորը ճանապարհ ընկաւ:

—Համայնքի վարած դատը վերջացել է, հարցրեց զիւզացին:

—Հաւաննօրէն. բարի ֆավերա: Ձեմ կարծում որ մեր հա-
կառակորդները բողոք տան վճոր դէմ:

Ծեր զիւզացին եզրակացրեց պարզապէս:

—Այդ շատ հաճելի է, շատերը կ'ուրախանան:

Բայց մտածելով մի բոպէ, նա արտայայտեց իր անվատա-
հութիւնը արդարադատութեան մասին:

—Պրօկուրօրները շատ փող են նստաւմ: Գործը տանողը
դուրս է զալիս դատարանից մի շապկով, իսկ կորցնողը՝ բոլո-
րովին մերկ:

Լիւսիէնը նայում էր չինարների ճիւղի՝ միջով իր լճին,

իր սարունը, Գարունը, աշխարհի մշտնջենական երիտասարդութիւնը, իշել էր երկրի վրայ իր բոլոր չքեզութեամբ Կապուտակ մշուշով ծածկուած էր հորիզոնը, ափերը զարդարուած էին այն դալար կանաչով, որ միայն ապրիլ և մայիս ամիսներին է յատուկ, երիտասարդը ագահաբար չնչում էր առաւօտեան թարմ օդը:

—Այս, ասաց նա, այս եղանակը լաւ է հողի համար և հաճիլի մարդկանց:

Դիւլացին տիսուր էր, ուսաի կիւսիէն նկատեց նրա ձըգուած դէմքը:

—Իմ բարի ֆավերա, դուք այնպիսի տիսուր դէմք ունեք, կարծէք թաղումից էք վերապառնում:

—Ոչ, այլ ես պէտք է թաղման գնամ, պ. տանուտէր.

—Արդեօք ձեզ մօտ մեռնող է եղել:

—Կինս է մեռնում: Երէկ նա անկողնից վեր չը կացաւ: Մեզ մօտ, երբ անկողնից չեն վեր կննում, նշանակում է մեռնել պէտք է:

—Ի՞նչ հիւանդութիւն ունի:

—Ոչ մի հիւանդութիւն. Նա հիւծուել է: Նա մի տըզամարդի գործ էր կատարում: Նա կաթն է տուել տամն երեխայի, առանց ձեղ հաշուելու:

Նրա վախճանը հասել է:

—Բժիշկը եկել է:

—Ի՞նչի համար Մենք ինքներս տուանց բժշկի ենք մեռնում:

—Եեղած Փուլիէն!

Նրանք լուեցին Ծերունի գիւղացին նկատում էր այդ մահը իբրև մի բնական բան: Երբ մարդ աշխատել է ամրող կեանքը, կատարել է իր պաշտօնը, ժամանակ է մեռնել: Ինքն ես իր հերթին կը մեռնի, այդ կարծ և պարզ ձեռվ, աւելի հեշտութեամբ, երբ իր կեանքի քաջ ընկերուհին վախճանուած կը լինի արդէն:

Ճանապարհին նրանք էլ չէին խօսում: Մանելով ծառատամնը, կամրջից յետոյ, կիւսիէն Հալանդը մտաբերեց իր վերադարձը Աննիի հարսանիքից, և մտածեց:

—Շուտով ութ ամիսը կը լրանայ: Խմ վիշտ բութ է և մի ենոյն ժամանակ քաղցր ես մի եղակի հաճոյք եմ զգումնորից տեսնելով այս ծառերը, որոնց ես խոստովանում էի վիշտ: Նոյն իսկ մեր վշտերը կապում են մեղ այն տեղերի հետ, որ մենք զդացել ենք նրանց:

Կառքը կանգ առաւ բակում:

—Գնանք տեսնելու ժուլիէն, ասաց երիտասարդը:

Ֆավերան փութիոտութիւն ցոյց չը տուեց.

—Կեզտոտ է մոտ մօտ, ասաց նա վերջապէս Աղջիկներս ամուսնացել են. իսկ վերջին աղջիկս, որի խելապատակը մի քիչ դատարկ է, անսառուններին է պահում: Երբ կինս առողջ էր, ամեն բան լաւ էր դնում: Այժմ, ամեն բան տակնուվրայ է եղել:

Նրանք մտան: Մեծ սենեակը, որ միաժամանակ և խոհանոց էր, ճաշարան և ննջարան, աւելուած էր և կարգի բերուած խնամքով: Ճուրը եփ էր գալիս կաթսայի մէջ. օջախի քարի վրայ: Բաց լուսամտի փեղկերի վրայ, մի ծաղկամանի և սպիտակ փետուրներով կանացի գլխարկի մէջտեղ, կանգնել էր մի հաւ և անգալար երկարացնում էր զլուխը՝ մի յարմար տեղ ընտրելու և ցայտելու համար: Սենեակի խորքում, վարագոյրներով ծածկուած մահճակալի մօտ, կանգնած էր մի ջահիլ աղջիկ, պայծառ զգեստով, գլխարաց և պարզել էր հիւանդին մի զգալ, այնպէս որ ծածկել էր հիւանդի տեսքը:

Այդ գեղեցիկ երեխայի ներկայութիւնը լուսաւորում էր խղճուկ բնակարանը: Նա զարձրեց զլուխը, լսելով դունզը, և մինչև ականջների տակը կարմրատակեց նկատելով երիտասարդին: Լիւսիէնը արդէն ճանաչել էր ժամանի Բէրանին, նրա մաղերի շէկ դոյնից:

—Ոհ. պարոն Հալանդ, դուք Բք, ասաց նա:

Նա հիանալի էր իր շփոթութիւնն մէջ:

Լիւսիէնը ողջունեց նրան և մօտեցաւ իր դայեակին.

—Այդ ինչպէս, իմ խեղճ ժուլիէն, դու հիւանդանում ևս հէնց այն բոպէին, երբ ես վերադառնում եմ: Պէտք է չուտով առողջանաս որպէս զի ինձ համար ձուազեղ պատրաստես:

—Պարոն Լիւսիէն, արտասանեց պառաւը:

Նա խօսում էր դժուարութեամբ և ճնշուած ձայնով:

Նա զարձրեց զլուխը դէպի նրան: Ժաննին օդնեց նրան, մի քիչ բարձրացրեց և նա կոթնեց բարձին: Պառաւը չնորհակալութիւն յայտնեց.

—Այժմ, լաւ եմ զգում ինձ:

Նրա նիհարած երեսը այլ ևս միս չունէր՝ կաշին և ոսկրն էր միայն մնացել: Ամբողջ զէմբը մոմի նման էր և միայն այտերի վրայ կարմրում էին երկու փոքր կարմիր բծեր: Նրա թառամած վիզը լայն խորշոմ ունէր: Նա դրել էր անկողնու վրայ աջ ձեռքը բոլորովին չորացած և կնճոռտած, ինչպէս ծառի մնուած ոստը. բայց աչքերն երկնացին խաղաղութեան արտայայտութիւն ունէին: Այդ պայծառ աչքերի մէջ արտացոլում էր վաթսունամեայ աշխատաւոր կնանք, լի խորին հաւատով:

Մահը արդէն մօտենում էր նրան և նա չէր զարհուրում նա միայն հանդարտ ասաց.

—Ես գնում եմ ձեր մօր մօս, պ. Լիւսիէն:

Սա յիշեց, որ նա փակել էր իր մօր աչքերը և վերցրեց նրա արդէն ցրտացած ձեռքը.

—Զէ կարելի որ այդպէս մեղ թողարք ու գնաք, ևս այդ արգելում եմ ձեզ:

Նա կնճռոտեց երեսը և ջանաց ժպտալ.

—Աստուած բարի է կոչելով ինձ իր մօտ: Իմ հոգսս միայն այն է՝ որ պէտք է անտէր թողնեմ մարդիս և վերջին դաւակիս, որ ապուշ է: Աւելի քաջութիւն պէտք է ապրելու, քան մնոնելու համար:

Ժաննին, որ հեռացել էր, մօտեցաւ անխողնուն.

—Դուք արքայութիւն կը գնաք, իմ բարի ժուլիէն:

—Ի հարկէ. հապա ուրիշ որտեղ պէտք է զնամ:

Եւ գեղջկուհու աչքերը փայլեցին՝ մեղմ և հեղ: Նա նայեց փայտէ կոպիտ խաչելութեանը որ զամուած էր պատից, զարդարուած ուռենու օրհնուած ոստով: Այդ խաչը նրա ժրաջան կեանքի հանդիսատեսն էր եղել:

Պառաւը ջանաց ժպտալ. իր երիտասարդութեան օրերին նա ուրախ և չարաճճի էր եղել: Նա մրմնջաց.

—Գիտէք արգելօք ինչ պէտք է ինսորեմ Աստծուց: Մի լաւ բազկաթոռ նստելու համար. երբէք չեմ նստել կեանքիս մէջ:

Յոզնած՝ նա գաղրեց խօսելու: Նա ամեն ջանք գործ էր դրել հաճելի լինելու իր այցելուներին: Նա նկատեց որ ջահիլ աղջիկը լացում է, և ասաց դարձեալ Լուսիէնին.

—Տեսնում էք, օրիորդներն ինամում են ինձ: Զահիլ աղջկերքը միշտ աւելի բարի են լինում, ինչպէս ցորենի հաց: Ժաննին զրկեց նրան: Հիւանդը թոյլ տուեց և փակեց աչքերը. շուտով նա քնացաւ ծանր քնով:

Ապուշ աղջիկը ներս մտաւ և եկաւ նստեց անկողնու մօտ լուռ Ծխոտած բուխարու մօտ Ֆավիրան կտրտում էր գետնախնձոր, անտարբեր ըստ երեւոյթին:

Երիտասարդները դուրս եկան:

—Առողջանալու յոյս կայ, հարցրեց Լիւսիէն:

—Ոչ. նա ուժասպաս է եղել. նա այլ ևս չէ ուտում: Ես նրան տալիս եմ թէյ և րօմ՝ պահպանելու համար: Երէկ նրան հաղորդութիւն տուին: Վախում եմ որ այսօր չը հանգչի:

Ժաննին ուղղուեց զէպի զուոք, Լիւսիէնը հետևեց նրան:

—Այս մարդկանցից պէտք է սովորենք մենք ինչպէս մեռնել:

—Ոհ, ինչ վերաբերում է ինձ, ասայ ջահիլ աղջիկը, ես շատ վախում եմ մահից Ես կը ցանկայի բոլորովին զառամել և խելքս կորցնել՝ չը նկատելու համար որ մեռնում եմ:

Նա ծիծաղում էր, չը կարողանալով այլ ևս երկար պահել ախրութիւնը: Լիւսիէնը նայեց նրան, զորմացած այդպէս գեղեցիկ գտնելուն համար: Նա հագել էր մի վարդագոյն բատիստից շրջազգեստ, մէջքին ծալքերով սեղմուած: Նա գլխարկ չէր զրել և նրա շէկ մազերը, որ դալարուած էին ճակատի և քունքերի վրայ, մի տեսակ պսակ էին ձեւացնում: Նրա կլորիկ դէմքը թարմ էր և այն պայծառ գոյնով, որից կարելի է իմանալ արեան անարատութիւնը: Աւելի բարձր և աւելի ուժեղ Աննից, թէն աւելի բարակ, նա չունէր նրա փիրուն չնորհքը: Նրա հմաքը կայանում էր պարզութեան և համարձակութեան մէջ:

Նրանք հասան պարտիդի առաջ:

—Ահա վարդեր, ասաց Լիւսիէնը: Առաջիններն են, ձեզ համար կը քաղեմ:

—Այո, մենք կը դնենք նրանց հիւանդի սենեակում:

Մաղիկները կարելիս, Լիւսիէնը տեղեկութիւն հարցրեց նրա ծնողներից, Աննից:

—Աննին պէտք է շուտով գայ, պատասխանեց ջահիլ աղջիկը: Մենք սպասում ենք նրան. նա մեզ հոգս է պատճառում. նա նիհարել է. նա հաղում է. բժիշկը պատուիրել է օդափոխութիւն:

—Ահ, ամուսինը հետն գալիս է:

—Ոչ, ժակը շատ զբաղուած է. նա ճառաբանում է պարլամենտում, նա յօդուածներ է զրում լրագիրներում. նա ընդունում է մեծ մարդկանց: Ես նրա մօտ տեսայ հոչակաւոր անձանց, որոնք շատ սովորական մարդիկ են: Գիտէք, ես Պարիզ դնացի այս ձմեռ:

Նա բոլորովին հպարտ էր Պարիզ զնալուն համար. նա շարունակեց:

—Մօրս հետ. մենք մնացինք ութ օր:

—Ուրեմն, ափկին Ալվարը մեծ ընդունելութիւններ ունի:

—Նա, խեղճը, շատ էլ ուրախ չէ այդ ընդունելութիւնների համար: Ամուսինն է սովիպում նրան ընդունել քաղաքական մարդկանց մի ամբողջ խումբ: Մի կատարեալ զաղանանց: Նրանք վիճաբանում են ճաշի ժամանակ առանց ուշադրութիւն դարձնելու կանանց: Ճաշից յետոյ նրանք աներեւոյթանում են ծխելու սենեակում և երբ վերադառնում են, բանցից փչում է ծխախոտի և ոգելից խմիչքի հրտոր / նրանք

կարմրած են լինում, փայլատակող աչքերով։ Ես չեմ կարողանում տանել նրանց, դրա համար էլ ժակը աչքերը չոռում էր զրաս, իսկ ինեղձ Անոին չէր իմանում ինչ անի։

—Ում հետ էք ճաշել, հարցրեց Լիւսիէնը, որին դուք էր գալիս ժամնիի շողակրատանքը։ Կարելի է որ ես ճանաչեմ մի քանիսին։

—Նրանց անունները չեմ յիշում. սպասեցէք։ Մի սենատոր, թառամած և խորամանկ աչքերով մի՛ փոքրիկ ծերունի։ Նա ամենից առաջ մեկնեց. նրան մի լաւ զրտեցին, հաւատացնում եմ ձեզ։ Ասում էին, որ նա ինչդ մարդ է, ժետօնի նման, և ամեն տեսակ որոգայթներ ու թակարդներ սարքելու մէջ շատ ճարպիկ է։ Նա, ինչ էք կարծում, մի նախկին մինիստր էր։

—Երեւի Միլլարդէնն էր։

—Այս, նա է։ Ապա կային երկու շատ յայտնի երեսփոխաններ, մելտանը և Հեօրտաֆօրը։ Մի ուրիշն ես կար, որ ամենից շատ տհաճելի էր ինձ—տաց նա զզուանքի շեշտով։ — Նա շատ անպիտանն էր, բայց ինչ շիկով էր խօսում։ Նա ծաղրում է ամենքին և նրա աչքերը կարծէք տնտղում են ձեզ։ Նա նստեց իմ կողքին սրահում և ինձ կօմպլիմենտներ ասաց։ Մեծ փափագ ունէի թողնել զնալ։

—Զգուշացէք. նա մեծ յաջողութիւն ունի կանանց մօտ։

—Ինձ ցացնել երբէք չէ կարող։ Աւելացրէք մի քանի անկարութեար երեսփոխաններ, բարի դիրուկներ, որոնք հիանում են ժակով, բերանաբաց։

—Սակայն ինձ թւում է, որ ձեր տեսածն շոյումէ արմատականներին։

—Գիտէք որ ես ոչինչ չեմ հասկանում։ Հայրս ասում է ձեզ նման, որ ժակը հետամուտ է փախուստ տալու, բայց մայրս ապահովացնում է, որ նա դարձի կը բերէ իր հակառակորդներին։ Իսկ ես գտնում էի, որ բոլոր այդ մարդկանցից կեղծութիւն էր փչում և ես վճռել էի, նրանց չը հաճոյանալու համար, ոչ մի բանի մէջ չը համաձայնել նրանց կարծիքի հետ։

—Այս, մենք յաճախ դոհում ենք մեր համոզումները մեր հակակրութիւններին։

—Այդ ճաշի ժամանակ նոյնպէս նրանք խօսեցին Վայլանի մասին, որն, նախընթաց շաբաթին, փորձել էր յօդս ցնդել պարլամենտը։ Երանք գոռում էին. «Ես արժանի է կահիազանի» և այնպէս որ քիչ էր մեռում կաթուածահար լինէին։ Այս ժամանակ ես ասացի. «Այս, իր անհմտութեան համար։ Ամենքը կամեցան

այնպէս ցոյց տալ, որ ասածս շատ սրամիտ են դտնում, բայց շատ զառն կերպով ծիծաղեցին ես գոհ էի:

— Շատ լաւ, օրիորդ, ասաց կիւսիէնը ծիծաղելով:
Ժաննին նայեց դռան.

— Սպասուհիս չեկաւ: Նա պէտք է դար ինձ տանելու և հին գինի բերէր ժուլիէնի համար: Ուրիմն խեղճ պառաւը չի կարող խմել զինին:

— Կամննում էք, մինչեւ նրա գալը այցելել իմ ապարանքը, կամ գուցէ կամննաք մտնել հիւրասննեակը հանգստանալու:

— Ոչ, ոչ, ասաց ժաննին, և նրա պայծառ աշքերը շփոթ արտայայտութիւն ոտաշան: Պտտենք շագանակների պուրակում:

Նա բոնել էր ձեռքում, զղչութեամբ, փուշերի պատճառով, նրա տուած վարդերը: Լիւսիէնը դիտեց նրան այդպէս և զմայլուեց նրա վեհ, սիդանմ քայլուածքով ու թարմութեամբ:

— Իսկ և իսկ գարնան մարմնացումն է, մտածեց նա:

— Դուք ամինալաւ ծառելին ունեք այս երկրում, պ. Հալանդ, ասաց աղջիկը:

— Այս, զրանք հինաւուրց ընկերներ են. ևս նրանց ուրախութեամբ եմ տեսնում երկին. ևս մի քիչ մոռացել էի:

— Ոհ, ոչ թէ քիչ, այլ բոլորովին մոռացել էիք: Ուրիմն դուք լաւ զուարձանում էիր Պարիզում, որ մնացիք այնտեղ տասը տարի առանց վերադառնալու: Ես, կարծեմ, ամբողջ տարին ապրել Պարիզում չեի կարող: Այսանդ շատ մեծ բազմութիւն կայ և ամենքը շտապում են: Այսանդ մարդ աւելի հանգիստ է ապրում:

— Դուք շատ սիրում էք զիւզը, օրիորդ:

— Այս, բայց ոչ շատ, երկեմն այստեղ ձանձրանում է մարդ: Երբ ես վորք էի, երբէք չէի ձանձրանում զիւզում: Երբ մնաք մեկնում էինք Մէնթօնից՝ մմեռը Անսէսիում անց կայնելու համար, ես համբուրում էի բոլոր գմները զնալուց առաջ և լացում էի: Ինձ այնպէս էր թւում, թէ ասմ առջեւի մեծ նոճին ինձ հրաժեշտի տխուր նշաններ էր անում, բայց քամին էր, որ շամփում էր նրա ձիւզերը:

Նրանք հասել էին հովանուտ ծառուղիի ծացրը:

— Այ, սիրահարների պուրակը, ասաց օրիորդը ցոյց տալով՝ վարդի թփերի և եղեւնիների հոյլը:

Եւ նա աւելացրեց ծիծաղելով:

— Խեղճ սիրահարները այլ ես չեն զալիս այստեղ այն օրից ի վեր, երբ զուք տնկել էք այս երկաթէ վշնայ մացառները:

— Ես չեմ արել այդ, այլ իմ կառավարիչը, որին արձակել եմ:

— Պէտք էր նրա մէջքին բենել իր երկաթէ փշերը:
Վերադառնալիս Լիւսիէնը նորից խօսք բացեց, թէի անձարպիկ կերպով: Աննիի առողջութեան և զալու մասին:

— Արեան պակասութիւն ունի, ասաց Ժաննին. ծննդավայրի օղը նրան կը կազդուրէ:

Նրանք լոեցին. երկուսն էլ մտածում էին բացակայ Աննիի մասին: Ժաննին յիշում էր ինչպէս էր ժակը վարւում իր կնոջ հետ արհամարհանքով, հազիւ ներկայացնելով նրան իր հրաւիրեալներին, ընդհատելով նրան մի հեգնական նայուածքով ամեն անդամ, երբ նա համարձակում էր խօսել, և վարւում էր նրա հետ առանց քաշուելու: Նա մտաբերում էր իր քրոջ բոլորովին գունատ և յոզնած, աչքերը կարմրատակած, մորթու վրայ կապոյտ երակներ տարածուած և ձեռքերը լզարած: Իսկ Լիւսիէնը մտածում էր թէ ինչպէս Աննին կարող էր զարդարել իր սեպհական կեանքը: Երկար լուսթիւնից յետոյ Ժաննին հարցրեց:

— Ի՞նչո՞ւ զո՞ւք չը գնացիք նրան տեսնել Պարիզում եղած ժամանակի Այդ վատ է ձեր կողմից:

— Ճիշտ է, բայց քաղաքական մարդիկ ինձ զզուեցնում են սարսափելի կերպով:

Նա չէր վարանել պատասխանել նրա հարցւունքին. ուրեմն նա մտածում էր Աննիի մասին: Մի նոր լսութիւն տիրեց նրանց մէջ: Ժաննին նայում էր գլւանին, առանց նոյն իսկ տեսնելու լոյսի կենդանի խաղը, որ ցոլանում էր աւազի վրայ տերեւների միջով: Նա մօտեցրեց վարդի փունջը սնկներին և նոյն իսկ աչքերին, ծաղիկների թերթիկներով սրբելու համար թափուելու պատրաստ արտասուլքը:

Նրանք նորից հասել էին դուան կամարի սակր:

— Ահա Կատարինէն, ասաց ջահիլ աղջիկը, նկատելով իր սպասուհուն. այս րոպէխս կը վերադառնամ տեսնելու Ժուլիէն: Մնաք բարով, պարոն:

Եւ նա զլուխը չնորհալի կերպով թեքեց:

Լիւսիէնը հետեւեց նրան մինչև ճանապարհի դարձուածքը, ապա մտաւ իր տունը: Եւ նա մեծ հաճոյք զզաց բանալով փեղկերը և հաստատուելով իր բնակարանում:

Կէսօրից յետոյ նա ելաւ ագարակը: Ժուլիէնը մի ռուսողորմնա» բռնած իր չորացած ձևոքում, շարժում էր շրթունքը. նրա ձայնը արդէն չէր լսում և նրա ապակիացած աչքերը իէին խորհրդաւոր զաղանքով: Անկողնու ոտքին, ապուշ ալ-

Ջիկը նայում էր առանց հասկանալու: Նրան հրամայել էին մնալ այդտեղ. նա մնում էր Մնացածները աշխատում էին ըստ սովորականին: Լաւ եղանակի պատճառով, աշխատութիւնները շտապ էին կատարում: Մի հաւ ցայտույց սեղանից հիւանդի անկողնու վրայ. Լիւսիէնը վանեց նրան: Սենեակի միջով անցնող արեգակի մի ճառագայթի մէջ պար էր զալիս ոսկեզօծ փոշին և լսելի էր ճանձերի միակերպ բզեզոց:

Ֆավերան երեւաց չէմքի վրայ.

—Վախճանը հասաւ, ասաց նա երիտասարդին: Նու կամ մնցաւ ընկերանալ լիւսիէնին և ցոյց տալ նրան տղարակի աշխատութիւնները: Լիւսիէնը ընդդիմացաւ:

—Ոչ, դու մնա կնոջ մօտ:

—Կինս այլ եւս ընկերի պէտք չունի:

Եւ երբ տէրը հեռացաւ մի բանուորի հետ, ծերունի գիւղացին որոնեց իր նկուղում եղաւնի տախտակներ և սկսեց սղոցեր նա պատրաստում էր իր իսկոց կնոջ համար վերջին զգեստը կոպիտ փայտից:

Լիւսիէնը վերագրածաւ արդէն մթան: Ժուլիէնը մի ժամ առաջ մեռել էր, արեւամուտին: Նրա թառամած դէմքը պահել էր լուրջ հեղութեան և գեղջական վեհափառութեան արտայայտութիւն: Մահը նրա համար մեծ հանգիսն էր և նրա խաղաղ դէմքը ասում էր այդ: Նրա խաչափառ ձեռքերը դեռ բըռնած ունէին տէրողորմնան:

Ժաննի Մէրանը այդտեղ չէր, բայց երեւում էր որ եկել գնացել է: Նրա այցելութիւնը կարելի էր իմանալ, տեսնելով սենեակի յարդարանքը: Մի սպիտակ սիոոցով ծածկած էր փոքր սեղանը, որի վրայ գրուած էր զանեայ մի կոպիտ Մարիամ Աստուածածին, մի թեւքը կոտրած: Արձանի առաջ տեսնելում էր մի Ճեղ վարդեփունջ, իսկ օրհնած ջրի բաժակի մէջ՝ ծառի մի դալար ոստ:

Օջախի մօտ, շուաքում, երկու պառաւ կանաք, դրացուհիներ, մրմնջում էին աղօթք, ապուր պատրաստելով: Ապուշաղիկը նայում էր նրանց:

Լիւսիէնը վերցրեց ոստը և բարեկաշտական սովորութեան համաձայն սրսկեց նրանով մնոեալին խաչի նշանով: Նա ուժով սեղմեց Ֆավերայի ձեռքը, որ վեր էր կացել նրան ընդունելու համար.

—Իմ խեղճ բարեկամ. նա մի սուրբ կին էր: Նա արքայութիւն գնաց. ևս ամբողջ զիշեր կը հսկեմ նրա դադաղի մօտ և քեզ հետ:

—Ոչ, ասաց գիւղացին, դուք յոդնած կը լինէք:

—Նա հսկել էր մօրս գաղաղի մօտ. ես յիշում եմ. ես կամնում եմ այսուեղ մեալ,

Գիշերը թափանցելով սենեակը խառնում էր իր տխրութիւնը մահուան տխրութեան հետո Երկու մոմ վառեցին սեղանի վրայ. Թեթեւակի ստուերներ սահեցին հանգուցեալի դէմքի վրայ, որ կարծես շարժուեց. Ապուշը եկաւ անկողնու մօտ նրան կանչելու և պատասխան չը ստանալով քաշեց տէրողորման, որ ձեռքումն էր Ռազերը թեթեւ կրծտացին. Դրացուհիներից մինը դուրս տարաւ ապուշին:

Լիւսիէն զնաց ընթրելու և վերադարձաւ հսկելու. Այդ խաղաղ մահուան առաջ, այդ պայծառ դէմքի առաջ, նա խաղաղութիւն էր զգում իր հոգու մէջ: Նա հասկանում էր մահուան պարզութիւնը, երբ հետնքի մէջ մարդ կարողացել է կատարել, ինչ որ հնարաւոր է կատարել:

Վարդերը տարածում էին իրանց անուշահոտութիւնը. նա վերցրեց մի քանիսը՝ հանգուցեալի անկողինը նրանցով դարդարելու և նկատեց, որ իր պարտիզի վարդերն չեին:

—Օրիորդ Մէրանը քերած կը լինի և դրած նրանց տեղ:

Մի ուրիշ միաք ծագեց նրա զիլում, բայց ինքնապաստան չը լինելով, նա շուտով թուզեց այդ միաքը:

Գիշերից բաւական անց, նա դուրս եկաւ բակը իր թմբած անդամները զրստելու. Աստղերը թօթափում էին նրա վրայ իրանց խաղաղարար փայլը. մի զոյլ զեփիւռ զգուում էր նրան, ամբողջութին անուշաբոյր մայիսեան հոտով: Ցուրտ զգալով, նա մտաւ սենեակը: Եւ իրօք, նա տիրութիւն չունէր: Մահուան խաղաղութիւնը խարուսիկ չէր և նա մտածում էր այդ օգտակար անցրած օրուայ մասին, բոլոր այն զբաղմունքների մասին, որոնցով այժմ լի էր իր կեանքը: Նա զարմացաւ.

— Եւ սակայն, տսում էր ինքն իրան, ես արդէն կեանքից մեծ բան չեմ ակնկալում, ոչ ես զարունքից, ոչ սիրուց, ոչ այն ամննից, որ երիտասարդ է, քնքայ և անուշաբոյր...:

II

Մէրան ամուսինները խօսակցում էին իրանց Աննի աղջկեայ մասին, որ եկել էր Պարիզից առաւօտեան գնացքով: Աննին իր արգուղարգն էր կատարում նախաճաշից առաջ և ժամանին օդնում էր նրան շաղակրտաւելով:

Պարոն Մէրանը, ձեռքերը կտեւն դրած, անց ու զարձ էր անում սրահում, աչքերը զետնին ձգած, ճակատը կնճուալիչ:

Նրբեմն կանգ էր առնում կնոջ մօտ և բարձրացնում գլուխը.

—Մենք նրան տուինք մի քնքոյց, բայց առողջ երեխայ. նա վերադառնում է մեզ մօտ նիհարած և գունաթափ. նա չունի այլ ևս այն մաքուր արիւնը և քնքոյց դոյնը, որ տարածում էր նրա այտերի վրայ այնքան չնորհք, երբ նա շառագունում էր: Նա թառամնլ և դալկացել է: Ես վախում եմ, բարակացաւ չունենայ. զարմանում եմ ինչպէս նրա ամուսինը. այդ չէ նկատել վազուց:

Տիկին Մէրանը պաշտպանում էր վեսային,

—Բայց չէ, բարեկամս, գուք չափազանցում էք: Աննին պարզապէս ենթարկուել է Պարիզի կիմային. մայրաքաղաքի խոնաւ և թուլացնող օդը նրա վրայ լաւ չէ ներգործում: Դուք կը տեսնէք, ութ օրից յետոյ փոքրիկ սիրունիկս կերպարանափոխուած կը լինի: Մենք լաւ կը ինսամնիք նրանու ես ունեմ սակաւարիւնութեան դէմ մի բնտիր դեղատոմս, որ մի կրօնաւորուէք ընծայ է արել ինձ: Նա պարունակում է երկաթանուշեղի մէջ:

Աննին մտաւ քրոջ հետո նրա մեծկակ աչքնը տիսուր և սեւապատ էին, նրա այտուկրերը զուրս ցուուած, նրա պարանոցը շատ բարակացած, ուսերը նեղ և փոքրիկ ձեռները վտիտ, ամեն բան նրա մէջ ցոյց էր տալիս որ ծանր ախաը հարուածել է նրան: Ժամնիկի վարզագոյն փափլիկ թշերը և ինքնավատահ զէմքը աւելի էին շեշտում շարագուշակ նշանները:

Մանկամարդ կինը զահ էր երեւում իր վերապարձից.

—Ես նորից գտայ սենեակս, ինձ թւում է, որ ես երբէք չեմ բաժանուել նրանից և զեռ ժաննիկ պէս մի ջահիկ աղջիկ եմ:

Նստեցին նախաճաշելու նախաճաշը ուրախ չանցաւ, չը նայելով տիկին Մէրանի անսպասելի լաւ տրամադրութեան:

—Խեղճ ժուլիէնը մեսուել է, —ասաց Աննին. —ինձ վիշտ է պատճառում նրա մահը: Մենք սովոր էինք տեսնել նրան Ավիլիում և այստեղ, լուազք անելիս, նա միշտ գործի վրայ էր և երբէք չէր գանգատուում:

Ժաննին, որ ջանք էր անում կենդանացնել խօսակցութիւնը, մանրամասնութիւններ հաղորդեց.

—Նա վերջին շաբաթը շատ հանգիստ անցրեց. ես այնտեղ էի և ես նրա մեռնելը չը տեսայ: Երեւակայեցէք, որ ես ահաղին նեղութիւն կրեցի թոյլ չը տալու համար նրա երկու զրացուհիներին, որ հաղցնեն նրան մեռնելուց առաջ, ինչպէս կամենում էին: «Այդպէս աւելի հեշտ կը լինի, ասում էին նըրանք, քանի որ մարմինը փետացած չէ»:

Մէրանը. թէեւ շատ սիրում էր կենցաղական գծերը, այս անդամ ուշադրութիւն չը դարձրեց, նա զբաղուած էր իր Անսի աղջկան վշտով. վերջինս նկատեց այդ և հարցրեց.

—Ձեր երեխայի զալը, հայր, ձեզ ոչ մի ուրախութիւն չէ քերում. ինչ ունեք:

Նա այլ եւս չը կարողացաւ դիմանալ:

—Ի՞նչ ունեմ. պնդում եմ, որ դու հիւանդ ես: Ինչու դէմքդ այդպիսի զոյն ունի:

Աննին սկսեց լալ:

Տիկին Մէրանը այդ ջղային յուղմունքը հանդարտեցնելու համար յայտնեց, որ իսկոյն կը տաճ սունկով բրինձը, որ Աննին և իր հայրը այնքան շատ սիրում էին. բայց սրանք հազիւ ձեռք տուին և նախաճաշը վերջացաւ տիրութեամբ:

—Կամենում ես մի պարոյտ անել ինձ հետ ծառաստանում. հարցրեց պ. Մէրան իր անդրանիկ աղջկան, սեղանից վեր կենալով: —Դուրսը թեթեւ զեփիւով պատճառով տաքութիւնը այնքան էլ զգալի չէ: Ես քեզ ցոյց կը տամ մի քսնի նոր բոյսեր. երբ կը յօգնես, մենք կը նստենք պարտիզի ծայրի նստարանի վրայ:

—Ռւրախութեամբ. դու չես գալիս, ժաննի: Ժաննին հասկացաւ որ հայրը կամենում է առանձին խօսել Աննի հետ և ծուլութիւն ցոյց տուեց:

Նրանք դանդաղաքայլ հեռացան տնից: Աննին, առանց փեղոյրի վերորել էր մի հովանոց արեւից պատսպարուելու համար: Եղր նրանք նստեցին լճի զիմաց, պ. Մէրանը բռն եց աղջկայ ձեռքը.

—Ասա տեսնեմ, Աննի, դու յօգնած ես. այդ ոշինչ: Մենք կը բժշկենք քեզ, բայց քո ախուը աչքերը ցաւ են պատճառում ինձ: Ասա, ինդրեմ, երջանիկ ես թէ ոչ. Ժակը բարի է քեզ հետ, թէ ոչ:

Աննին բաց թողեց հովանոցը աւազի վրայ և հեծկլտաց: Նա այլ եւս ոյժ չունէր պահել այն գաղտնիքը, որ սպանում էր իրան: Նրա արտասուքը արդէն խօսաւովանութիւն էր:

Սաստիկ յուղուած՝ հայրը սեղմաց նրան իր կրծքին և թողեց լաշ լինի, առանց խռովելու նրան խօսքերով: Երբ սաղջիկը մի քիչ հանդարտեց, ասաց:

—Այո, հայր, ես շատ դժբախտ եմ:

Հայրը պահեց նրան կրծքին սեղմած և մրմնջաց:

—Ասա ինձ, ինչ է արել քեզ:

Աղջիկը ձեռքով յուսահատ շարժումն արեց:

— Ոհ, շատ երկար կը լինի պատմելը։ Եւ ինչ օգուտ քեզ
տանջել, բաւական է արդէն որ ես տանջւում եմ։

— Ոչ, Անի, ասաց պ. Մէրանը ծանրախոհ։ Պէտք է
ինձ ամեն բան պատմես։ Ես տուի քեզ նրան։ Նա պէտք է
քեզ սիրի, պաշտպանի, անէ քեզ համար այն ամենը, ինչ որ
քո ծնողները անում էին ամուսնութիւնից առաջ, գեռ աւելի
գորովանքով և երիտասարդական այն հմաքով, որ մենք այլ
եւս չունենք։ Եթէ նա զլանում է քեզ նեցուկ լինել, եթէ
վիշտը գու ստանում ես նրանից, ով քեզ պարտ է տալ ուրա-
խութիւն, այն ժամանակ դու պարտաւոր ես իմ պաշտպանու-
թեան դիմուլ։ Ես պէտք է նորից քեզ օգնեմ, փոքրիկ Անի, և
եթէ կարող եմ, վերադարձնեմ քեզ կորցրած երջանկութիւնդ։
Ուրեմն, տեսնում ես որ պէտք է ամեն բան պատմես ինձ։

Աննին թագցրեց գէմքը հօր կրծքի վրայ իր յուսահա-
տութեան մէջ այդ նեցուկը խրախուսում էր իրան։ Նա ցան-
կացաւ թափ տալ իր լցուած սիրտը, բայց նա այնքան միայնակ
ապրել էր իր վշտի հետ որ չէր վստահանում յանձնել հօրը
այդ վիշտը։ Բացի դրանից, սրբան շատ զաղտնի բաներ կային
որ չէր կարող ասել նրան։

Քննելով իր տանջանքների աղբիւրը նա մտարեց իր
հարսանիքի և իր խեղճ յօշոտուած սիրոյ գիշերը։ Նա անձնա-
տուր եղաւ ամուսնուն ամբողջովին, անզէտ և անսրատ, բայց
սիրող ժակը չէր հաւատացել ոչ նրա ամօթխածութեան, ոչ
անզիտութեան։ Աննին այժմ լաւ հասկանում էր այդ։ Նա յի-
շում էր ժակի սկեպտիկ մահմաները, աւելի ուշ, երբ նա առիթ
էր ուսնեցել խօսել աղջիկների մասին, «Ո՞ւմ ես ուզում հաւա-
տացնել, ասել էր ժակը, աղջիկերը ամենքն էլ արատաւոր
են»։ Եւ այդ տիրուր հարսանեկան երևելոյից ի վեր, երբէք
ամուսինը չէր հարցրել նրա համաձայնութիւնը։ Նա համարում
էր նրան իրեւ մի փոքր սարկուհի, որ սահմանուած է տիրոջ
հաճոյքի համար, — մի տիրոջ, որ շատ զբաղտուած է, գիտէ՝ ժա-
մանակի գինը։ Երբէք նա չէր զարդարել իրանց յարաբերու-
թիւնները այն գորովանքով, որ արժէք է ընծայում զգուանք-
ներին, յարուցանելով փոխագարձ ուրախութիւն։ Խօսքերի մէջ
եւս փափկանկանատութիւն չէր ցոյց տալիս։ Մի օր, հանզիպելով
իր ամուսնացած ընկերներից մինին, առանց քաշուելու շատ
պարզ կերպով ակնարկել էր իր ամուսնական յարաբերութիւն-
ների կատարեալ անդորրութիւնը։

Ֆիզիկական այդ յիշողութիւններից, որ դեռ ամօթից
կարմրել էին տալիս նրան, նրա սակաւացած արիւնը խփեց
գունատ այտերին։ Նո պահպանելով էր կարմրելու այդ հիանալի

զօրութիւնը նոյն իսկ երբ միայնակ էր և իր հօր կըրծքի վրայ իրան մեկուսացած էր զգում իր տանջանքով։ Ապա նա մտածեց որ այժմ ամեն բա՛ վիրշացած է և նրա մարմինը այլ ես բռնութեան չի ննիտարկուի։ այդ միսկը սփոփեց նրան։

Պ. Մէրանը, որ համրներութեամբ սպասում էր թէ երբ իը խօսի աղջիկը, հարցրեց նրան, տեսնելով որ նա լոռում է։

—Վաղժուց է նա քեզ տանջուել է տալիս։

Աղջիկը յուսահատարար վայր ձգեց ձեռքը։

—Ես երբէք երջանիկ չեմ եղել…։

Եւ աւելի ցածր ձայնով, որպէս թէ տիրութեան մի նոր պատճառ զտած լինէր։

—Նոյն իսկ ոչ այն ժամանակ երբ նշանած էի։

Կամաց կամաց, ընդհատուող ֆրազներով, նա խոստովանեց երբեմն հայրը նրան աւելի պինդ էր սեղմում իր կրծքին, մրմնջալով. «Խեղճ փոքրիկա»։

—Նա ինձ չէ սիրում, տապաց Աննին. նա երբէք ինձ չէ սիրել։ Ես կարող եմ ձեզ ասել, թէ ինչ բանից ևս նրան ճանաչեցի ամուսնութիւնից յետոյ։ Մի առանձին բան չը կար, և սակայն ամեն բան վշտալի էր։ Իտալիայում մենք երբեմն ժամերով մնում էինք սրճարաններում։ Նա կարգում էր լրագիրներ և քաղաքաւանական հանդէմներ, իսկ ես սպասում էի, որ վերջացնի ընթերցանութիւնը։ Երբ ես հիացմունք էի ցոյց տալիս Ֆլորենցիայի կամ Հռոմի միւզեւսերում որ և է մի պատկերի մասին, նա չափաւմ էր ինձ ոտից զլուի այնպիսի մի արհաւմարհու նայուածքով, որ կարծես ես անընդունակ էի որ և է բան հասկանալու։ Ոհ, քանի քանի անդամ ես սառած մնում էի Շրա արհամարհական և անարգական վերաբերմունքի պատճառով։ Շրթունքներիս վրայ սառչում մնում էին ինչ որ կամենում էի ասել. ես լոռում էի, իսկ նա յանդիմանում էր ինձ լոռութեանս համար։ Երբէք մենք մի անգամ մտերմական խօսակցութիւն չունեցանք։ Երբ ես մի լուրջ միտք էի յայտնում, նա ուղղակի հեղնում էր ինձ։ Նա վարում էր ինձ հետ իբրև մի հնջն առարկայի հետ։ Իսկ ես ցանկանում էի միայն լսել նրան. ես չատ էլ չէի պաշտպանում հայեցուածքներս և բոլորովին արամադրուած էի թողնել որ նա զեկավարի ինձ, բայց ես զգում էի որ ես նրա համար մի մարմին էի առանց հոգու։ Նա ոչ մի յարկանք չէր ցոյց տալիս ինձ։

Մէրանը հասկացաւ թէ ինչ էր կամենում աղջիկը ասել այս վերջին խօսքերով։

Աննին նորից լացեց և շարունակեց։

—Պարիզում ես շուտով բոլորովին կը ուած տեսայ ինձ: Ցերեկները նա զբաղուած էր իր գործերով. երեկոյեանները նա ինձ տանում էր, առաջին օրերը, փոքր թատրոնները, կաֆէ—կոնցերտները՝ լսելու համար անարդ բաներ, որոնք վրդովում էին ինձ: Իսկ ինքն ծիծաղում էր աղմկալի կերպով և երբ նը-կատում էր տիսուր դէմքս, ասում էր ինձ. «Ենդրեմ քեզ սուա ճգնաւոր մի ձեւացուր. իսկապէս, այս բոլորը դուր է գալիս քեզ, բայց չնս ուզում խոստովաննելց: Նա անուանում էր այդ՝ «ռավիրեցնել ինձ ապրել»: Բայց շուտով գաղարեց ինձ տանե-լու. սովորութիւն շնորհ միայնակ դուրս գնալ: Ես նրան տես-նում էի միայն ճաշի ժամանակակ...»

Նա չէր կարող աւելացնել. «Ե անկողնում»:

Իոպէական լրութիւնից յետոյ, նա ծածկեց զլուխը ձեռ-ներով: Իր մեղրալուսնի զառնութեան յիշողութիւնը ճնշում էր իրան, մանաւանդ այն տօն գիշերները, երբ ժակը տանում էր իրան զմօսավայրերը, հարկադրում էր լսել շուայտ կուազէտ-ներ և տեսնել անառակ ներկայացումներ, որոնք տակնուլիրայ էին անում նրա սիրուը, և կոպտաբար բացատրում էր ան: Իսկ կանան արհեստը, այդ կանաքը բազմութեան մէջ հրում էին նրան: Ահա այս էր այն կեանքը, որ պէտք էր իմանալ և որ ժակը սովորեցնում էր նրան:

—Ես չեմ կարող ձեզ պատմել, հայր, կրածս տանջանքը: Ամուսնութեանս առաջին ամիսների ընթացքում անդադար ասզի փոքրիկ խայթոցներ էին որ արիւնուում էին սիրտա: Երբ նա վերապանում էր տուն շատ ուշ գիշերը, նա ամեննե-ւին հոգս չէր անում իմ անհանդստութեան մասին: Երբեմն նա տնից դուրս էր ճաշում, առանց կանխաւ ինձ իմաց տալու: Միշտ պէտք էր լինում որ փող պահանջեմ տան տնտեսութեան համար:

—Բայց չէ որ ես ուզգակի քեզ էի ուղարկում քո թոշակը:

—Ես, նա ինձ տեղ ստորագրում էր պօստի անդորրա-գիրը, տալիս էր ինձ նամակները, իսկ փողն ինքն էր վերցը-նում: Յամենայն դէպս, ես ինքս փողն իրան կը տայի:

Աննին չասաց որ ժակը գանգատուել էր նրա օմիտի մա-սին և մանրամատն տեղեկութիւններ էր պահանջել նրա ծնող-ների կարողութեան վերաբերմամբ:

Պ. Մէրանը խօսեց գգուելով ձեռքով աղջկայ երեսը.

—Սիրելի, վշտակի զաւակս, այդ ամենօրեայ տհաճու-թիւնները աւելի անտանելի են քան ամենամեծ վշտերը: Քանի քանի կանայք քաշ են տուել այդպէս լոռութեամբ թշուառ

կեանք և աւելի տանջուել են քան այն կանայք, որոնց կոպտաբար, յայտնի համարձակ, խարել են և որոնք սակայն կարող են, բաժանուելով, իրանց վերքերը դարձանել: Քո պատմած բոլոր այդ գարշութիւնների մէջ օրէնքն անզօր է ապահարզանի առիթ գտնելու:

—Ոհ, ես չեմ մտածում օրէնքի մասին, ասայ Աննին: Բաժանումն արդէն սրտերի մէջ է. սիրոս արդէն մեռած է: Շատ անգամ շարունակում են ապրել, երբ, իրօք, կհանքը վերջացել է արդէն:

Պ. Մէրանը աշխատում էր սփոփել և ամոքել այդ վիշտը:

—Ես կը տեսնեմ նրան, ես կը խօսեմ նրա հետ: Անկարելի է որ նա չը հասկանայ իր անարդարութիւնը: Ինչպէս կարող է քեզ չը սիրել: Դու ինքդ նոյն իսկ չը զիտես որքան շացուցիչ ես, ես այդ կը բացատրեմ նրան...: Կան մարդիկ, որոնք սկսում են սիրել կնոջ միայն այն ժամանակ, երբ ուրիշները գովում են նրա հմակքը. Նրանք պէտք ունին ասեղող ծակուելու: Ժակը, խորասուզուած իր գործերի մէջ, կլանուած իր փառասիրութեամբ, անտարբեր է եղել մինչեւ այժմ սրտի գործերին: Բայց գուցէ նրա սիրոը կը բացուի: Դուք գեռ կարող եք երջանիկ լինել: Ոչ մի բան կորած չէ, փոքրիկ Աննիս:

—Ոհ, հայր, ես գեռ ոչինչ չեմ ասել: Ես ասացի միայն այն ինչ որ ինձ ամենից շատ տանջել է տուել: Այն ինչ որ մնում է ինձ հաղորդելու աւելի գժուար է և ձեզ, անտարակոյս, աւելի մեծ վիշտ պէտք է պատճառէ, քան այս ժամը խայթում ները, որ ինձ գուցէ աւելի անտանելի են երեւացել:

—Ի՞նչ, ասաց նա, ուրիշ բան էլ կայ:

Աննին վատանում էր. նա զիտեց հօր ծանրախոհ դէմքը՝ հակուած դէպ իրան համակրութեամբ: Այդ դէմքի վրայ այնքան կարելցութիւն և գորովանք էր կարդացւում, որ նա չը կարողացաւ պահել իր խօսքը:

—Մի օր, Պարիզում,—արդէն երկու ամիս կայ—ես պատահեցի տիկին Ֆերրէզիին: Ես ժակի հետ էի. նա կարծես չէր տեսնում կոմսուհուն: Բոլորովին ուրախացած, ես մօտեցայ նրան և հրաւիրեցի գալ ինձ մօտ: Նա ինձ ասաց, որ նոր է եկել Պարիզ և անտարակոյս կ'այցելի ինձ ըստ առաջին հնարաւորութեան: Եւ, իրօք, նա եկաւ իր ամուսնու հետ: Վերջինս—այդ զիտողութիւնը ես արի նրանց մեկնելուց յետոյ— ինձ նոյն իսկ ասաց որ չորս ամսից ի վեր Պարիզում են բնակուամ: Ես մտածեցի, որ կինը նրա համար ինձ ասաց թէ նոր են եկել, որ մի կերպ արդարացնի իր ուշ այցելութիւնը: Մենք

մեր նախկին յարաբերութիւնները վերանորոգեցինք, ժակը հարկադրում էր ինձ հրաւիրել նրանց ճաշելու....

Նա դարձեալ մի քիչ վարանեց և ապա վերջացրեց պատմութիւնը առանց ընդհատման:

—Մենք յաճախ տեսնում էինք նրանց, ես ոչ մի բանի մասին կասկած չունեի: Վերջին ամսուայ սկզբին, ես ստացայ մի անստորագիր նամակ, պատուել եմ այդ նամակը, բայց խուփ գիտեմ, ահա ինչ էր գրուած. Երէ տիկին Ալվարը կամենում է փորձել իր ամուսնու հաւատարմութիւնը, բող գնա նա վաղը, ժամը երեքից առաջ Վիլիկ, ծառուղու № 16-ի դեմ առ դեմ, եւ բող բանայ աշխերը: Իմ առաջին մտածմունքս եղաւ ցոյց տալ այդ նամակը ժակին, ես այդպէս էլ արած կը լինէի, եթէ ամենափոքր մտերմութիւն անգամ գոյութիւն ունենար մեր մէջ: Ես խօսք տուի ինձ հաւատ չընծայել այդ անանուն պատգամմին: Եւ, պէտք է խօսառվանեմ, այդ դաւաճանութեան լուրը ստատիկ տանջանք չէր աղջում ինձ, որովհետեւ չիմանալով ով է մեղսակցուեին, ես չէի հաւատում նրա իրականութեան: Սակայն երկրորդ օրը, ժամը երեքին, ես կանգնած էի ցոյց տուած տան առջեւ, մի փակ կառքի մէջ, ծառուղիի միւս կողմում: Ես հասայ լրտեսի ստորութեան, որից դեռ կարմրում եմ: Այդպիսի գործերում մարդ կորցնում է իր արժանապատռութիւնը: Բայց երբ մարդ միրում է, ոչ մի բանի մասին չէ մտածում: Ես տեսայ որ առաջ տիկին Ֆերբէզին եկաւ: Ոհ, նա չէր թաքնւում, նա նոյն իսկ քող չունէր երեսին: Նա մտաւ առանց վարանելու և անհետացաւ կամարի տակ: Սիրոս սեղմուեց, ինձ թւում էր որ նա այլ եւս չէ բարախում: Մի կէս ժամից յետոյ ժակը եկաւ: Նա եկաւ բաց կառքով: ապրիլի մի գեղեցիկ օր էր և արդէն բաց կառքեր կային: Նա չարձակեց կառքը, մնցաւ շտապ մայթը և նոյնպէս մտաւ տունը: Ես մնացել էի բոլորովին թուլացած: Երանք ժամանդրութիւններ էին սարքում օր ցերեկով, առանց ծածկուելու: Երանք կարող էին մինչեւ անգամ միասին գալ, այդպէս էլ դուրս եկան մի ժամ յետոյ. գուան առաջ ժակը սեղմեց նրա ձևոքը, ցայտեց իր կառքի մէջ և ես կարծես լսեցի, այս հրամանը. «Դէպի ներքին գործերի մինիստրութիւնը» ես գիտեի, որ այդ օր պէտք է նա տեսնէր մինիստրին: Ես այլ եւս չէի մտածում մեկնել. կարծում եմ որ նոյն իսկ կորցրել էի մտածելու, տանջուելու, ապրելու ընդունակութիւնը: Կառապանը, որ կարդացել վերջացրել էր իր լրագիրները, մօտեցաւ դռնակին և նրա ձայնը ինձ արթնացրեց. «Ինչ անենք, փոքրիկ տիկինս, ասաց նա, անտարակոյս նա այլ եւս չի դայ. գնանք.

երբէք չը պէտք է տղամարդկանց ցոյց տալ, որ նրանց շատ սիրում էք...»:

Ամօթահար՝ ես ելայ կառքից, վճարեցի և ակսեցի ման գալ: Պաղ օրը զովացնում էր ինձ. սակայն մի քանի քայլ անելուց յետոյ ստիպուած էի կանգ առնել, այլ եւս շունչ չունէի և սիրտս ցաւում էր: Ես մի ուրիշ կառք վերցրի՝ տուն գնալու համար ժամկը գեռ չէր եկել. նա եկաւ միայն ճաշին, ուրախ, ժպտուն, խօսելով այն կարեւորութեան մասին, որ ստանում էր քաղաքական աշխարհում: Կարծում էի որ ինձ ատելութիւն է ներշնչում և, ճշմարիտ, ես այլ եւս ոչինչ չէի զգում: Մէր, հակակրութիւն, նախանձ, բոլոր զգացումներս միմնել էին միքանի ժամում: Կարծեմ որ ես մեռայ այդ օրւ Այսօր մի ուրիշ կին է ինձ տեղ:

Պ. Մէրանը, յուսահատ, մրմննաց.

—Թշուառականը:

Բայց յուսոյ մի վերջին նշոյլով, թէն առանց համոզուած լինելու, նա աւելացրեց:

—Նրանք կարող էին հանդիպած լինել իրար մի այցելուածեան ժամանակ և միասին գուրս եկած: Գուցէ այն չէ, ինչ որ կարծում ես:

—Ոհ, հայր, այդ դէպքում ինձ չէին աղդարարի: Բացի դրանից... (նա կարմրեց, որովհետև ամօթ էր քաշում այդքան ստորսալուն համար) ես աեզեկութիւններ հաւաքեցի: Ժակը ոչ մի երկիւղ չունի: Միթէ նա ինձ բանի տեղ է դնում: Բնակարանը վարձել էր պ. զը Լավիրնէյը. այդ նրա հօր նախկին կալուածքի անունն է, Աննէսիի մօտ:

Եա ասաց դարձեալ:

—Ես չը զիտեմ կռուել. ես շատ մեղմ եմ և երկչու: Ես նրան ոչինչ չասացի:

Նա սրտի սասափկ բարախումն ունեցաւ. նա յիշեց որ այդ զարհուրելի օրուայ երկրորդ օրը նա կարողացել էր առանել ժակի համբոյրները առանց ոյժ ունենալու ընդդիմնալ, թէն մինչ իր ամբողջ էռութիւնը զգուանք էր յայտնում: Սակայն իր ստացած ծանր հիւանդութիւնը ալդատել էր նրան այդ հպումից, որ այլ ես տանել չէր կարող:

Պ. Մէրանը դարձեալ հարցրեց:

—Գիտես արդեօք երբ է սկսուել այդ կապը:

—Ոչ, չը զիտեմ. երբեմն մտածում եմ որ ամուսնութիւնից առաջ է եղել: Գուցէ նա նրան վազուց է սիրում. ես մըտաբերում եմ այժմ տիկին Ֆերրէզիի որոշ խօսքերը, որոշ նայուածքները: Ինչի նա եկաւ խլեց սիրտս, երբ նրան էր սի-

բում: Ասա ինձ, ինչի՞ համար: Ես չեմ կարող հասկանալ այդ-քան կեղծութիւն:

Նա հեծկլտաց: Պ. Մէրանը մեզմիկ շոյեց ձեռքով նրա այտերը.

—Խեղճ, փոքրիկ Աննի: Ես ևս յանցաւոր եմ: Ես չը պէտք է թոյլ տայի այդ ամուսնութիւնը: Ես քաջութիւն չունեցայ. դու սիրում եիր ժակին և իմ ոյժերից վեր եր խորտակել քո սէրը:

Աննին ասաց իր արցունքի մէջ.

—Ոհ, մի յանդիմանիր քեզ. ճիշտ է, ևս նրան սիրում էի: Զօհիլ աղջկերքը չը գիտեն: Երբ սիրու սկսում է սիրել, նա կպչում է որտեղ կարողանում է: Միայն յետոյ են հասկանում, բայց չարիքը արդէն կատարուած է լինում:

—Պէտք է լսէիր ինձ:

—Սիրոյ մէջ ոչ ոքի չեն լսում: Շատ քնքոյց աղջկանց պէտք է սովորեցնել ինքնուրոյն կերպով զնահատել մարդկանց: Որտեղ պէտք է ևս սովորէի ճանաչել երիտասարդներին: Մենք աւգրում ենք զիւղում և մեր բնակութիւնը Պարիզում շատ կարճ էր վիճում: Ժակը առաջինը եղաւ, որ զբաղուեց ինձնովի ես կարծում էի որ բոլոր այն փոքրիկ ուշադրութիւնները, որ մի երիտասարդ ցոյց է տալիս մի ջահիլ աղջկան, սիրոյ մնձ ապացոյցներ են:

Պ. Մէրանը մտածում էր և կարծես մի ծանր որոշում էր կամինում անել: Իր փեսային վիրշնականապէս դատապարտելուց առաջ, նա աշխատում էր քննել նրա բոլոր վարմունքները: Ժակը անշուշտ տիկին ծերբէզիի սիրականն է եղել ամուսնութիւնից առաջ, և, կամինալով մողորեցնել իրան, Մէրանին, պատմել էր նրան Լիւսիէն Հալանդի իտալուհու հետ ունեցած յարաբերութեան մասին: Փեսան կամաց կամաց սպանում է նրա աղջկան: Զարիքը անդարմանելի էր: Նա ասաց մի բուպէից յետոյ.

—Դու կը մնաս մնդ մօտ, Աննի: Դու այլ ևս չես տեսնի նրան, դու կը բաժանուես:

Աննին յառեց հօր վրայ իր լացակումած մնծ աչքերը.

—Ոհ, այժմ այլ ևս աւելորդ է:

Եւ երբ նա թագորեց գլուխը, Մէրանը հասկացաւ որ ազ-ջիկը իրան արդէն կորսուած է համարում: Նրան պատեց յուսահատութիւնը և զայրոյթը: Ատամները կրծտելով, նա մըր-մընջայ:

—Թշուառականը, ես նրան կը վոնդեմ. ես նրան կը սպանեմ:

Անսին վերցրեց զլուխը կիսովի.

—Ոչ, թողէք նրան, ես սիրում եմ նրան: Ես արժանիք չունեմ. ես չեմ սիրում նրան. ես շատ վատ բաներ իմացայ. ես շատ տանջուեցի. սէրս մնուել է: Երբ ես որոնեցի այդ սէրը տանջամաքներիս մէջ, ես նրան այլ ես չը գտայ:

Մէրանը բռնեց նրա զլուխը ձեռներում և նայեց նրա աչքերի խորքը.

—Սիրելի զաւակս, ասա ինձ ինչդ է: Ի՞նչ է հիւանդութիւնդ:

—Բժիշկները լաւ չը գիտեն: Նրանք ասում են, թէ սրախ լայնացումն ունեմ: Այդ եղաւ այն օրը, երբ նրանց միասին տեսայ. զրանից յետոյ, երկու անգամ կրկնուեց. ահ, ահ...

Յանկարծ նա զզաց որ խեղդուում է նրա զէմքը կծկուեց ցաւից: Մէրանը վերցրեց նրան իր բազուկների մէջ և մեծ ջանքով տարեց մինչեւ տուն:

Շտապով ուղարկնեցին բժիշկ Բավոյի հատեւից, որ ամառները Մէնթօնում էր ապրում: Նրա բժշկական հեղինակութիւնը անսխալական էր համարում. նա քննեց հիւանդին:

—Ես չեմ թաղցնի ձեզնից որ շատ ծանր հիւանդութիւն է —ասաց նա պլ. Մէրանին: Այդ կոչում է այժմ կրծքի անզին:

Եւ նա բացատրեց այդ վերին աստիճանի դաւաճան հիւանդութեան էութիւնը, նրա զժուարաճանաչելի պատճառները, նրա ընթացքը, նրա արտայատութիւնը, երբ հիւանդը զգում է կուրծքը սեղմուած կարծես ունելիքների մէջ, և նրա վտանգները մի այնպիսի թուլացած անձի համար, ինչպէս տիկին Ալլարն է:

Երբ հայրը վերադարձաւ մօաը, Աննին, պարզուած, ժըպտաց նրան: Մի քիչ արիւն թոել էր այտերին. նա չէր երեւում ծանր հարուած ստացած, այլ միայն թոյլ և սակաւարիւն: Նա ինքն Պարիզում խորհուրդ էր հարցընել բժիշկներից և գիտէր որ հիւանդութեան մի նոր կրկնողութեան ժամանակ կարող է մնանել:

III

Լիւսիէն Հալանդը, հանելով շորերը սկսեց հնձել իր վարձուոր գիւղացիների հետ: Ֆավերան և նրա չորս որդիքը, չարքով, կարում էին ոսկեայ հասկերը կիսաշրջանի լայն հարուածով, կանոնաւոր և ծանր բիթմով: Յուլիսեան արևուը, որից հասունացել էին հունձերը, արծաթեայ կայծեր էր վասում մանգաղների յզկած երկաթի վրայ:

—Դուք չը գիտէք մանդաղ բանեցնելը, ասաց ծերունի ֆավկերան առանց ընդհատելու իր աշխատութիւնը և նոյն իսկ առանց ցոյց տալու հնձելու ձեւը:

Լիւսիէնը, ձանձրացած իր անհմտութիւնից, սկսեց գիտել իր աշխատութեան ընկերներին և վերջ ի վերջոյ սովորեց հնձելը:

—Այժմ դուք բանեցնել գիտէք մանդաղը, հաւանեց վերջապէս գիւղացին, առանց սակայն ցոյց տալու որ նայում է:

Բայց երիտասարդը լող էր տալիս քրտինքի մէջ: Նա շարունակեց հնձել զրդուած ինքնասիրութիւնից, ափսոսալով որ ըսկսել էր: Սակայն քիչ քիչ սովորեց, մկանունքները վարժուեցին և երբ հասաւ դադար անելու ժամը, նա շատ յոդնածութիւն չը գտաց: Նա սիդր գինի խմեց ֆավկերյի տղաների հետ, իսկ գիւղացին կանգնած, կոթնած իր մանգաղին, մերժեց յագեղնել ծարաւը: Իր կող մահից ի վեր, առանց երբէք գանգատուելու, նա շատ քիչ էր հանգստանում և շատ քիչ խօսում:

—Ահա տանուտէրի օգնականը, ասաց նա, երբ մի գիւղացի կապոյտ բաճկոնակով երեւաց արտի ծայրին, թեւի տակ մի կապոյ:

Երբ սա մօտեցաւ խմբին, ողջունեց լ. Հալանդին և յանձնեց նրան մի հատ ծրար:

—Ելեւմտայովցն է որ վերադարձնում են, պ. տանուտէր:

—Լաւ, ժօլի, նահանգապետութեան մէջ ընդունիլ են մեր արած դիմումները:

—Ոչ, պարոն տանուտէր:

—Իհ, նահանգապետութեան պարուները մեզ հետ վարւում են իրանց քէֆի ուզածին պէս. իսկ գիւղում, ինչ որ բան կայ:

—Ոչինչ:

Սակայն փոխ-տանուտէրի դէմքի վրայ երիտասարդը նկատեց բերանի այն գաղտնապահ և հեգնական ծալքը, որ նա միշտ տեսնում էր ֆավկերյի դէմքի վրայ, երբ վերջինս որ և է բան էր ունենում հաղորդելու:

—Գինետան մէջ ոչ մի կոխ չէ եղել: Անտառապահը ոչ մի արձանազրութիւն չէ կայացրել:

—Ոչ, պարոն տանուտէր:

—Ուրեմն ինչ կայ, դէ ասա տեսնենք, ես ձեր դէմքից լաւ նկատում եմ որ մի բան կայ:

—Դէ լաւ, պ. տանուտէր, վօժընիէն կայ:

—Ո՞վ, վօժընիէն. այդ անունով մարդ չը կայ մեզ մօտ:

—Իսկոյն կը պատմեմ ձեզ: Նա մի օտարական է Սիրստ

երկրից, Մօն-Բլանի կողմերից։ Նա տեղն ախտիկ անել չէ կարողանում։ Արդէն շրջել է ամբողջ աշխարհը և չէ կարողացել հարստանալ։ Նրա ամբողջ ունեցածը իր պարկի մէջն է։

—Այո, առակն առում է. զլորուող քարը մամուռ չի ունենայ։

—Նա եկել է գիւղի վերեւի փոքր ճանապարհի շնութեան վրայ աշխատելու։ Նրա խօսքերը անհատնում են. Նա շատ պատմութիւններ գիտէ. դրա համար ոչ ոք չէ քնում։

—Ի՞նչպէս, ոչ ոք չէ քնում։

—Աչ, պարոն տանուտէր, հունձի ժամանակ է. ցերեկը բանում են. երեկոյեանները դալիս են հաւաքւում այն շտեմարանում, ուր նա քնում է։ Ամենքը մեկնուում են յարդի վրայ և նա սկսում է խօսել. Նա խօսում է ամբողջ ժամանակ, նա շաբաթներով կարող է խօսել. ահա տաննեւհինդ օր կայ, որ այդպէս տեսում է։ Ես չեմ կարծում փաստաբանը այդքան շատ խօսի. Ես լսեցի փաստաբաններին երբ քննուում էր համայնքի դատը։ Նրանք այդքան շատախօս չեին. կարծես շարունակ պըտուող ջրաղացի քար լինի։ Պարզ է, որ ոչ ոք չէ կամենուած քնել. մանաւանդ կանաչը կատաղել են. անկարելի է քշել նրանց տուն՝ քնելու համար։ Սիրստի մարդը ճանապարհորդել է ամեն տեղ. Նա եղել է Պարիզում, ուր մեզենաներ է պտարցըրել. սեւամորթիւնների երկրում և մի ուրիշ տեղ, ուր ծակել են հողը, որպէս զի նաւերն անցնել կարողանան, ինչպէս պէտք է անէին Պանամայում, ուր ամեն մարդ կորցրեց փողը։

—Բացի պատգամաւորներից։

—Նա զարմանալի բաններ է պատմում. զուցէ շտա էլ ճշմարիտ են։ Երբ մարդ անուսում է ինձ նման, շատ բան չի իմանայ, ի հարկէ։ Պէտք է զաք նրան լսէք, պարոն տանուտէր, պէտք է զալ մի երեկոյ։ Ես ձեղ կը թաքցնեմ շտեմարանում նրա զալուց առաջ։ Անպատճառ ձեր քունը կը փախչի։ Երբեմն նա պատմութիւններ է անում իր կեանքից. երբեմն նա միայնակ այնքան յուզուում է, որ կարծէք շատ մարդիկ վիճում են միատեղ կամ զիւզում բազար կայ։

—Բայց հունձի ժամանակ է. երեկոյեանները միթէ յոդնած չեն լինում։

—Ոհ, ոչ, կէսօրից յետոյ երկու ժամ քնում են, երբ շատ տաք է անում և անկարելի է աշխատել։ Բայց գիշերը, այդ չարաձձի մարդը չէ թողնում քնել։ Հարկաւոր է զաք լսէք նրան։ Նա կախարդում է իր ունկնդիրներին, ոչ ոք չէ կարողանում թողնել հեռանալ։

—Ես կը գամ, հէնց այս երեկոյ, կամենում էք։

— Շատ լաւ:

Եւ գիւղացին հեռացաւ, շտապով իր աշխատութիւնը վերջացնելու երեկոյից առաջ:

— Դուք եւս կը դաք, ֆավերա, հարցրեց Լիւսիէնը: Ծերունին թափ տուեց զլուխը:

— Ես չեմ սիրում շաղակրատներին, իսկ զիշերը ստեղծուած է քնիլու համար:

Երիտասարդը սրբեց ճակատի քրտինքը, հագաւ շորերը և կամաց կամաց վերապարձաւ տուն: Գեղջկուհիները, շրջազգեստները հանգուցած գոտիներին և թեւքերը ծալոտած, երեսնին կարմրատակած արեւից, հաւաքում էին գետնի վրայ թափուած հասկերը: Բերբի հունձը, հանապագօրեայ հացի սքանչելի նիւթը, հիացնում էր նրան:

Սրահում նրան սպասում էր ժակ Ալվարը, որ նախընթաց երեկոն եկել էր Պարիզից և թերթում էր աշխատութեան մեծ գրասեղանի վրայ թափթթված զրբերը: Ալվարը իսկոյն ցոյց տուեց նրան հատորները, ծիծաղելով:

— Բօրէի ձեռնարկները. Կատարեալ կալուածատիրոջ ուղեցյաց, Երկագործական մեժնաները: Ուրեմն դու շատ լուրջ ես վերաբերումքո զիւղարնակութեան:

Լիւսիէնը ոչ մի հաճոյք չէր զգում տեսնելով իր նախկին ընկերին:

— Ես գերադասում եմ, ասաց նա, մի լաւ երկրագործ մի վատ պատգամաւորից:

— Լաւ, ուրեմն, ամրող ամառ դու պէտք է ձանձրացնես քո զիւղացիներին տեսական և անհեթեթ խորհուրդներով, իսկ ձմեռը դու կը մոռանաս Պարիզում երգչուհիների հետ զիւղի բարոյական և սմբած զուարծութիւնները:

Նա ակնարկում էր Լիւսիէնի վերջին կապակցութեան, որովհետեւ նա հանդիպել էր նրան մի երեկոյ երաժշտական ակումբների երգչուհիներից մինի հետ, բայց Լիւսիէնը պատասխանեց:

— Կարծեմ որ ձմեռն այստեղ կ'անցկացնեմ:

— Ճշմարիտ սարսափելի կը ձանձրանաս:

— Բայց ոչ. Ես այժմ ուսումնասիրում եմ մի նոր մեքենայ և հողը պարարտացնելու նոր նիւթերը: Բայցի զրանից ես գրելու եմ մի զիրք այն մեծ մարդու մասին, որ ապրել է այս զիւղում:

— Այս զիւղում մի մեծ մարդ է ապրել:

— Նա քաղաքական մարդ չէր. Նա ապրել է հազար թուականին մօտերը և կոչւում էր Մէնթօնի Բէրնար: Նա մի

սուրբ է. նա փախաւ այս ապարանքից, ուր ես ապրում եմ, իր հարսանիքի գիշերը և հիմնեց մեծ Սուրբ Բէրնարի մենաստունը՝ մոլորուած ճանապարհորդներին պատսպարելու համար:

— Աւրեմն նա գոնէ մի երջանիկ կին թողեց, նրան, որի հետ չամուսնացաւ, ասաց Ժակը, որի հոգը չէր ամեննելին Մէնթօնի Սուրբ Բէրնարը:

Եւ այդ հին պատմութեան խօսքը կտրելու համար, նա յարեց.

— Դու էլ կնոջս պէս ես, որ ատում է Պարիզը և չէ կամենում վերագառնալ այստեղ: Ինչպէս է նա. ահա երկու ամիս է, որ ինձ թողել է:

Այդ հարցմունքին՝ Լիւսիէնը յիշեց Աննիի գունատ դէմքը, Նա յաճախ հանդիպում էր նրան. նա գուշակում էր նրա տանջանքը, որի մասին Աննին երբէք չէր խօսում: Մի համր մտերմութիւն էր հաստատւում նրանց մէջ, որ առաջ էր գալիս մնութեան, պարզ և անկեղծ գրքերի վերաբերմամբ ունեցած համանման ճաշակներից: Մէկի վիշտը և միւսի համակրական կարենկյութիւնը մի խանդաղակաթ գազանիքով շրջապատում էին այդ բարեկամութիւնը: Իմանալով՝ որ Աննին ծմնու անցնելու է Աննէսի կամ Մէնթօն, նա վճռել էր նոյնպէս մնալ: Երբ նա տեսնում էր նրան, իր կեանքի ընթացքը հոսում էր մեղմ և հանդարատ, նման ամ վճիտ աղբիւրներին, որոնց կարկաչնը չէ լսում, բայց միշտ զով են:

— Նրա առողջութիւնը լաւ չէ, ասաց վերջապէս երիտասարդը: Իմ պատաւ տնտեսունին, որ արիւնազուրկ էր, ինչն իրան ասում էր, յուսահատարար, թէ պէտք ունի կազդուրուելու: Տիկին Ալվարդն ես պէտք ունի կազդուրուելու:

Ժակը վերցրեց գլխարկը.

— Գնանք նրան տեսնելու: Եկ հետս Մէրանների մօտ:

— Աւրեմն, զու այստեղ չես բնակւում:

— Ես գերագասում եմ ապրել իմ շրջանի կեզրոնում, իմ սախկին ամուրիի բնականում, որ բաց չեմ թողել: Ռումիլիում ես պէտք է նախագահեմ պարգեւաբաշխութիւն. դա էլ մի միջոց է ժողովրդականութիւն ձեռք բերելու: Ես գրել կը առամ իմ քարտուզարին չնորհաւորական նամակներ, որ ինքս կը ստորագրեմ, այն ծնողներին, որոնց երեխանները դպրոցում լաւ թուանշաններ են ստացել:

Լիւսիէնը մտածում էր ոչ առանց ներքին ուրախութեան:

— Նա չի ապրի Աննիի մօտ, արդեօք նա դեռ սիրում է

սրան։ Կամ գուցէ նրա հիւանգութեան պատճառը հիասթափումն է։

Նրանք զնում էին կողք-կողքի, բայց բաժանուած իրանց մտածմունքներով։ Ժակը մի ձեռքով զեկավարում էր իր երկանիւը, որով եկել էր նա Մէնթօն։ Գիւղից անցնելիս՝ նա հետնելով ասաց ընկերին։

—Դու Էլ շատ բարի պատուզ չես. տակից քաղաքականութեամբ ևս զբազւում։ Դու քեզ նշանակել ես տուել քո համայնքի տանուտէք. հը, անպատճառ յաջորդ ընտրութիւնների ժամանակ քո պաշտպանութիւնն կը հայցեն։

—Ներողութիւն, առարկեց լիւսին, ինձ ընտրել են Մէնթօնի մէր և ես զբազւում եմ ոչ թէ քաղաքականութեամբ, այլ իմ համայնքի ֆինանսներով և խաղաղութեամբ։

—Եւ քո առաջին գործդ եղաւ խել ինձանից Մէնթօնի գործերը և տալ Բրէնա փաստաբանին։

—Ես կարծում էի որ պարլամենտի պատգամաւորը այլ ևս չի զբազուի փաստաբանութեամբ։

—Ահ, լուրջ գործերը միշտ պահում են, իսկ չնչինները տալիս են պաշտօնակիցներին։

Ցանկանալով պարծենալ իր հին բարեկամի աշքում, նա սկսեց իր զլուխը գովել։

—Ես իմ ժամանակս զուր չը կորցրի այս տարի. կարծեմ նաւակս լաւ զեկավարեցի։

—Այո, ես այդ իմացայ լրագիրներից։

Պարլամենտում արտասանած իմ առաջին ճառերը ուշադրութիւն գրաւեցին. ևս այդ կարող ևմ տաել առանց հոդարտանալու։ Այդ առաջին ճառերը այն տեսակ էին, որ ինձ չէր կարելի վերջնական կերպով համարել այս կամ այն կուսակցութեան անդամ։ Ես այդ մասին շատ էի աշխատել. ինձ ամեն կողմից առաջարկութիւններ են անում, մանաւանդ արմատականներ, որոնք վաղ թէ ուշ իրանց ձեռքը կը ձգեն իշխանութիւնը։

—Բայց չէ որ այստեղ զու քեզ ներկայացրիր իբրև շափաւոր։

—Ի՞նչ անենք. երբ ևս մինիսար կը դառնամ, իմ աղղեցութիւնս կը կշռեն և ոչ կարծիքու Պարիզում, պարլամենտական աշխարհում, մարդիկ շատ սկիպտիկ են։ Ամբիոնի վրայ բոցավառ համոզումներ ունեն, բայց ծխարաններում նրանք պաղում են իսկոյն։ Այս ինչ աշխայժ պատգամաւորը, որին երկիրը համարում է իբրեւ արմատական իմբի կամ օպպօրտիւնիստ խմբի զարդը, իսկապէս պատկանում է այն խմբին, որը

մենք ծխատանում անուանում ենք «պոռնկագրական»։ Բազմաթիւ են դրանք և ամեն անդ վարձում են։

Ժակը երբէք չէր հրաժարուել ցինիկարար խօսելու հաճոյքից։ Այդ նրա կամքի միակ թուլութիւնն էր։ Նա իր զերազանցութիւնը այնքան ակնյայտնի էր համարում, որ չէր կեղծում իր գործողութիւններից ու իր մատածունքներից ոչ մինը։ Նա ցոյց էր տալիս իր ոյժը, ինչպէս հրապարակի մի ըմբիշ ցոյց է տալիս հաճոյաբար իր գօրեղ մկանունքը։

—Ես արդէն մի փոքր հոչակ եմ ստացել գատարանի մէջ, իրրիւ փաստաբան, —վերսկսեց նա, շարունակելով իր ներբողը։ —Այսուն դեռ յաջողութիւն կ'ունենամ։ Վերջապէս, ես տուել եմ «Ձիգարօ» լրադրին մի շարք ուշադրաւ յօդուածներ Խտալիսկի տնտեսական վիճակի մասին, որն ես ուսումնասիրել եմ իմ հարսանեկան ճանապարհորդութեան ժամանակի։

—Քո հարսանեկան ճանապարհորդութեան ժամանակ։

—Այն, պատասխանեց Ժակը, առանց նոյն խոկ նկատելու այդ հարցման զարմանքը։ —Ես նրանց հրաժարակեցի նորերս բրոշիւրով, կցելով մի հնատազատութիւն մեր առեւտրական դաշնակրնի մասին։ Երբ պարլամենտը վերսկսէ իր նիստերը, ես կը մասնակցեմ եկամտային հարկի վիճաբանութեան և կը ներկայացնեմ օրէնքի մի նախադիմ՝ արդարադատութեան ծախքերը նուազացնելու համար։ Այդ հարցը ժողովրդական է։ Ժողովուրդը, ի հարկէ, ուրիշ ձևով կը վճարէ, բայց իմ ինչ հոգան է։ Նա ինչքան կամենաս հարկ և տուրք կը վճարէ։

—Հիանալի է այդ սէրը, որ ժողովրդի ներկայացուցիչները ունեն նրա համար։

—Ան, ես անօգուտ զգացումները չեմ սիրում։

—Այո, ճիշտ է, դու միայն քո հաճոյքիդ համար մի բան կ'անես։

—Կեանքը տանելի է միայն այն ժամանակ, երբ սաստիկ յուղալից է։ Պէտք է լինել այն միծ հնոյների նման, որոնք միշտ վատուած են մոռու։ Պէտք է զործիկ՝ զդալու համար որ ապրում ես։ Սպազան բռնաբարողը մեր կամքն է։

—Իսկ ես, ինձ հաճելի է միայն անցեալը։ Մեր կեանքում ինչ որ կայ, անցեալ է...։

Այս խօսակցութիւնը տարել էր նրանց մինչեւ Մէրանների վիլլայի դուռը։ Ընտանիքը հաւաքուած էր սրահում և պարոն ու տիկին Ֆերրէզին այցելութեան էին եկել։ Լիւսիէնը նկատեց այն սառն ընդունելութիւնը, որ արին Ժակին։ Նա նախազում էր ախուր գաղտնիքը։ Աննին, սպիտակ և անտարբեր, թոյլ տուեց ամուսնուն համբուրել իր ճակատը։ Ժաննին չէր թաղցը-

նում իր հակակրութիւնը: Ֆերբէզիներն անգամ նեղուած էին զգում իրանց. միայն տիկին Մէրանը մի քիչ ուրախ դէմք ցոյց տուեց: Ժակի տեղ մի ուրիշը կը շփոթուէր, բայց նա ոչ մի կարեւորութիւն չէր տալիս ընտանեկան տեսարաններին և չէր կասկածում ամենեւին թէ ինչ փոփոխութիւններ է առաջացրել այդ խաղաղ կեանքի մէջ:

—Դուք վաղաւց եք վերադարձել Տալուար, հարցրեց նա իտալացի կոմսին, որի կնոջ դեռ ութ օր առաջ էր տեսել Պարիզում:

Սակայն խօսակցութիւնը շատ սառն էր անցնում: Լիւսինը տեսաւ: Աննիի ողոքիչ նայուածքը նա սկսեց խօսել շոտար Արդեօք այդ էր հայցում Աննին:

—Ես ապահով եմ որ գուք չը գիտէք ինչ է կատարւում Մէնթօնում: Մի գեղջուկ յեղափոխում է մեր գիւղը. նա մի տեսակ թափառական հրէայ է որ կրում է իր պարկի մէջ համաշխարհային երջանկութեան զաղտնիքը: Փափագ չունիք լսելու նրան: Ասում են որ նա մեր պատգամաւորից աւելի լաւ է խօսում: Ես գնում եմ այս երեկոյ այն շտեմարանը, ուր նա կատարում է իր գասախօսութիւնները:

—Ոհ, հայր, գնանք ամենքս այնտեղ. հարցրեց Փաննին պ. Մէրանին, և նրա պայծառ աշքերը յառեցին յամառութեամբ լիւսինի վրայ:

—Եղանակը շտու գեղեցիկ է, աւելացրեց Աննին: Գիշերը տաք կը լինի. ես կարող եմ գալ ձեզ հետ:

Պ. Ֆերբէզին, միշտ ճոռմարտոն, իր հաւանութիւնը տուեց, առելով.

—Մարտուկներից բաղկացած ձեր ժողովուրդը խորտակում է իր շղթաները միայն խօսքերով: Սակայն ես կը գամ լսելու այդ տրեխաւոր գիւղացու շաղիտխիւնիքը:

—Ո՞ր ժամին պէս է ուղարկել կառքը քո ետևից, հարցրեց կոմսուհին:

Եւ լիւսինը ասաց Ժակին.

—Իսկ զու զալիս ես մեզ հետ:

—Ոհ, ոչ, ժողովուրդը շահեկան է ինձ համար միայն, երբ նա քուէարկում է:

—Ուրեմն, եղբակացրեց տիկին Մէրանը, ընդդեմով ինչ որ չէր կամննում անել, տիկին Ֆերբէզին չէ գնում այնտեղ, պ. Ալվարը նոյնպէս չէ գնում: Երբ է արարողութիւնը:

—Ժամը ութին, կարծեմ, պատասխանեց Լ. Հալանդը:

—Եսատ լաւ, ասաց տանտիրուհին, ուրեմն այստեղ կը ճաշէք. ժամը ութին կը գնաք ձեր թատրոնը: Ժակը կը գնայ

իր երկանիւով, իսկ կոմսուհին կը մեկնի կառքով Տալուար, եթէ սակայն չը ցանկանայ այստեղ սպասել կոմսի վերադարձին:

— Ծնորհակալ եմ, աիկին, ասաց խոալուհին, ես շատ յոգնած եմ այս երեկոյ, ես աւելի լաւ եմ համարում տուն մեկնել և թողնել ձեզ պ. Ֆերբէզիին Պ. Ալվար, կամենում էք տեսնել լծուած ք կառքը, Պէտք է ձին մի քիչ հանգստանայ Տալուարում և ապա գնայ բերելու ամուսնուս:

Եւ թեքուելով դէպի ամուսինը.

— Ո՞ր ժամին կը վերադառնաք,

— Չը գիտեմ. երեւի, ժամը տասնեմէկին:

Երբ Ալվարը ճանապարհ էր գցում կոմսուհուն, սա արագ շըշնջեց նրան.

— Այս երեկոյ, ժամը ութ և կէսին, ինձ մօտ: Ոչ մի վըտանգ չը կայ. ծառաները հեռացրուած կը լինեն, իսկ զայեակս անձնուէր է ինձ:

Ժակը հաւանութեան նշան արեց....

Փոխ-տանուտէր ժօլին առաջնորդեց փոքր խումբը՝ Վօժընէին լսելու Յուլիսի պարզընկայ գիշեր էր. լուսինը դեռ չէր երեւացել սարի վրայից. բայց սպիտակ լոյսեր ընկել էին արդէն ճանապարհների և դաշտերի վրայ և աւետում էին նրա երեւումը: Աննին և ժամնին զլիսանոցներ և շալեր էին վերցրել. նրանց դէմքից միայն աչքերն էին տեսնուում: Լիւսիէնը նրանց հետ գնալով, զուարձացնում էր նրանց զանազան խօսակցութիւնով: Մի քիչ ետեւից գալիս էր կոմս Ֆերբէզին, փաթաթուած իր վերաբերի մէջ, չը նայելով տաք քամուն, և խօսում էր պ. Մէրանիցնետ Կազիրի Սանտօյի մասին, այն թշուառականի, որ սպանել էր նախսպահ Կարնոյին և որին պէտք է դատէին Լիօնում: Պ. Մէրանը չէր խօսում, վրդովուած տիկին Ֆերբէզիի և Ալվարի յանդկնութիւնից, որոնք, ինչպէս երեւում է, ժամադիր էին ևղել նրանմօտ նա չէր յայտնել իր կնոջ Աննիի տիրութեան պատճառը, ճանաչնելով նրա անտարբերութիւնը դէպի դժբախտութիւնը, և մտածում էր նախաղուշացընել նրան այդպիսի դիպուածի դիպուածի առաջն առնելու համար: Նրանք մտան շտեմարնը և մեկնուեցին անուշանոտ խոտի վրայ: Վաս կացրուած տախտակների միջով նրանք նկատում էին երկնքի կտորներ, ուր ճօճում էին աստղերը:

— Ահա նա, ասաց փոխ-տանուտէրը, նստած Հալանդի մօտ:

Վօժընէին երեւաց իր հետեւորդ խմբով: Նա բռնած ունէր մի լապտեր, որ լուսաւորում էր երեսը ընդմիջումներով, իր արած շարժողութիւնների համաձայն: Նա մի փոքր վտիտ և

ջղային մարդ էր, ճգնաւորական դէմքով, որ քամուց և արեգակից բրօնդի զոյն էր ստացել: Մի սեւ թաղիքէ ջարդուած զլիարկ ունէր զլիմին, որ ստուեր էր գցում ճակատի վրայ և ծուկծուած հնացած շորեր ունէր հաղին: Նա ճառախօսում էր մտնելիս: Նրա խօսքը, որ հնչում էր պարզ, մի քիչ միակներպ, ոչ շատ արագ, ոչ շատ ծանր, շատ լաւ հասկացւում էր: Նրա ետևից գալիս էին մի ամբողջ խումբ կանանց և երեխաների, — վերջապէս տղամարդիկ, աւելի քիչ թուով: Մի քանիսն նոյնպէս լապտերներ ունէին, նրանց լոյսը տեղ տեղ ընկնում էր յարդի և խոտի դէղերի վրայ և արտադրում էր ֆանտաստիկական շողողումներ ձեղունի գերանների վրայ:

Վօժընիէն հանեց զլիարկը: Գետնին զրած լապտերների աղօտ լոյսը ընկաւ նրա դէմքի վրայ: Նա ճաղաւ էր: Նրա մեծ պսպղուն ճակատը, նրա մի քիչ թաց աչքերը, որ նայում էին անորոշ և մեղմ, որպէս թէ միշտ մի բարի երազի էին հետեւում: Նրա ալեխառն մօրուքը, երկար և վատ խուզած, նմանեցնում էին նրան ճանրահող առաքեալի և տալիս էին նրա դէմքին մի շնական մարդարէի լրջախոն գեղեցկութիւնը:

— Մեկնուենք հանգարտ այտեղ, սկսեց նա, և ես կը պատմեմ ձեզ իմ այցելութիւնս Վիկտօր Հիւզօին:

— Իր այցելութիւնը Վիկտօր Հիւզօին! մրմնջաց Լիւսիէնը:

— Նա զառանցող է, ասաց պ. Ֆերրէզին:

— Ինչո՞ւ, առարկեց պ. Մէրանը. նա կարող է զնացած լինել մեծ մարդի մօտ յարդարելու մուսաների չնորհքով մաշուած մի որեւէ բազմոց:

Գետնի վրայ յարդ փռեցին և նստոտեցին: Բազմաթիւ ձայներ միաժամանակ խօսում էին:

— Մի ասա տեսնեմ, ինչ մարդ է այդ Վիկտօր Հիւզօն:

— Քեզ ասում եմ որ ես տեսել եմ նրա պատկերը լրագրում, երբ նա մեռաւ: Նոյն իսկ նա կայսերավայել՝ թողումն ունեցաւ. այդ շատ վաղուց էր:

— Նա մի սենատոր է:

Ասպա բոլոր ձայները լոեցին, երբ Վօժընիէն սկսեց.

— Այո, մի տղամարդ էր նա, Վիկտօր Հիւզօն: Նրա պէս մարդիկ հաղուագիւտ են այսօր: Նա սիրում էր փոքրիկներին, աղատութիւնը, ֆրանսիան: Նա մի սիրտ ունէր բոլոր զըժբախտութիւնների համար. նա խեղճ մարդկանց պաշտպանն էր: Ես, որ պտտել եմ աշխարհիս շատ կողմերը, ես իմացել եմ շատ բաներ, որ դուք չը գիտէք, ես տեսել եմ հզօր մարդկանց. պ. զը-Լէսաէպախն, որ բնակում էր Եղիպտոսում ինձ հետ, որովհետեւ ես աշխատել եմ նրա ջրանցքի վրայ. Փամբէտ-

տային, որ հաստ էր և լաւ խօսում էր,—պատերազմի ժամանակ նաև փորձեց ծեծել պրուսացիներին, որոնք ոչինչ չէին ուղղում իմանալ.—Գարիբալդիին, որ եկաւ մեղ օգնելու. Բօջ-ֆօրին, և նախագահ Կարնօյին, որին նորերս սպանեցին կրօնում: Բայց բոլոր այդ պարոնները Վիկտօր Հիւզօյի մատը չարժին, որավիճակու Վիկտօր Հիւզօն ամենքի հայրն էր: Նուզրի է անցրել այնպիսի պատմութիւններ, որ կը սպատմեմ ձեզ և որոնք ձեր սրտերը կրծքի մէջ թոթոցնել կը տան: Դուք շատ բան չը գիտեք. գիւղում ոչինչ չեն կարդում և այդ հասկանալի է: Պէտք է հողը հերկել և, բացի դրանից, կարդալու ճաշակ չը կայ: Թեուառները, տհա մի գիրք, ուր տեսնում է որ ազգանիրը, որոնց վաս են համարում կամ բանտն են ձգում, աւելի են կշռում Աստծու կշեռքում քան իւոչոր կալուածատէրերը, որոնք դաշտեր ունին ու եկամուտներ և որոնց մարդիկ ողջունում են զլամարկներն վեր առնելով: Սյդ ձեզ զարմացնում է, չէ: Խոկ Ռիւ-դը-Բլազը: Դա մի ծառայի պատմութիւն է: Նա այնպիսի խօսքեր է տառւմ որ մինիստրները քիչ է մնում խեղգումեն, և Սպանիայի թագուհին—որովհեան անցքը պասահում է Սպանիայում—համբուրում է նրան չնորհուկալութիւն յայտնելով իր երկիրը սիրելուն համար: Ես տեսեմ ամ այդ խաղալիս մի երեկոյ, երբ մի մերժնադէտ տուել էր ինձ իր աւեղը, մի բազկաթոռ, որ նրան տուել էր իր ծանօթուհին, որ սպասուի էր մի տիկնսչ, որն թատրօնի կառավարչի բարեկամուհին էր:

Բայց վերջ չի լինի եթէ ես ձեզ պատմեմ բոլոր գէպքերը. աւելի լաւ է խօսեմ ձեզ Վիկտօր Հիւզօյին արած իմ այցելութեան մասին: Ամենից առաջ նա ցանկացաւ Հանրապետութիւն, շատ ժամանակ, զրեթէ յիսուն տարի սրանից առաջ. և երբ տեսաւ, որ Ֆրանսիայի շինքին են ուղղում փաթաթել մի կայսր, եղբայրութեան և ազատութեան անդ, նա բարկութիւնից կասկարմիր կտրեց և զնաց մի կղզի, ուր անգլիացիները ունեն ծովում, ծիշտ այնպէս, ինչպէս նազօլէօնը, —իսկականը, նա, որ նուածեց ամբողջ երկիրը: Բայց երբ պրուսացիները մտան Ֆըրանսիա, նա վերտարձաւ Պարիզ մեղ պաշտպանելու և ժողովուրդը ուղեց որ նա իր առաջին երեսիսիանն լինի: Ես նրան տեսայ պատերազմից մի քանի տարի յետոյ. ես, որ ձեզ հետ իւօնում եմ: Ձեզ կը բացատրեմ թէ ինչպէս եղաւ այդ,

Ազգային մի ժողով էին նշանակել, որ առաջ Բօրդո քաջագումն էր, ապա հաստատուել էր Վէրսայլում, Պարիզի մօտ Այստեղ գտնուող հասակաւոր մարդիկ պէտք է յիշեն: Սյդ ժամանակուայ երեսիսիանները բնաւ չէին աշխատում բանուոր-

ների համար։ Այժմիհանները ձեւացնում են որ իբր աշխատում են, բայց ծիծաղում են մեզ վրայ։ Բանուարը այնպէս է, որ պէտք է զբաղուեն նրանով, այլապէս նա դժգոհ է։ Դուք զիւղացիներդ աւելի բախտաւոր էք բանուարներից։ Ես այդ կարող եմ ասել. ես վարել եմ հողը իմ հաչուին, շատ ժամանակ առաջ, բայց ես աշխատել եմ և ուրիշների համար։ Աւելի լաւ է մարդ իր համար աշխատէ քանի ուրիշների, աւելի լաւ է մարդ իր յարդի վրայ պառկէ քնելու քանի օտարի տանիքի տակ։ Ես այդ չեմ ասում իբրեւ գանգասա. ինձ համար այստեղ շատ լաւ է սննդում։ Ապագայում, երբ բոլոր մարդիկ եղբայրներ կը լինեն և ամեն բան կը պատկանի ամենքին, ամեն մարդ բախտաւոր կը լինի այնպէս՝ որ կարծես կալուածատէր է։ Բայց առ այժմ դեռ այդ աստիճանին չենք հասել։

Եւ համնելով կօլեկտիվիստ վարդապետութեան այդ կէտին նա կանգ առաւ։ Լիւսիէնը մատծում էր։

—Պէտք է զրուցեմ այս մարդի հետ, այս զիւղացիների հետ և բացատրեմ նրանց ընկերվարական կեանքը։ Եւ պ. Մէրանը, թեքունլով զէպ նրան, տսաց կամացուկ։

—Նա արդէն մոռացաւ Վիկտօր Հիւգօին։
Վօժքնիէն շարունակեց։

—Մարդիկ պարտաւոր են ամենքը միմեանց սիրել։ Բայց բաւական է...։ Արդ, բանուարները իրանք մտածում էին իրանց համար, քանի որ երեսփոխանները տեղներից չէին շարժում։ Կաղմել էին մի մեծ ժողով, որ կոչում էին պրօլետարիատի կօնզրէս։ Դրան պէտք է ներկայացնէին իրենց դանգատները բոլոր նրանք, որոնք օրուայ հացը վաստակելու կարօտ են։ Որոշեցին, որ պէտք է գնալ խօսել ազգային ժողովի հետ և երեք անդամից բազկացած մի պատգամաւորութիւն ուղարկեցին։ —դաշնամուրի մի գործակատար, մի կօշկակար և ձեր խոնարհ ծառան։ Այս, ես ունեցել եմ սքանչելի պատիւը ընտրուած լինելու Պարիզի ժողովրդից, և ես պէտք է պաշտպանէի մեր դատը։ Ես աշխատում էի այդ ժամանակ մեծ զործարաններում, աւելի մեծ քան ձեր զիւղը և մանաւանդ աւելի բազմամարդ։ Կառավարութեան մօտ զնալուց առաջ, մենք երեքս որոշեցինք մեզ հետ վեր առնել մի մեծ երեսփոխան, որ պաշտպանէ մեզ, որովհետեւ մինք մի քիչ ամաչկոտ էինք և քաշուող, հասկանում էք։

—Հիւգօ հայրիկին վեր առնենք, տուածարկեցի ես։

—Եատ լաւ, ասացին ընկերներս։

Եւ մենք դնացինք Վիկտօր Հիւգօի մօտ։

Յուլիս, 1902.

Մենք գիտէինք, որ նա մեզ սիրում է. ահա մենք հասանք նրա տունը. զուոք բացուեց և մեզ թողեցին կանդնած դուն առաջ. Պարզ է, մեր ձեւերը կրթուած և հարուստ մարդկանց ձեւեր չեին, և մեր երեսների վրայ չեր կարդացւում թէ մենք ֆրանսիայի բանուորների ներկայացուցիչներն ենք:

Մի ջահիլ և խիստ գեղեցիկ կին եկաւ մեզ մօտ.

—Ի՞նչ էք կամենում, հարցրեց մեզ:

—Եկել ենք տեսնելու վարպետին, պատասխանեցի ևս քաղաքավարութեամբ:

—Վարպետը չէ կարող ընդունել ձեզ այսօր:

Գրանումս մի կտոր թուղթ ունէի. ևս զրեցի նրա վրայ այս խօսքերը Ֆրանսիայի պրօլետարները և թուղթը տալով տիկնոջ, ասացի.

—Հաճեցէք, բարի տիկին, յանձնել նրան այս թուղթը.

Մի գայրկեանից յետոյ մի ծառայ եկաւ և տարաւ մեզ մի մեծ սենեակ, բազմաթիւ լուսամուտներով, որոնց միջով արևու առատութեամբ ներս էր մտնում: Մեզ այդտեղ նստեցրին. մենք սպասեցինք երկար:

—Եը գայ, ասաց մինք:

—Զի գայ, ասաց երկրորդը:

—Վերջապէս զուոք բացուեց և վարպետը մօտեցաւ մեզ ձեռները պարզած. Հեց հիմա էլ աչքիս առաջին է: Նա մեծ չեր, բայց գարձեալ մեծ էր երեւում իր գեղեցիկ ձերմակ մասնիշով և օրհնութիւն տուող քահանայի կերպարանքով: Եւ տեսնելով իմ առաջ փոքրերի հայրիկին, մեծ հայրենասէրին, թրշուառների փրկութեան համար աշխատղին, ևս ամբողջ մարմնովս դողացի և թուքս ցամաքեց բերանումս: Ես կամնցայ մի բան ասել, բայց խօսքերը դուրս չեին դալիս.

—Վարպետ, ասացի ևս նրան, ևս...ևս չեմ կարող... խօսնել... յուզմունքը...

Նա խրախուսեց ինձ բարութեամբ:

—Ես ձեզ հասկանում եմ, բարեկամս, հասկանում եմ: Մի յուզուէք, միթէ ևս մարդ չեմ: Սէրը միացնում է ոյժը և տկարութիւնը, Ֆրանսիայի պրօլետարներ, ես ձեզ հետ եմ:

Տեսնելով մեծ մարդին այդպէս պարզ և բարի, լեզուս բացուեց: Եւ ես ասացի նրան որ մոռանում են մեզ՝ բանուորներիս: Եւ երբ կամեցայ սկզբից բացատրել մեր պահանջների էութիւնը նա բրնեց թեւիցս և ասաց.

—Եատ լաւ, քաջ տղա: Դուք երեքդ էլ մի կտոր հաց կ'ուտէք ինձ հետ: Սեղանի վրայ մենք աւելի լաւ կը խօսենք պրօլետարիատի մասին: Իմ սիրոս նուիրուած է բոլոր

տանջուղիներին. ևս նղբայրական ժպիտ եմ ուզարկում թշուառներին. իմ գութս անհուն է ինչպէս երկիրը և ինչպէս երկինքը....

Նա դեռ շատ մեծ խօսքեր էր կամենում ասել մեզ. մենք նրան լսում էինք, ինչպէս մարդ կարող է լսել իր մնանող հօրը. բայց այդ միջոցին դուռը ճանկուտեցին և լսուեց երեխաների ծիծաղը: Ես տեսայ որ վարպետի դէմքը լուսաւորուեց ինչպէս դաշտերը՝ արշալոյսը ծագելիս: Նա ժամանաց և ասաց մեզ.

—Դուք Ֆրանսիան եք. ևս այժմ ձեզ ցոյց կը առաջ Ֆրանսիայի ապագան:

Նա բացեց գուռը և երկու փոքրիկներ, մի մանչիկ և մի աղջիկ, ծաղկեալ գարնան նման, իրար ձեռքից բռնած, ներս վաղեցին: Նա աղջկան մատով ցոյց տուեց ինձ և նրան ասաց.

—Ժաննի, տեսնում ես այս մարդուն որ այնտեղ նստած է: Նա է Ֆրանսիան. գնա համբուրի նրան:

Եւ փոքրիկը վազեց գէսլ ինձ որ անշարժ նստել էլ արձանի նման: Նա մազլցեց ծնկներիս վրայ, ձեռները ձգեց վզովս, լաւ նայեց ինձ և կամացուկ փշեց երեսիս:

—Ուրեմն զու ես Ֆրանսիան, ճիշտ է: Դէ լաւ, բայց նա սիրուն չէ, ինչու մեծ-հայրիկը ուզում է որ քեզ համբուրեմ:

Այնուամենայնիւ նա համբուրեց ինձ: Եւ Վիկտօր Հիւզօն իւձ ասաց ձեռացի մի մեծ շարժումով:

—Նա մի արշալոյս է, իսկ ես արեւամուտ: Տեսնում էք ինչ գեղեցիկ խօսքեր: Ահա ինչպէս Ֆրանսիայի փառքը ընդունեց մեզ, հասարակ բանուորներիս: Դրանից էլ աւելի եղբայրսիրութիւն կարող է լինել: Ճիշտն ասած, մենք մեր գործերի մասին այլ եւս չը խօսեցինք, բայց մենք գուրս եկանք այնանցից բոլորովին հպարտ և սրտերնիս բոլորովին ջերմ: Այժմ ես ձեզ կը պատմեմ Թուուառները....

Այդ բոսէին պ. Ֆերրէզին, որ լսում էր ագահաբար, յենուած մի արմնիկի վրայ, յետ գլորուեց խոր հառաջներ արձակելով, որոնք չուտով խեղդուեցին: Լիւսիէնը՝ ապշած, թեքուեց նրա վրայ: Լուսնի լոյսը մտնում էր տախտակների մեծ ձեղքերով. կոմսի դէմքը երեւաց գունատ և անշարժ, ինչպէս մի մեռել:

—Ի՞նչ ունէք, հարցրեց երիտասարդը բռնելով նրա պաղձեռքը:

Բայց պ. Ֆերրէզին չէր շարժւում: Աննին և Ժաննին վախեցան: Պ. Մէրանը օգնեց Լիւսիէնին իջեցնելու սառած մար-

մինը. սիրտը հազիւ էր խփում: Վօժընիէն ընդհատեց իր պատմութիւնը. լավտերները մօտեցրին:

— Ճնածամ է, ասաց պ. Մէրանը, որ ճանաչում էր Իրծքի անգինի նշանները, որով Աննին եւս հարուածուած էր: Նա գիտէր որ կոմն եւս իր աղջկայ հիւանդութիւնն անի և տեսարանը սաստկացնում էր նրա հայրական կոկիծը ու երկիւղները:

Խսկոյն մի պատզարակ գրստեցին և հիւանդին տեղափոխեցին Կաղամախների վիլան: Լուսինը, արդէն բարձրացած երկնակամարի վրայ, շեշտում էր տիսրալի հետեւակախումբը: Տիկին Մէրանը, առանց որեւէ անհանգստութիւն զգալու, պատրաստել տուեց մի սենեակ և մարդ ուզարկեց դօքտօր Ռավոյի ետեւից:

— Ուշագնացութիւնն է, մի թեթեւ ուշագնացութիւնն, ասում էր նա ինքն իրան, անտղելով իր գեղարանական արկղիկը, որ նա նկատում էր իբրեւ մի թալիսման մահուան դէմ:

Խսկ Աննին, զգացուած, մտածելով նրա վազահաս վախճանի մասին, մոռանալով իր սիրոյ անցեալը, ինզրեց Լիւսիէն Հալանդին գնալ աղդարարել տիկին Ֆերդէղիին իր ամուսնու յանկարծական հիւանդութիւնը:

IV

Ֆերրէղիների վիլան, Տալուարում, շինուած էր մի բլրակի զարիվայրին: Կոմսուհու սենեակը նոյում էր պարտիղի վրայ տափաստանից և նրա առաջ տարածում էր լիճը: Նա կարծես շինուած էր զուարծութեան համար՝ ծաղիկների անուշաբոյրութեան և այն սքանչելի տեսքի պատճառով: որ ցոյց էր տալիս ապակեզարդ պատշպամբը:

Սրդէն, իր ամուսնու կարծատես բացակայութիւնների բնաթացքում, տիկին Ֆերրէղին ընդունել էր այդ տեղ իր տարիածուին, չը նայելով այն վառնզին, որից նա սոսկում էր և որից ժակը քիչ էր վախենում, վստահելով իր աստղին և ամուսնութէեւ անբացատրելի, բայց կասկածելի ցաւագարութեան:

Այդ երեկոյեան նա պահանջել էր ժակից որ լուսամուտը ամբողջովին բաց մնայ և միայն լուսնի փայլը լուսաւորէ նըրանց: Մի խորհրդաւոր շող սահում էր թեթեւակի նրա դէմքի վրայ և տալիս էր նրա ուսերին մարդարտի պարզ և յղկուած թափանցկութիւն: Գիշերային քամին, ջերմաշունչ և հստակէտ, դգւում էր նրան շրթունքների մեղմութեամբ:

Ալվարը արդէն կապում էր փողկապը լուսաւոր գունատ

երկնքին նման հայելու առաջ, երբ պառաւ դայեակը խփեց դռան և մրմնջաց.

—Տիկին, տիկին, պարո՞ն է...

—Թող սպասի, ասաց ժակը առանց կորցնելու. անդորրութիւնը:

Վասնզը կրկնապատկում էր նրա յանդգնութիւնը: Նա մի ակնարկով տեսաւ որ սենեակը միայն մի եկք ունէր և վեր առնելով իր վերարկուն, նա ուզդուեց դէպի լուսամուտը՝ այդտեղից պորտէզը ցատկելու, երբ չնչասպառ դայեակը կարողացաւ տւարտել խօսքը.

— ...Պարո՞ն Հալանդն է եկել մի վաս լուրի համար:

—Լիւսիէնն է: Ես ինքս կը բանամ նրա գուռը, ասաց զարձեալ ժակը:

Եւ առանց հոգս սնելու իր սիրուհու մասին, որը, սուածին կոչը լսելով, համր վախից, զիք նստել էր անկողնում առանց նոյն խոկ հազնուելու, իր զրութեան ցինիզմով, նա ներս մտցրեց երիտասարդին սիրահարական սենեակը:

Դայեակը ասել էր Լիւսիէնը թէ տիկինը պառկած է, բայց ինքն իմաց կը տայ նրան և անշուշտ տիկինը զեր կը կենայ և կը գայ սրահը նրան տեսնելու: Երբ Լիւսիէնը մտնում էր սրահը, նա զարմացաւ լսելով ժակի ձայնը, որ կանչում էր իրան:

—Ի՞նչ է պատահել, հարցրեց այս վերջինը.

Եւ աւելի կումաց ձայնով:

—Իտալացին մեռել է:

Դոան չէմքից, որ Լիւսիէնը անցնել չէր վստահանում, նա տեսնում էր կիսաստուերի մէջ տիկին Ֆերբէզին բոլորովին սառած, վարսերը թափթափած և շապիկը ընկած ոտները. բաց թողնելով կլորակ ուսը, որ փայլում էր օպալի շողով:

—Մտիր, կրկնեց հրամայողաբար ժակը:

—Ներեցք, տիկին, ներումն ինդրեց Լիւսիէնը: Եւ առանց քաշուելու, զրեթէ արհամարհն պով, ընտելանալով այդտարօրինակ արկածի հեզնութեան, նա յարեց.

—Ես եկայ հանգստացնելու ձեղ պ. Ֆերբէզիի բացաւ կայութեան մասին: Նա ուշագնացութիւն ունեցաւ. արդի՛ն սթափում է. նա կը հանգստանայ կաղամախների վիլլայում և վաղը նրան կը բերեն ձեղ մօտ:

Պատրաստ զրամացի, նրա սև աչքերը փայլատակում էին տրագիկական սարստի և նա առանց ամօթխածութեան գոչեց, կարծես իր անառակութիւնը աւելի մերկացնելու համար.

—Նա մեռնում էր, իսկ մենք այստեղ սիրով էինք զբաղուած:

Պէտք եղաւ որ Լիւսիէնը երդուէ նրա սուրբ Ֆրանսուայի արձանիկի վրայ, որ բուխարու ներողամիտ զարդարանքն էր կազմում, թէ իր ամուսինը կենդանի է:

—Ես կամենում եմ գնալ տեսնել նրան, ասաց նա:

Եւ, չը նայելով ժակի տրտունջներին, որ ամրող այդ տեսարանը անօգուտ և ծիծաղելի էր համարում, նա դուրս առեց երկու երիտասարդներին և հագնուեց:

Սրահում, ժակը, առանց խղճահարութեան, բացատրում էր Լիւսիէնին ինչ որ ինքն անուանում էր մի ֆանտազիա, որ տարօրինակ կերպով երկար տեսում է.

—Այո, կոմսուհին գեռ պոկ չէ գալիս ինձնից: Դու ինքդ աշքովդ տեսար որքան գեղեցիկ է նա: Բայց գրեթէ մութ էր. թէ լոյսով տեսնէիր!...

Լիւսիէնը մի այսպիսի շարժումն արեց, որ նշանակում էր. «Ինձ ինչ»: Նա տանջւում էր Աննիի տեղ այդ ամօթալի դաւաճանութեան համար: Նրա զգայաշարժ կարեկցութիւնը դէպի փխրուն լքեալը աւելի աճում էր: Սակայն նա չը յիշեցը բեց ժակին իր երգումը, իսկ սա չը կամենալով մնդադրուել թուլութեան մէջ, բութ անտարբերութիւն էր ցոյց տալիս, թէ հշարունակ մատնացոյց էր լինում իտալունու հմայքի վրայ:

Այն միջոցին, երբ տիկին Ֆերրէզին մտաւ սրահը կոճկելով իր զգեստի վրայ մի վերարկու, որի մոռայլ գոյնը դիտմամբ յարմարեցրուած էր տիրալի տեսարանի, մի կառք կանգ առաւ վիլայի դռան առաջ: Սրահը փողոցի վրայ էր ընկնում: Լիւսիէնը բացեց փեղկերը և յանկարծ նա յետ հրեց իր ընկերին, որ կամենում էր զլուխը դուրս բերել լուսամտից:

—Թագնուիր. Երան են բերում:

—Մեռել է, չչնջաց ժակը:

Եւ աւելացրեց:

—Ոհ, զիտես, նա ամեն բանի տեղեակ է:

Լիւսիէնը տեսաւ պ. Ֆերրէզին լամդոից հանելը: Մեռնողը աչքերը մեծ մեծ բացել էր. լուսինը լուսաւորում էր նրա գունատ դէմքը և նրա վտիտ մատները, որ բռնել էին սեւ շալից:

—Շուտ դուրս եկ պարտիզով, ասաց երիտասարդը ժակին, որ չէր շտապում:

Վերջինս վերջապէս դուրս գնաց:

Արդէն զանգը խփում էին և տիկին Ֆերրէզին, տեսնելով իր սիրականի անհետանալը, ինքն անձամբ բացեց դուռը

տիսուր խմբի առաջ; Երկու սպասաւոր ըերում էին կոմսին և պ. Մէրանը հետեւում էր նրանց: Նա ընդունեց նրանց ողբաձայն աղաղակներով և մելօդրամական շարժումներով: Մի պահնչելի արագութեամբ նա կարողանում էր սիրուհու ոգեւորութիւնից անցնել ամուսնու յուսահատութեան: Նրա յուզմունքը անկեղծ էր այդ ժամին, նա յանդիմանում էր իրան իր մեղքի համար այնպիսի սաստկութեամբ, որի անցողական և արուեստական բնաւորութիւնն ինքն անգամ չէր կասկածում:

Մի գուշադիպութեամբ, որ պատահմունքի հեգնութիւնն կարելի է համարել, հիւանդին դրին այն անկողնու վրայ, ուր քիչ առաջ պառկած էր կոմսուհին և շտապով ծածկել էր: Լիւ - սիէնը նկատեց այդ և մրմնջաց.

—Մահը ընդունում է սիրոյ սաւանները:

Պ. Մէրանը բացատրում էր տիկին Ֆերրէզիին իր ամուսնու յանկարծական ճգնաժամը և հիւանդութեան ծանրութիւնը: Հիւանդը, յենուած բարձերին, թափառեցնում էր իր շուրջը իր պղտոր նայուածքը լի մոայլ խորհրդով, իր ջղոտ ձեռներով նա յետ էր մղում և յետ բերում մեքենայարար վերմակը, որ ձգել էին մարմնի վրայ: Յանկարծ նրա աչքերը, ուր ծփում էր ինչ որ սոսկալի մտածմունք, կանգ առան իր կնոջ վրայ: Մի անակնկալ շարժումով, նա դիք նստեց անկողնում և, ցոյց տալով դուռը մատով, ասաց իր խուլ ձայնով:

—Կորիր այստեղից:

Լէօնորան ծածկեց զլուխը ձեռներով և, կրաւորապէս դուրս եկաւ: հեծկալատալով: Պ. Մէրանը կարեկցաբար նրա մօտ գնաց: Երբ Լիւսիէնը, որ հետեւել էր նրան նայուածքով, վերաբարձաւ մեռնողի մօտ, նա գտաւ այդ դիակացած դէմքի վրայ մի տեսակ ժապիտ և նա լսեց այս օտարութի խօսքերը, որ մեռնողը արտասանեց պարզութեամբ և քաղաքավարի:

—Ես ցաւով եմ տեսնում, սիրելի պարոն, որ դուք հետաքրքրում էք մի ընազդային և կոպիտ ամբոխի ինքնակամ շարժումներով: Ճանաչեցք արհամարհանքի առաքինութիւնը: Գործ դրէք առանց խղճահարուելու այն ազգեցութիւնը, որ տալիս է հարստութիւնը կամ իմացականութիւնը այդ վախկոտ բարբարոսների վրայ որ կազմում են թիւ և ոչ ոյժ: Մենք քաղաքակրթութիւն չունենք, այլ միայն նրա անունը, մի տեսակ ծաղրալի զգեստներ: Հաստատուելով իրանց բարբարոսութեան մէջ, որ շրջապատում են միայն յարմարութիւններով, մարդիկ կաւում են միշտ մի կտոր ոսկու կամ մի կնոջ համար: Ես աղերսում եմ ձեզ, պարոն Հալանդ, թողէք նրանց զբաղուեն իրանց տիսուր դուարծութիւններով:

Նա դադարեց խօսելու։ Նրա խոսպոտ ձայնը վերջին վանկերին խեղդուեց։ Նա ահագին ջանք էր զործ դրել հանգիստ չնորհքով այդ տարրերութիւնը արտասանելու համար։

—Հանդստացէք, ասաց Լիւսիէնը, մի խօսէք։ Զէք տեսնում որ խօսելը ձեղ յոզնեցնում է։ Չեր բժիշկը այժմ էր գայ։

Կրիզիսը վերսկսեց աւելի ուժգնութեամբ։ Մեռնողի ճակատի վրայ քրտինքի կաթիլներ երեւացին։ Նա չնչասպառ էր լինում այն աներեւոյթ երկաթէ ձեռքի տակ, որ ճմլում էր նրա կուրծքը և կարծես կրծքի խոռոչը ուզում էր տափակեցնի ողնաշարի հետ։

Պ. Մէրանը երեւաց չէմքի վրայ և, տեսնելով հիւանդութեան սաստկանալը, խսկան դուրս եկաւ, որպէս զի շատպեցնի բժշկի զալը։ Դուան առաջ, տիկին Ֆերրէզին, յենուած պատին, լալիս էր. իմանալով վատ լուրը, նա վազեց գէպի սանդուխները, զոպալով։

—Խսոստովանութիւն, մի քահանայ, շուտ, մի քահանայ։ Սենեեկում, հիւանդը ուժասպառ բաց էր թողել զլուխը բարձի վրայ։ Նա զգում էր որ կեանքը փախչում է և մոռանում էր զարդարել իր վերջին վայրկեանները փիլիսոփայական անգորրութեամբ։ Մահուան անձկութիւնը բռնել էր արդէն նրա սարսափով լի աչքերը, ուր ցոլանում էր վերջապէս նրա մութ, թոյլ և բիրտ հոգին։

Պ. Մէրանը մասւ բժշկի հետ։ Մի քանի վայրկեան յետոյ տ. Ֆերրէզին ներս սողաց բերելով իր ետեւից երկու քահանայ, որ կանչել էր տուել զգուշութեան համար։ Քահանաները գալով հակառակ ուղղութիւններից, զարմանքով հանդիպել էին միմեանց դուանը։

Մեռնողի անձկալի նայուածքը միայն բժշկին տեսաւ և յոյս ու աղերս փայլեց նրա մէջ։ Կեանք, կեանք էր հայցում նա, ևթէ այդ կեանքը նոյն իսկ շրջապատուած լինի ցաւերով և դաւաճանութիւններով։

Սակայն ճգնաժամը նուազում էր։ Երբ բժիշկը զննում էր, կոմսը նկատեց երկու հոգեւորականներին, և խաննելով հեգնութիւնը յոյսի հետ, նա ուղղեց նրանց այս քաղաքավարի խօսքերը։

—Պարսններ, չնորհակալ եմ ձեր այս գիշերային այցելութեան համար։ Բայց ես ձեր կլիէնտն չեմ, գուք կարող էք սակայն մնալ այստեղ և միասին վիճարսնութեան ենթարկել աստուածաբանական որ և է մի կէտ։

Աւելի հասակաւորը, Տալուարի երէցը, մի ներողամիտ ժայիտ ունեցաւ, յետ ուղարկեց իր երիտասարդ պաշտօնակդին և

աշխատեց հանդարտացնել տիկին Ֆերբէզի հառաջանքները:

Բժիշկը գեղեր զրեց. նա տեսէլ էր, որ կուրծքը բռնուած է: Նրա ծածկամիտ դէմքը ոչինչ չէր յայտնում թէ ինչ ևղրակացութեան է եկել: Նա կմկմաց մի քանի միամտացնող խօսքեր, որոնց ոչանկեղծութիւնը ակնյայտ էր: Հիւանդը հասկացաւ. նա միշեց որ կարդաց իր մահուան զատավճիռը Մէնթօնի գօքտօր Բալօյի յուզուած դէմքի վրայ, որ մի ընտիր պրակտիկանտ էր, բայց անկարող պահելու իր տալաւորութիւնները: Այժմ, մեռնելու ստուգութեան մէջ, նա աշխատեց կեղրսնացնել մաքերը: Նա նոյն իսկ հառաչեց իր ճակատագրի վրայ. սակայն նա իրան լաւ էր զգում և չէր տանջւում: Անշուշտ, մտածեց նա, տանջանքս մի քիչ յետոյ կը սկսուի: Գոնէ այժմ, իսկոյն չի լինի. այդ էլ մխիթարական է: Նրա արտասուրով թրջուած աշքերը յառեցին հանդարտիկ պ. Մէրանի վրայ, որ մօտեցաւ անկողնուն և բռնեց նրա ձեռքը: Նա ասաց նրան ծանրախոհ:

—Պարոն Մէրան, երբ մարդ այնքան վատահոգի է որ ինքն անձամբ չէ կարող կատարել արդարադատութեան մի գործողութիւն, կարելի է կատարել տալ ուրիշի ձեռքով. այնպէս չէ:

—Ներում եմ, արտասահեց քահանան:

Կոմազ կանգ առաւ մի բույէ և վերսկսեց.

—Անանուն նամակը մի անարժան զէնք է մի պարկեշտ մարդու համար, այնպէս չէ, պ. Մէրան: Իսկ երբ նա ուզուած է մի կնոջ, դա արդէն զարշելի է:

Լիւսիէն և միւս հանդիսականները կարծեցին թէ նա զառանցում է, մինչ պ. Մէրանի գէմքը այլակերպում էր և շնչառակի նայում էր հոգեվարքին:

—Ինչի՞ համար էք հարցնում ինձ այդ:

Իտալացին չը պատասխանեց: Մի փոքր դադարեց, յետոյ նա դիմեց պ. Մէրանին երրորդ անգամ և ասաց նրան գարձեալ.

—Զեր աղջիկը, ամիկին Ալվարը, չէ եկել: Ի՞նչի չէ եկել: ևս կամենում էի տեսնել նրան, ես ցանկանում եմ անպատճառ:

Եւ նա աւելացրեց այս տարօրինակ ինդրուածքը.

—Աղաչեցէք նրան ինձ ներել: Պարոն Մէրան, տուեք ինձ այդ խոստումը:

Ի մեծ զարմանք լիւսիէնի, որ կարծում էր թէ մեռնողը զառանցում է՝ պ. Մէրանը տուեց այդ խոստումը մի տեսակ հանդիսաւոր ձեռվ, որպէս թէ հասկանում էր թէ որքան մեծ զին ունի իր աղջկայ ներումը: Եւ

ալեւոր քահանան, մօտենալով մեռնողին, մրմնջաց նրան խաղաղութեան խօսքեր.

—Աստուած կը ներէ ձեր պարտքերը, եթէ զուք եւս ներէք ձեր պարտապաններին, ձեզ անարգողներին: Թօթափեցէք ձեզանից վատ մտքերը. մոռացէք չարիքը:

Բայց մեռնողը դեռ ուժգին ձայնով ընդհատեց նրան.

—Ես ոչ ոքի չեմ ներում, ևս ոչ մի բան չեմ մոռանում:

Նրա աշքերը, յաւիտեան փակուելուց առաջ, արտացոլում էին դեռ ատելութեան վայրագ փայր: Նրա մշտական զայրոյթը դէպքերի հոսանքի դէմ տեւում էր մինչեւ մահուան բոպէն: Ամրող նրա մարմինը ցնցւում էր երկար սարսուռով, կարծեցին թէ վախճանն է: Բայց մի ջղային ոյժ դեռ կենդանի էր պահում նրան:

—Լէնօր, կանչեց նա կամացուկ:

Իտալուհին, որ լալիս էր սենեակի խորքում, վազեց դէպի մահակիր անկողինը: Վերջապէս, ամուսինը շունչը չի փչառանց իրան ներելու: Նրա յուսահատ սիրտը թեթեւութիւն զգաց այդ բարերար ակնկալութեան մէջ: Սարջալով իր անդորրացած զգացումների համար, հառաչելով հոգու խաղաղութեան համար, նա մրմնջում էր կրօնական աղերսանքներ, որոնց մէջ բացատրում էր դժոխքի մասին ունեցած իր նախապաշարեալ երկիւղը և մահուան համար զգացած իր բնական սարսափը:

Երբ բոլորովին մօտեցաւ, մեռնող ամուսինը բարձրացրեց իր գալուկ և արդէն ծանրացած ձեռները և զրեց նրանց կնոջ գեղեցիկ դէմքի վրայ: Նա շոյեց փափուկ մորթը և կապտացոլ վարսերը. կինը մեկնեց իր մանիշակագոյն բերանը դէպի գիշերային աշքերը, դէպի արիւնաներկ բերանը: Եւ խորին լուսթեան մէջ հանդիսականները լսեցին ցած ձայնով արտասանուած այս խօսքերը, մի տեսակ վշտալի ծանրութեամբ.

—Համբուրում եմ քո ստախօս աշքերը և քո չնացող բերանը, որովհետեւ սիրում եմ քեզ:

Իտալուհին, գուրս պրճնելով այդ սոսկալի գրկախառնութիւնից, մի երկար հասաչանք արձակեց և լնկաւ անկողինուոտքին, ինչպէս մարդկային մի գլուխակ:

Մեռնողը զզուելի ծիծաղ արձակեց. այդ ծիծաղը փոխուեց խորտունքի: Գերագոյն ճգնաժամն հասել էր: Նա չնչապառ էր լինում: Նրա ձեռները բարձրացին դէպի շապկի օձիքը, կարծես փշրելու համար, և ուժատ՝ վայր ընկան: Իզուր լոժիշկը փորձեց զեղ խմացնել նրան: Աչքերը արիւն էին ցայ-

տում, բերանը ծոմոռած՝ կծկում էր և մի քանի խոպոտ գոռումներից յետոյ, նա փշեց վերջին շունչը:

Բժիշկը մօտեցրեց նրա շրթունքներին հայելին, որի երեսը չը պղտորուեց: Նա դրեց ձեռքը սրտի վրայ, որ այլ ևս չէր բարախում: Այլ ևս կեանքի նշոյլ չը կար:

Մերունի քահանան և խտալուհի դայեակը, ծնկաչոք, կարդում էին հոգեհանգստեան ազօթք սենեակի խորքում:

Տիկին Ֆերրէզին վեր էր ցայտել. նա այլ ևս ոչ լալիս էր, ոչ հեծծում: Եւ կիւսիէն զարմանքով տեսաւ նրա՝ կծկուած զիմագծերի վրայ արհամարհանք՝ վշտի փոխարէն: Նա կարծես կամենում էր ասել առանց կեղծելու:

—Նա գիտէր ամեն բան և ինձ չը խփեց. նա չը խփեց սիրականիս: Նա երբէք չը մերկացրեց իր խաւարապատ հոգին: Այս մարդը խարենքայ էր և վատհոգի:

Դէմքի այդ արտայայտութիւնը, որ չէր կարող խուսափել կիւսիէի գիտողութիւնից, սառեցրեց նրա շրթունքների վրայ ցաւակցութեան խօսքերը, որ կամենում էր ուղղել նրան:

—Եւ ասկայն նրանք նման էին միմնանց, մտածեց նա, իրանց բուռն մոքերով և գործելու թուլութեամբ: Դա՝ արմատախիլ եղած ցեղի վախճանն է:

Իր ծառայութիւնները մատուցանելուց յետոյ նա գուրս եկաւ պ. Մէրանի հետ: Նրանք ծծեցին գիշերուայ կենսատու զովութիւնը այս ողքերգական մահի տեսարանից յետոյ: Արդէն շատ ուշ էր, գրեթէ առաւօտ կիւսինը թաքնուել էր սարի ետեւ: Վարդագոյն ոսկեճաճանչներ երեւում էին սարերի կտտարներին: Խոր երկնքում, հեռաւոր աստղերը փայլում էին:

Նրանք չէին խօսում: Խտալացու գաղտնիքը, որ յայտնել էր մեռնելիս, ճնշում էր նրանց: Վերջապէս կիւսիէնը արտայայտեց իրանց երկուափ կարծիքը:

—Երբէք նա ցոյց չէր տուել թէ սիրում է կնոջը և խանդում է:

Պ. Մէրանը նայեց երիտասարդին և, հասկանալով որ նա գիտէր, որոշեց հարցնել նրան:

—Դուք ճանաչում էիք նրա սիրականին:

—Ոչ, պատասխանեց կիւսիէն, կարմրելով որ սուս է խօսում այդ պարկեշտ մարդուն:

Մի բոպէ վարտնմունքից յետոյ, պ. Մէրանը, չը լսելը դը-նելով, շարունակեց:

—Դուք գիտէք որ Ալվարն է նրա սիրականը: Ամուսութիւնից առաջ ևս նա էր:

—Ինչպէս կամենում էք որ ես գիտենամ այդ:

Բայց պ. Մէրանը նրան չէր հաւատում: Նա մտաբերում էր նրա մի քանի վարմունքը և գէմքի արտայայտութիւնները, որոնք մատնում էին ճշմարտութիւննը:

—Ոչ, ասաց նա ուժգին: Դուք գիտէք այդ և ինձ չը յայտնեցիք: Ահա ինչն է կոչւում պատիւ Ռապէս զի չը մատնէք ձեր մի բարեկամին, որին չէք սիրում, որին չէք կարող սիրել, դուք թոյլ տուիք որ կատարուի այս զզունկի ամուսնութիւնը. և սակայն դուք համակրութիւն էք տածում գէպի ինձ և գէպի Աննին...!

Լիւսիէնը չը կարողացաւ տանել այդ յանդիմանութիւնները:

—Ժակը, ասաց նա մեղմ, ինձ պատւոյ խօսք էր տուել որ իր յարաբերութիւնները կը խզէ իր սիրուհու հետ ամուսնութիւնից առաջ: Ես սպառնացել էի նրան որ ձեզ իմաց կը տամ:

—Դուք գիտէք թէ ինչ արժեն այդ տեսակ պատւոյ խօսքերը: Իսկ ժակը հաւատացնում էր ինձ որ դուք, դուք եք տիկին Ֆերրէզիի սիրականը!...

Նրանք նորից լոեցին: Նրանց տիրութեան մտածմունքները միացան դժբախտ Աննիի վրայ: Անտեղի ափսոսանքը շարժում էր նրանց սրտերը: Նրանք մատծում էին այդ տիսուր ճակատագրի մասին:

Մէնթօն մտնելիս՝ կառքից իջնելուց առաջ՝ Մէրանը ասաց Լիւսիէնին:

—Այժմ ոչ մի բան մի ասէք աղջկանս կոմսի խօսքերից: Լիւսիէնը հարցցեց.

—Ի՞նչ էր կամենում նա ասել, խօսելով անանուն նամակի մասին:

Բայց պ. Մէրանը բացատրութիւն չը տուեց. Նա ձեւացըրեց որ ոչինչ չը գիտէ:

Մնալով միայնակ, Լիւսիէն վերարտադրեց յիշողութեան մէջ իտալայու հպարտ խօսքերը և չնութեամբ ու դաւաձանութեամբ խառնուած այդ մահուան անգութ ֆազիսները: Նա բազդատեց այդ մահուան սաստիկ դառնութիւնը Ժիւլիէնի մահուան խաղաղ պայծառութեան հետ, որին մի քանի որ առաջ հանդիսատես էր եղել: Նա մոռացաւ ինքնասիրութեան իր նախկին մոքերը և իր մարմնի կամ մոքի սպարդիւն քմահաճոյքները, ինչպէս կորսուած իրեր մութ ճանապարհների վրայ:

Եւ անցնելով իր կալուածը մտցնող անտառի միջով, նա շնչում էր ուրախ ծառերի և հողի հոտը, որոնց վրայ ընկնում

էր առաւօտեան ցողը, նա քազում էր, իբրեւ նոր թարմ ծաղիկներ, ամեն տեսակ պարզ և ուժեղ մտքեր: Բնութիւնը թափում էր նրա մէջ մի առողջ և բարերար կեանքի սաստիկ փափազը, որպէս զի մահը ամոքուած լինի: Սակայն մի փոքր անձկութիւն մտնում էր նրա սրտի մէջ, որն գեռ չէր փորձել սիրոյ երջանկութիւնը—երջանիկ սէրը, որն ոչ մի սիրուած կակի ազատ չէ կացուցանում սիրելուց:

V

Պ. Մէրանը և Լիւսիէն Հալանդը հանդիպեցին իրար նահանգապետութեան մեծ սանդուխների վրայ, Աննէսիում: Առաջինը ժամանակ նկատելով երիտասարդին, բայց Լիւսիէնը տեսաւ այդ ժպտի ախրութիւնը:

—Մէնթօնի տանուտէրը իբրեւ ինդրատու է գալիս, հարցրեց պ. Մէրանը:

—Ես ոյնպէս, ինչպէս և Աննէսիի ընդհանուր խորհրդականը: Ես ամենեւին չսորհներ չեմ ուզում: Ես եկել եմ պաշտպանելու իմ ելեւմտացոյցը, որն այս պարոն պաշտօնեաները յօշուում են առանց քաշուելու ջնջելով՝ ամենակարեւոր յօդուածները: Մեր համայնական տունը պէտք ունի կարեւոր նորոգութիւնների, նստած իրանց բազկաթուների մէջ, նրանք գտնում են, որ նա լաւ վիճակի մէջ է:

—Իսկ ես այս բոպէիս յայտնեցի նահանգապետին, որ հրաժարական եմ տալիս:

—Ա՛ս, ասաց Լիւսիէնը զարմացած:

Պ. Մէրանը ընդհանուր խորհրդական էր տամնեւհինգ տարուց ի վեր:

—Այո, իմ Աննի աղջկայ առողջութիւնը անհանգստութիւն է պատճառում ինձ: Մենք ամենքս կը գնանք ձմեռն անցկացնելու հարաւում:

—Տիկին Արքարը չէ առողջանում:

Նա կարողացաւ կարգալ իր հարցմունքի պատասխանը որ Մէրանի աչքերի մէջ, քօղարկուած այն համբերատար մնալամազձութեամբ, որ տալիս էր նրա դէմքին մի քիչ կանացի մեղմութիւն: Եւ որովհետեւ նա չէր հանդիպել նրան բաւական երկար ժամանակ, ուստի աւելի պարզ նկատեց նրա զիմազըների այլափոխութիւնը, ինչպէս և նրա գեղեցիկ ալեխոսն մօրուքի ճերմակամնալը:

—Ժակը այսուեղ չէ, հարցրեց նա դարձեալ:

—Ոչ, նա սեպտեմբեր ամիսն անցրեց որսորդութեան մէջ,

Նախկին արմատական մինիստր Շօղիէրի հետո Այժմ, կարծեմ, նա Պարիզումն է։ պարլամենտը շուտով գումարուելու է, և նա մտադիր է հարցապանդումն անել ընդհանուր քաղաքականութեան մասին։ Ես աւելի լաւ եմ համարում որ նա բացակայ լինի։

Եւ որովհետեւ Լիւսիէնը, որ իրան համակրելի էր, զիտէր ընտանիքի տիտուր գաղտնիքները, նա այս վերջին խօսքերն եւս տասց։

—Աննիի հանգստութեան, իմ հանգստութեան համար։ Սպա տեսնելով որ երիտասարդը լսում է, նա շարունակեց։

—Ինչո՞ւ էլ չէք զալիս մեզ տեսնելու։ Ահա երկու ամիս կը լինի որ, փակուած ձեր կալուածում, զուք չը հաճեցիք այցելել մեզ, պ. Ֆերրէզիի թազումից ի վեր, կարծեմ, անցեալ օգոստոս ամսին։ իսկ այժմ մնաք հոկտեմբերի մէջն ենք։

—Ճիշտ է։ Ես աշխատում էի. ես երկրադործական և համայնական լայն ծրագիրներ ունեմ, պատասխանեց Լիւսիէնը մի ժայռով, որի հեգնութիւնը ինքն իր համար էր սահմանում։

—Վերջապէս դուք հետաքրքրուում էք ձեր հողերով, ձեր երկրով։ Պարիզեցին վերադառնում է իր հին զաւառը և արմատազուրկը արմատ է բռնում։ Ձեր հայրը, որ անշուշտ, Աստըծու աջ կողքին է նստած, որովհետեւ նրա բարութիւնը առավելական էր, ծափահարում է ձեզ. ես ասլահով եմ, եթէ միայն երինային սովորութիւնները թոյլատրում են այդպիսի շարժումներ։ Եւ ես, որ մի քիչ ձեր հօր պէս եմ, ուրախանում եմ, որ դուք որոշել էք ապրել մեր մէջ։

Նա շարունակեց աւելի ծանրութեամբ, քանի որ նրա սրտին շատ մօտ էր այդ առարկան։

—Հողը կը սպառուի, կը ծիւրուի, բարեկամա, եթէ զիւզացիներին օգնութեան չը հասնենք։ Համայնքները, վատ կառավարուելու պատճառով, պարտքի տակ ճնշւում են։ Փօքր սեպհականութիւնները, չը կարողանալով տեւել, տեղի են տալիս խոշոր սեպհականութիւններին։ Հողը, կտոր կտոր եղած, չէ կերակրում և չէ կապում իր հետ զիւզացուն։ Զուր տեղ ընտանիքը, որ պահպանողութեան բնադրումով համայնական է դառնում, աշխատում է չը բաժանուել, չը բաժանել հողը իր անդամների մէջ, բայց միշտ գտնւում է մի հսասէր զաւակ որ պահանջում է բաժանումն։ Միատեղ լաւ էին ապրում, բաժանուած՝ թշուառ։ Դիւզացին կորած է հէնց որ սկսում է պարագ՝ անել։ Հողի այն կտորը, որ նա պարտացնում է իր քրտինքով, պէտք է վճարի նրա պարտք առած

փողի տոկոսիքը, հարկերը, գրոշմական ծախքերը և նրա ապրուստը, մինչ երաշխաւոր փոխատուն առանց աշխատելու իր գրպանն է դնում նրա փողն, որից պետութիւնը ոչ մի բաժին չէ ստանում: Նա երկինքն է նայում առատ հունձ ունենալու յոյսով: Վատ նղանակը՝ տնաքանդութիւն է, սեպհականութիւնից զրկուել է, աճրդով ծախել: Գիւղացու ծախքերը հարստացնում են գործակալներին, իսկ այդ ծախքերը ծածկելու համար վաճառում են պապերի թողած փոքրիկ ժառանգութիւնը, որի համար գիւղացին տարիներով կռուել է: Վաճառականը գնում է և մնձ կալուածներ կազմում: Ոչ ոք չէ իմանում, պարոն Լիւսինը, իր հողը պաշտպանող գիւղացու հերոսական պայքարները: Նա կը յոգնէ, եթէ մենք չը հիմնենք երկրագործական կրեդիտի հաստատութիւններ, որոնք չափաւոր տոկոսիքով զրամ փոխ տան գիւղացուն, եթէ մենք չը վճռենք դէն ձգել աշխատութեան հին բուտինները և չը գործադրենք մշակութեան համար նոր արդիւնաբերութիւնը և եթէ, չը վերահաստատենք ընտանիքի համար կտակելու աղատութիւնը:

Լիւսինը, որ ուշադրութեամբ լսում էր պ. Մէրանին, որի փորձառութիւնը և դատողութիւնը վաղուց զարմացրել էին նրան, հարցրեց:

—Դուք, որ կարող էք այդքան ծառայութիւններ մատուցանել, ինչի՞ համար թողնում էք ընդհանուր խորհուրդը:
Պ. Մէրանը նայեց շեշտակի երթասարդին այն բարի վշտակի նայուածքով, որ սա արդին նկատել էր:

—Աննիի տիրութիւնը ինձ ծերացրեց տասն տարով....

Եւ աւելի չը խօսելու համար այդ տանջանքի մասին, որի գաղտնիքը պատհամունքը յայտնել էր Լիւսինին, նա անմիշապէս յարեց:

—Ես այս բոսկիս ասում էի նահանգապետին, ծանուցանելով նրան հրաժարականո, որ դուք պէտք է իմ տեղը բռնէք:

—Ես, որտեղից ձեր մէջ մտել է այդ միտքը:

—Ձեր ընտանեկան վիճակը, ձեր պատուաւորութիւնը, ձեր իմացականութիւնը ուղղակի մատնացոյց են անում ձեզ:

—Բայց ես զրեթէ մի նոր եկուոր եմ այս նահանգում:

—Ամեննելին. ամեն մարդ յիշում է ձեր հօրը, որին դեռ ընտաներար կոչում են պարոն Հանրի:

—Երբ նրա մասին խօսք է լինում: Մեռեալները շուտով մոռացւում են, նոյն իսկ մեզ շատ սիրելի եղածները և նրանց յիշտակը հետզհետէ ջնջւում է:

—Ոչ, պարոն Լիւսին: Հալանդի ամրող սերտնդներ դե-

կավարել են այս երկիրը։ Դուք կը վերսկսէք մի աւանդութիւն, որ դեռ մոռացուած չէ։

— Բայց ընդհանուր խորհրդում քննուող խնդիրները անձանօթ են ինձ։

— Դուք չուտով կ'ընտելանաք նրանց։ Ես զիտեմ երկու զեկուցագիր, որ դուք ուղղել էք նահանգապետի խորհրդին ձեր ջրերի և ճանապարհների համար։ Դրանք գեղեցիկ կերպով լուսաբանուած են։

— Վերջապէս ոչ մի բան սիրտս չէ քաշում գէպի այդպիսի պաշտօնները։

— Պէտք է որ քաշի, պէտք է որ դուք ներկայանաք։ Դուք ինձ հաճոյք կը պատճառէք և օգտակար կը լինէք։ Ես հասակս առել եմ և չունեմ այլ ես նուիրակն հուրը։ Դուք զիտէք ինչու Միթէ դուք թոյլ կը տաք որ իմ նահանգի վարչութիւնը ընկնի անխղճահար փառասէրների և պօլիտիկանների ձեռքը։

— Ես առում եմ ընտրողական պայքարները, ուր պարսկեց մարդը կորցնում է իր արժանիքը։

— Ես ձեզ կը ներկայացնեմ, այդ աւելի պարզ կը լինի.... Այդ միջոցին մի դռւս բացուեց շախնդով և Վօժընիէ զիւղացին, Վիկտօր Հիւզօր սեղանակիցը, երեւաց սանդուխների վրայ, հրուելով նահանգապետութեան քարտուղարից։

Տրեխաւորը ուժգին կերպով ճխտեց իր ճմարած զլիսարկը զլիսին և ոչ առանց ազնութեան։

— Պարոն, զոռում էր նա, ես սիրում եմ կոիւը։ Բայց ես սիրում եմ կոիւը մինխատրների հետ և ոչ ձեզ պէս ստահակների հետ։

Պետական պաշտօնեան, առանց զայրանալու այդ անարշանքից, փակեց դուռը և Վօժընիէն եկաւ զիսկաւ պ. Մէրանին։

— Պարոն, ես ներկայացրել եմ ֆրանսիական պրօլետարիատը Վէրսայի կոնդրէսում, իսկ այժմ մի անամօթ անպիտան կամնուած է ինձ իրատ կարգալ։

— Այս ինչ գործ ունէք այստեղ, հարցրեց պ. Մէրանը։

— Ես հիմնել եմ Թօնում, ուր ես փայտ եմ սղոցում, մի բանուորական ընկերութիւն։ Կանոնագրութիւնը պատրաստ էր, իսկ այժմ ինձ ասում են, որ իմ ընկերութիւնս ապօքէն է։ Այդ եօթանասուներկրորդ ընկերութիւնն է, որ ես հիմնում եմ Նրանք բոլորն էլ խափանուեցին։

Նա բարձրացրեց ձեռները գէպի երկինք, վլայ կոչելով Աստծուն ժամանակի անարդարութեան գէմ։

— Աղատութիւնը, պարոններ, աքսորուած է ֆրանսիայից。
ևս նրա սուզն ևմ կրում:

Լիւսիէնը նկատեց նրա կապոյտ բլուզը, բամբակեայ վարա-
տիքը և գորշ գլխարկը. նա մտածեց որ, յիրաւի, այդ սուզը
ներքին էր Վօժբնիէն արդէն իջնում էր սանդուխներից, ար-
տասանելով այս վեհ խօսքերը.

— Ես կը հիմնեմ եօթանասուն-երրորդ ընկերութիւնը. ևս
խօսեցնել կը տամ իմ մասին:

— Նա վրէժիննդրութիւն է յզանում, ասաց Լիւսիէնը:
Բայց պ. Մէրանը պատասխանեց.

— Ոհ, ոչ: Նա արդէն մոռացաւ: Նա աւելի խաղաղասէր
է, քան բիրու: Նրա բրտութիւնը նոյն իսկ նրա սիրոյ արտա-
յայտութիւնն է: Նա սիրում՝ է մարդկանց: Նա ապրում է ոչըն-
չով և տալիս է ինչ որ ունի: Նա մի բարեգործ յուզիչ է: Նրա
հպարտութիւնը անգամ պարզամիտ է: Սյնալէս ինչպէս կայ,
նա ինձ գուր է դալիս իր նահապեսուկիսն բարութիամբ, և
այն օտարութի իգէալականութեամբ, որ երբեմն յեղաշրջում է
մեր զիւղացի կոպիտ ուղեղները: Ծնոււած կարող ծնողներից,
նա թափառացընի է: Սերոււած անտես ու իր հողին յարած ցե-
ղից, նա զրկուած է ամեն բռնից և նրա առաջին շարժումն
ձեռք մեկնելն է ողորմութեան համար: Արգեօք սխալում եմ,
բայց այդ արկադիական սուպերինութիւնները ևս վերագրում եմ
մեր Սափուեայի դեղեցկութեան: Սակայն թողնենք այդ: Կամենում
էք դնանք աղջկերանցո մօտ, նրանք սպասում են ինձ այստեղ
այդում: Ե՞նքն ապա միասին Մէնթօն կը վերադառնանք:

Լիւսիէնը յօժարեց: Նա չէր տեսել Աննիին այն երեկոյից
ի վեր, երբ Վօժբնիէ զիւղացին հաւաքել էր նրանց՝ գասախօ-
սութեան սրահի վերածուած շատեմարանի մէջ: Զը կամենալով
հանդիպել Ժակին, որի մեկնումը նա չը գիտէր, չիմանալով
ինչպէս բացարել իր զգացումը՝ կարեկցութիւն թէ սէր, նա
հաճոք էր զգացել տունձնութեան մէջ, ուր ստականում էր
այն զգացումի ոյժը, որի անունը նա չէր որոնում, բայց ձա-
շակում էր նրա արբեցուցիչ զանութիւնը:

Այն այգին, ուր նրանք դնացին, գտնուում էր քաղաքային
տան ետեւը և տարածւում էր մինչեւ լիճը: Նա զրեթէ երեսի
վրայ է ձգուած և անինամ թողնուած և իր այդ լքուած զրու-
թեան մէջ աւելի յանկուցիչ է, ուստի և երեկոյեանները սիրա-
հարները զալիս են այդտեղ որոնելու բնութեան ազգած խոր-
հըրդաւոր գաղտնիքը:

Աննին և Ժաննին լծի ափին սպասում էին իրանց հօրը:
Յուլիս, 1902.

Գնալով դէպի նրանց պ. Մէրանի հետ, կիւսիէնը նկատեց այն տարբերութիւնը որ տեսնուում էր երկու քոյքերի մէջ. Աննին՝ բարակ և վտիտ, ժաննին՝ աւելի բարձրահասակ և առոյգ, կուրիկ թշերը վարդագոյն և ընթացքը ու կազմուածքը ճկուն: Նրանք ողջունեցին: Եւ չորսն էլ, զմայլուած օրուայ հիանալի գեղեցկութեամբ, զիտում էին բնութիւնը զրեթէ առանց խօսիլու:

Հոկտեմբերը ղարդարում էր երկիրը ոսկեճաճանչ փայլով: Երփիներանգ տերեւները առանձին գոյն էին տալիս հորիզոնին: Օդը այնքան թեթև էր, որ չնչելով նրան մարդ կարծում էր թէ գգուանքի կարիք է զգում:

Պարզ երկինքը այն մեղմ գոյնն էր ստացել, որ արեւաշատ երկիրներին անծանօթ է և որն, գեղեցիկ օրերին, տալիս է հիւսիսի երկիրներին մի անսման քնքշութիւն: Հորիզոնի ծայրերում ծփացող փրփրուն շոգիները, որոնք իջնում էին մինչեւ լիճը, անորոշ գծագրութիւն էին տալիս սարերին և դրանով մի անսահման հմայք էին առաջ բերում:

Արեգակը կենդանացնում էր ծփուն ջրերը մանր և անհամար կայծերով: Ահա կարապների մի սպիտակ երամ սահեց կամացուկ լճի փայլուն մակերեւոյթի վրայ և նրա թսիչքը հազիւ տեսանելի հետք թողեց: Նրանցից մինը կամեցաւ բարձրանալ երկինք: Նա խփեց թերեւը ջրերին մեծ աղմուկով: Շատ ծանր լինելով, նա չէր կարող իսկոյն ճախրել. շուտով նա մտաւ լոյսի մէջ և իր շոշողուն փետուրներից ջրի կաթիլները թափւում էին գոհարեղէնի նման:

Լիւսիէն ծծում էր աշնան քաղցրութիւնը, որ չուտով պէտք է անհետանաբար: Նրա սիրտը, որ կակղել էր այդ վաղանցուկ գեղեցկութեամբ, տրաքում էր գորովանքից: Խոնարհնեցնելով աչքերը գետնին՝ իր բաղմաթիւ զգացումներից հանգըստանալու համար, նա տեսաւ որ ման է գտլիս մնոած տերեւների վրայ, որոնց ոտնակոխ եղած ուկէ գոյնը գեռ նմանում էր ծառերի գեղնած տերեւների գոյնին: Եւ նրան այնպէս թուաց, որ բոլոր այդ տերեւները, որոնց փայլը նրան հիացնում էր, արդէն մեռած էին, ներկայացնում էին մահուան այդ պայծառ գեղեցկութիւնը, որ վերջնական այլակերպութիւնից յետոյ տեսնում է էակները և իրերը մի գերագոյն միհութեւն մէջ:

Նա մտածեց.

—Այս տերեւները չեն թափւում և մնում են ճիւղերի վրայ անուշ եղանակի չնորհիւ: Առաջին քամին փչեց թէ ոչ,

նրանք կը թօթափուեն։ Նրանք փողփողում են այժմ, բայց մեռնելու վրայ են։

Նրա նայուածքը հանդիպեց Աննիի սրօֆիլին։ Արեւը ոսկեզօծում էր մանկամարդ կնոջ մոխրագոյն վարսերը և ծոծրակը և տալիս էր նրա դէմքին մի վարդագոյն թափանցկութիւն։ Նման այն խեցիների թափանցկութեան, որոնց միջով զտւում է լոյսը։ Մի խորհրդաւոր խաղաղութիւն սփոռուած էր նրա հաճելի դիմագծերի վրայ, որոնք կարծես մահացու տաղտկութեան հարուած էին ստացել նոյն փայլուն գունատութիւնը լուսաւորում էր նրա փխրուն և անձեռնոց ձեռքը, որ բաց էր թողել մարմնի երկարութեամբ։ Հազիւ նոյն չափ կենդանի որպէս մի մարմարեայ արձան, նրա երիտասարդ գեղեցկութիւնը զարդարուած էր այն դիւրաբեկ չնորհքով, որ աշնան չնորհքն է կազմում։

— Նա եւս ստացել է հարուածը, մտածում էր Լիւսիէնը։ Ինչպէս այս ծառերի տերեւները, նա կապուած է կեանքին մի թեթեւ կապով։ Զմեռը բերող մի և նոյն քամին նրանց կը տանի։

Եւ որովհետեւ նա գեղեցիկ էր ու սիրոյ մի մտածմունք միանում էր մահուան այդ մողին, նա ձեռքը տարաւ աշքերին, որ լացակումել էին։

Նա ամենեւին չը տեսաւ Աննիի կողքին լրջախոհ և մոտածող ժաննիխն, եթէ ոչ նա զգացած կը լինէր այն զարմացքը որ առաջ է բերում խոր վշտի նախազգայումը երիտասարդութեամբ լի մի հոգու մէջ, որն այնքան հեշտութեամբ կարող էր բացուել երջանկութեան առաջ։

Աննին էլ նայեց նրան և ապա քրոջը, և նրան թուաց, որ այդ նայուածքը մի տարօրինակ բան ունէր ժաննին, աեսնելով որ Լիւսիէնը կամենում է զրուցել քրոջը հետ, ինքն հեռացաւ……

Մի քիչ յետոյ, կառքի մէջ, որ նրանց ամենքին յետ էր բերում Մէնթօն, մինչ արեգակը իր վերջին ճառագայթներով լուսաւորում էր նրանց, պ. Մէրանը, ընկղմուած մտածմունքների մէջ, այսպէս էր եղրափակում անհանգստութեամբ այն տպաւորութիւնները, որ իր սրատեսութիւնը ներչնչում էր իրան։

— Իմ ժաննի աղջիկը սիրում է Լիւսիէն Հալանդին։ Սա չը զիտէ որ այդ այնքան արի և ապարզ սիրտը բացւում է ինքնայօժար իր համար։ Դժբախտ Աննիի յիւղութիւնը, որին գուցէ առաջ սիրում էր, նրան զեռ յետ է պահում։ Խսկ վերջինս—խեղճ իմ, սիրեցիալ հիւանդ, որին ուրախութիւնը չը հպեց

անդամ—չէ նկատում, որ քոյրը խանդոտ է: Նա միայն կառող է կապել նրանց մտածմունքները: Պէտք է որ խօսեմ Աննիի հետ...:

Երկրորդ օրը, Մէնթօնի նաւահանգստի մօտ, երբ Լիւսիէնը լծի ափին կապուած նաւակի կապերը արձակելու վրայ էր, նա տեսաւ երկու քոյրերին այն փոքր շաւզի վրայ, որ ընկած է լծի երկարութեամբ: Առաջից եկողը ժաննին էր. Լիւսիէնը ճանաչեց նրան նրա ճկուն, արագաշարժ ընթացքից և երբ մօտիկացաւ, զմայլուեց ակամայ նրա թարմ դէմքով, նրա չէկ մազերով ու պայծառ աչքերով: Նա մտածեց.

—Երբ բնութիւնը կարծես մեռնում է, այս աղջիկը վերածնութեան տպաւորութիւն է ներչնչում: Նա զարնան մի վարդ է:

Զահիլ աղջիկը կարմրեց տեսնելով նրան և յանկարծ կանգ տունելով սպասեց Աննիին, որ զալիս էր զանդաղ և դէմ զնելով իր ճերմակ ու թափանցիկ զէմքը արեւին, որ երբէք չէր թարմացնում նրա դարկութիւնը: Աննին անցաւ անշարժ կանգնած ժաննիի առջեւից.

—Կամենում թը վիր առնել մնդ ձեզ հետ, պարոն Լիւսիէն. Ես փափագ ունեմ մի անդամ եւս նաւարկել:

Նրա քոյրը չը լսեց ամենեւին այս վերջին խօսքերը, բայց Լիւսիէնը ըմբռնեց միտքը:

—Եկէք, ասաց նա: Արեւը գես չէ անցել սարի ետեւը: Մենք կը գնանք Ալբինի մօտ և կը վերագանցնաք արեւամուտից առաջ:

Աննին դարձաւ ժաննիի կողմը.

—Գնանք, կամենում ես:

Ժաննին, որ տեղից չէր չարժուել, մերժեց: Նրա փրուած շրթունքները ցոյց էին առաջիս նրա տիրութիւնը, իսկ պայծառ աչքերը՝ վճռականութիւնը:

Աննին պնդեց.

—Ենչի չես ուզում գալ:

—Ոչ, ոչ ես պէտք է տուն վերագանցամ:

Եւ առանց սպասելու նա հեռացաւ: Նա փախաւ զաշտերի միջով, բռնելով շրջազգեստի ծայրերը: Ինչպէս գտլու ժամանակ այժմ եւս Լիւսիէնը հիանում էր նրա թեթեւ շարժումներով:

—Ինչ ՞ պատահել, հարցորեց նա: մեղանից խռովել է:

Աննին մի մասը դրեց շրթունքների վրայ.

—Իսկո՞ն, ես ձեզ կը պատօնիմ:

Նա ունէր այն ծանրափսոհ ժպիտը, որ դրեթէ երբէք չէր թողնում նրան և արտասուրի չափ կարեկցութիւն էր առաջ ընթառմ:

Նա նստեց նաւակի ետքում, որ Լիւսիէնը հեռացրեց լճափից թիակների նրկու հարուածով: Նրանք այլ եւս չէին խօս սում: Լսում էր միայն թիակների հանած ազմուկը, զրից դուրս հանուելիս և նրանց մէկի կոնչոցը իր երկաթէ յեւարանի վրայ: Նրանք նայում էին սկսպղուն լիճը և ոսկեզօծ որթերը, որ ծածկում էին Վէկրէի կողերը: Ասածինը Աննին խզեց լսութիւնը:

—Յիշում էք՝ այն երեկոն, երբ մննք անսանք լուսնի ծագումը, Տուրնէտի վրայ:

Եւ որպէս թէ առաջին անդամն էր մտածում այդ յիշուղութեան մասին, նա յարեց:

—Դուք յիշում էք տիկին Թերրէզիի յանկարծական կերպով ընդհատուած երգը:

Անցեալի ամնն մի յիշողութիւնը կրկնապատկում էր նրա այն սառւգութիւնը թէ Փակը սիրել էր այդ կնոջ իր ամուսնութիւնից առաջ. Նա հարցրեց, վարանմամբ:

—Դեռ նա Տալուար է:

—Ոչ, ասաց Լիւսիէնը: Նա դնացել է իտալիա: Նրան Սավոյում պահողն իր ամուսնու ասողջութիւնն էր. Նրա մահից յետոյ, ինչ հարկ կար որ այստեղ մնայ:

Բայց նրանք շուտով հասկացան՝ որ իրանցից ամեն մէկը զիսէ: Մի օտարութիւն հետաքրքրութեամբ, Լիւսիէնը արտասասանեց այս խօսքերը.

—Իր մեռնելու դիշերը, պ. Թերրէզին, զառանցանքի մէջ, տակից գլխից խօսում էր: Նա խօսում էր մի ինչ որ անանուն նամակի մասին և ներսողութիւն էր խնդրում ձեղանից, չը գիտեմ ինչ բանի համար:

—Ահ, ասաց նա, դուք ստոյգ էք:

Լիւսիէնը նոր նկատեց որ նա աւելի գունաթափուեց, և յիշեց պ. Մէրանի աղաչանքը կոմսի խօսքերի առիթով: Համատարած լոսւթիւնը բնութեան մէջ շրջապատեց նրանց: Աննիի աչքերը լցուեցին երազով: Լիւսիէնը նայում էր նրան: Այդպէս լրջախոհ և մտածող, ջահիլ կինը կեանքից շատ հեռու էր երեւում: Նրա այտերի գոյնը նմանում էր այն մի քիչ գունաւորուած մարմարներին, ուր որոշում են քարի քնքոյշ երակները: Նա կախել էր նաւակի եզրին իր երկար ձերմակ ձեռները: Նա գեղեցիկ չէր մարդկային այն գեղեցկութեամբ,

որ գրգռում է մեր մէջ ցանկութիւն, այլ արձանների կամ մեռնեալների խաղաղ զեղեցկութեամբ:

Լիւսիէնը բաց էր թողել թիակները:

Լուսաւոր ջրերի վրայ ձգւում էին այն վարդագոյն գծերը, որոնք իմաց են տալիս երեկոն և ափերի վրայ թափւում էր մի քիչ մանուշակագոյն մշուշ: Նա միշտ նայում էր Աննին: Արտասուքի ցանկութիւնը խողդում էր նրան: Երբէք նա իր սիրութ չէր զգացել, ինչպէս այդ ժամին և չէր զգացել հոգու նուրբական գաղտնիքը: Նա փափադ ունէր ասել նրան, «Խօսիր, ինդրում եմ. միթէ չես տեսնում, որ ես կամնում եմ լալ քեզ վրայ, իբր թէ այլ ես կենդանի չես...»

Աննին զարձրեց զլուխը դէպի նրան և բարձրացնելով մի քիչ թեւը, պահեց օդում կախ և ժպտաց: Նա Վինչիի Յովհաննէս Մկրտչի պատկերի դիմագծերը և ժպիտն ունէր: Լիւսիէնը կարծեց, որ նա իրան երկինքն է ցոյց տալիս: Սակայն նա պարզապէս ցոյց էր տալիս նրան Աննէսի դիւզը: որ կարծես ընթանում էր: Նաւակը, որ տարւում էր քամու հոսանքով, առաջ էր բերում այդ միրաժը: Զգածուած՝ Լիւսիէնը շնչաց.

—Ես ձեզ սիրում եմ:

Թէ այն պատճառով որ Աննին չը լսեց և թէ այն՝ որ այդ խօսքերը հաձելի էին իրան իր շրթունքների վրայ, նա կրկնեց:

—Ես ձեզ սիրում եմ:

Զահիլ կնոջ պաղ այտերը շառագունեցին արեան մի կուհակով, որ չէր կարելի սպասել այդպիսի մի արիւնազուրկ էակից և նրա աչքերը թաց եղան: Նա ասաց նրան մեզմիկ.

—Ինչու այդպիսի խօսքեր էք տառում ինձ. այդ վատ է: Ես վստահացայ ձեզ այս երեկոյ իբրև մի բարեկամին Ռւրեմն կամենում էք զղջացնել տաք ինձ:

Նրա ոգեւորուած զէմքը յայտնում էր՝ որ նրա ամօթխածութիւնը վիրաւորուած է: Ոչ երկիւղ կար ոչ էլ պչրանք այն եղանակի մէջ, որով նա յետ էր մղում սէրը, այլ մի զարմացը՝ վիրաւոր մի և նոյն ժամանակ վշտայի:

—Ինչի համար վատ է, ասաց նա զգուանքի մի այնպիսի ձայնով, որն Աննին նկատեց իբրեւ նոր և պատշաճ սիրոյ խօսքեր: Ինչի համար վատ է ասել ձեզ ինչ որ փոխել է կեանքս: Երբ ես նորից տեսայ ձեզ, ես նորից գտայ իմ մէջ այն ամենը, ինչ որ իմ մէջ կար երիտասարդ և բարի, որն ես կորցրել էի: Ինձ համար էլք դուք սահմանուած: Զեր մանկուկան դորովանքների զարթնելը տեսնողն առաջինը ես եղայ, դորովանքներ, որոնք ուղղուած էին այն ժամանակ ծաղիկներին, ծառերին, ամենքին, այնքան ձեր սիրութ խանդաղակաթ էր: Ես յանցաւոր եմ

որ գնացիւ Մոռացումը եկաւ։ Մի ուրիշն ևս եկաւ, որին գուցէ ես քաջութիւն ունենացի ներելու, եթէ միայն նա ձեզ երջանիկ դարձրած լինէր։

Աննին թափ տուեց զլուխը։ Նա մտածում էր ստկայն, որ այդ խօսքերը ճշմարիտ էին և ինքն անցել էր երջանկութեան կողքից։

—Եւ ես չեղայ ձեզ ասողն, որ երջանիկ չեմ։ Դուք կարող էիք գուշակել իմ կեանքի զաղտնիքները։ հարկաւորութիւն չը կար հարցնել ինձ նրանց ուրախութիւնների կամ տիրութիւնների մասին։ Դուք ասում էք, որ ինձ սիրում էք։ Նայեցէք ինձ։ Ո՞հ, լաւ նայեցէք ինձ։ Դուք լաւ տեսնում էք, որ ես կեանքի միայն մի մնացորդ ունեմ։ Ես անկարող եմ այլ եւս սէր ներչնչեր։ Դուք յետոյ շատ կափսոսաք, որ չը յարգեցիք այս խեղճ մեանողին։ Մոռացէք ինչ որ ինձ ասացիք, ինչպէս ես կամենում եմ մոռանար, երբ դուք վերադարձաք, ձեզ երիտասարդութիւնն էր, որ զարթնեց հայրենի հողից ձեզ գիմտուրելու համար։ Դուք չէք կարողանում ուրիմն տեսնել նրան, այն երիտասարդութիւնը, որ նմանում է նրան։

Լիւսիէնը զարձրել էր զլուխը, որովհետեւ Անդի գուշատութիւնը ցաւ էր պատճառում իրան։ Սրիւնը, որ ներկել էր նրա այտերը մի մազանցուկ գոյնով, արգէն քաշուել էր իր ծանր, հնչիւն ձայնով նա շարունակենց։

—Ես կամենում էի ձեզ հետ խօսել նրա մասին։ Միթէ մինչեւ այժմ զլիսի չընկաք որ նա սիրում է ձեզ, արդեօք ես ողէտք է իմացնեմ ձեզ այդ բանը։ Նա նախանձում է դէպի ինձ, որ շուտով կանանտանամ։ Դուք չը հասկացաք փոքր ինչ տռաց։ Ուրեմն ոչ ոք վատահութիւն չունի իմ վրայ։ Ով, Աստուած իմ, խանդոտ նա, որ համակ երիտասարդութիւն է և կեանք Նայեցէք նրան։ Դուք երբէք նրան չէք նայել, ինչպէս հարկն է։ Նա այնքան զեղանի է, նա աւետում մի երկար տպագայ։ Այնպիսի մի ոյժ կայ սիրոյ մէջ, որ նրանք, որոնք սիրուած են՝ յանձնում են իրանց սիրտը։

Առանց նրան նայելու, Լիւսիէնը մրմնջաց։

—Ինչի՞ ինձ հետ ուրիշի մասին էք խօսում……

Բայց Աննին նորից խօսքը բերեց Ժաննիի վրայ։

—Երբ մարդ այլ եւս չէ ցանկանում ապրել, նա արդէն մեռածի պէս է։ Ես այդպէս եմ։ Ճշմարիտ մահը ինքն իր մէջ է լինում և այդ տեսակ մահը, ինչպէս դուք զիտէք, զիպել է ինձ։ Պէտք է ուրեմն որ ես այստեղ չը լինեմ, որպէս զի դուք սիրէք Ժաննին։ Ես ապահով եմ, որ դուք նրան կը սիրէք։ Նա ապասում է ձեզ։ Երկար սպասեցնել մի տաք նրան։ Զահիլ

աղջկերանց սրտերը շուտով են փշրւում։ Մանաւանդ այդ սիրտը, որ աւելի քնքոյց և աւելի զիւրաբեկ է քան կարծում են։ Նա երեւում է ուրախ և աշխոյժ, սակայն նա տանջուում է։ Լիւսիէն, ես կը ցանկանայի տեսնել այդ երջանկութիւնը, գուք շատ սիրելի էք ինձ... երկուում էր ինչի էք լաց լինում։ Ես դիտեմ ինչ պէսք է պատահի և չեմ դարհուրում։ Այդ այնքան պարզ է...»

Եւ որպէս թէ կամենալով ցոյց տալ որ գեռ յարած է կեանքին մի բանով, նա աւելացրեց մի թոյլ ժպտով։

—Դուք մի զեղեցիկ յիշողութիւն կը պահպանէք իմ մասին։ Տեսէք որքան ուրախ եմ ես. այդ միտքը ինձ շատ հաճելի է։

Լիւսիէնը բարձրացրեց նրա վրայ իր թաց աջքերը և տաց վերջապէս։

—Մի անհանգստանաք իմ խօսքերի պատճառով։ Յետ մի մղեք այն զորպանքը, որ ունեմ ձեզ համար նա լաւագոյնն է ինչ որ ես ունեմ իմ մէջ, նա ոչինչ չէ ցանկանում, ոչ մի յոյն չունի. ոհ, ոչինչ չէ ցանկանում, երդուում եմ ձեզ, նոյն իսկ ձեր ձեռքի դպուանքը։ Ես սիրում եմ ձեր մէջ ձեր առաքինութիւնը, աւելի շատ քան ձեր զեղեցկութիւնը։ Զեր նայուածքի տակ իմ մտքերս մեղմանում և մաքրում են։ Ես ապրում էի միւս մարդկանց պէս առանց ճանաչելու հազիս ես անօգուտ էի։ Այն օրից երբ սիրու բարախեց ձեզ համար, ես հասկացայ բարի լինելու և մի քիչ բարութիւն գործելու ուրախութիւնը։ Այդ է իմ սէրը—բարութիւն զործելու միծ ցանկութիւն։ մի խօսէք մահուան մտսին. դուք դեռ այնքան երիտասարդ էք։ Այնքան անակնկալ ոյժ կայ երիտասարդութեան մէջ...»

Աննին բացասական նշան տրեց և նոյն իսկ հասկացաւ ոչ առանց մելամաղնութեան այդ վերջին խօսքի կարելցական նշանակութիւնը։ Նա իրան դատապարտուած էր զգում, բայց չէր երեւակայում որ ժամանակն արդէն հասել է։ Նրան թուաց որ Լիւսիէնի խօսքերը չքացնում էին իր տկար յոյսը։

Նուակը դանդաղաշարժ տարւում էր քամուց գէպի Ալբիյնիի թերակղզին, որի ոսկեզօծ կաղամախները և նոձնները ցոլանում էին ջրերի մէջ։ Հեռաւոր ափունքը ծածկող մանուշակ մշուշը բարձրանում էր զէպի նրանց կատարները։ Մի թեթեւ զեփիւո սկսեց յուզել վճիռ մակերեւոյթը։ Հոկտեմբերի գիշերները վնասակար են, օգի յանկարծակի ցրտացման պատճառով։ Լիւսիէնը տեսաւ որ արեգակը արդէն ուարին մօտ է. նա անհանգստացաւ նրա համար։

— Զովութիւնը գալիս է, ասաց նա, պէտք է շտապել
տեղ հասնել:

Եւ նա թիտվարեց աշխոյժով դէպի Մէնթօն:
Երբ արեւը սկսեց մայր մտնել, Աննին ցուրտ զզաց և
գողգողաց. Լիւսիէնը այժմ մտածում էր միայն պահպանելնրան
մրսելուց:

— Եսեցք, ասաց նա, կանգնելով նաւակի մէջ: Ցոյց տուէք
որ ներել էր ինձ: Ես չը պէտք է ձեղ այդքան երկար պահէի
լծի վրայ: Ես թիտվարելով տաք եմ զզում. կը հանեմ վե-
րաբերես և զուք կը ձեր ուսերի վրայ: Կամենում էք:

— Բայց այն ժամանակ զուք կը մրսէք:
— Աչ, հաւատացնում եմ ձեզ: Ես արագ արագ կը թիտ-
վարեմ:

— Այն ժամանակ, տուէք ինձ վերաբերեն:
Նա ծիծաղելով ձգեց երիտասարդի վերաբերեն իր վտիտ
ու աերի վրայ:

— Ես պէտք է շատ ծիծաղելի թուամ այսպէս հագնուած,
չորհակալ եմ:

Մի նոր քաղցրութիւն համակեց Լիւսիէնի սիրութ: Նա
չը գիտէր արգեօք սէրն է առաջ իրան այդ քաղցրութիւնը:
Եւ անշուշա զա սէրն էր, իթէ անուանենք սէր այն աստուա-
ծային աղբիւրը, որից բզիսում են գոհաքերութեան և տնձ-
նուկրութեան մեր լանկութիւնները: Նա մտածում էր. «Ինչ
հորի կար վիրաւորել նրան մի անօգուտ խոստովանութնամբ և
ինչու պէտք էր կորցնել մի անշահասէր առիթ» նուիրել նրան
անձս լունեայն: Միթէ մեր ամենասիրելի զզացումները աւելի
ուժեղ չեն լինում, երբ մնում են մեր մէջ անյայտ»:

Աննին ընդհատեց իրանց երկարատեւ լուռթիւնը.

— Գիտէք ինչ են խօսում զիւզացիները ձեր մասին. «Նա
գոռոզ է, բայց նա քաջ է»: Թարգմանեցէք. «Նա մեղ համար
շատ ընտրեալ է, բայց պարկիշտ մարդ է, որին կարելի է վըս-
տահել»:

Լիւսիէնը պատասխանեց ժպտալով.

— Այդքան բան այդքան քիչ խօսքերով:

Գոհ որ իրանց խօսակցութեան առարկան փոխուեց, Ան-
նին յարեց.

— Պէտք է հօրս տեղը բանէք Աննէսիում: Չեր պարտակա-
նութիւնն է:

Լիւսիէնը կատակի ենթարկեց նրա քաղաքական ճաշակը.

— Օ, ասաց Աննին: Ես ամենեւին չեմ զբաղւում քաղա-
քականութեամբ: Ամուսինս տառւմ է որ զա փոքր աղջկերանց

խաղը չէ. ևս կարող եմ միայն սիրոյ քաղաքականութեամբ պարագուել. դա, կարծեմ, շատ էլ գործածական չէ:

Նա աչքերը մեծ մեծ բացաւ մարդասանները տեսնելով, կարծես կամենալով նրանց հոգին իրան քաշել:

—Այս երկիրը այնքան գեղեցիկ է, ասաց նա, որ շատ վատ կը լինի թողնել նրան, պարոն Լիւսիէն։ Դուք կարող եք այստեղ այնքան ծառայութիւններ մատուցանել, այնքան բարիք կատարել։ Պարիզում մարդ կորածի պէս է և անօգուտ։

Նրանք մօտենում էին Մէնթօնի նաւահանդսաին։ Փոքը ալիքները ծփում էին ափունքը, արեւը անհետացել էր սարի ետեւը, որ զեռ ոսկու պէս փայլում էր։ Մշուշը և խոնաւութիւնը գալիս էին ամեն կողմից, լճից և ափերից։

—Չեր հայրը այնտեղ է, ասաց Լիւսիէնը. ժամանակ է վերագանալ։

Եւ երբ նրանք ափից հասան, Աննին վերադարձեց Լիւսիէնին վերաբերն և բռնեց հօրը ձեռքը, որ սա պարզեց նրան՝ նաւակից ցատկելու համար։ Նա լաւ նկատեց որ հայրը տխուր էր։ Սա մեղմութեամբ յանդիմաննց աղջկան։

—Խոհեմութիւն չէ այդքան ուշ դուրսը մնար, Աշուան օրերը կարձ են։ Դու տրդէն հիւսմդ ևս և քեզ ննթարկում ես մրսելու վտանգին։

Մի և նոյն ժամանակ նա իմասմքով փաթաթում էր նրան իր հետը բերած շալերով։

—Ճիշտ է, հայրիկ, մենք չը նկատեցիք խոնաւութեան դալը, բայց պ. Հալանդը ինձ փախ տուեց իր վերաբերն։

Լիւսիէնը հասկացու որ պ. Մէրանը ամեննելին գոհ չէր նրանց երկուսի առանձին հանգիստումից։ Երբ նա թողեց նրանց Մէնթօնի ճանապարհի վրայ, նա ողջուննց ափկին Ալվարին մեծ յարգանքով։ Միայնակ մնալով՝ նա մտածեց։

—Երբ Աննին ներկայ է, ինձ թւում է որ ամեն բան կեանքի մէջ պարզ և պայծառ է և միայն բարի գործեր կարելի է կատարել։ Սրդեօք երբէք նորից կը զսնեմ նրա մօտ անցկացը բած այդ սուրբ ժամերի յուղմանքները։

Եւ սակայն նա բնաւ չէր կարծել որ Աննին միւս անդամ միայն մնուած կը տնամի...։

Կաղամախների ճանապարհի վրայ պ. Մէրանը ասում էր իր աղջկան։

—Փոքրիկ Աննի, պէսք է քեզ հետ խօսեմ։ Մի քիչ առաջ ժամանին տուն նկաւ բոլորվին տակն ու վրայ եղած։ Ես նրան հարցրեցի քո մասին, տեսնելով որ հետը չես եկել, նա ինձ ասաց. «Ամեն մարդ զբաղուած է նրանով և ոչ ոք ինձ վրայ ու-

շադրութիւն չէ դարձնում: Եւ նա սկսեց լալ հեծկլտանքով, նա ջղային է դարձել մի քանի ժամանակից ի վեր: Նա մի ցաւ ունի: Դժուար չէ գուշակել նրա զաղտնիքը: Ես չաս փափառում եմ որ նա երջանիկ լինի, որ գուք երկուսդ էլ երջանիկ լինէք: Պէտք է խոհեմ լինել, սիրելիս ես վախ չունեմքո մասին. ես կատարեալ վստահութիւն ունեմքո վրայ, բայց քո քրոջ պատճառով, խուսափիր պ. Հալանդի հետ առանձին մնալուց:

Աննին բարձրացրեց իր երկնային աչքերը հօր վրայ:

—Ո՞հ, հայրիկ, ես կարծում եմ, որ ինձ չէք կասկածի: Ես շատ լաւ գիտեմ մեր խեղճ ժամանիկ զաղտնիքը: Հէնց իսկոյն այդ զաղտնիքն էր որ ես յայտնեցի նրան լճի վրայ: Թողէք ժամանակը դայ. նրանք կը սիրեն միմիանց, ես ապահով եմ: Մի օր նրանք կը մօւնեան իրար Բայց գուցէ ես այլ ես կենդանի: Հե լինեմ: Վստահութիւն ունեցէք իմ վրայ, հայրիկ, և հանգստացրէք ժամանիին: Ես նրանցից չեմ որոնց կարելի լինի նախանձել և ես երբէք չեմ մոռանում նրա երջանկութիւնը:

Պ. Մէրանը լուսմ էր: Նա երկիւղ էր կրում որ եթէ խօսելու լինի, իր ձայնը կը գողղողայ, նա հանդիսատես էր իր գստեր զանդազ մահուան և նա զիտէր, որ ոչ մի բուն չէ կարող փրկել նրան: Նա բոնեց նրա փոքր ձեռքը իր ձեռների մէջ և պահեց: Աննիի ձեռքը սառած էր և ջահիլ կինը գողում էր:

—Ինչպէս, մրսում ես զու, ասաց նա:

—Այո, կարծում եմ, որ գիշերուայ խոնաւութիւնը մի քիչ յոգնեցրեց ինձ:

Մտնելով տուն, նա ստիպուեց սպառկել անկողնում: Ժաննին, տեսնելով նրա զալը, վազել թաքնուել էր իր սենեակում, բայց երբ իմացաւ որ նա հիւանդ է, եկաւ քրոջ մօտ: Աննին, սաստիկ յոգնած, փակել էր աչքերը. նա քնեց առանց տեսնելու քրոջը, որ հսկում էր նրա վրայ,

Թարգմ. Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

(Կը շարունակուի)

* * *

Ես որ մեռնիմ, ինձի թաղէք
Ալագեազի լանջերում,
Որ Մանտաշից հօվերը գան
Վերաս հեւմն ու երթմն...
Գերեզմանիս չորս դին փռուին
Վայրի դաշտեր ծփծփան.
Եւ ուռիներն՝ մաղերն արձակ՝
Վերաս լնկնին, անճւշ լան:
—Ա՛խ, թէ տանջուած սրտիս խորքից
Մի ալշվարդ էլ դուրս ելնէր.
Ու ընկերս հեռու տեղից
Գար, գերեզմանս այցելէր.
—Ա՛խ, թէ նրա խոր աչերից
Մի ցօղ վարդիս մէջ կաթէր.
Այս սուրբ ցօղը սիրտս կ'երթար,—
Վէրքս, վէրքս կը բուժէր...

*

Թէ իմ բախտը աստղիկ լինէր
Աստղերի մէջ խոր երկնի.—
Կը թռնէի ամուերից վեր,
Որ նրան տէր դառնայի:
Ու երնէկ չէր, որ իմ բախտը
Մարջան լինէր ծովերի.
Կը սուզուէի էն մուժ խորքը,
Որ նրան տէր դառնայի...

Բայց իմ բախտը դուն ես, սիրունս,
Քու ժէռ սիրաը անզգայ,
Որ օձ ունի իր ծերպերում,
Դալար կեանքիս թոյն կուտայ...

*

Պաղպանդ փչեց աշնան քամին,
Ուռի, լորի դող առան.
Տերեւները՝ չոր ու դեղին,
Տըսուր խըշշան, վար ընկան:
Մենակ սհակն ծառի ճիւղքին
Լուռ ծուարաւ՝ ու հագած.
Ա՛խ, մէկ էլ ես ձեռքս ծոցիս,
Աչքս ձեր դըռան մընաց...

*

Այս ուռու տակ մենք երգեցինք՝
Սիրոյ չքնաղ երգերից.
Մէնք երգեցինք ու շընչեցինք
Բուրմունք, ժըպիտ ու թախիծ:
Այս ուռու տակ, ընկեր անդին,
Դուն ինձ սիրել խոստացար...
Անցան տարիք—չորցաւ ուռին,
Ու դուն էլ ինձ մոռացար...

*

Երաղիս տեսայ, որ ծովի ավին
Ես ընկած էի խոր վէրքը սրտիս.
Եւ ալիքները մեղմ երգում էին՝
Անուշ օրօրով ինձ անդորր տալիս:
Երաղիս տեսայ, որ ընկնիներս
Ուրախ ու ժպտուն անցան ծովափով...
Բայց ախ... ոչ մէկը ինձ ձայն չը տուեց,
Իսկ ես լուռ էի մահուան խոր վշտով...

*

Ա՛խ, անհուն սէր ես ունէի սրտիս մէջ.
Եւ վառ հաւատ ու բիւր յոյսեր ունէի.

Բարձրաթռիչ, ինչպէս արծիւ վեհափառ,
Կը սուրայի վէս թևերովս երկնի մէջ:

Եւ ունէի չքնաղ ցննրք հոգուս մէջ.
Կը սիգայի մարդկանցից վեր, երկրից վեր.
Սաւառնաթեւ, ինչպէս արծիւ սեւաթոյր,
Շքեղ ցննրք ես ունէի հոգուս մէջ:

Բայց ցննրքս մնաց մենակ կեանքիս մէջ,—
Քանզի մարդիկ, որ դժմիտ են ու դաժան.
Խորտակեցին, յօշոտեցին իմ սիրտը.
Եւ ցնորքը սնուկ թողին ինձ կեանքի մէջ...

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԶՀՈՒԴ-ՓՈՒՇԱՆ

(Հրեաապահութիւն)

Վ. Ե. Պ.

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

XL

Զը նայելով որ բամազան ամիսն էր և իսկական, բարեպաշտ միւսլիմները պարտաւոր են այդ նուիրական ամսում կատարեալ ողջախոհութիւն պահել, այնուամենայնիւ բաղնիքների բուրզուն¹⁾ իր սովորական ժամանակին սկսեց վշել գրեթէ բոլոր թաղերում մեր նկարագրած գէպերի գիշերը, արշալոյսից առաջ Բուրզուն հրաւել և ազգարարութիւն է հաւատացեալներին, ով գիշերը անցրել է սիրոյ ծոցում և հերկել է կենդանի արտը, բարի և առատ պտուղ հասցնելու համար ի փառս Ալլահի և Մեծ Մարգարէի²⁾, նապարտաւոր է մաքրուել, որբուել առաւօտեան նամազը կատարելուց առաջ:

Արշալոյսը գեռ նոր էր սկսել ծագել, առաւօտեան էզանը, որից սկսում էր ծոմապահութիւնը, գեռ մի-

*) Տե՛ս «Մուրճ» № 6.

1) Մի երկար շեփոր, որ վշում են բաղնիքների տանիքից և որից ժողովորդը իմանում է թէ բաղնիքը պատրաստ է արգէն, տաքացրած է:
2) Դուրսնում ասուած է. սկինը արտ է, որ պէտք է հերկել, սերմանել: Շարիաթը պարտաւորեցնում է մուսուլմանին ամեն անդամ կնոջ հետ լարարերութիւն ունենալիս բաղնիք զնալ և լուսցուել, մաքրուել: Բամազան ամսում կնոջ մօտենալը թէ և արգելուած չէ, բայց առաքինութիւն է չը մօտենալը:

Նարէթներից չէր հնչուել։ Շահի պալատի կողմից, հարէմիսանայի ետևի փոքրիկ բաղնիքի տանիքից հընչեց բուրդուն. այդ նշան էր, որ Աշխարհի Բեեռը բաղնիք պէտք է գնայ։ Հարէմիսանայի փոքր դուռը բացուեց և մի կարճահասակ ներքինի դուրս եկաւ ձեռքին բռնած մի մետաքսէ բօխչա, մի արծաթեայ սաթիլ¹⁾ և մի ոսկէ ջամ²⁾. մի այլ մանչ—ներքինի ետեւից տանում էր գուլաբգանը³⁾ և խինայի ամանը։ Շահը սովորութիւն ունէր բաղնիքում խինայ գնել մօրուքին և խինայել սաքի ու ձեռների եզրուգները։ Ներքինիները ուղղուեցին դէպի բաղնիքը։

Երկու րոպէից յետոյ հարէմիսանայի դուռը նորից բացուեց և փոքրիկ բակը մուաւ ծերունի ներքինապետը, սպիտակ փոխանով, անգուլպայ և շապկի թերերը կոճկելով։ Նրա խորշումած, թառամած դէմքը խոր յուզմունք էր արտայատում։ Փոքր կլորիկ աչքերը, փայլելով ֆոսֆորական կրակով, կատաղի զայրոյթ էին ցոյց տալիս։ Նա ինքն իրան խօսում էր, ձեռներով տարօրինակ շարժումներ անելով։ «Նահլաթ քեզ չար չէլթան⁴⁾, գլոխ ինչ բալա⁵⁾, ինչ կրակ բերեցիր։ ով Ալահ, զու ինձ ողորմիր, ի սէր քո առաքեալի»։ Նա շատպով մօտեցաւ բակի երկրորդ դռան, որ բացւում էր բիրունիի փոքր պարտիզի վրայ և տնտղեց արգեօք նիգերը լաւ արմացրած են։ Ալա վերադառնալով դէպի հարէմիսանէն տանով դուռը, նա բացեց և ձեռներով նշաններ արեց։ Երկու խափշիկ ներքինիներ դուրս եկան հարէմիսանայից, բռնած մի մեծ բրդէ չուալի ծայրերից։ այդ չուալը, որ դրին բակի մէջ տեղ, տռղած էր և նրա ծակերից արիւն էր հօսում։ Երբեմն շան խուլ ոռնոց և կատուի մէաւիւն էր լսւում։ Դնելով չուալը ներքինապետի առաջ, բակի մէջ տեղ, խափշիկները հեռացան և մտնելով հարէմիսանէն մի երկու րոպէից յետոյ դուրս բերին մի երկ-

1) Զրուման. 2) Ակաւառակ. 3) Վարդեջրի սրուակ. 4) Անիծեալ լինիո, չար սառանալ. 5) Պատուչաս।

կրորդ չուալ, որի ծակերից նոյնպէս կաթում էր արիւն.
այս չուալը ևս դրին առաջինի կողքին, որ շարժում
էր և որից լսում էր շան կաղկանձիւն ու կատուի
մլաւիւն։ Խափշիկները, վայր գնելով չուալները, կանդ-
նեցին, ձեռները դրին կրծքերի վրայ և խոր գլուխ
տալով ներքինապետին, լուռ մնացին, սպասելով նրա
հրամանին։ Նրանք այնպէս անշարժ, արձանացած կանդ-
նած էին, որ ոչ մի մկանունք չէր շարժում նրանց
երեսին և կիսամթութեան մէջ նրանց սև կերպարանք-
ները աւելի ահոելի էին դարձել։

Խոր երկնքի մէջ գեռ ֆայլում էին հեռաւոր
աստղերը. միակ վկաները այդ սոսկայի տեսորանի։

Այդ միջոցին հնչեց մինարեթից մուազզինի ձայնը.
Ներքինապետը, որ մտածմունքների մէջ խորասուզուած,
վերին աստիճանի շուարուած մարդու գէմք ունէր,
գլուխ գարծրեց գէպի խափշիկները և միմիկայով
ինչ որ մի բան պատուիրեց։ Անմիջապէս խափշիկնե-
րից մինը մտաւ հարէմխանէն և մի քանի րոպէից յե-
տոյ մի դէյլան ձեռքին վերադարձաւ։ Ծերունին շաա-
պով բոնեց դէյլանը, պազեց չուալների առաջ և սկը-
սեց ագահաբար զլլացնել դէյլանը, մինչեւ որ էզանը
չէր վերջացել։

Երկու խափշիկները լուռ, անտարբեր, կանդնած
էին, առանց որ նրանց գէմքի վրայ կարելի լինէր որևէ
յուզմունք, անձկութիւն կարդալ։

Կատուի աղիողորմ մլաւիւնը, շան խուզոտ կաղ-
կանձիւնը նորից լսուեց չուալից։

Յանկալիծ բիրունիի կողմից դուռը կոփեցին։

Ներքինապետը վեր կացաւ, սաստիկ զարմացած և
զայրացած. այդ որ մահկանացուն է յանդգնում վըր-
դովել այս ժամին հարէմխանայի խաղաղութիւնը։ Նա
մեկնեց դէյլանը խափշիկին և ասաց. «Հարցրու, տես
ով է»։ Բայց նկատելով խափշիկի երեսին ժպիտ, նա
ուշքի եկաւ և ասաց ինքն իրան։

—Ես մոռանում եմ, որ նրանք խուլ և համր են:
Եւ թփթխալով իր կարճ ոտներով, նա մօտեցաւ
դռան:

—Ով է համարձակում այս ժամին խփել դռւոր,
սպառնալից գոչեց նա:

—Այդ դռւք էք, Խօջաբաշի, լսելի եղաւ մի բա-
րակ, տկար ձայն:

—Սադրազմմը, Հաջի Միրզա-Աղասին, վախեցած
և ապշած ձայն տուեց ներքինապետը և, շտապով,
սկսեց քաշել դռան նիգերը:

—Այո, ես եմ, Խօջաբաշի. մեծ դժբախտութիւն
է պատահել, որտեղ է Շահը. հարկաւոր է խոկոյն տես-
նել նրան: Բայց ինչու ես այստեղ այս ժամին, ինչու է
դէմքդ այլայլուած.

—Ուրեմն երկրորդ դժբախտութիւն! Ալլահը ազա-
տէ մեզ երրորդից:

—Ի՞նչ, հարէմխանայում դժբախտութիւն է պա-
տահել. Երբ և ի՞նչպէս: Արդեօք Աշխարհիս Ազօթա-
րանի նուիրական ստամբուլ խանդարուել է:

Եւ յանկարծ նկատելով բակի մէջ տեղ ցրուած
երկու տռզած չուալները ու խափշիկների անտարբեր,
անկարեկից դէմքերը, ծերունի սադրազմը հասկա-
ցաւ թէ ինչ դժբախտութիւն է պատահել...

—Դարձեալ, հարցրեց նա միան. ով է այդ դըժ-
բախտը:

Ներքինապետը ձեռացի շարժում արեց և խափ-
շիկները մօտենալով բացեցին չուալների բերանները:

Քստմնելի տեսարանը, որ ներկայացաւ ծերունի
սադրազմի աչքերին, ցնցեց նրան, որ վազուց սովոր
էր այդ տեսակ տեսարանների: Զուալների առաջինից
դուրս թռան մի շուն և մի կատու. ամբողջովին արիւ-
նոտած, մաղերնին գղգղուած, չնչասպառ, խածոտուած:
Իսկ չուալի մէջ մի ջահիլ կին, մերկ, անկենդան. երե-
սի, կուրծքի, ստամբուլ, թեքերի վրայ ահոելի խացե-
րով, որ, անշուշտ, գործել էին շան և կատուի խա-

ծոտմունքը։ Սոսկալի էր թշուառ կնոջ արիւնաթաթախ գէմքը, նրա երկար վարսերը փաթաթուած պարանոցով և ներկուած արիւնով. կոկորդը կրծոտուած։ Աչքերը միայն մնացել էին անարատ, բայց ապակեացած և չուած զարհուրանքից։

Խափշիկները բակեցին երկրորդ չուալի կապը և սաղբաղամը, տեսնելով լճացած արեան մէջ մի մարմին և նրանից բաժանուած մի գլուխ, կարողացաւ միայն արտասանել.

— Դժբախտ Սէլիմ-խան, դժբախտ քո հայր, ահա որտեղ է հասցնում մարդուս ջահիլութիւնը։ Բայց ինչպէս պատահեց այդ։

— Ես ինքս գեռ լաւ չը դիտեմ, թէ այս անզգամը — և նա ոտքով հրեց կնոջ դիակը — ինչպէս յանդըգնել և կարողացել էր թագյնել Սէլիմ-խանին իր սենեակում, եօրդան-գեօշակի ծալքում։ Բանից դուրս է գալիս, որ երեք ամսից ի վեր այդ-յանցանքը գործում էին նրանք և սա նոյն իսկ յզիացել էր այդ լակոտից։ Քիչ էր մնում այդ լրբերի պատճառով ես ևս ենթարկուեմ Շահի արդար բարկութեան և դահճի ձեռքն ընկնեմ։ Թու ձեր երեսին, աւարտեց ներքինապետը մի պինդ թքելով երկու դիակների վրայ։

Գլխատուած տղամարդը մի երիտասարդ էր՝ հազիւ 20—22 տարեկան։

Այդ դիշեր հարէմխանայում կատարուել էր մինը այն արիւնուուշտ և ովքերգական տեսարաններից, որ սովորական երեւոյթ է կազմում այնեւելեան, մուսուլման բռնականների պալատական կեանքում։ Վեց ամիս առաջ կուսակալ խաներից մինը նուէր էր ուղարկել Շահին մի գեղեցիկ, 16 տարեկան աղջիկ։ Շահը միղա էր արել և նա մտել էր հարէմխանայի կանանց շարքը, այն գերուհիների շարքը, որոնց կեանքը անցնում է չորս պատերի մէջ, տաղակալի ձանձրութեան մէջ, որոնք ծաղկում են, իբրև ծաղիկներ, բայց ոչ ազատ օդում, կենսատու արեւի ազդեցութեան տակ, այլ ջերմանոցում, հեռու սկրելի-

ներից, հայրենի հողից, հայրենի օդից, ջրից: Նրանք սահմանուած են երբեմն երբեմն, երեք-չորս-վեց ամիսը մի անգամ գոհացնել Շահի վաւշոտ ցանկութիւնը: Ոչ թանկագին զարդերը, ոչ գոհարեղինները, ոչ պարերը, զուարձութիւնները, որ առատութեամբ վը ռայլում է նրանց հարէմիսանայում; չեն կարողանում մեռցնել նրանց մէջ այն բնական ցանկութիւնը, որ ունի ամեն մի դեռափիթիթ էակ—սիրել և սիրուել, գըգուել և գգուանք ստանալ, իր հոգին խառնել իր սիրեցեալի հոգու հետ: Եւ պատահում է այն՝ ինչ որ անխուսափելի է. չը նայելով բանտի ամուր պատերին, չը նայելով վայրագ և անսիրտ ներքինիների հսկողութեան, չը նայելով սոսկալի պատիմներին, որ սպասում է անհաւատարմութեան համար, ջահիլ և գեղեցիկ գերուհիները հնարք են գտնում հասնել իրանց մուրազին, սիրել ու սիրուել: Սէրը կոյր է, ասել է պարսիկ բանաստեղծը, նա սահման, խոշընդուած չը գիտէ. մահը քաղցր է նրա համար, եթէ սիրեցեալի համար է:

Ընկնելով Շահի հարէմիսանէն, դեռատի և գեղանի Այիշէն, այժմ Այիշանէ խանըմ, չէր կարող մոռանալ սիրուն Սէլիմին, որ իրանց գրացի էր, որի հետ երեխայութեան ժամանակ խաղացել էր և որը վառել էր նրա մէջ գեռ մի տարի առաջ սիրոյ կրակը, երբ մի օր, իրանց քաղաքում, պատահմամբ, ուրբանդի տակից, թօքիայում¹⁾ կարողացել էր տեսնել նրան:

Որքան գեղեցկացել էր Սէլիմը. Թաղի բոլոր աղջիկների երազն նրա հետ քեաբին կապելն էր: Բայց մի քանի ժամանակից յետոյ Սէլիմին հայրը տարաւ թէհարան և շուտով իմացուեց, որ նա դարձել է Շահի փիշիլըդմէթ՝ Սէլիմիսխան անունով: Սակայն Սէլիմի մայրը խօսը էր կապել Այիշայի մօր հետ, որ անպատճառ սիրուն Այիշային իր մինուճար տղի համար կ'ուզէ, իր տունը հարսն կը բերի. «այդպիսի նազելի աղջիկ, ասել էր նա. միայն իմ Սէլիմին է լայեղ»²⁾: Այդ պատճառով

¹⁾ Թատրոն, ուր կատարում են կրօնական միտուրիաներ: ²⁾ Արժանի:

Այլիշայի ծնողները մերժեցին իրանց թաղի շատ տղաւների առաջարկը և չը կամեցան նրան տալ նոյն իսկ իրանց անուանի խանի որդուն, սպասելով Սէլիմ խանի վերադարձին։ Եւ ահա մի օր խանը կանչեց Այլիշայի հօրը և յայտնեց, որ Ալլահը—թող յաւիտեան փառաւորութիւնի նրա անունը—իր ողորմած աշքը դարձրել է նրա տան վրայ և աշխարհի աղօթարանը, Մէհմադնահը, լսելով Այլիշայի աննման գեղեցկութիւնը, հաճել է նրան իրան սիզա ¹⁾ կին առնել, ուստի պէտք է հէնց այս գիշեր քաջավանները ²⁾ պատրաստուեն և հայրը տանի աղջկան Թէհրան հարէմիսանայի ներքինապետին յանձնելու։ Խեղճ հայրը ստիպուած էր, ի հարկէ, հազար ու մի տեսակ չնորհակալութիւններ անել խանին, մի այդպիսի մեծ պատուի համար, որին Շահը արժանացնում է նրան։ Նա լաւ հասկացաւ, որ այդ խանի սարքած բանն է, իբրև վրէժինգրութիւն։

Այդպէս Այլիշան ընկաւ Շահի հարէմիսանան, դարձաւ Շահի սիզա կամսանց չորս հարիւր քսաներբորդը և կոչուեց Այլիշա խանըմ, տիտղոսով՝ Շէմս-ուլ-Դօվլէ ³⁾, Ծերունի, հիւանդուտ Շահը նրան մի հրէշ երեաց և նո գիշեր ցերեկ ախ ու վախ էր քաշում իր հոգու հատորի, սիրելի Սէլիմ խանի ետևից։ Մայրը, որ եկել էր Թէհրան, միսիթարում էր նրան, յոյս տալով, որ մի քանի ժամանակից յետոյ, Այլիշան կարող է խնդրել Շահին, որ սա իր ձեռքով քեաբինի կնութեան տայ իրան Սէլիմ-խանին և փիշխըդ-մէթը, ի հարկէ, մեծ պատիւ կը համարէ իր համար ընդունել Շահից մի այդպիսի ընծայ, բայց խեղճ Այլիշա խանումի սիրաը անդադար հալ ու մաշ էր լինում; չը լինի Սէլիմ խանը Թէհրանի մեծամեծների մինի աղջկին ուզի և ինքն մնայ յուսահատ, մուրազին չը հասած։ Վերջապէս հարէմի փակ կեանը, տաղտկութիւնը, երիտասարդական վառ ցանկութիւնները իրանց դործը կատարեցին։

¹⁾ Օրինաւոր կամ քեարինաւոր կանանցից բացի, որոնց թիւը եօթնէ, մահմեդականը կարող է սիզա, կամ ժամանակաւոր կին ևս ուզել, որ քան կամինալ։ ²⁾ Պատղարակ։ ³⁾ Արկազակ տէրութեան, մականուն։

Այիշան դալալ¹⁾ կանանց միջնորդութեամբ կարողացաւ նամակ հասցնել Սէլիմ խանին և մի քանի հաւատարիմ, առատ վարձատրուած աղախինների չնորհիւ, վերջապէս Սէլիմ խանը մի երեկոյ, դալալ կնոջ ծըպտեալ կերպարանքով, իրան գտաւ Այիշա խանըմի ուենեակում, և այդ դիշեր սիրահարները հասան իրանց մուրագին: Ի հարկէ, անկարելի էր, որ ընդարձակ հարէմիսանայի մէջ մի քանի կանալք չխմանային Այիշախանըմի գաղտնիքը, բայց որովհետեւ այդպիսի գաղտնիք միայն սա չունէր, ուստի և չէր մերկացւում: Սէլիմը և Այիշան որոշեցին իրագործել իրանց ծրագիրը: Այիշան, երբ որ Շահը այցելէր իրան, պէտք է ընկնէր Շահի ոտները և խնդրէր որ իրան քեաբինը կապի Սէլիմ խանի հետ: Սիրով արբշու երէ ոասարդը հետզդհետէ աւելի յանդուգն դարձաւ և զգուշութիւնները բաց թողեց ձեռքից: Ներքինապետը խմացաւ և զարհուրած, գողալով իր կեանքի համար, պատմեց Շահին: Հիւանդու, տկար Շահը, որին արդէն մի անդամ Այիշան յայտնել էր իր ցանկութիւնը, չը կամեցաւ երիտասարդների արիւնը թափել տալ, տրամադիր էր նոյն իսկ արձակել նրա սիրայութիւնից և տալ Սէլիմ խանին, բայց ներքինապետը, տիկնանց տիկինների²⁾ հետ այնպիսի մռայլ, ուե գոյններով նկարագրեցին այդպիսի թուլութեան և ներողամտութեան աղետալի հետևանքները ամբողջ հարէմիսանայի համար, որ Շահը սախպուեց հրաման տալ, որ գործադրուի սովորական պատիժը—գլխատել տղամարդին, իսկ կնոջ ձգել չուալի մէջ, գնել նրա հետ շուն և կատու և չուալի բերանը փակելով, փայտով այնքան խփել, որ կենդանիները կատաղելով կրծեն խեզճ զոհին:

Եւ անողոքելի, անդութ, գաղանային օրէնքը գործադրուեց խեղճ երիտասարդ ամոլների վլայ, ճիշտ այն րոպէին, երբ նրանք սիրոյ գրկախառնութեան մէջ, հապար

¹⁾ Միջնորդ. դալալ կանալք աղատ մուտք ունեն հարէմիսանաներում, որ ծախում են զանազան կանացի իրեւ: ²⁾ Շահի կանանց մէջ մինը, տարիքով աւելի երեցը, աւագը, տիկնանց տիկին է համարւում:

ու մի աեսակ երջանիկ ծրագիրներ էին կազմում ապա-
գայի մասին։ Նոյն իսկ յդիութիւնը չաղատեց խեղճ
Այիշանին զարհուրելի ճակատագրից։

Այդ պատիժը պէտք է սարսափ տարածէր ամբողջ
հարէմիսանայի վրայ և նրա մէջ փակուած գեղեցիկ
դերուհիները պէտք է կենդանի օրինակով համոզուէին,
թէ ինչ է նշանակում մտածել ապօրէն սիրոյ մասին...
Նոյն իսկ զոհերի մասին խօսելը սաստիկ արգելուած
էր. ոչ չը պէտք է գիտենար ինչ են եղել նրանք,
որտեղ են թաղուել։ Նրանց գերեզմանը անգամ ան-
յատ պէտք է մնար։ Սովորաբար խեղճ զոհերը թաղ-
ւում են ընդարձակ պալատի խոռվ պարտիզներից մէկի
ծառերի տակ պեղուած փոսերի մէջ և գրա համար
գործադրուում են խոռվ ու համր ներքինի խափշիկներ,
որոնք նոյնպէս մի մի գերեզմաններ են ամեն մի գաղտ-
նիքի համար։

Ներքինապետը աչքով արեց և խափշիկները նորից
կապեցին չուալների բերանը. շունը ու կատուն դեռ
աղիոզորմ ձայներ էին հանում։

—Բայց ինչ գժբախտութիւն է ձեզ պատահած.
աղա սադրազամ։

—Ել մի հարցնի. Բէհման Միլզան փախել բէստ է
մտել ոռուսաց դեսպանատանը։

—Վայ, վայ, վայ, բացագանչեց ներքինապետը.
ուրեմն այդ անիծեալ ոռուսները պաշտպանում են նրան.
ուրեմն նրանք չար դիտաւորութիւն ունեն. ախր, ես
քեզ ասուցի, աղա սադրազամ, որ աղեղը շատ մի լա-
րիք. նետը դուրս կը պրծնի և կը վիրաւորի քեզ. դու-
ինձ չը լսեցիր. հիմա ինչ ես անելու։

—Ամենից առաջ պէտք է իմաց տալ Շահին։

—Մաքովդ անգամ մի անցրու, այժմ նա սաստիկ
գրգռուած է և վատ տրամադրութեան մէջ այս անի-
ծեանիերի պատճառով—և ներքինապետը նորից թքեց
չուալների վրայ—այսօր չը պէտք է նրան ոչինչ յայտնել։
Լաւ. կը լինի որ այստեղից ևս հեռանաք, որ ձեզ

Շահը չը տեսնի, որովհետև նա շուտով կը գայ բաղնիք գնալու ես ևս ազատուելով գործերից, բաղնիքից յետոյ, երբ Շահը քնանայ, կը գամ՝ խորհրդակցենք միասին թէ ինչ անենք։ Այժմ պէտք է այս լէշերը¹⁾ պարագակեմ։

—Շատ լաւ, ես կը գնամ կը սպասեմ ձեղ սաղարաթի²⁾ խորհրդարանում։ Իսկ այս խեղճերի գիակները ինչ պէտք է անէք։

—Այժմ արդէն ուշ է, արեգակը շուտով դուրս կը գայ. կ'ուղարկեմ սառցատանը պահեն մինչեւ այս գիշեր։

Եւ ներքինապետը ձեռքի շարժումներ արեց խափշիկներին, որոնք հասկացան նրա նշաններն ու չուալները մէկ մէկ բռնելով տարան ձգեցին սառցատան խորքը։ Գիշերը, յարմար ժամանակ, խեղճ Սէլիմ խանի և Ալիշա խանըմի մարմինները յաւիտեան հանգիստ պէտք է գտնէին գարաւոր ծառերի շուաքի տակ և ոչ ոք չը պէտք է կարողանար իմանալ թէ ինչ եղան նրանք։ Լուռ կը մնան ծառերը, լուռ կը մնան համր ու խուլ խափշիկները...»

Ծերունի սաղրազամը, ի մեծ զարմանս արդէն քնելու պատրաստուող սպասաւորների, մտաւ նախարարապետութեան առանձնասենեակը և պատուիրեց առաջնորդել ներքինապետին, հէնց որ սա կը գայ, ու ոչ ոքի ներս չը թողնել։ Արեն արդէն սկսել էր ծագել. պալատում ամեն տեղ խոր լուռթիւն էր թագաւորում. ամեն տեղ քուն էին մտել բամազանի պատճառով։

Մի ժամից յետոյ առանձնասենեակի վարագոյրը բարձրացաւ և ներս մտաւ ներքինապետը, որի խաշած խնձորի նման խորշոմած, կնճոստած դէմքը աւելի ևս զզուելի էր թւում ցերեկի լոյսով։ Սաղրազամը ոտքի

¹⁾ Դիակ։ ²⁾ Նախարարապետութիւն։

կանգնեց և իրանից բարձր նստացլեց։ Նստելով, ըստ
ընդունուած սովորութեան երկումն նորից ոտքի կանգ-
նեցին և նորից նստեցին։

—Փառք Ալլահին, Շահը բաղնիքից փոքր ինչ
զուարժ գուրս եկաւ. նա գնաց քնելու և ասաց, որ
այսօր միայն իֆթալին գուրս կը գայ բիրունին։ Մենք
բաւական ժամանակ ունենք, Հաջի, պատրաստուելու
և մեր կարգադրութիւններն անելու։

Եւ նա իր փոքրիկ սուր աչքերով նայեց սադրա-
զամին ու աւելացրեց։

—Բայց դուք մոռացաք ինձ ասել, ձեր մարդիկը
կարողացել են ձեռք գնել շահզադէի գոհարեղէնի վը-
րայ։

—Ոհ, հառաչեց սադրազամը, անիծեալը իր գո-
հարեղէնն ևս հետը թոցրել է։

Զայլոյթի, կատաղութեան կայծակներ ցայտեցին
ներքինապետի փոքրիկ կլորակ աչքերից։

—Ուրեմն մեր ձեռքը դատարկ մնաց. բայց ոսկի-
ները, փողերը հօ հետը տանել չեր կարող։

—Փողերը, ի հարկէ, հետը տանել չեր կարող.
երեկի մի որեւէ սարբաֆի¹⁾ մօտ են կամ մի վաճառա-
կանի մօտ պահ տրուած, բայց այժմ, քանի որ նա իր
մէջը խփել է ոուսներին, ոչինչ անել չենք կարող.
Նրա գոյքն ևս ոուսների պաշտպանութեան տակ է։

—Այդ ճիշտ է, բայց պէտք է անմիջապէս բան-
տարկել նրա հաշուապահին և գանձապահին. եթէ չը
կամենան ցոյց տալ որտեղ է պահուած շահզադէի հա-
րստութիւնը, և լուռ մնան՝ տանջանքներով կարելի
է բանալ նրանց լեզուն. Ախ, հաջի, հաջի, ինչքան
վատ տարիք գործը, ոչ Շահի լիբը մի բան ընկաւ, ոչ
մերը։

Եւ ներքինապետը չափեց սադրազամին մի ակնար-
կով, որի մէջ պարզ արհամարհանք էր կարդացւում
դէպի իրանի առաջին պաշտօնեան։

1) Սեղանաւոր։

Երկու ծերունիները մի քանի րոպէ լուռ մնացին։ Ակսեցին համրիչների հատիկները չխչխկացնել, աղօթք-ներ շշնչալ, երբեմն երբեմն աչքի տակից միմեանց վը-րայ անվատահ ակնարկներ ձգելով։

Այդ երկու զառամեալ ծերունիների ձեռքի մէջ էր կենդրոնացած իսկապէս ամբողջ կայսրութեան—իրան-թուրանի կառավարութիւնը, միլիոնաւոր ժողովուրդ-ների բախտն ու ճակատագիրը։ Նահը, թոյլ, հիւան-դու, խաղալիք էր գրանց ձեռքում և ամեն բան վը-ճըռուում էր, իրագործուում էր այդ երկուսի կամքի և հրամանի համաձան։ Նրանց միացնում էր այն հան-դամանքը, որ երկուսն ևս համահաւասար ազգեցու-թիւն ունէին Շահի վրայ։ Խօջաբաշու կամ զզլար-աղասու պաշտօնը սադրազա-ի պաշտօնի չափ կարեսոր է, երբ Շահը զուրկ է ինքնուրոյնութիւնից և անձնա-տուր է հարէմական զուարծութիւններին։ Շատ կարելի է որ ներքինապետը չը յօժարէր իր պաշտօնը փոխել սադրազամութեան հետ, եթէ առաջարկէին նրան, բայց սադրազամը, յամենայն գէպս, շարունակ վախ ու եր-կիւզի մէջ էր, որ ներքինապետը կարող է իր տեղն բռնել, մինչ ինքն նրա տեղն բռնելու կարող չէ։ Սադ-րազամի մէջ գեռ անհետացած չէին մարդկային զգա-ցումները, մանաւանդ որ նա ընտանիքի հայր էր. շատ անդամ ագահութիւնն և ընչարազցութիւնն չէին նրա մէջ միակ շարժառիթները անգութ և անարդար գոր-ծողութիւնների, այլ մոլեռանգութիւնը, վրէժինդրու-թիւնը, ինչպէս Բէհման-Միրզայի գէպըում և տգիտու-թիւնը. երբեմն երբեմն նա ցոյց էր տալիս և արդա-րադատութեան, կարեկցութեան զարմանալի գործողու-թիւններ, որով և ընդհանուր առմամբ, ժողովրդական համրաւ ունէր։ Նա ունէր և մի անգնահատելի առա-ըբինութիւն. անկեղծ կերպով սիրում էր Մահմէդ Շա-հին և հաւատարիմ էր նրան, ինչպէս շունը իր տիրոջ-Բայց այդպէս չէր ներքինապետը. նրա հոգին, սիրու, միտքը բոլոր զգացումները զեկավարողը՝ մի-

շարժառիթ էր—ոսկին։ Նա սարսափելի ժլատ էր և ագահ, մարդկային ամեն զգացումն, ամեն կարեկցութիւն մեռած էր նրա մէջ այն օրից, երբ մարդիկ այնքան անգութ և անկարեկից էին գտնուել դէպի նա, զրկել էին նրան սիրելու և սիրուելու զգացումից, ընտանիքի, զաւակների տէր լինելու իրաւունքից։ Ում համար էր դիզում նա գեղին սսկիները—նա այդ հարցն չէր տալիս իրան, բայց անդադար դիզում էր։ Նա նոյնչափ հեշտութեամբ հրաման տուեց գահճին՝ գըլխատել պատանի Սէլիմին, որքան հեշտութեամբ և զուարճանքով ծխում էր զէյլանը։ Ներկայ դէպքում նրա զայրոյթը գրգռողն, նրան վշտացնողն ոչ թէ այն հետեւանքներն էին, որ կարող էին առաջ գալ նահի և երկրի համար Բէհման-Միրզայի փախատից, որքան նրա հռչակաւոր դոհարեղէնին տիրանալու անկարողութիւնը։ Եւ ոչ միայն չորս հարիւր և աւելի գեռափթիթ, նազելի էակների կեանքը, ճակատագիրը այդ անբնականացած ծերունուց էր կախուած, այլ և շատ անգամ ամբողջ նահանգների բախտը նա էր տնօրինում, ստանալով նահից ուզգակի կամ սիրեցեալ կանանց միջնորդութեամբ այս և այն նահանգի կուսակալութեան պաշտօնը նրա համար, ով ամենից շատ գեղին ոսկիներ էր ներկայացնում իրան։

—Մեր դրութիւնը շատ ծանր է, խզելով լուսութիւնը ասաց ներքինապետը։ Ես վախում եմ, որ այդ քեափիր¹⁾ ռուսները մեր դլիմին մի օյին չը խաղան։ Բայցի դրանից, քաղաքում ևս կարող են խռովութիւններ ծագել։ Նահանգներում, մանաւանդ Սպահանում և Թաւրիզում կարող են դլուխ բարձրացնել։ Ժողովուրդը սիրում է Բէհման-Միրզային։ Պէտք է ազգու և խիստ միջոցներ ձեռք առնել, սարսափեցնել ամենքին։ Ամենից առաջ պէտք նահը պահանջէ ռուսաց գեսպանից որ Բէհման-Միրզային յանձնեն իրան և

¹⁾ Անհաւասու։

երբ յանձնեցին, պէտք է իսկոյն խեղդել տալ նրան։
—Իսկ եթէ ոռւսները չը յանձնեցին, ինչ անենք։

—Ինչպէս կը համարձակեն քեաֆիրները ընդդիմանալ աշխարհի աղօթարանի հրամանին. մենք այն ժամանակ պատերազմ կը հրատարակենք. մեղ ինդլիդները կ'օգնեն։

—Ախ, Խօջաբաշի, ես զարմանում եմ որ դու քո այնքան փորձառութեամք և խելքով այդպիսի բաներ ես առում. բաս ինչու ինդլիդը չօգնեց մեղ Ղարաբաղի, Երևանի, Նախիջևանի խանութիւնները յետ տռնելու։ Ինդլիդն էլ հօ իր վարձքի համար մեղ չի օգնի, նա էլ կը ալահանջի որ մի բան տանք։ Վերջապէս, ինչի պէտք է Բէհման-Միրզայի համար մեր Շահի թագը և գահը վտանգի ենթարկենք։ Ես ուրիշ խորհուրդ ունեմ։

—Ասա տեսնեմ ինչ է։

—Ոռւսները չեն կարող Բէհման-Միրզային մեղ յանձնել. առաջին նրանք դրանով խախտած կը լինեն քէստի նուիրական օրէնքը և իրանց համարումը կը ձգեն բոլոր ազգերի աշքում. միւս կողմից նրանք չեն կամենայ Բէհման-Միրզայի պատճառով լարել մեղ հետ իրանց յարաբերութիւնները և թշնամացնել Շահին. Ես կը սպառնամ որ կը դիմենք ինդլիդների օգնութեան, իսկ այդ ամենելին ձեռնոտու չէ նրանց, որ մենք բարեկամանանք ինդլիդի հետ։

Ես խորհուրդ կը տամ նրանց որ Բէհման-Միրզային ուղարկեն Ոռւսաստան և այնտեղ պահեն միշտ, թոյլ չը տալով Երբէք Պարսկաստան վերագառնալ։ Դրանով թէ նրանք ապաստարանի օրէնքը յարգած կը լինեն, թէ մեղ գոհացրած։ Շահն էլ կ'աղատուի իր փառասէր եղբօրից և վախից՝ թագը կորցնելու։ Ժողովուրդն էլ տեսնելով որ մուսուլմանը գնաց քեաֆիրի պաշտպանութեան տակ մտաւ, սիրելու փոխարէն կ'անիծ նրան։

—Լաւ միտք է, բայց կը կատարեն ոռւսները։

—կը կատարեն. ես դեռ չեմ ստորագրել կասպից ծովի մասին մեր արած զիջողութեան թուղթը. դրանով և անգլիացիների երկիւղով կը ստիպեմ նրանց իրագործել այդ միտքը: Շահն էլ վախենալու ոչինչ չի ունենայ և կը հանգստանայ:

—Բայց դարձեալ դու բեաֆիր ինգլիզներին ձեռքից մի թող. խօսիր նրանց գեսպանի հետ:

—Միամիտ մնա, նրանք հենց իրանք կը գան այսօր ինձ մօտ և կ'առաջարկեն իրանց բարեկամութիւնը ու աջակցութիւնը:

Եւ խփելով ներքինապետի ուսին, սադրազամն ասաց.

—Յիշում ես, ես մի քանի անգամ Շահի ներկայութեամբ յայտնել եմ, այժմ ևս կրկնում եմ, իբրև կտակ, որ իրանը ոչ ինգլիզի, ոչ ուստի հետ ճակատ ճակատի դնել չէ կարող, բայց նա կարող է երկար հաստատ մնալ, օգուտ քաղելով այդ երկու քեաֆիրների մրցութիւնից, թշնամութիւնից: Մենք պէտք է միշտ երկուսին էլ մեր ձեռքումն պահենք, առանձին առանձին բարեկամ ցոյց տանք մեզ և ինգլիզով ուուսին վախեցնենք, ուուսով՝ ինգլիզին:

—Ինձ համար երկուսն էլ բեաֆիր են, երկուսն էլ անիծեալ լինեն, գժոխիքի փայ դառնան, պատասխանեց ներքինապետը, և յարեց. «Երբ Մէհտին կ'երեայ, դրանք ամենքն էլ շանսատակ կը լինեն. բայց ափոսս, որ մենք չենք տեսնիք. մեծ է Ալլահի զօրութիւնը»:

—Այս, մեծ է Ալլահի զօրութիւնը, բայց Ալլահն ևս կարծես մեզ թողել է քեաֆիրների ձեռքում: Ո՞ւր է իրանի նախկին զօրութիւնը: Այսօր, քեաֆիր ուուսից, ինգլիզից ենք վախենում:

—Լաւ, թողնենք այդ. ինչ որ մեր նեասիբն¹⁾ է, այն կը լինի: Երբ է լինելու ջհուդ-քուշան:

—Ի՞նչ, ջհուդ-քուշան. ամենեին, մանաւանդ այժըմ, երբ մենք չը պէտք է գրգռենք ուուսաց և ինգլիզի գեսպանների բարեկութիւնը. նրանք չէ որ յայտ-

¹⁾ Ճակատագիր:

նեցին անցեալ տարի, որ պէտք է այլ ևս ջհուդ-քուշան չը լինի. այդ խնդրում՝ նրանք միացած են: Եւ վերջապէս, ինչի պէտք է ջհուդ-քուշան լինի քանի որ ջհուդ աղջկայ խնդիրը կարգադրուելու վրայ է:

— Ինչպէս:

— Զը գիտես. ես կարողացայ համոզել ջհուդներին, որ մի աղջկայ համար ամբողջ իրանց ժողովուրդը վտանգի չենթարկեն և աղջկայ գործի քննութիւնը յանձնեն իմամ-Ջումին. ինչ որ նա վճռի, այնպէս էլ լինի: Այժմ աղջիկն իմամ-Ջումի տանն է:

— Բայց այդ բոլորովին առանձին գործ է, ասաց ներքինապետը. ես խօսում եմ սովորական ջհուդ-քուշանի մասին. մեր ժողովուրդի նախնաւանդ սովորութիւնն է տարին մի անգամ ջհուդ-քուշան սարքել, այդ անիծեալ ցեղի բազմանալը արգելելու համար, նրանից մի քիչ արիւն բաց թողնելու և նրանց կուտակած հարստութիւնը մի քիչ նուազեցնելու համար: Ինչ գործ ունեն ռուսի և ինդլիդի գեսպանները որ խառնը լուսում են. մենք գիտենք մեր հպատակները: Վերջապէս, ես ամեն տարի բաւական մեծ բաժին էի ստանում կողոպուտից. ինչի պէտք է զրկուեմ:

— Ես կ'ասեմ ջհուդներին քեզ հասնելիքը բերեն տան, միայն, ի սէր Ալլահի, այդ խորհուրդը թող: Ես այսօր իսկ կը տեսնեմ իմամ-Ջումին և կը համոզեմ: որ հրապարակական աղօթքի ժամանակ մեծ մզկիթում յորդորէ ժողովրդին հանդարտ կենալ ե բացատրէ ջհուդ-քուշանի վտանգը: Դալով միւս խռովութիւններին, ես ևս համաձայն եմ, որ պէտք է, ժողովրդի վրայ սարսափ տարածելու համար, խիստ միջոցներ գործադրել: Սպահանից արդէն մի քանի օր է բերել են լութիներին և խռովարարներին. Նիրազից բերել են այն նոր քեաֆիրներին, որ իրանց բարի են կոչում: այստեղ բանտում ևս շատ յանցաւորներ կան: Հենց որ բամազանի այս մի քանի նուիրական օրերն էլ անցնեն, պէտք է դրանց ամենքի պատիժն տալ ժողովրդի առաջ: Այժմ

գնացէք մի բեչ քնեցէք մինչև կէսօր, ես էլ այստեղ կը քնեմ մի քիչ:

Ճանապարհ գնելով ներքնապետին, սադրազամը հրամայեց Փէրրաշին անմիջապէս կանչել Փէրրաշբաշուն: Վերջինս մի երկու բոպէից յետոյ երեւաց քնաթաթախ և դժգոհ գէմքով, բայց խոնարհ գլուխ տալով, կանդնեց:

— Փէրրաշ-բաշի, ասաց սադրազամը, իսկոյն կը գնաս կը բանտարկես Բէհման-Միրզայի գանձապահին, միրզաներին, ծառաներին և շղթայակապ բանտը կը ձգես, պատուիրելով պահապաններին, որ խիստ հսկողութիւն ունենան:

— Զէմ, գլուխ տալով դուրս եկաւ պաշտօնեան: Հայի-Միրզա-Աղասին հէնց այդտեղ էլ, աբան գլխին բաշելով, պառկեց քնելու:

Պալատում տիրում էր խորին լուսիթիւն, լուսիթիւն տիրում էր և փողոցներում:

XII

Միջօրէի էզանները թնդում էին մինարէթներից. Փոշոտ փողոցները սկսել էին կենդանութիւն սաանալ. բազարներում, թիմչաններում խանութները հետզետէ բացւում էին և հանդիպելով միմեանց, դրացիների ու ծանօթների առաջին խօսքը, սէլտմ տալուց յետոյ, այս էր. «Լսել էք. ինչ է պատահել. Բէհման-Միրզան փախել բէստ է մտել ուսւաց գեսպանատանը. Շահը հրամայել էր նրան կուրացնել. ջնուդները տուել են իրանց աղջկը Խամաճ-Ջումայի դատաստանին»:

Ամբողջ Թեհրանը ծայրէ ծայր այդ լուրերով էր զբաղուած. ամենքը շտապում էին գէպի Շահի մզկիթը, ուր փիշնամէզ էր իմամ-Ջուման, նոր տեղեկութիւններ ստանալու յոյսով: Սէլիմ-շաթիրը հազիւ իր բազուկների և շաթիրական նշանի շնորհիւ կարողացաւ ճանապարհ հարթել իր համար և մտնել մզկիթը, որ-

տեղ ասեղ գցելու տեղ չը կար։ Նա կամաց կամաց մօտեցաւ կանանց բաժնին և ծալապատիկ նստեց խըսիրի վրայ, սիւներից մէկի մօտ, որի մօտ նստած էր և մի կին ոսկէ չափրաստ ունեցող ուրբանդով։ Նա արդէն նկատել էր Եասամանի սեղմքը և նրա խորամանկ ժպիտը։

Իմամձ Զուման սկսել էր հրապարակական աղօթքը։ Նրան հետեւեց թաղիա, և մի երիտասարդ մօլլա բարձրանալով ամբիոնի վրայ իր զիլ ձայնով սկսեց ողբը. կանայք արդէն անհամբեր սպասում էին այդ բոպէին և ամեն անդամ, երբ երգիչը աւարտում էր ողբը, շարունակում էին կանայք, առատ արտասուք թափելով։

—Վայ, վույ, լսում էր մզկիթում։

Գլուխը յետ ու առաջ տանելով, Սէլիմը լսեց Լէյլա խանըմի այս խօսքերը. «Գիտես, ջնուդի աղջիկը այժմ ինձ մօտ է»։ —Ինչպէս, քեզ մօտ։ —Իմամձ Զուման յանձնել է ինձ, որ ինձ մօտ մնայ մինչեւ քննութիւնը կը վերջանայ. ախ, անիծած աղջիկը որքան գեղեցիկ է Սէլիմջան. աղան տեսաւ նրան թէ չէ, խելքը գլխից թռաւ, իսկ արջիկը շարունակ լացում է. իր նշանածին Սաւուղին է յիշում։

«Վայ, վույ», գարձեալ թնդացին մզկիթում ողբալի ձայները։

—Լսիր, Լէյլան, դու ամեն կերպ աշխատիր որ ջնուդ աղջիկը աղային դուր գայ. դու ասա նրան, որ եթէ ուղում է իր Սաւուղին, իր հրէաներին աղատէ, սէյիդի կինը չը գառնայ, թող այնպէս ցոյց տայ, որ իբր պատրաստ է աղայի բոլոր ցանկութիւնները կատարել։

—Նա ասում է որ երբ ստիպուած լինի սէյիդի կինը գառնալ կամ մուսուլման գառնալ, իրան կը սպանի. նա երբէք ձեր Իմամձ Զումայի կամքը չի կատարի։

—Ես չեմ ասում որ նա կատարի, բայց թող իրան այնպէս ձեւացնէ, որ պատրաստ է կատարելու և ա-

ղայից ստանայ Փիթվա, թէ հրէաները ոչ մի բանում մեղաւոր չեն, սէյիդն բռնութեամբ է իրան յափշտակել։ Մնացածն ես ինձ վրայ եմ առնում։ Մենք շուտով մեր մուրազին կը հասնենք։

«Վայ, վույ», շարունակում էր ողբը։

Սէլիմը մի քանի րոպէ էլ վսիսաց եասամանի ականջին։ խափշիկուհին գլխով նշան արեց որ հասկացաւ և կը կատարէ։

Երգիչը աւարտեց ողբը և իջաւ ամբիոնից։

Նրա վրայ բարձրացաւ նորից իմամ-Ջուման, իր ձիւնի պէս ճերմակ շալի ջուբբայի մէջ փաթաթուած։

—Մուսուլմաններ, ասաց նա, դուք գիտէք այս վարմունքը, որ ունեցել է Բէհման-Միրզա շահզադէն, Շահի եղբայրը. վարմունք անարժան մուսուլմանի. նա թողնելով իմամ Շահ-Աբդուլ-ազիմի նուիրական դուռը և գրօշակը, բէստ է մտել անհաւատների, քեաֆիրների գրօշակի տակ։ Թող անիծեալ լինի այդպիսի մուսուլմանը։

—Բայց Շահը ուզում էր իր հարազատ եղբօր աշքերը կուրացնել, լսուեց ամբոխի միջից մի վախկոտ ձայն։

—Նա կարող էր ազատուել այդ պատժից նոյն պէս Շահ-Աբդուլ-ազիմի կամ մեր այս մզկիթի մէջ բէստ մտնելով։ Շահը չէր կարող նրան հանել այս տեղից։

Տիրեց խորին լոռութիւն. ոչ ոք չը համարձակեց այլ ևս պաշտպանել գժբախտ շահզադէին։ Նա անարդել էր հայրենի կրօնը, հայրենի սրբութիւնները և պատպարուել էր օտարի, անհաւատների սրբարանում։ Նա նախատել էր իսլամը և իսլամը երեսը շուռ էր տալիս նրանից։

—Մենք ինքներս նախատում ենք մեր սուրբ գիւնը, մենք ինչ մուսուլմաններ ենք, պոռաց դէպի ամբիոնը մօտենալով մի երիտասարդ սէյիդ։ Ո՞ւր է իմ

կինը. ինչու ինձ չեն տալիս. միթէ այն օրին հասանք, որ մուռտառ ջհուդներն անդամ խլեն մեր կանանց մեր ձեռքից:

— Ջհուդ-քուշան, ջհուդ-քուշան. թնդաց ամբողջ մզկիթը հազարաւոր աղաղակներով, մահ ջհուդներին. առւէք մեզ ֆիթվա, տուէք մեզ:

Սարսափելի ժխոր տիրեց, կանայք նոյն խոկ սկսեցին գոչել. «մահ ջհուդներին»:

Բայց Խմամ-Ջումայի ձեռքով արած մի շարժումը վերջ դրեց ժխորին և աղմուկը քիչ քիչ դադարեց ու դարձեալ խոր լոռութիւն տիրեց:

— Մուսուլմաններ, ասաց նա, ջհուդները աման¹⁾ են բերել մեզ. նրանք յանձնել են ինձ աղջկան, որ ես ըննեմ և ինչ որ շարիաթը կը հրամայի, այնպէս էլ լինի: Ես շուտով կը ըննեմ գործը և եթէ աղա սէյիդի ասածներն կը հաստատուեն՝ ջհուդ աղջիկն, ի հարկէ, նրա օրինաւոր կինը կը դառնայ: Ես չեմ կարող ֆիթվա տալ ջհուդ-քուշանի համար, որովհետեւ այդպիսի ֆիթվան հակառակ կը լինի սուրբ խօսքին—զուրանին: Հուրանում ասուած է, որ այն աղքերը, որոնք գիրք ունեն—Խորակէլի որդիները ունին թովքաթը²⁾—եթէ հպատակութիւն յայտնեն, հարկ վճարեն Խալամին, նրանք կարող են աղատ ապրել և իրանց կրօնը դաւանել: Ջը հուդները հարկ են վճարում:,,

— Հարկ վճարում են զաջարներին և ոչ մեզ, ասաց մի ծերունի սէյիդ:

— Նրանք հարկ են վճարում խալամ թագաւորին, պատասխանեց Խմամ-Ջուման:

Եւ օրհնութիւն տալով արձակեց ամբոխը, որ սկըսեց դուրս գալ մզկիթից, տրտնջալով: Այդ չարգելեց նրան այնուամենայնիւ համբուրել Խմամ-Ջումայի հանդերձների քղանցքը, երբ վերջինս անցաւ ամբոխի մի-

1) Աման բերել—ապատանել, պաշտպանութիւն հայցել; 2) Ասուուածաշոնչ:

չով և դուրս գալով մղկիթի բակը, նստեց սպիտակ էշի վրայ ու բազմաթիւ մօլլաներից, սէյիդներից հետեւուած, դնաց իր տունը:

Այն բոպէին, երբ երիտասարդ սէյիդը դուրս էր գալիս մղկիթից, մի ձեռք դիպաւ նրա ուսին և մի ձայն փսփսաց նրա ականջին. «Զգուշացիր, աղա սէյիդ, Հուդա աղջիկը այնքան գեղեցիկ է, որ դուցէ էլ դուրս ըստ դայ իմամ՝ Զումայի տնից. Իմամ-Զուման սիրում է գեօզաններին¹⁾»: Սէյիդը յետ դարձաւ տեսնելու ով էր շնչում իրան այդ խօսքերը, բայց ամբոխի մէջ նա չը կարողացաւ իմանալ:

Կասկածը, եռանդը մոտաւ նրա սրտի մէջ: «Եէյթանը կամենում է ինձ փորձել», ասաց նա, և մռայլ, յուսահատ հետևեց ամբոխին ու շուտով միացաւ իմամ-Զումայի հետևորդներին:

Ճանապարհին, իմամ-Զումայի հետեւորդները հետզգետէ աւելանում էին: Կէսօրից արդէն երեք ժամ անցել էր, երբ իմամ-Զուման հասաւ իր տունը: Ընդարձակ բակը, թալարը լի էր ահագին բազմութեամբ. դրանք ամենքը խնդրարկուներ էին, զանազան պահանջատէրեր, պարտապաններ, կալուածական, ժառանգական վէճեր վարողներ, ամուսնութիւն կնքողներ, ամուսնալուծութիւն պահանջողներ կամ թալար տուողներ, մարդիկ, որոնք եկել էին դատւելու, վկայութիւն տալու, ամբաստաններու կամ արդարացնելու իրանց ամբաստանութիւններից: Նարիաթը լինելով միակ հաստատուն օրէնքը Պարսկաստանում, հոգեորականութեան ներկայացուցիչները դատում և վճռում են ոչ միայն կրօնական, այլ և բաղաքացիական գործերը, դատերը, վէճերը:

Ծնդարձակ թալարի մէջ, որի երկու կողմից ևս

1) Գեղեցկուհիներին:

փէնջարաները բացւում էին երկու բակերի վրայ, գետ-
նին, գորգի վրայ, չոքած էին բազմաթիւ գրագիրներ,
որոնք անդադար գրում էին զանազան զաբալաներ¹⁾,
իջարանամաներ²⁾, ագտնամէներ³⁾, վկայականներ և
հրամաններ: Ամեն մի գրագրի առաջ հինդ վեց հոգի
խնդրարկուներ էին չոքած, որոնք զանազան խոստում-
ներ, ընծաներ վարձատրութիւններ փափսալով գրագիր-
ների ականջին աշխատում էին արագացնել գործը կամ
իրանց ցանկութեան համաձայն վճիռ կայացնել տալ
իմամ-Զումային: Այդ բոլոր թղթերը, վկայագրերը օ-
րէնքի զօրութիւն էին ստանում միայն այն ժամանակ,
երբ իմամ-Զուման թղթի ներքեւ կամ գլուխն կամ կող-
քին դրոշմում էր իր կնիքը, երբեմն ևս արաբերէն մի
քանի բառ աւելացնելով կնիքի վերև իր ձեռագրով:

Իմամ-Զուման մտնելով թալարը, ուր ամենքը ստ-
քի կանգնելով, պատկառանքով գլուխ տուին «աալամ-
ալէքիւմ» ասելով, որին նա պատասխանում էր «ալէ-
քիւմ-սալամ», — գնաց և նստեց թալարի վերեւում: Ան-
միջապէս աւագ գրագիրը չոքեց նրա առաջ և թղթերի
մի ամբողջ կոյտ հանելով գրապանից, սկսեց կուացած,
կամացուկ խօսել նրա ականջին: Ամեն մի զեկուցումից
յետոյ իմամ-Զուման հանում էր շալի փոքրիկ քսակից
մեծ կամ փոքր կնիքը, մատի ծայրը թաթախում էր
զալամդանի թանաքի մէջ և լեզուով թրջելով թուղթը,
դրոշմում էր թրջած տեղի վրայ ու տալիս աւագ գրագրին:

— Աղա, ասացին երկու վաճառական, գլուխ տա-
լով և չոքելով առաջին, խնդրում ենք սիղա կարդա⁴⁾,
ես զիջել եմ այս ընկերիս մեր ընկերական առեւտրի
մէջ ունեցած իմ բոլոր իրաւունքները մի սիր⁵⁾ նաբա-
թով:

1) Կալուածագիր; 2) Կապալագիր; 3) Ամուսնագիր; 4) Ամեն տեսակ
թուղթ, պայմանագիր օրինաւոր է միայն այն ժամանակ, երբ մօլլան
կարդացել է սիղաւ այդ առում է „սիղանարի շօն”:
5) Մի սիրը հաւա-
սար է 5 մտխալի: Կարելի է մի ամբողջ տուն, ալզի, դիւզ ծախել մի
սիր նաբաթով կամ, կամ մի հատ խնձորով, կամ մի հատ թաշկինակով:

— Ճշմարիտ է, Հաջի, զիջել է նա քեզ և դու ըն-
դունել ես: Տուել ես սիր նաբաթը:

— Այո, աղա, ընդունել և տուել եմ:

— Ստացել ես դու, սիր նաբաթը:

— Այո, ստացել եմ:

Իմամ-Ջուման միացրեց երկու վաճառականների
ձեռները և ասաց. «սիղան կատարուեց»: Դէ գնացէք,
գրագրին ասէք, թուղթը գրի:

Այդ միջոցին թալարը մտաւ Բէգլար-բէգի պաշ-
տօնեաններից մինը և մօտենալով սէլամ տուեց: Իմամ-
Ջուման պատասխաննելով սէլամին ասաց. «բիսմուլլահ,
նստեցէք»: Պաշտօնեան յայտնեց, որ Բէգլար-բէգին իր
խոնարհ ողջոյնները յիշելով, խնդրում է որ աղան, շա-
րիաթի համաձայն, վճիռ տայ մի կուուի մասին, որ
երէկ պատահել է: Երկու կալուածատէր կոիւ են արել
մի արխի¹⁾ վրայ. Նրանցից ամեն մէկը պնդում է, որ
արխը իր գիւղինն է, թոյլ չէ տալիս միւսին ջրել ար-
տերը: Խօսքից անցնելով կուուի, երկու կալուածատէ-
րերի օգնութեան են վազել գիւղացինները. կոիւը սաստ-
կացել է. զէնը են գործածել և երկու կողմից սպան-
ուել են չորս հոգի, որոնց մէջ մի կին. վիրաւորուել են
հինգ հոգի: Այժմ պէտք է որոշել ումն է պատկանում
ջրի արխը և ապա որոշել, թէ յանցաւոր կողմը ինչըան
դիյա²⁾ պէտք է վճարի սպանուածների և վիրաւորուած-
ների արեան գնի համար:

— Ովքեր են վկանները, հարցրեց Իմամ-Ջուման:

— Տասը հոգի, որոնցից երկուուը հրէայ, երկուուը
հայ և երկու էլ կին:

— Զեզ յայտնի է, որ ամեն երկու ոչ-մուսուլմանի
վկայութիւնը հաւասար է մի մուսուլմանի վկայութեան.
Նոյնպէս երկու կնոջ վկայութիւնը հաւասար է մի տը-

Բաւական է որ տէրը, վաճառողը յալտնի, թէ գոհ է այդ վարձատրու-
թեամբ.

1) Առու, ջրանցք: 2) Հասուցումն:

զամարդի վկայութեան։ Կնոջ դիյան ևս տղամարդի դիյայի կէսն է։

—Շատ լաւ, աղա, այդ ինչպէս հրամայում է շարիաթը, վճռեցէք գուք, մենք կը գործադրենք վճիռը։
—Բարի է, թող ամենքն վազը այստեղ պատրաստ էինքն։

—Մի խնդիրը ևս բերել եմ թէգլարբէդի կողմից, աղա, շարունակեց պաշտօնեան։ Այս մարդը, Հաջի Ահագը, մի մուրհակով հինգ հարիւր թուման է պարտ այս մարդուն, Մաշագի իբրահիմին—և մատով ցոյց տուեց թալարի մէջ տեղ կանգնած երկու վաճառականի—բայց պարտապանը չէ վճարում, տսելով որ մուրհակը խալի-էզ-վաջ¹⁾ է։ Ի՞նչ է հրամայում շարիաթը։

—Ստացական կամ վկայ ունեմ, Հաջի Ահագ, դիմեց իմամ-Զուման պարտապանին, որ փողը վճարել ես։

—Ոչ, աղա, բայց հազրաթ Աբբասը վկայ վճարել եմ։

—Ոչ, ասաց իմամ-Զուման, կամ պէտք է երդումն ուտես որ պարտք վճարել ես կամ պէտք է վճարես։ Այսպէս է հրամայում շարիաթը։

—Խնդրում եմ իմ գործս ևս վճռիր, աղա, թնդաց յանկարծ մի ձայն թալարի մէջ և մեզ ծանօթ երիտասարդ սէլիդը կանգնեց իմամ-Զումայի առաջ։

Վերջինս բարձրացնելով նայուածքը և նկատելով սէլիդին, ունքերը կիտեց, բայց շուտով անտարբեր դէմք ընդունելով, ասաց։

—Ի՞նչ է ըստ գործդ, աղա սէլիդ։ այժմ ժամանակն ուշ է, երեկոյ է արդէն, բայց ասա տեսնեմ։

—Ես ջնուգ աղջկայ ամսւսինն եմ. գուք այսօր հրամայեցիք մղկիթում, որ պէտք է քննէք. քննեցէք շուտով և կինս ինձ յանձնեցէք. երկար սպասել չեմ կարող։

¹⁾ Այն մուրհակներն են կոչւոմ ալդպէս, որոնք վճարուած են կամ որոնց արժէքը չէ ստացուած։

Վերջին խօսքերը սէյիդը արտասահնեց սպառնողական շեշտով։

— Զհուդները պնդում են, աղա սէյիդ, ասաց մեղմ ձայնով կրօնապետը, որ դու փախցրել ես աղջրկան և քեաբինը զոռով, առանց աղջկայ հաւանութիւն ես կատարել տուել։

— Քեափիրների խօսքը ինչ նշանակութիւն ունի, աղա, ես քեաբինի թուղթ ունեմ։

— Տուր տեսնեմ։

Սէյիդը հանեց ծոցից մի երկար թուղթ և երկու ձեռքելով յարգանքով մօտեցրեց կրօնապետնին, որ ուշադրութեամբ կարդաց։

— Ո՞վ է գրել այս քեաբինագիրը։

— Մօլլա Քեազիմը։

— Ինչու վկաներ չը կան։

— Միթէ մօլլա Քեազիմը սուտ է գրել։ Սիդան նա է կարդացել։

Իմամ-Զհուման մտածմունքի մէջ ընկղմուեց։ Նա դեռ գտնուում էր այն շլացուցիչ տպաւորութեան տակ, որ նրա վրայ գործել էր եսթերի հիանալի գեղեցկութիւնը. «Այսքան տարի ապրել եմ, մտածում էր նա, հարիւրաւոր կանայք եմ տեսել, իմ հարէմում ամենագեղեցիկ կանայքն եմ ունեցել, բայց այդ ջհուդի բածի պէս գեղեցիկն դեռ չեմ տեսել։ Սփսոս է այդպիսի չընազ որսը այսպիսի գուեհկին տալ։ Պէտք է մի հնարք մտածել...»։

Եւ բարձրացնելով գլուխը, նա մեղմ և կարեկցական ձայնով ասաց.

— Ուրգիս, դու ջահիլ ես. ես հասկանում եմ քոցաւգ, բայց համբերութիւն ունեցիր. թող բամազանի այս նոււիրական օրերն անցնեն և յետոյ խոկոյն ես քոցործդ կը վերջացնեմ։ Աղջիկը այժմ մեր ձեռքին է, էլ փախչել չէ կարող։ Եթէ մենք կարողացանք համոզել նրան, որ իր անարդ կրօնը գէն ձգէ ու մեր ճըշ-

մարիտ դինը ընդունէ, որքան մեծ փառք քեզ համար:
—Եա ամին, միաբերան ասացին հանդիսականները:
Եւ վեր կենալով իմամ-Զուման մտաւ իր առանձ-
նասենեակը:

Բազմութիւնը սկսեց քիչ քիչ ցրուել,

ՇԱՀՐԻԱՐ

(Կը օարունակուի)

ԱԻԱԶ ԵՒ ԱՍՏՂԵՐ

(Յրաւգից)

Հին ուխտի գլքում ես միշտ կարդում եմ՝ «Ազգ իմ
հարազատ,

Սիրագործական քայլերիդ համար սերունդդ աղատ.
Պիտի բազմացնեմ որպէս աստղերը երկնակամարի,
Բիւրբիւրոց դարձնեմ որպէս աւազը անհուն ծովերի»:

Օ՛, Աստուածաշնւնչ, Սուրբ Գիրք անդրանիկ՝ ստեղծագործութեան,
Քո հին էջերը երբ կարդում էի օրով մանկութեան,
Կամ տեսնում էի անցած-գնացած բախտը մարդկութեան,
Հրճում էի ես յաղթանակովը վեհ արդարութեան:

Այժմ ասա, Տէր, է՞ր չիրագործուեց կաակիդ սուրբ էջ,
Տես, ժողովուրդդ հեծնւմ, տնկում է հոգս ու ցաւի մէջ.
Աւազի տեղ ենք այժմ ծառայում աշխարհի համար,
Եւ ամեն երկում; ամեն անցորդի լինում ոտնահար:

... Եւ այն աստղերը, որոց բազմութիւնն մեզ էր
լսոստացած,
Ո՞ւր են նրանք, Տէր... մեզ համար նրանք վաղուց են
լսամբած...

Թարգմ. ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆ

ՆՈՐ-ԶՈՒՂԱՅԻ ԴՊՐՈՑՆԵՐԸ

(Սկզբից մինչեւ մեր օրերը)

Հստ պատմութեան, Նոր-Զուղան հէնց իր հիմնարկութեան տարուց սկսած ունեցել է դպրոց։ Առաջին դպրոցը հիմնուել է Ամենափրկչնան վանքում և առաջին ուսուցիչը եղել է նոյն վանքի առաջնորդ՝ Խաչատուր Կեսարացին։ Սրանից յետոյ իրար յաջորդել են ուսուցչութեամբ։ Դաւիթ Ապիսկոպոսն, Ստեփանոսոս Ապիսկոպոսն և Կոստանդ Պափրն։ Վերջինիս ժամանակուայ աշակերտների թիւը հասել է մօտաւորապէս 250-ի։ Սրա ժամանակն Նոր-Զուղայի ոսկեղարն է եղել վաճառականութեան տեսակէտից, ուստի երեւելի իշխաններն ու վաճառականներն անհրաժեշտ են համարել իրենց երեխաների համար գրագիտութիւնը։ Նրանք բաւականացել են միայն հասարակ գրել-կարդալ, թուաբանութիւնն և վաճառականական խրատներ սովորեցնելով։ Այս Կոստանդ վարժապետը 1687 թուին հեղինակել է «Աշխարհաժողով» կոչուած մի գիրք, որի մէջ կան զանազան նիւթերի մասին գրուածքներ—թուաբանութիւն, վաճառականական խրատներ։ Աղարիայի թուականի գործածութիւնը և այլն խառն նիւթեր։ Բերենք այստեղ մի փոքրիկ նմոյշ վաճառականական խրատներից։

«Մի երթիցնս միայն՝ ի ճանապարհ։ Անփորձ և անճանանչ ընկերի հետ մի նստիցես և մի քնիցես, գուցէ սպանցէ զքեզ և առցէ զինչս քո։ Պաշարն ի տաշտէ գառ, ընկնըն՝ ի տանէց։ Քաղաքն (թուղթն)՝ ի ծոցդ պահեա, գրիչ-զամբարն (գրիչ-թանաքամանն)՝ ի ջուբդ (գրաբանումբ) պահեա, կիսագաղն (արշինանոց չափ)՝ ի գօտիդ, խնկքդ՝ ի գլուխդ, միտքդ առ Աստուած։ Ինչ Աստուած չնորհեսցէ քեզ, նովաւ չատացիր. . . . Անփորձ մարդւոյ ամանաթ (աւանդ) մի տար։ Զամենայն առեւտուրդ գրեա և էս օրէն՝ վաղն մի ձգեր»։

1710-ական թուականներում Մովսէս Զուղայեցի առաջնորդն աւելացրեց և ուրիշ երկու դպրոցներ. մէկն Մուրագենց ս. Յակովբայ եկեղեցում և միւսն ս. Ստեփաննոսի եկեղեցում, որոնց մասին տեղեկութիւն չկայ:

1750 թուին Հնդկաստանի Մադրաս քաղաքում բնակուող Աղա Պետրոս Ուկաննեան, նոր-ջուղայեցի երեւելի իշխանն, 26,000 ոռուփի կտակեց նոր-Զուղայում մի դպրոց հիմնելու համար, ուր, պիտի դասախոսուէր հայերէն, պարսկերէն և լատիներէն. սակայն այն ժամանակուայ թէ Հնդկաստանի և թէ Պարսկաստանի խառն հանգամանքները արգելք հանդիսացան բարերար աղայի նպատակը իրագործելու:

1825 թուին պ. Զօգէֆ Վոլֆ անունով մի անդիմացի գալով նոր-Զուղա, կամնցաւ իր ծախքով մի դպրոց բանալ, յատկապէս նոր-ջուղայեցի հայ երեխաններին կրթութիւն և լուսաւորութիւն տալու. սակայն սրա բարի գիտաւորութիւնն եւս իսականուեց ինչ-ինչ քաղաքական աննպաստ հանգամանքների չնորհիւ:

1833 թուին Մադրասաբնակ պ. Գրիգոր Սամեան երեւելի վաճառականն 20,000 ոռուփի կտակեց նոր-Զուղայում իր անունով մի դպրոց հիմնելու համար: Յաջորդ տարում հաստատուեց դպրոցն Ամենափրկչեան վանքի ծոցում և ժամանակաւորապէս ուսուցիչ կարգուեց Յակովբոս ծ. վարդապետը: Մի քանի ամսից յետոյ, Յովհաննէս առաջնորդի հրաւէրով ս. Էջմիածնից եկաւ յայտնի գիտանկան Մեսրոպ Թաղիազեանը որպէս ուսուցիչ նոյն դպրոցի երկու տարի միայն մնալով պաշտօնում նա հրաժարուեց: Ապա մի առժամանակ եւս կազէ-կաղ կառավարուելով՝ 1837-ին փակուեց դպրոցը:

1840 թուին կրկն բացուեց նոյն Սամեան դպրոցը, Ս. Ստեփաննոս եկեղեցու գաւթում, և շարունակեց իր գոյութիւնը մինչև 1853 թիւը, երբ Սամեան տունը մնանկացաւ և դպրոցին յատկացրուած 20,000 ոռուփին կորաւ մէջտեղից:

1841 թուին պ. Բօսի անունով մի ֆրանսիացի գալով նոր-Զուղա՝ հայերէն, պարսկերէն և ֆրանսերէն լեզուներ սովորեցնելու համար մի դպրոց բացաւ, ուր կարծ ժամանակում բաւական աշակերտներ ևս հաւաքուեցին: Սակայն գժութիւն ծագելով լուսաւորչական և պապական հայերի միջեւ, այն ժամանակուայ Խոչատուր առաջնորդը յետ կոչուեց Էջմիածին և պ. Բօսին ստիպուեց փակել դպրոցը և հեռանալ Պարսկաստանից:

1843 թուին Կալկաթաբնակ Աբգարեանց տունը՝ Աղա-Յովհանջան կիրազեանի աջակցութեամբ՝ նոր-Զուղալի Ս. Աստ-

ուածածին եկեղեցու բակում հաստատեց «Հայկեան հայրենասիրական» անունով մի դպրոց, տարեկան մօտաւորապէս 150 թուման (300 ռուբլի) նպաստով։ Այս դպրոց կոչուած տեղը բոլոր իր գոյութեան օրերում պահպանում էր խալիֆայական ուժիմի բոլոր սարք ու կարգը։ Սրան ճակատին մինչեւ ներկայ օրս մնացած երկաթագիր վերտառութիւնն է։

«Ով ոք կամի աշակերտել՝ ՚ի սմա
ի բերանոյն հեռի առնէ զտառ Զա»։

1844 թուին Յովհաննէս Սուրէնիան առաջնորդը բացաւ մի հոգեւորական դպրոց, Ամենափրկչեան վանքի նալաստներով կառավարելու յուսով։ սակայն այս ևս՝ երեք տարի միայն կաղէ-կաղ ընթանալուց յետոյ՝ փակուեց։

1853 թուին Թաղէսս արք-եպիսկոպոս Բէկնազարեանի ջանքով բացուեցին Նոր-Զուղայում երկու նոր դպրոցներ, մէկը Ս. Ստեփաննոս եկեղեցու գաւթում (Սամսան դպրոցի տեղը) տարեկան 400 ռուփի եկամտով և միւսը՝ Ս. Մինաս եկեղեցու գաւթում, տարեկան 300 ռուփի նպաստով։ Առաջինի հիմնադիրներն էին բատաւիաբնակ նոր-ջուղայեցի երկու քոյրեր՝ տիկին Մարիամ Յարութիւնեան և օր. Թագուհի Մանուկեսն։ Իսկ երկրորդինը՝ ջաւայաբնակ նոր-ջուղայեցի՝ պ. Մարգար Սուքիասեան։

1854 թուին, օգոստոսի 20-ին, թէհրանաբնակ Աղա-Կարապետ Սառաֆեանց վաճառականապէսն՝ Թաղէսս արք-եպս։ Բէկնազարեանին տուած մի գրաւոր խոստման համաձայն՝ փափագ է յայտնում 1000 թուման (2000 ռուբլի) կտակել Ամենափրկչեան վաճքում 12 որդեգիր երեխաների համար մի դպրոց բանալու, ուր պիտի աւանդուէին հայերէն, պարսկերէն, ռուսերէն և Գրանսերէն լեզուներ։ Այս խոստումնադիրը հաստատուեց և վաւերացրուեց Թէհրանի ոռւս գեսպանական կնքով և յանձնուեց Ամենափրկչեան վանքը։ Սակայն մի միջոց անցնելուց յետոյ Աղա-Կարապետը մնանկացաւ և խոստումը մնաց միայն խոստում։

1858 թուին ջաւայաբնակ նոր-ջուղայեցի պ. Մանուկ Յորդանանեանը Նոր-Զուղայի Ս. Կատարինեան կուսանաց վանքի ծոցումը կիմնեց առաջին սնդամ մի օրիորդաց դպրոց իր համեստ դրամագլխով, ուր անմիջապէս սկսան յաճախել ուսումնածարաւ հայ օրիորդները։ Սրա հետեւանքը եղաւ այն, որ Նոր-Զուղայի այժմնան բոլոր թէ մեծ և թէ փոքր տիկինները և օրիորդները, շատ քիչ բացառութեամբ, կարողանում են կարդալ հայերէն և գրաբարախառն աշխարհաբարով դրել։ 1858 թուին, երբ Նոր-Զուղայում բացուել է օրիորդաց դպրոց,

Կովկասի և թերես մի քանի ուրիշ յայտնի երկիրների և ոչ մի հայաբնակ քաղաքում գեռ չի եղել ոչ մի հայ օրիորդաց զպրոց:

1867 թուին Նոր-Զուղայի ս. Յովհաննէս եկեղեցու մի սրահում հաստատուեց «Գէորգ Յովսէփեան» անունով մի դըպրոց, ի յիշատակ նոյնանուն մի հնդկաբնակ պարոնի. դրա գոյութիւնը պահպանուեց մինչև 1872 թիւը, ապա փակուեց: Փակուելու պատճառն եղան բողոքականները, որոնք, զպրոցի հետ խորամանկութեամբ միանալուց յետոյ, կամեցան եկամուտը իրենց նպատակին ծառայեցնելով՝ մատադ հայ սերնդին ձուլել բողոքականութեան հետ: Այս անախորժութեան դէմ բողոքներ զրուեցին Հնդկաստան՝ զպրոցի հիմնադրին, որ և տեսնելով իր լումաների չարաչար գործազրութիւնը, դադարեցրեց դրամի առաքումը և պատուիրեց փակել զպրոցը:

Վերոյիշեալ բոլոր զպրոցների ուսման ծրագիրն եղել է միայն հին հայերէնի ընթերցանութիւն և մեկնութիւն, Զամշեանի քերականութիւն, հին ձևելի վայելչազրութիւն, մասնաւոր թուաբանութիւն և անուամբ և եթ պարսկերէն, իսկ վերջերը մուտք է գործած եղել և անգլիերէնը: Սակայն միայն մի քանի անհատներ են առաջադիմել, այն էլ միմիայն գրաբար հայերէնի մէջ, յատկապէս Թաղիաղեանի օրով և «Սամնան» դպրոցի երկրորդ անգամ բացուած ժամանակ:

Մի դպրոցի փակուելուց մինչեւ միւսի բացուելը, Նոր-Զուղայի ուսումնասէր տղաները յաճախելիս են եղել տէրտէրների տները ռուսում առնելու», սակայն խեղճերը աւելի ծառայի պաշտօն են կատարելիս եղել, քան աշակերտին Ամբողջ օրերով թէ տանը և թէ այգումը այդ ռաշակերտները աշխատում էին տէրտէրի համար՝ ջրել, խոտ հնձել, տուն աւելել, ճաշ բաղնիք տանել, տէրտէրակինոջ համար կերակուր պատրաստել, երեխային կառավարել ու քնեցնել, փողոցներն ընկած վաճառել այգիների յաւելցած բերքերը, և այլն: Իսկ այս բոլորից յետոյ, սովորելիս են եղել միայն Սաղմոսից մի կտոր «խոնարհեցո—ապրեցո», մի երկու զլուխ Աւետարան և մի քանի շարական: «Յայսմաւուրք» իմացողը հօ բարձրածայն կրթութեան ստացածի պէս մի բան է եղել:

1876 թուին բողոքական միսիօնաբները հաստատեցին Նոր-Զուղայում տղայոց մի դպրոց, ուր անգլիերէն լեզուն *) սովորելու համար սկսան գունդագունդ թափուել բազմաթիւ հայ երեխաներ: Եւ իրաւ, մանաւանդ 1879 թուին, (Դր. Հեն-

*) Անգլիերէն լեզուն սովորելը Նոր-Զուղայեցիների իդէալն է:

րիի տեսչութեան օրով) դպրոցը նախանձելի աստիճանի հասաւ առաջադիմութեան կողմից, սակայն յետոյ, (վերոյիշեալ դօքուորի հեռանալով) սկսաւ օր ըստ օրէ յետադիմել, մինչև ներկայ ժամանակս, որ նախկին վիճակի կմահիքն է միայն ներկայացնում:

Վերոյիշեալ 1876 թուականից քիչ յետոյ նոյն բողոքականները հասաւատեցին մի օրիորդաց դպրոց եւս, որ նոյնպէս ունեցաւ իր փառաւոր անցեալը: Սակայն, երբ աղջ. ս. Կատարիննամն գպրոցը բարեկարգութեան ենթարկուեց, բողոքականների գպրոցը սկսաւ օր ըստ օրէ նսեմանալ մերինի մօտ:

Բողոքականների երկսեռ գպրոցներում սովորում են մօտաւորապէս 300 աշակերտ-աշակերտուհիներ: Ուսման ծրագիրն է. կրօն (ս. Գիրք), Տաճկահայ աշխարհաբար, զրաբար, անգլիերէն, պարսկիերէն, մաթեմատիկա (թուաբանութիւն, գրահաշիւ և երկրաչափութիւն), համառօտ քաղաքական աշխարհագրութիւն (անգլ. լեզուով) և ձեռագործ: Խսկ վերջերս, հետեւելով մեր ազգային գպրոցներին, մտցրել են և Արարատեան աշխարհաբար ու համառօտ հայոց պատմութիւն, այն էլ միայն օրիորդաց գպրոցում:

1878 թուին Նոր-Զուղայի հայ-կաթոլիկաց վանքը հաստատեց «ս. Գրիգոր Լուսաւորիչ» անունով մի տղայոց դպրոց եքիչ յետոյ էլ օրիորդաց: Վերջինս շատ քիչ կեանք ունեցաւ, քանզի բաղկացած էր միայն մի քանի կաթոլիկ հայերի աղջիկներից, որոնց գուրս գալու հմտ՝ վակուեց դպրոցը: Խսկ տղայոցը կաղէ-կաղ ընթանալով մինչև 1893 թիւը, միանգամայն փակուեց: Բոլոր ժամանակ այս գպրոցի ուսման ծրագիրը մի շատ սահմանափակ բան էր: 1896-ին կրկին բացուեց, սակայն գարձեալ շատ չուտով փակման դատապարտուեց, որովհետև նոյն խսկ կաթոլիկ ծնողներն էլ չը համաձայնուեցին իրենց երեխանակին այնտեղ ուղարկել:

1880 թուին Նոր-Զուղայից, Հնդկաստանից և Զաւայից հանդանակուած նպաստներով հիմնարկուեց այժմեան «Ազգային կենդրոնական գպրոց»: Որի պատկառելի շինութիւնը աւարտուելուց յետոյ տղայոց երեք գպրոցները, այն է «Հայկեան հայրենասիրականը» և ս. Ստեփաննոս ու ս. Մինաս եկեղեցիներինը՝ փակուելով միացուեցին սրա հետ:

Այս «կենդրոնական» գպրոցն եւս իւր հաստատման օրից մինչև 1888 թիւը, այնքան էլ չէր տարբերուում նախկին խալիքայական գպրոցներից. սակայն վերոյիշեալ թուից կամաց-

կամաց սկսուեցին սիստեմատիկ բարեփոխումներ մուտք դուծել և առաջացաւ մի խոչոր պարագ:

1891 թուի Եսայի արք-եպս. Աստուածատրեանը ժամանելով իր աթոռո՞ւ նոր-Զուղա, առաջին զործն եղաւ թափել սոյն կենդրոնական գպրոցը իր պարտից և նորանոր եկամուտների ազգիւրներ գանել: Յետոյ ի նկատի առնելով այն հանգամանքը, որ ս. Կատարինեան օրիորդաց գպրոցի եկամուտը անկարելի պիտի լինի պահպանելու նոյն գպրոցի գոյութիւնը ապագայում, նիւթապէս միացրեց տղայոց կենդրոնական գպրոցի հետ և անուանեց «Աղդային երկսեռ գպրոցներ»: Այս կարգադրութիւնը առիթ տուեց նաև աշխատել օրիորդաց գպրոցի ուսման ծրագիրը ըստ կարելոյն հաւասարեցնելու տղայոց գպրոցի ծրագրին, որ և մասամբ յաջողուեց:

Եսայի արք-եպիսկոպոսի հրաժարուելուց յետոյ՝ 1896-ին «Ազգ. երկս. գպրոցների» հոգաբարձութիւնը, որ մինչև այդ ժամանակը կենդրոնացած էր Ամենափրկչեան վանքի հոգեոր իշխանութեան ձեռքում, ընկաւ մի խումբ բանիքուն երիտասարդների ձեռքը, դարձեալ նոյն հոգեոր իշխանութեան իրաւասութեան աակ: Այս բարեփոխումը յառաջ բերեց բաւական զգալի առաջադիմութիւն, թէ դիսցիպլինայի, թէ ուսման ծրագրի ընդարձակման թէ ձեռնհաս ուսուցչական խումբ պահելու տեսակէտներից:

Ներկայումս «Ազգ. երկս. գպրոցների» ուսուցչական խումբը բաղկացած է 23 հոգուց, կովկասում և Հնդկաստանում ուսած և տեղային ազգ. գպրոցները ոււարտած յայտնի անձերից: Սովորում են աւելի քան 400 աշակերտ-աշակերտուհիներ: Ուսման ծրագիրն է. կրօն, Արարատեան աշխարհաբար, գրաբար, պարսկերէն, անգլիներէն, ֆրանսերէն, մոթեամատիկա (թուաբանութիւն, գրահաշիւ և երկրաչափութիւն), բնագիտութիւն (բնական պատմութիւն, կենդանաբանութիւն, հանքաբանութիւն և մարգակաղմութիւն), պատմութիւն (եկեղեցական, ընդհանուր ազգաց, հայոց, անգլիացւոց և հնդկաց), աշխարհագրութիւն (թէ հայերէն և թէ անգլիերէն լեզուներով) բնական և քաղաքական, վայելչագրութիւն, հայրենագիտութիւն, գծագրութիւն, երգեցողութիւն, ձայնագրութիւն, կար ու ձև և զանազան տեսակի ձեռագործ:

Տղայոց «կենդրոնական» գպրոցը բաղկացած է եօթն դասարաններից և երկու նախակրթարաններից, իսկ օրիորդաց ևս. Կատարինեան» գպրոցը վեց դասարաններից, երկու նախակրթարաններից, չորս նախապատրաստականներից, գրագիտական բաժանմունքներից և մանկական պարտէզից:

1900 թուին Նոր-Զուղայի, Հնդկաստանի և Զաւայի օրինակելի նուիրաբերութեամբ կառուցուեց մի ընդարձակ օրիորդաց դպրոց իր զանազան բաժանմունքներով, և Կուսանաց վանքի անյարմար և հակառառողջապահական շինութիւն ունեցող «ա. Կատարինեան» դպրոցը իր բոլոր պարագաներով տեղափոխուեց այսուեղ, պահելով հէնց իր հիմնադրի ժամանակից ստացած ևս. Կատարինեան» անունը:

Մինոյնթուին, Մազաքիա եպիսկոպոս Տէրունեանի ջանքովը, 2000 թումանաչափ գումար ևս հանգանակուեց Ամենափրկչեան վանքի ծոցում մի հոգենոր դպրոց բանալու, ուր պիտի կրթուեն գիւղացի և տեղացի քահանայացուները: Սա ինքն ըստ ինքեան մի աւելորդ բան է լինելու, քանի որ արդէն նոյն կրօնի առարկան իննամքով դասաւանդուում է ազգ, երկու դըպրոցներում: Հարկաւոր է յետ կենալ այս դիտաւորութիւնից և, հանգանակած գումարը յանձնելով նոյն դպրոցներին, կրօնը դարձնել տղայոց կենդրունական դպրոցի մասնագիտութիւնը, ուր անխտիր կերպով կարող են օգտուել նոյն առարկայից բոլոր թէ տեղացի և թէ գիւղացի քահանայացուները:

1901 թուին մոսկուարնակ տիկին Վառվառէ Քանանեանը բարեհաճեց իր ամուսնու յիշատակին հաստատել Նոր-Զուղայում մի երկդասեան դպրոց: Սոյն դպրոցը պէտք է կապուած լինի ազգ, երկու դպրոցների հետ պահպանելով իր որոշ ինքնուրոյնութիւնը: Անհրաժեշտ պատրաստութիւնները տեսնուած են արդէն և քիչ յետոյ ձեռնարկուելու է «Գէորգ Քանանանեան դպրոցի» շինութեան կառուցումը:

ՏԻԳՐԱՆ ԱԲԳԱՐԵԱՆՑ

Ա Ղ Թ Ա Մ Ա Ր

Աղթամար՝ իբրև կզզի մը՝ ազատ եղած չէ բնութեան և
զինք շրջապատող ծավուն քմահաճոյքներէն, զի այնպէս կ'երե-
ւի որ շարունակարար բարձրացող ջուրերը տարուէ ապրի կո-
խած են անոր եգերքները, զանոնք ծովու յարածուփ ալիքնե-
րուն կրծող ժանեաց նշաւակ լնելով, որով այս կղզին հետ-
զհետէ պղտիկցած է և պիտի պղտիկնայ: Ծովուն սատարած
ըլլալու են անշուշտ պարբերական երկրաշարժները, ցամաքի
մնդդալի բաձրացում և ցածրացումներ են., ինչպէս արդէն
ասոնց քայլայիչ հետքերը կ'երեխն կղզւոյն ամէն կողմը: Ահա
բնութեան այս քմահաճ հարուածները կարծես քարտկովի մը
մուրձերու գերն ունեցած են կղզւոյն վրայ՝ անոր որոշ ձև մը
տալով, ձև մը որ անոր հարաւային արևմաեան կողմէն, մա-
նաւանդ նարեկայ վանուց դեհէն նայողին, քարացած վիթխա-
րի կէտ ձուկի մը երեւոյթը կ'ընծայէ ծովուն մէջ. հարաւէն
ոչիպ ի հիւսիս երկնցած և իր պոչին մէկ մասն ու ցից հսկայ
զուտիք ջուրէն վեր բարձրացած, կ'նայի դէպ ի Առաքէր
կղզիակ, որ հիւսիսային կողմէն իբր մէկ ժամ հետաւորու-
թեամբ քարացած կրիայի մը երեւոյթն ունի, և այս նայուածքն
սովանական է, ինչու որ կարծես թէ իր ահազին բերանը
բացած և զայն կլլելու պատրաստուած է: Աղթամարայ կղզւոյն
այս զիմածե մասին առաջակողմանն վրայ արդէն մի բանի մեծ
և փոքր այրեր ալ կան իբրև անոր ականջներ ու բերան, և
ասոնք կը կոշուին Աղաւնիի այր, հոն շատ աղաւնի գտնուե-
լուն համար, Զեան այր՝ հոն երբեմն ամառ ատեն ձիւն պահ-
ուելուն համար, և Զգեստի այր՝ ուր, ըստ աւանդութեան,
երբեմն աւելորդ զգեստներ կ'պահուէին: Բայց ուրիշ մեծ ու
բնական այր մը, որ գեռ նոր գտնուած է տեղւոյն կողրոնա-
կան մասին վրայ, շատ նշանաւոր է իր երկարութեան և քառ-

սային հանգամանաց պատճառաւ։ Ուստի, շատ յարմար կ'ըլ-
լայ երբ այս մեծ այրը նոյն կէտանսման կղզւոյն բերան սե-
պենք։

Այս այրի մէջ մասնաւորապէս աչքի կ'զարնին բնու-
թեան քմահաճոյքները, սոսկալի փլատակներ ու քաղայումներ,
մանաւանդ վերէն կաթկթած ջուրի քմայքները բաղայայտ
կ'երեան ամէն տեղ, շթաքարերով, պտկաքարերով որք ստիճաքի,
թութի, սունկի և խաղողի ողկոյզներու ձեր ունին, երբեմն
ալ վերէն վար կ'երկնան սրածայր կախուաններ որք ձմռո
տեն ջրվէժի եղերք կախուած սառնապատրոյշներուն կ'նմա-
նին, որոնցմէ ոմանք առաստաղէն մինչև գետին հասնելով
սիւներու ձեն ստացած են, ինչպէս նաև յատակի վրայ զըտ-
նուած պտկաքարերն ալ արձանիկներու երեսոյթ կ'ընծայեն,
Պատերուն վրայ կրային թանձրկեկ խաւ մը տարածուած է
պատէն անջատ գիրքով ու քարացած վարագոյրի երեսոյթով։
Ամբողջ այրը Արեւելեան բաղանիքի պէս քրտնիքի խոշոր կա-
թիներով ծածկուած է, որք ասաստաղէն մերթ ընդ մերթ
վար կ'կաթին անձրեի խոչորկեկ շիթերու նման։ Այս այրի մէջ
մուտքն ու ելքը մէկ ժամէն աւելի կ'տեսէ։

Այս այրը հազիւ տարի մը կ'ըլլայ որ գտնուած է Աղթա-
մարայ մէկ երկու սարկաւագներու միջոցաւ։

Ահա Աղթամար կղզիի սոյն բնական այրերը, մանաւանդ
յիշեալ մեծ այրն որ բիւրաւոր գարեր առաջ վազող ջուրերու
հետքեր ըլլալ կ'ենթադրուեն, բաւական ապացոյց են հաստա-
տելու թէ այս կղզին շատ ժամանակներ առաջ հազորդակցու-
թիւն ունեցած ըլլալու էր մայր յամաքի լեռներուն հետ։ Ար-
դէն այս սահմանին մէջն ալ պակաս չեն այս տեսակ այրեր,
որք են «Զանդանէր» կոչուած այրը Նարեկէն մէկ ու կէս ժամ
գէպի արևմուտք, ճիշտ յիշեալ այրի քառսային հանգամանկներով։
Ուրիշ այր մը «Ասնջաձոր» կոչուած տեղւոյն մէկ լերտն մէջ, զոր
քրդեր «Նէրտախվանէ Քաֆրան» կ'կոչէն, որուն երկայնութիւնն
երեկ—չորս ժամ կը տեւէ և ուրիշ անյայտ տեղէ մը նորէն
դուրս կ'ենէ, կ'ըսուի։

Թէ Աղթամարայ կղզին առաջ ցամաքի հետ կապուած էր,
գիւրին է ենթադրել անոր հարաւային արևելեան կողմին այն
մասէն, զոր մեք կէտ ձկան պոչին նմանցուցինք, զի այս մասն
այնպիսի գիրք ունի «Զար Մանածին» կոչուած հրուանդա-
նին գլումաց, որ բացորոշակի մատնացոյց կ'ընէ այն երբեմնի
կապն զոր ասոնք ունէին իրարու հետ, որք ծովու մէջէն գէպ
ի իրար երկնցած են գիմացէ գիմաց, ինչպէս այս երկու տե-
ղերու քարերուն զոյն ու որակը կ'հաստատեն նոյն և նման

ըլլալով, որ գորշագոյն կրաքարեր են, որոց հետ մանաւանդ կղզին մէջ կ'գտնուին տեղ տեղ բիւրեղացած և քիչ մը փայլուն ու ճերմկեկ քարի մը երակներ, որ խարտոցի հանգամանք ունի և այնչափ կարծր է, զոր քարակոփները մարմարիոն յղկելու կ'գործածեն հարկ եղած ատեն:

Յիշեալ այրի մէջէն երբեմնի վազած ջուրն ալ հաւանաբար այն շատրուանաձն և յորդահոս ջուրն է, որ շարդ Աղթամարայ հիւսիսացին արեւմտեան կողմէն սուրբ դեղին մօտերը ծովուն մէջէն դուրս կուտայ, ուր նաւազարներն իրենց նաւերը մօտեցնելով խմելու ջուր կ'առնեն անկէ որ շատ պաղ և անուշ է, որ ով գիտէ բնական ինչ արկածներով կղզին ցամաքէն բաժնուած ըլլալէն ետք իր ընթացքն ընդհատած է անկէ ծովուն մէջ յանգելով: Արդէն այս տեսակ բնական այրերու ձեւով ջրանցներ ցարդ կ'տեսնուին այս տեղերուն մօտ, որք են Եղերով լերան մօտեր «Աղամայ ակ» կոչուած այրն որ գարնան ամիսներու մէջ բղխելով՝ մինչև աշնան մօտեր առատ ջուր կուտայ և կ'ցամքի, նաև Կապուտկողայ լերան ծոցէն երկնցած այրածն ջրանցն որուն ձայնը կ'լսուի դուրսէն, երբ ականջ դրուի ճեղքուածներուն վրայ. այս այն յորդահոս ջուրն է, որ Մոկսի մօտերն ահազին այրէ մը ջրվէժի պէս դուրս կ'ցատկէ շննթալիր ու փրփրագէղ, կազմնով Տիգրիսի ակերէն մէկն որ շատ պաղ, զուլալ և բարեհամ է: Զարմանալին այն է որ կ'պատմին թէ այս վերջնոյս բղխած այրածն ական մէջ քարափոր մատուռ մ'ալ կայ որ ջուրի իջած ատեն ի յայտ կուգայ: Մոկսի մէկ եկեղեցւոյն մէջ պղնձեայ բուրվառ մը կ'ցուցնէին, որ այն մատուռէն հանուած է կ'ըսէին:

Աղթամար կղզիի բնական նկարագիրը կատարեալ ընելու համար քիչ մ'ալ խօսենք անոր բուսական և կենդանական մասերուն վրայ: Այս կղզւոյն մէջտեղերը, մանաւանդ Շիարի գլուխ կոչուած բարձրաբերձ ապառաժին վրայ, զոր մեք կէտ ձկան գլխուն նմանցուցինք, աղքատ են բուսականութեան կողմէ, հոն միայն գտնուելով մի քանի տեսակ աննշան խոտեր, ծաղիկներ ու թուփեր: Խակ անոր եղերքներէն շատերը, որք աւելի հողային են և ծովու խոնաւութեան նշաւակ, բաւական ճոխ բուսականութիւն կ'ներկայացնեն, մանաւանդ գարնան ատեններն երբ կանաչ գորգերուն վրայ կ'երեին համասփիւռ շատ տեսակ ծաղիկներ, որք իրենց թոյրով ու բոյրով կ'մրցին ծովու կապոյտին հետ մեղմիկ օրորուելով անոր ծիծփացող ալիքներուն հետ, որք իրենց շփշփոցները զովիկ դեփիւռի անուշ շըսոցին և թոչնոց գայլայլին հետ խառնուած, բնութեան տաճարի ալելուներ կ'ձեւացնեն: Ահա այս ամէնը նոյն քարի

գլխու բարձրագոյն կէտին վրայ նստող մարդուն զգայարանք-ները կ'պարարեն։ Այս եղերքներուն վրայ կ'տևանուի նաև վայրի ծառերու և թուփերու հոծութիւն մը, որոց նշանաւոր-ներն են «պամի» ծառ, որուն ողկոյզածե մանրիկ պտուղներն իրենց թարմ ու կանաչ վիճակի մէջ քաղուելով, աղջրի մէջ կ'պահուին պահը օրերուն կերակոր ըլլալու համար։ «Պղինձ» կում «պղիչկ», որ նոյնպէս մանր ու կտաւոր պառող մ'ունի քաղցրահամ, աշնան ատեն հասնող, զոր չորցներով կ'աղան և ոռուպի ու ընկոյզի միջուկի հետ խառնելով, տեսակ մը ու-տելիք կ'շինեն։ «Խաղիբան», որ յիշեալ պղինձի նման պտուղ մ'է կարմրագեղին գոյնով և քաղցրաթթու համով մը։ «Ծիփի», որ կարծր փայտ ունի և մանր պտուղ մը, բայց չուտուիր Կան նաև քաղցր ու զառն նուշի ծառեր են։ Ասոնց առատութիւնը կ'տեսնուի մանաւանդ հիւսիսային արեւմտեան եղբին վրայ «Եղիձնոց» կոչուած տեղը, յիշեալ քարի գլխուն ստորոտը, ուր աւերակ մատուռ մ'ալ կայ Ա. Յարութիւն անուամբ։ Այս կողմ. այս բարձրաբերձ ապառաժի սրախն վրայ կ'տեսնուի նաև զանազան թունոց հոծութիւն մը, որոնցմէ ոմանք իրենց ցախարաներով վրայէ վրայ ծածկած են ամբողջ քարին սիրտը, և այս պատճառաւ սոյն վայրը «Թունոց քազաք» կ'կոչուի, ու հոն զանուած շատ մը աշտարակածե ապառաժներէն մեկն ալ օթունոց ժամե կոչուած է ըստ մարդկային քմահաճոյից, ուր զանազան թունուներ թառելով կ'երգեն խառնիձաղանձ, ծովու ալեաց ձայնը շատ անգամ իրենց ձայներուն ներքև խզելով, որոց ծիրտերով այդ բարձր քարին սեպադզորդ կողքն համակ ճերմակ կարած է ակոսելի խոտով մը, որուն արդիւնք է թերես այս տեղույս բուսական առատութիւնը։ Այս թունոց տեսակը քսանի կ'հասնի թէ ջրային և թէ ցամաքային, որոց նշանաւորներն են (ոմանք տեղային բարբառով) արօր, խաւեղ, խէծիսէծ, սեւահաւք, ճայիկ, բադ, սադ, կարապըխիդիկ, բազէ, սեւ կոնկ (ազուաւ), աղաւնի, սարեւակ, մի քանի տեսակ ճնճուկ, որոնցմէ մէկ տեսակը Մանգղաթեկի կամ Մանգռախէկի կ'կոչ-ուի, որ զիսեր տտեն երլ վառ խարոյկ մը տեսնէ, անոր լոյ-սէն հրապուրուած՝ ինքինքն մէջը կ'նետէ իբրև պտորաստ խորափկ խարոյկավառին։ Բայց ամբողջ կղզին մէջ չորքառտա-նի չի գտնուիր բաց ի 20—30 կատուներէ, որք ընտանի վիճաւ-կէն վայրենիութեան փոխուած կ'թափառին դէս ու դէն, որսա-լով թուչուներ, մանաւանդ օձեր, որք բաւական շատ կ'զբա-նուին այս կղզւոյն մէջ։ կ'հաստատեն թէ երբ այս կատունե-ներն օձ ուտեն, անկէ ետք իբրև գեղաթափ՝ կ'ուտեն տեսակ մը բայս որ թորթիկ կ'կոչուի թանձր տերեններով

և մանր ու կապոյտ ծաղիկներով գոր մարդիկն ալ կ'ուտեն եփելով, և այս բոյաը զօրաւոր ազդեցութիւն կ'ընէ փոքր ճճիներուն վրայ, կ'առատմուի թէ անգամ մը ձմեռ ատեն օձ մը դժնելով կատուի մը կուտան, որ ուտելէն քիչ վերջ կ'առատկի, այն եղանակին նոյն բոյսէն դժնել չկրնալուն համար: Ահա այս կատուներն ամբողջ ամառ բացօթեայ կեանք անցընելէ վերջ ձմեռը վանք կուգան խմբովին ու կ'կերակրուին վանականներէն: Շատ վայրենի ընաւորութիւն մ'ունին և անմատչելի են մարդիկային ձեռաց:

Աղթամար կղզիի կղիման ալ հաճելի է, ամառն ալ այնշափ տաք և ձմեռը սաստիկ ցուրտ չըլլալով, այնպէս որ ձմեռուան մէջ տեղ կանաչներ կը գտնուին: Ասորը ընդարձաւ կութեան գալով՝ ըսեմ թէ մեծութեան կողմէ երրորդն է Վանայ ծովու չորս կղզիներուն մէջ, որ իբր 40 բոպէի շրջապատ ունի քառաթի մակոյիի ճամբայով: Այս կղզիին հիւսիսային արեւմտեան կողմը, ինչպէս տեսանք, բարձր է ու լեռնային, իսկ հարաւային արենելեան կողմը ցած է և նեղ, լեզուի մը պէս դէպ ի ծով երկնցած: Այս նեղ մասին երկու եղերքներուն վրայ կան մի քիչ մշակելի տեղեր, ուր մրգեղէնի ծառեր ու որթատունկեր կան տնկուած, ինչպէս խաւարտնդէններ ալ, եթէ մշակել ուղուին, բայց ասոնց մէջ ամէնէն յաջող կ'ըլլայ սնջրդի որթատունկը շատ ընտիր խաղսով, մանտուանդ արեղդէմ մասերուն վրայ, ինչպէս նաև նշենիներ որ քիչ ատենի մէջ կրնան յառաջ դալ, բայց ափսոս որ առ այս անփոյթ կը գտնուին թուլամորթ վանականները ինչպէս նաև վանուց անօրինութիւնը: Այս տեղի արօտն սպասելու համար կրնան առամառներ հոս պահուիլ 10—20 հատ այծ կամ ոչխար միաբանութեան և գլարոցի աշակերտաց թարմ թացան հայթայթելու համար, ինչպէս նաև առատ հաւ, ընտանի աղաւնի են. բայց որի հոգ:

Բայց կղզւոյն այս մշակելի եղերքներն հետզհետէ պակսնլու վրայ են ծովու ջուրին կոխելով, որ հարկաւ շատ առաջ աւելի ընդարձակ էին դէպ ի ծով երկնցած. ինչպէս կ'կարդանք եկեղեցական պատմիչ թովմայի մէջ սա նկարագրական տողերը. — «Առ ատորստովն լերան որ է զաղաթն կղզւոյն զտեղի զրօսացուցանողս վայելչաւորս ըստ արժանի կայինից...յարդարելով զփողոցս և դարս դարս դարաստանաց և բուրաստանս և պարաէզս բուրաստանաց և ծաղկոցաց որոշեալ հովիտս, դոր վաղվաղակի տծեալ ի կատարումն հասուցանէ զամնայն ևս և զծառատունկս բազում զոր ոսոզեալ արբուցանին ի բարեհամ

եւ անսպառ աղբերէն որ ակնարկելով Խնամողին Աստուծոյ կայ ի մէջ քաղաքինց (Աղթամարայ):

Մինչ այսօր սոյն նկարագրածներէն ոչ մին չերեիր, ծովուն տակ ծածկուած ըլլալով հանդերձ շուկայով, եկեղեցիներէն մէկով և հասարակաց տուններէն շատերով ըստ նոյն նկարագրութեան, ինչպէս կ'ցուցնին այն տուններու աւերախներէն ոմանք ցամաքին վրայ ցան ու ցիր, որ քակեր» կ'կոչուին: Արդէն կ'աւանդուի թէ կղզւոյն այս հետզհեաէ նեղնալուն և ամէնուն բաւական չըլլալուն համար հետզհեաէ ցրուած են անոր բնակիչները, որոնց շատութեամբ երեմն քաղաքի երեւոյթ տրուած էր Աղթամարայ. ըստ հին վանական յիշատկարանաց Ասոնց վերջին մնացորդներն հազիւ 50—60 տարի առաջ դուրս հանուած են կղզին Խաչատուր Գ. Մոկացի Կաթողիկոսի ձեռքով, որք արհեստով նաւազար ըլլալով, մեծ մասսամբ հաստատուեցան Աւանց գիւղին մէջ. որ իբր կէս ժամ հեռու կ'գտնուի Վանայ քաղաքէն՝ անոր Հետիսակողմը, իբր կէս ժամ հեռու կ'գտնուի Վանայ քաղաքէն՝ անոր հիւսիսակողմը, իբր նաւահանդիստ և այն ցեղերու մնացորդներն են, որ ցարդ նոյն նաւազարութեան արհեստով կ'զբաղին միենոյն գիւղին մէջ: Մինչ այսօր կղզին մէջ չի գտնուիր նաև այն բարեհամ և անսպառ աղբիւրը, այլ անոր փոխարէն մի քանի հորեր կան, որոց ջուրերը փոխանակ անսպառ և բարեհամ ըլլալու աղի են, և շատ քաշուած ատեն ալ կ'ապառին: Բայց իբրի ապացոյց այն նախկին աղբիւրի զոյութեան, ասկէ առաջ ջրհոր մ'ալ կար ծովուն եղերքը, որ այժմ ջրասոյզ եղած է: Կ'ըսուի թէ շատ պազ և անուշ ջուր կուտար, և ասկէ զատ միւս հորերուն պէս կայուն չէր իր ջուրը, այլ առուի պէս զնայուն. այն աղբիւրին հետքն ըլլալու է մնչուշտ՝ այժմ ծավասոյզ եղած, որ եթէ հետամուտ ըլլան, կըրնան մասնագէտներու միջոցաւ քիչ ծախքով ի յայտ բերել, կղզւոյն խմելու ջուրին անհրաժեշտ պէտքը լեցնելու համար:

Արդ, երբ կղզին կէս ձկան նման ցուցինք, պէտք է զիտնալ թէ վանուց չէնքերը՝ այսինքն՝ վնարան, սենեակներ, դպրոցը, են., ինչպէս նաև անոր արդի Ս. Խաչ եկեղեցին կ'գտնուին անոր գլխուն և պոչին մէջտեղ, ճիշտ կոնակին վրայ: Վանական տեղագրութիւնը կամ վիճակագրութիւնն ուրիշ առթի մը թողլով, կ'ուզեմ բան մը յիշել այս պանչելի եկեղեցւոյն ամրութեան վրայ, որ Փրկչի 921 թուականին շինուած ըլլալով, իր շինութեան հազարամեակը պիտի տօնուի ասկէ 20 տարի վերջ: Ահա այսչափ հին եկեղեցի մը տասնեակ դարերէ ի վեր կուրծք տուած երկնից կայծակներուն, փոթո-

րիկներուն և երկրաշարժներուն, մանաւանդ Առաքել եկեղեց-
յականին նկարագրած երկրաշարժին, որ տակն ու վրայ ըրած
է վան և իր շրջականները, գեռ կանգուն կ'մնայ իր հսկայ
գմբէթով, նկարէն պատերով, կարծես արհամարհելով հուժկու-
ժամանակին վես յոխորտանքը։ Այսպէս որ յաչս մեր դրացի
քուրդ ժողովրդեան եօթն սքանչելեաց կարգը դասուած է այն՝
գմբէթայարկ շիրմի մը և հոյակապ կամուրջի մը հետ, և ցարդ
հետինալը կ'ըսեն իրենց լեզուով «Տեր և Աղքամարէ, զումբարէ
ուսանէ ու փրեկ պարմանէ կեար խարապ նա տրպէ հաս'ախրց
զամանէ»։ Որ այսպէս կ'թարգմանուի «Ճամն Աղքամարին, Գրմ-
բէր Ռուսանին, Կամուրջ Պարմանին պիտի չաւերին մինչեւ յօնի
վիրջին»։ Յիշեալ գմբէթը կ'գտնուի ոստանի մօտ գերեզմանի
մը վրայ, որ ըստ աւանդութեան տեղւոյն Հագարացի պարոն-
ներէն միոյն էզզին Շէրի, Աղջէկան, Հալեմա խաթունի շիրի-
մըն է, որ շատ նուրբ կերտուած է զեղակերտ դռնով ու պա-
տուհաններով, շինուած համակ սրբատաշ քարերէ արարական
ճաշակով. գմբէթին շուրջ գոտեորուած է քարափոր ծաղկեզար-
դերով և շուրջանակի արաբերէն գրուածներով, գործ ԺԴ. դա-
րու։ Իսկ Պաթմանի կամուրջը կ'գտնուի Տիգրիսի վրայ Տիա-
րապէքիրի մօտերն որ շատ հաստատուն, հսկայ և հոյակապ է։
Աղքամար բաղին ծագումը գեռ չէ պարզուած։ Եղածները լոկ

Թիւգանիդ.

ՑՆՈՐՔՆԵՐ ԵՒ ԵՐԱԶՆԵՐ

(Օ. Շրէյների)

Նույրում եմ այս հէքիաթները փոքրիկ տղջկան,
որ շնորհի Աստուծոյ կը զորգանալ, մինչև որ առ
մելի կատարեալ կերպով կը հասկանալ այն, ինչ որ
առայժմ մեղ համար դեռ շաշափելի չէ ու երեսմ
է մեղ ցնորքների ու թեթևանցուկ տեսիների մէջ:

Օ. Շրէյներ

Matjesfontein
Cape Colony Sauth Africa
November 1890.

Վ Ա Յ Բ Ե Ն Ի Մ Ե Պ Ո Ւ Ն Ե Բ

Բաց պատուհանի առաջ նստած էր մայրը: Ներքե ակա-
ցիաների տակ խաղացող երկխաների ձայները հասնում էին
նրան, իսկ ջերմ կէսօրուայ օդը աւելի և աւելի թափանցում
էր սենեակը: Վայրենի մեղուները, ծաղկափոշույ գեղնուած
թաթիկներով, մերթ սենեակն էին թռչում, մերթ սենեակից
դուրս էին սլանում, նստում էին ակացիաների տերեների
վրայ ու անդադար բզզում:

Մայրը նստած էր ցածր բազկաթոռի վրայ սեղանի առաջ
և ինչ որ կարկատում էր: Իր առաջ դրուած զամրիւղից նա
հանեց ձեռագործը, որի մի մասը ընկաւ ծնկների վրայ և կի-
սով չափ ծածկեց նրա առջն դրած զիրքը: Նա կարում էր ու
հետեւում իր ասեղի պտոյտներին, Վերջապէս մեղուների միա-
տեսակ բզզոցը և երեխաների ձայների աղմուկը ձուլուեցին
նրա ականջներում իբրև մի անորոշ շնչիւն, իսկ ասեղը աւելի

դանդաղ ու դանդաղ շարժումներ սկսեց գործել, Եւ մեղուները, այն երկայնուանի պիծականման արու մեղուները, որոնք մեզը չեն պատրաստում, բարձր բզզոցով աւելի և աւելի էին մօտենում նրա գլխին:

Քնից ծանրացած նա զբեց ձեռքը սեղանի ծայրին, գուլպայի հետ, իսկ զլուխը զբեց ձեռքին երեխաների ճայները բակից նրան թւում էին մերթ մօտիկ, մերթ հեռացած և աւելի ու աւելի միանում էին նրա ականջներում. ապա բոլորովին էլ չէին հասնում մօր ականջին, Եւ նա սկսեց միայն զգալ արգանգում պառկած իր իններորդ երեխային:

Մեզուները շարունակում էին թագել նրա զլխի շուրջը, և նա, թեքուելով առաջ, քնած էր, իսկ նրա զլխով անցնում էր կախարդական մի երազ:

Նա երազում էր թէ մեղուները շարունակ երկայնանում էին ու երկայնանում, մինչն որ զերջատէս մարդկային արարած դառնալով բոլոր ժամանակ պտտաւմ էին նրա շուրջը: Նրսոցից մէկը մօտեցաւ մօրը և ասաց՝ «Թոյլ տուր ձեռքս զնել այնտեղ, որտեղ պտուկած է երեխադ. Կթէ ես ձեռքովս զիար չեմ նրան, նա կը լինի այնպիսի մէկը՝ որպիսին ես եմ»:

Մայրը հարցրեց՝ «Դու ով ես».

«Ես—Առողջութիւնն եմ»—պատասխանեց նա.—«Ում որ ես մօտենում եմ, նրա երակներում հօսում է զուարթ կարմիր արիւն, նա ոչ յոդնածութիւն, ոչ էլ ցաւ զիտէ, նրա համար կեանքը ամրողջովին զուարծութիւն է առանց տիսրութեան, զուարթ ու յարաւան մի խնդանք է»:

—«Ո՛չ, ասաց միւսը, —թոյլ տուր ինձ ձեռքս զիարցնեմ երեխայիդ, ես—Հարստառութիւնն եմ: Եթէ ես զիարչեմ նրան, նա ազատուած կըլինի բոլոր նիւթական հողսերից, նա կ'ապրի իր եղբայրների ոյժերով և արիւնով, Կթէ կամենայ. և բոլորը, ինչ որ նրա աչքերին հածելի կըլինի, նա ձեռք կը բերի: Նա չի զիտենայ, թէ ինչ բան է կարօտութիւն ունենալու: Եւ նա լսեց. իսկ երեխան նոյնպէս հանդիսա ու առանց շարժումի պառկած էր:

Եւ երրորդ արարածը առաց. «Ե՞նձ թոյլ տուր զիարչել երեխայիդ, ես—Փառք եմ: Ես տանում եմ մարդուն բարձր բլուրը, որտեղից բոլոր մարդիկ կարող են նրան տեսնել. Երբոր նա մեռնում է, նրան չեն մոռանում, նրա անունը թընդում է զարեր, նա անցնում է բերանից բերան, մի սերունդից միւս սերունդը: Մտածիր միայն. — չըմոռացուել զարերի ընթացքում:»

Մայրը շարունակում էր հանդիստ և ուղիղ շունչ քաշել քնի մէջ. բայց ֆանտաստիկական տեսիլները շրջապատռում էին նրան ամեն կողմից:

—«Թոյլ տուր ինձ զիաշել երեխայիդ—ասաց էլի մինը նրանցից.—Ես Սէրն եմ, եթէ ես զիաշեմ երեխայիդ—նա միայնակ չէ անցնելու իր կեանքի ճանապարհով. անթափանցելի մթութեան օրերով, երբ նա ձեռք կըմեկնի օգնութեան, նա կըհանդիպի միւս ձեռքին, որ կըպահպանի և կըխրախուսի նրան. և եթէ բոլորն էլ նրա դէմ լինեն, կըգանուի մի հոգի, որ կ'ասի նրան՝ «Ես քեզ հետ եմ»:

Եւ երեխան ցնցուեց մօր արգանդում:

Բայց երեաց էլի մի արարած որ ասաց. «Ինձ թոյլ տուր մօտենալ, որովհետեւ, ես—Տաղանդն եմ: Ես ընկունակ եմ գործելու այն բոլորը, ինչ որ շինուած է արդէն: Ես վարձատրում եմ յաջողութիւն ունեցող զինուորին և պետական գործիչն, փիլիսոփային և քաղաքագէտին՝ որողին, երբէք իւր ժամանակից առաջ չընթացող և նրբէք յնտ չմնացող. երեխադ երբէք չի զանգատուիլ իր անյաջողութիւնից, եթէ ես զիաշելու լինեմ»:

Մեղուները թոչում էին մօր զլիսի վրայով, համարեա, թէ զիաշում էին մօրը իրանց երկայն բարակ թաթիկներով, երբ երազում սենեակի հեռաւոր մութ անկիւնից զուրս եկաւ մի նոր ուրուական գունատ դէմքով, խոր կաճիռներով, ներս ընկած թշերով, ժամփը դողում էր նրա շրթունքներին: Նա մեկնեց ձեռքը մօրը, մայրը յետ տատանուեց և ճիչ արձակելով հարցրեց. «Դու—ովկ ես նա ոչինչ պատասխան չը տուեց:

Մայրը նայեց նրա աջքերին և ասաց. «Ի՞նչ կարող ես զուտալ զաւակիս. —առողջութիւն»:

Նա ասաց. «Ոչ, այն մարդու երակներում, որին ես դիսլշում եմ, վառվում է ահուելի ջերմ և որպէս հուր լափում է նրա արիւնը. այդ ջերմը կարող է միայն այն ժամանակ բժշկուել, երբ կեանքը բժշկուած կը լինի»:

—«Դու տալիս ես հարստութիւն»՝

Նա գլուխը բացասական կերպով շարժեց. «Երբ որ մարդը, որին ես դիսլշելու եմ, կը թեքուի գետնից ոսկի բարձրացնելու. համար, յանկարծ մի կրակ երկնքում կը քաշի նրան և մինչեւ որ նա իւր դէմքը դէպի երկինքն է դարձնում, ոսկին դուրս է պլքում նրա ձեռքերից և մի ուրիշ անցորդ է երբեմն բռնում»:

—«Փառք ես տալիս»:

—«Ոչ, որին ես դիսլշելու եմ, նրա համար աւագի

վրայ մի անտեսանելի մատուլ նկարագրուած է շաւիդ. երբեմն այդ շաւիզը տանում է համարեա մինչն գագաթը և յետոյ յանկարծ ողորուում է ներքն՝ դէպի ձորը. նա պէտք է գնայ այդ շաւզով, թէպէտ ոչ ոք իրանից աւելի չէ տեսնում այդ շաւիզը»:

—«Մէր ևս տալիս»:

Ուրուականը ասաց՝ «Նա կը զգայ սիրոյ մեծ ծարաւ, բայց յագեցում չէ գտնելու, և երբ նա բաց կանի իր զիրկը սիրոյ առաջ և կը կամենայ սեղմել նրան... Սյու ժամանակ հեռու հորիզոնի վրայ նա կը տեսնի լուսոյ ճառագայթ. նա կը գնայ դէպի այդ ճառագայթը, բայց իր գանձը իր հետ նա չի կարողանայ տանել. նա պէտք է մենակ ճանապարհ ընկնիւ կամ թանկազին էակը իր բոցավառ սրտին սեղ-մելիս, երբ նա կը բացականչի՝ «Իմո ես, իմ սեպհականս», նա կը լսի մի ձայն՝ «Մէրժիր նրան, դա քոնը չէ»»:

—«Նա յաջողութիւն կ'ունենա՞յ»:

Ուրուականը ասաց՝ «Անյաջողութիւն կը տեսնիւ Ուրիշների հետ մի որ և է նպատակի ձգտելիս, նրանք այդ նպատակին նրանից աւելի շուտ կը համեն, որովհետեւ արտասովոր ձայներ կը կանչեն նրան և պանչելի լոյս կը հրապուրի նրան. նա ստիպուած կը լինի լսել ու սպասել: Բայց ամենազարմանալին ահա թէ որն է. հեռու, հեռու այրող աւագների հետելից, այնտեղ, ուր միւս մարգիկ աննապատային տարածութիւններից աւելի ոչխնչ չեն տեսնում, նա կը տեսնի մի կապոյտ ծովի Սյու ծովի վրայով արել միշտ փայլում է, նրա ջրերը կապոյտ են, որպէս պարզ երկինք, իսկ ափերի վրայ խաղում է սպիտակ փրփուր: Սյու ծովի միջից մի մեծ աշխարհ է բարձրանում, և նրա սարերի գագաթներին որդիդ կը տեսնի շողշողուն ոսկին»:

—Եւ մայրը հարցրեց՝ «Իսկ որդիս կը համնի այդ աշխարհը»:

Ուրուականը օտարուած ժամաց:

Մայրը հարցրեց՝ «Կայ արդեօք իրականութեան մէջ այդ աշխարհը»:

Նա ասաց՝ «Ի՞նչ կայ իրականութեան մէջ».

Եւ մայրը նայեց ուրուականի կիսաբաց աչքերին և ասաց «Դպիր երեխայիս»:—Ուրուականը խոնարհուեց, դրեց ձեռքը քը-նած մօր վրայ և կամաց ինչ որ փափսաց: Մայրը կարողացաւ լսել միմիայն այս խօսքեր՝ «Հատուցում կը լինի ֆեզ այն, որ իդեալը (կատարելութեան գաղափարը) — իրականութիւն կը դառնայ ֆեզ համար:... Եւ երեխան արգանդում ցնցուեց: Մայրը

շարունակ քնած էր նոյնպէս ծանր քնով, իսկ տեսիլները անյայտացան:

Եւ նրա էռութեան խորքերի մէջ դեռ չը ծնուած երեխան տեսաւ մի երադ: Նրա գեռ երբէք օրուայ լոյս չը տեսած աչքերում ու դեռ չը հասունացած ուղևղի մէջ փայլեց լոյսի զգացմունք, այն լոյսի, որ նա երբէք տեսած չէր և, գուցէ, երբէք տեսնելու էլ չէր, բայց որ կայ մի որ և է տեղ:

Եւ երեխան ստացաւ իր նուէրը՝ գաղափարականը—իդէալը նրա համար իրականութիւն դարձաւ:

Թարգմ. ոռ. Յ. Տ. Դ.

ԱՏ. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

ԳԵՂԻԳ ՔԱՆԱՆԵԱՆԻՆ

I

Իմ աղնիւ Հայրենակից:

Ահա մատուցանելով Ձեզ ի աեսութիւն մեր հրատարակելի
«Լապտեր Հայաստանի» օրագրի առաջարկութիւնը, քաղցր է
ինձ ասել Ձեզ, որ ես անչափ ուրախ եմ խորհրդակցութեամբ,
միաբանութեամբ և թեւակցութեամբ ընդ Ձեզ յառաջ տանել
մեր հասարակաց Հայկական գործը, եւ ես կարծում եմ. ոչ, ա-
մենեւին աներկմիտ եմ, որ ոչինչ աւելի առուր բարոյական
կուպ և բարեկահական գաշնաւորութիւն չկայ մարդերի, իբրեւ
բահաւոր և բարոյական էտիկերի, ես առաւել հայրենակիցների
մէջ, քան թէ այն, որ հիմնուած է մի առաքինազործ միարան
ձեւնարկութեան վերայ: Ես մինչեւ այժմ աշխատած, քրտնած
և առապակուած եմ միայն, մեր ազգի մտաւոր և բարոյական
օկունների համար: Այդ փոքր է և շատ փոքր, և միշտ մնալու
է անյաջող, գոնեայ անտեսողական, որովհետեւ մի հատիկ մարդ,
որչափ ես քանզարաշատ լինէր նու, անբաւական է տանել բո-
լոր ծանրութիւններին այնպիսի մի ձեւնարկութեան, որպիսի
է հրատարակութիւնը մի արժանաւոր օրագրի. բայց միացեալ
և միաբանեալ զօրութիւնքը, ընկերութեան ոյժը, որոյ մէջ
պարունակուած է և մարդուս մնածագործութեան կարողութիւ-
նը, ինչպէս քաջ յայտնի է խոհականիդ, սովոր են հեշտացնել
ամենայն գժուարութիւնք, այս հնարաւոր կացուցանել այն
բանը, որ ամենարին է առանձնական անհատների:

Սրանից շատ բացայայտ և հասկրմնալի պիտի լինի Ձեզ,
թէ ես որպիսի աչքով նայում եմ մեր առաջարկած գործի վե-
րայ: Սպասաւորել իւր ազգին պարտական է ամենայն անձն.
Դուք, ես և ամենեքեան, որ կարող են իւրեանց ստացած
չնորհներով, միայն թէ, այն ժամանակ լի և կատարեալ չափով

հնարաւոր է արդիւնագործութիւնը, երբ ներգործում է ընկերութեան ոյժը և զօրութիւնը:

Խնդրեմ ուշազրութեամբ ընթեռնուլ իմ զրած առաջարկութիւնը և լցուցանել պահասորդքը, եթէ կը գտանէիք: Կարծեմ, բոլոր զիխաւոր նիւթերը մեր խնդրի, պարունակուած են այստեղ: Ես մտածում եմ, որ չուտով հարկաւոր էր յառաջնազացուցանել գործը. շատ չնորհակալ կը լինէի Զեղ, եթէ հոգաբարձու լինէիք օրինակել տալու իմ զրչագիրը Զեր զիւանի նոտարիոսի ձեռնով, իսկ ես յետոյ կը ստորագրէի և Դաք կ'ուղարկէիք նամակը ինստիտուտի կնքով կնքելով:

Ձեղ յարգող հայրենակից

Ս. Ն. ԶԱՐԵԱՆՑ

23 մայիս, 1868 թ.

Մոռկուա.

II

Թիֆլիս, 22 Հոկտ. 1869.

Իմ ազնիւ բարեկամ

Գէորգ Եղիսան,

Ահա անցանում է երրորդ ամիսը, որ ես անջատուելով Ձեզանից, ճանապարհ ընկայ դէպ ի Թիֆլիս: Թէ որպիսի նեղութեամբ և տառապանքով կատարուեցաւ իմ ուղեորութիւնս, ըստ մեծի մասին ջրով և փոքրիկ մասամբ միայն ցամաքով, չկամիմ նկարագրել Զեղ. բաւական է միայն ասել Զեղ, որ բուն 21 օր տեսց մեր ճանապարհորդութիւնը: Այժմ Թիֆլիզումն եմք և որպիսի կացութեան մէջ, կամիմ փոքր ի շատ է պատմել Զեղ և ցաւում եմ, որ իմ պատմութիւնը չէ լինելու Զեղ շատ միիթարական: Շատ բան հեռուից տեսած, պսպղուն և զրաւիչ է, բայց որ մօտից քըննում ես և չօշափում ես, ոսկի կարծեցածդ ստուգվում է մի շատ հասարակ մետաք: Այժմ, երբ արդէն արած է վճռական քայլափոխը, պիտի ասեմ Զեղ, որ ամենեին հաւան չեմ Թիֆլիզին. մի կաննիբալեան թանգութիւն է այստեղ. բնակութիւն և ծառացք ուկով կշուկում են այստեղ: Իմ օթեանս արժէ 800 ման. ծառացքս 200 ման., տարեկան վարձով: Թիֆլիզը, ինչպէս

Չեզ յայտնի է, բաժանվում է հին և նոր մասը. ևս բնակում
եմ նորումը, որովհետեւ այդ տեղ միայն կարելի է գտանել
փոքի ի շատէ յարմարաւոր և վայելուչ բնակութիւն, թող և
այլ յարմարութիւնքը, միտ զնելով օդի պատուականութեանը
և տեղին, որ շատ հեռի չէ Ներսիսեան հոգեոր ազգային դրա-
րոցից։ Փայտը շատ թանգ է. կեանքի պաշարեղէնք արժան,
բայց կերակուրքը համեղ միայն փորձառու տանտիկնոջ պատ-
րաստութեամբ. բայց Թիֆլիզեան խոհակերների խառնավնդու-
րութեամբ, ամենին անուտելի ինձ։ Մրգեղինը ու ուշեմ։
Միայն թէ ինչ որ ինձ համեղ էր իմ մանկութեանս օրերում,
այժմ զարձած է ինձ մի շատ հասարակ բան։ Վաճառականու-
թիւնը շատ ծաղկած է այստեղ և Հայոց ձեռքում գրեթէ միայն.
մեր Հայերը ունին այստեղ մազազիններ, որ իւրեանց փառա-
հեղութեամբ և չքեղութեամբ ոչ թէ պակաս չեն Մոսկուայի և
Պետերբուրգի փառաւոր մազազիններից, այլ և մի մասամբ գե-
րազանց ու առաւել։ Մի բան իսկոյն դրաւում է այստեղ մար-
դուս ուշադրութիւնը. ճոխութիւնը և հարստութիւնը և տմար-
դի ազանութիւնը այս տեղի մարդերի. խիզճ, պատիւ, կարեկ-
ցութիւն, ազիւ զգայնութիւն, ոչինչ նմանապիսի բան չկայ
այստեղ։ Չեզ պիտոյ էր տեսանել, թէ ոմանք հարուստ Հայեր
նրափիսի չքեղազարդ տուներ ունին այս տեղ, ոսկեզարդ կէս
մի ասիական և կէս մի եւրոպէական ճաշակաւոր փառահեղու-
թեամբ, կարասիքով և այն և այլն։ Միայն թէ տների փառա-
հեղութեանը համեմատ չէ փողոցների բարեկարգութիւնը, որ
ըստ մեծի անպիտան կերպով սալայատակած, առանց օրինաւոր
արօտուարների—շատ տեղ դոքա չկան և—լի են ամենայն
տեսակ ապականութեամբք և աւելածքով. քաղաքի լուսաւորու-
թիւնը գիշերով այնպէս պակասաւոր և չնչին, որ ման զալ
կարելի չէ, առանց վայր ընկնելու և ուգը ու զլուխ ջարդելու.
շատ մարդիկ և ընտանիք լսալուերով են շքում փողոցների մէջ
գիշերով։ Մի խօսքով, սիրելի քաղաք չէ Թիֆլիզը և շատ ան-
յարմար նոցա, որ երկար ժամանակ կացած էին Ռուսաստանի
մայրաքաղաքներում։ Զբոսանքի տեղ է միայն Գոլովինսկիից
Պրօսպեկտը, ուր և գտանվում է փոխարքայի ապարանքը
բարձր տեղում, և նորա առաջի ծառաղարդ ճեմելիք սալայա-
տակով սրբատաշ քարերից, մինչև բաւական տարածութիւն
դէպ ի վեր ձգուելով նոյնպէս ծառաղարդ ճանապարհով։ Կայ
այս տեղ մի այլ զբոսարան, Ալեքսանդրեան այգի, որ բաւա-
կան վայելուչ և ընդարձակ է մի շատրուանով, որ խաղում է
կիւրակէ և հանդիսաւոր օրերում, ուր և մեծ բազմութիւն լի-
նում է։

Իմ անսչութեանը յանձնած ուսումնարանը տակաւին շատ պակասաւոր զրութեան մէջ է. շինութիւնը և դասատունքը կեղտու և անկարգ: Վարժապետները լաւ մարդիկ են և աշխատում են ազգասիրական ջերմուսնդութեամբ, բայց ստանում են փոքրիկ վարձատրութիւն 50 մանէթ տարեկան դասին, որ շատ փոքր է Թիֆլիզի պէս թանգ տեղում: Ծխական ուսումնարանները, որ էին պատրաստողականքը դպրոցի համար, ամեներն բարձի թողի արած: Ուսումնական հնարները, զբարոցական մատեսանք և դիմունական հանդերձանք զրութէ չկան ամենելին: Թէալէտ իմ առաջարկութեամբք և խթանմամբ ուսք ու ձեռքը հոգաբարձուների սկսած են շարժուել և արիանալ. բայց մեր յարակցութիւնքը գես ևս ստացած չեն այն բարեացակամական և յարգողական ուղղութիւնը, որ կարելի լինէր ինձ այժմ շատ պաղաբերութիւն յատաջաշնել: Ես չկամէի լոկ վարձկան լինել, բայց նոքա, ինչպէս երեսում է, չեն հասկանում այդ բանը և այդ պատճառով չկամէն վերահասու լինել իմ նեղեալ կացութեանը և օգնել ինձ վասն իւրեանց յատուկ օգտին: Իմ առաջարկութեամբ և աշխատութեամբ հանդիսաւոր ակտ եղաւ այս տարի 12 Հոկտ. ուսումնարանում. մնձ բազմութիւն, հրաւիրուած էր ուսումնարանի զարդարած գահճի մէջ. ասուեցան ճառուր, իմ կողմից և համարատուական ճառ Հոգաբարձուներից մինի բերանով: Գուցէ յաջողուի ինձ հրաւարակել այդ ճառերը, մի քանի պյլ աշխատութեամբք վարժապետների, հանդերձ ինչ ինչ կարուր աեղեկութեամբք ուսումնարանի վերայ, իբրև մի brochure, որ արժանի էր լնթերցունութեան:

Ե՞նչն այսօրս ոչինչ արձակման թուղթ չեմ ստանում Լաղարեանց ուսումնարանի կառավարութիւնից: Դուք իսուսացաք չուտով ուղարկել ինձ իմ յաջունութեամբք վարժապետների, հանդերձ մեջ ինչ կարուր աեղեկութեամբք ուսումնարանի վերայ, իբրև մի brochure, որ արժանի էր լնթերցունութեան:

Ի՞նչպէս լցուցիք Զեր ճանապարհորդութիւնը. որպէս է Զեր առողջութիւնը, առողջութիւնը Խրիստոֆոր Եակիմովիչի Մերք ապրում ենք Թիֆլիզում, տակաւին սնսնելով այն քաղցր բարեկամութեան յիշատակներով, որ բերած ենք մեր հետ Մոսկուայից: Այս Թիֆլիզի հետ շուտով ընտանենալ և ընտելանալ անկարելի է. տակաւին ամենայն բան օտար է մեզ, բնութիւնը և մարդիկը և այս տեղի կեցութեան կարգը: Մենք մեր բոլոր հոգեկան գոյութեամբ, մեծագոյն մասամբ պատկանում ենք Մոսկուային, ուր մեր կենդանի և հանգուցեալ սիրելիքն են: Այսպէս իմացիր:

Յուսով եմ, որ Դուք կը կամնայիք նամակագրութեամբ հաղորդակից մնալ իմ հետ, ինչպէս խոստաշած էք, ի՞նչ է առնում մեր սիրելի Փանեանցը, որ վազուց թողած է զիս անպատճախնի: Խնդրեմ իմ կողմից սղջունել թէ նրա, թէ մեր տէր Յարութիւնը և թէ մեր պատուական եղբայր Սիմէօն (?) Ամպատեան *) Շահազիբեանցը:

Ուղարկելով Ձեզ իմ առ ի արտէ սիրոյ և յարգութեան ողջոյնը, մնամ

Զեր

Ա. ՆԱԶԱՐԵԱՆՑ

իմ հասցես.

Г. Инспектору Нерсесовского, армянск. Духовно-народного училища,

Въ Тифлисѣ

На углу Сергиевской и Садовой улицы, въ домѣ Григорья Шадинова.

III

Թիֆլիզ, 18 Նոյեմբ. 1870.

Մեծապատիւ բարեկամ,

Ձեր յարգելի նամակը ամսուս 4 թուականից հասաւ ինձ ժամանակին, որոյ մէջ յայսնում էք ինձ ներկայ պայմանքը այն պրօֆեսորական պաշտօնի, որ ես ցանկանում էի վերստին յանձն առնուլ Լազարեանց Խնսափտուտում: Արգարի, այս բոպէիս այդ պայմանքը (1200 մտն. տարեկան ոռոճիկ 16 չարաթական ժամներով գասատութիւն, չեն ամենեւին շահաւէտ ինձ—ես ստանում եմ իբրև տեսուչ ներսիսեան գպրոցի 1700 ոռոճի և 400 մտն. զան դասատութեան—սակայն վստահանալով առ Ձեր բարեմտութիւնը առ իս և տեղի աալով Ձեր բարեկամական խորհրդակցութեանը և յուսագրութեանը, որ ժամանակով այդ պայմանքը կարող են և պիտի փոխուին դէպ ի լաւագոյնը և առաւել շահաւէտը ամենայն, մասամբ, թնդ առ հասարակ որ և իցէ արքունի պաշտօնի ապահովութիւնը և պատուաւորութիւնը, շտապում եմ այս նամակովս վճռողաբար

*) Ալդուն է ձեռագրում:

Ե. Խ.

պատասխանել Ձեզ, որ ես յանձառու եմ դորան։ Մնում է միայն մի լուծանելի խնդիր, որոյ մասին ես մեծ մտատանջութեան մէջ եմ. այդ խնդիրը պատկանում է իմ տեղափոխութեան ծախքին, որ միտ զնելով իմ մատենադարանի և այլ տնտեսական անօթների ձանրութեանը, այգան ահազին հեռուոր ճանապարհի մէջ, հասանելու են, շատ փոքր հաշուելով, գոնեայ 600 ման. առանց իմ անձնական ճանապարհորդութիւնս առանց ձանրութիւն տալու ինստիտուտի գանձատանը, բայց իս գրեանքի և տնտեսական անօթների ձանրութիւնքը տեղափոխելու համար դէպ ի Մոսկուա ստիպուած կը լինէի ծանրաբեռնել ինձ պարտքով, և այդպէս իմ տեղափոխութիւնս նստելու էր ինձ գրեթէ իմ մի տարսւ պրոֆնսսորական թոշակը։ Անա մի գժուարին խնդիր, որ առաջարկում եմ Ձեր բարեմիտ, բարեկամական ուշադրութեանը և յանձնում եմ մեծաւորների մարդասիրութեանը։ Ձեր նամակի մէջ ոչինչ ասած չկայ ճանապարհի ծախքի վրայ, որ միտ զնելով գոնեայ իմ չքաւորութեանը այս բոպէիս, եղկրորդական խնդիրներից չէ։ Ես կամիմ յուսալ, որ Ձեր բարեկամական հոգաբարձութեանը և բարեխօսութեանը առ պ. Հոգաբարձուն և առ Դիրեքտորը պիտի յաջողուի լուծանել այդ խնդիրը, որով փոքր ի շատէ թեթեացնելու էիք իմ ծանր գրութիւնը Եւ ես լինելու էի Ձեզ այս մասին յաւիտեան չնորհապարտ Ես մտածում եմ, որ Խնստիտուտի բարեմիտ մեծաւորքը յարգելով իմ այնքան ամեայ ջերմնուանդն և պողաբեր պաշաօնատարութեանը Լազարեանց Խնստիտուտի մէջ, դժուարնալու չէին յանձն առնուլ այդպիսի մարդասիրական զոհաբերութիւն, որ արդարե, եթէ ամենայն ինչ ձգէինք նեղսրտութեան հաշուի տակ, պիտոյ չէր լինելու, եթէ մի այլ խնդրակից նոյն պաշտօնին, Մոսկուայից կամ Պետերբուրգից հրաւէր ստանար յանձն առնլու իմ պաշտօնը։

Յայտնելով Ձեզ արդէն իմ պատրաստականութիւնը և յօժարութիւնը վերստին յանձն առնլու պարախկ և արաբական գպրութեան պրօֆեսորական պաշտօնը ի վերայ հիման Ձեր առաջարկած պայմաններին, այլ և յանձնելով Ձեր բարեկամական հնարագէտ հոգաբարձութեանը թեթեացնել ինձ իմ տեղափոխութեան նիւթականապէս դժուարութիւնը, որչափ միայն կարելի էր Ձեզ, միտ զնելով վերենում ճառագրած իրողութիւններին, քաղցր է ինձ ամեն վստահութեամբ առ Ձեր բա-

րեկամական պատրաստականութիւնը օգտակար և պիտանի լինելու ինձ:

Գրել զիս յառաջուց
Զեղ չնորհապարտ բարեկամ

Ա. ՆԱԶԱՐԵԱՆՑ

Խեղրեմ պ. Էմինին մատուցանել իմ մեծարողական ողջոյնու

IV

Թիֆլիս, 23 Սեպտ. 1871 թ.

Մեծապատիւ խոհական բարեկամ
Գրիգոր Եղիան,

Իմ նամակս առ Զերդ սիրելութիւն, անցեալ յուլիսի 4 թուականից, անկորուստ ստացած կը լինիք և տեղեկացած, որ ես հոգով չափ յօժար էի զարձեալ տեղափոխութիւն դէպ ի Մոսկուա, նոյն պաշտօնի անուամբ, որ այդքան տարի Զեր բարեկամական Տեսչութեան ներքոյ լցուցած էի. միայն թէ, որ շատ բնական էր մանաւանդ գերդաստանի հօրը, զինի այնքան զրկանքի որ պատրաստած էր ինձ իմ տեղափոխութիւնս դէպ ի Կովկաս և անակարգութիւն Թիֆլիզի մէջ, ես մանրամասնաբար նկարագրեցի Զեր առաջն ի գիտութիւն պատուական սիրելոյդ այն բոլոր գժուարութիւնքը, որ կարենորապէս կապակից պիտի լինէին իմ վերստին տեղափոխութեանս դէպ ի Մոսկուա և այնտեղ նոր ի նորոյ տնային կարգադրութեանս: Բայց ես կնքեցի իմ նամակս այն քաղցր յուսով և վստահութեամբ, որ Դուք գործ դնելով Զեր առ իս մարդասիրութիւնը և բարեացակամութիւնը, որ և է կերպով կը թեթեացնէիք իմ կեանքի արդարի ծանր և ծանր բեռնը:

Որովհետեւ այժմ, ինչպէս լսում եմ, ինձ առաջարկած պրօֆեսուրական պաշտօնի պայմանքը, կարգադրութեամբ պարոն նախարարի, Տօլստօյի, դէպի առաւել շահաւէտը փոխուած են, շտապում եմ Ձեզ տեղեկութիւն տալ, որ ես վճռապէս և որոշապէս պատրաստ եմ յանձն առնուլ այդ պրօֆեսուրական պաշտօնը և յուսով եմ, որ ինսալտուաի մեծաւորքը, Դուք, իմ պատուական պարոն և բարեմիտ Նիկօլայ Դաւիթովիչ Դիկեանովը միտ դնելով իմ ծանր զրկանքին և բարեկամական կարեկցութեամբ առ իմ չքաւորութիւնը—որովհետեւ Թիֆլիզը կա-

բող է միայն չքաւոր առնել մարդ և այդ տեղ մի քանի 1000 մանէթ այս ահազին թանգութեան մէջ ոչինչ են, — ևս յուսով եմ, որ իմ տեղափոխութիւնը Դուք, որքան ներում են Զեր կարողութեան հնարքը կը թեթեացնէք ինձ, զիս յաւիտեան շնորհապարա կացուցանելով Զեր սիրելութեամնը:

Ես ամենսին սիրալուեցայ, յդանալով անգամ այն խորհուրդը, թէ կարելի էր որ և իցէ օգտակար գործ յառաջ տանել կովկասի մէջ, մնր սիրելի ասիամիտ Հայերի հետ, յանուն ազգային զաստիարակութեան և լուսաւորութեան Ես սիրալուեցայ յանձն առնլով այդպիսի, ահազին զրկանքով լի տեղափոխութիւն և կենակյութիւն այնպիսի մարդկան, որ ինքեանք լինելով իւրեանց թշնամիք, ամենսին տղէտ և անփոյթ ժամանակի յառաջաշարժ ընթացքին (պրօքրեսին) ամենայն քայլուփոխում և զիս կալ և կապ կաշկանգելով, ոչնչացնում են իմ բոլոր ոյժը և գօրութիւնը, այնպէս որ սափառուած եմ վատահութեամբ առ Զեր ազնուամտութիւնը, ասել Զեղ, թէ ես խաղալիք եմ դարձած այս անմիանների և անբարոյականների անմտութեանը և անբարոյականութեանը: Եւ այլապէս ես կարելի չէ մի հոգաբարձական ժողովի մէջ, ուր նստած է տամներկուզլիմանի վիշապ, մի զլիսանի վիշապապետով: Եւ սոցա ջանքը և փոյթը այն չէ, որ ազգի մանկունքը ժամանակի հետ յառաջ գնան, այլ վայր ի վերոյ, անկարգ ուամամիր մանմտանան միանդամայն, իմ հայրենասիրութիւնը—άն, իմ հայրենասիրութիւնը, որով մրայն մոլորուած և յափշտակուած ես ձգեցի իմ անձը այս խորհորատի մէջ—իմ հայրենասիրութիւնը ոչինչ է, ունայն է այստեղ, որովհետեւ հանգիպում է մի անմիտ և թշնամական հայրենատեցութեան: Մի սարսափելի անմիաբանութիւն, մի բթամիտ անհոգութիւն տիրապետած է այսուեղ, ոչ մի ինդիր, ոչ մի առաջարկութիւն իմ կողմից, պատկանեալ ուսումնարանի թէ արտաքին և թէ ներքին բարեկարգութեանը, մինչի այժմ գտած չէ ուշադրութիւն. վայր ի վերոյ շատախօսութիւն և վիճաբանութիւն և կորուստ ժամանակի շատ, բայց վճիռ որոշումն և գործավճարութիւն ոչ մի: Ոչինչ հաստատուն բան, որչափ գլուխք, այնչափ կարծիք, Հոգաբարձուների ժողովումը շատ անկանոն. երկուքը կան, չորքը պակաս են, չորքը կան, ութը պակաս են. և ատենապետը (որդեօնածու) գրեթէ միշտ բացակայ: Ահա Զեղ հոմառուիւ, այս մեր հայկական ուսումնարանի կառավարութեան պատկերը, ողբալի պատկերը, և ես, անբաղդ քաղաքացիս եւրոպէական լուսաւոր հասարակութեան, ես, անբաղդ աշակերտս եւրոպէական գալրոցի, ամենայն շաբաթ

ունիմ ականատես լինելու այս տմարդի խառնիկական անմիտ տևարանիս:

Նախախնամութեան կամքն էր տալ ինձ և այս փորձը փորձել, առ ի ճոխացնելու իմ կենսական փորձերի գլուխը (կապիտալը), Բայց արդէն sat est supererque! Հարկաւոր է ինձ մտածել փոքր ինչ շունչ առնուլ իմ ծանրաբեռնած ծերութեան օրերում և իմ մոսկովիկան բարեկամների զրկում, և այդ քաղցր բարեկամներից մին էք և Դուք, իմ ազնիւ Քանանեան:

Այսուհետեւ չունիմ էջ աւելի աշխատ առնելու զՁեզ, զրեցի և թափեցի Ձեր առաջի իմ ցաւած սիրաը. այսուհետեւ Ձեր ջանքից և բարեկամական հոգաբարձութիւնից կախ է ճանապարհ յարգարել ինձ դէպ ի Սոսկուա, և դէպ ի մեր ազնիւ սիրելիքդ այդ տեղ:

Ձեզ յարգող և սիրող

անձնուէր Ա. ՆԱԶԱՐԵԱՆՑ

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆ ՈՂԴՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՑ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«Եւրոպայի հայ ուսանողութեան միութեան» Տեղեկագրի մէջ բերուած են մի քանի հետաքրքրական թուեր, որոնց հետ աւելորդ չենք համարում ծանօթացնել մեր ընթերցողներին:

1900 թուականին եւրոպական զանազան պետութիւնների մէջ ուսանում էին.

| | | | | | | |
|-----------------|------------|---------------------------------|--------------------|-----------------------|------------|----------|
| Անգլիայում | 7 | հոգի որոնցից 1 ա. ¹⁾ | 4 ա. ²⁾ | 2 ա. պ. ³⁾ | | |
| Աւստրիայում | 26 | » | — | » | 26 | » |
| Գեղգիայում | 6 | » | 3 | » | — | » |
| Գերմանիայում | 86 | » | 72 | » | 14 | » |
| Շվեյցարիայում | 51 | » | 32 | » | 18 | » |
| Իտալիայում | 25 | » | 2 | » | 23 | » |
| Ֆրանսիայում | 70 | » | 18 | » | 49 | » |
| | | | | | 3 | » |
| <u>Ընդամենը</u> | <u>271</u> | <u>»</u> | <u>128</u> | <u>»</u> | <u>111</u> | <u>»</u> |
| | | | | | <u>32</u> | <u>»</u> |

Հստ մասնագիտութեան հայ ուսանողները դասաւորուած էին հետեւեալ կերպով.

Բնական դիտութիւններ էին ուսանում 136 (70).

Տեխնիկա » » 54 (28).

Փիլիսոփայութիւն » » 54 (23).

Գեղարուեստ » » 14 (6).

Վաճառականական գիտութիւններ 5 (0).

Անյայտ 3 (1).

Փակագիծներում մենք դրել ենք ուսաստանցի հայ ուսանողների քանակութիւնը ցոյց տուող թուերը:

Եւրոպայի հայ ուսանողները նախնական կրթութիւն են ստացել՝ հայոց դպրոցներում 148 հոգի, իսկ օտար նախնական դպրոցներում եղածների թիւը 40 է, մինչդեռ միջնակարգ կըր-

1) Ո. = Ուսաստանցի, 2) Տ. = Տաճկաստանցի, ա. պ. = այլ պետութիւններից:

թութիւն ստացածներից 106 հայոց դպրոցներից էին և 127 օտար դպրոցներից:

Հայոց դպրոցներում նախնական կրթութիւն ստացած 148 հոգուց, 64 Ռուսաստանից էին, 80 Տաճկ.-ից և 4 այլ պետ.-ից. հայոց միջնակարգ դպրոցներում ուսուած 106 հոգուց, 22 Ռուսաստանից, 81 Տաճկ.-ից և 3 այլ պետ.-ից: Օտար դպրոցներում նախնական կրթութիւն ստացած 40 հոգուց 30 Ռուսաստ., 9 Տաճկ. և 7 այլ պ.-ից, միջնակարգ կրթութիւն ստացած 127 հոգուց 97 Ռուսաստ., 7 Տաճկ. և 23 այլ պ.-ից:

Բոլոր 271 հայ ուսանողներից միայն 161 հոգի էին տիրապետում մայրենի լեզուին, իսկ մնացածների համար (չը հաշվուած 13 հոգի, որոնց մասին տեղեկութիւն չը կայ) հայերէն լեզուն խորթ է եղել: Այդ օտարախօսներից 97 հոգի Ռուսաստանից էին, 23 հոգի այլ պետութիւններից (մեծ մասը, 22 հոգի, լեհախօս հայեր Աւստրիայից) և միայն 4 հոգի Տաճկաստանից:

Հետաքրքրական է իմանալ՝ օտարական հայ ուսանողներից քանիսի մէջ է զարգացել գիտակցութիւնը—սովորել մայրենի լեզուն, որը անհրաժեշտ գործիք է՝ կեանքի մէջ հարազատ ժողովրդին օգտակար լինելու համար....:

*

ՀԵՆՐԻԿ ԻԲՍԵՆ^{*)}

XII

Իրաէնի կանացի տիպերը, — «Ճեզրա Պարթե» (Ճղղացի և Աչօֆբօրգի յարարերութիւնները, — Նէղդան իրոււ տիկին Տէսման, — Աչօֆբօրգի հոգեկան կելպարանավոխութիւնը, — Ցիկին Ելքշտէդ, — Աչօֆբօրգի անկումը, — «Յոշորձանը», — Նէղդացի համարձակութիւնը, — Զեւականնութեան և գեղեցկութեան պաշտամունքը),

Մենք մի անգամ արդէն առիթ ունեցանք նկատելու, որ Իրսէնի դրամաներում կանացի տիպերն ընդհանրապէս աւելի համակրելի են: Եւ կարծում ենք, որ մինչև այժմ առաջ բերուած դէմքերն արդէն բաւականչափ ասկայուցին այս միտքը: Իրսէնը, որ իր երիտասարդ ժամանակուայ բանաստեղծութիւններով յաճախ երգել է գեղեցիկ սեռի ներկայացուցիչ ներին՝ իր կնոնքի շարունակութեան ընթացքում աւելի կամ պարկաս չափով պահպանում է նոյն վերաբերմունքը: Նրա հաւատաքը դէպի կանացի սեռը և այս վնրվինի կատարելիք բարելաւ մեսոփիան — անխախտ է: Քանի վառ է նրա մէջ մաքուր և անբիծ սիրոյ իդէալը, քանի կանգուն է զգացմունքների վսեմ աշխարհը — անպակաս է և այդ իդէալի յաւիտենական ազգիւրը, այդ երանաւէտ աշխարհի կախարդական պճանքը — կանացի ջերմ հոգին:

Սակայն Իրսէն ամեններին միակողմանի չէ: Նա ոչ կանացի ընաւորութիւնները շարլօնական կերպով իդէալականացը նում է և ոչ էլ բացառապէս զուտ «զգացյունքի» պրօբլէմն է շօշտիում, այլ կանացի հոգին իր ամրողջութեամբ է վերլուծում՝ մտաւոր և բարոյական արտայայտութիւններով, սեռական թէ անհատական աշխարհահայեացքի լիովանար բովանդակութեամբ:

Նրա նկարագրած կանացի տիպերի բաղմակողմանիութիւնը, վերլուծուած հոգեկան նուրբ ելեւէջների պէսպիսու-

*) Տե՛ս «Մուրճ» № 6.

թիւնը ասպացոյց է, որ նա ոչ միայն հանձարեղ, այլեւ օքեկտիւ գիտող է։ Այս հանգամանքը, մեր կարծիքով, շատ խոշոր նշանակութիւն ունի։ Կան արուեստագէտներ, որոնք տրամադրիր են ընդհանրապէս իրանց սեփական կեանքի պատահարներից միայն ստեղծել կանացի տիպեր։ Այս տեսակ արուեստագէտներ—մամաւանց եթէ իրանց փորձառութիւններով «անբազու են եղել—սովորաբար միակողմանի են լինում, կանխակալ կարծիքներով հումակուած, հետեաբար և իրանց առեղծած տիպերը՝ անսպայցման գունաւորուած։ Այսպիսի արուեստագէտ է սկանդինավիացի մի այլ գրող՝ Ալգուս Շերիպերգ, որ երբեմն անկարով լինելով գառնութեան լեղին կուլ տալ՝ ոչ միայն անխնայ միակողմանիութեամբ, այլեւ ամենակոպիտ ցինիզմով է շաղախում իր երկերը։ Այսպէս է մասամբ և գերմանացի բանաստեղծ-դրամատուրգ Մաքս Հալլեն, ինչպէս և նշանաւոր կնատեաց Արտուր Շոպենաուեր։

Իբսէն այսպիսի միակողմանիութիւններից միանպամայն հեռու է։ Նա արուեստագէտ է բառի բուն նշանակութեամբ և ոչ թէ ինքնակենսագրող։ Այս է պատճառը, որ նա դրական քնաւորութիւնների հետ միասին տալիս է և բացասական տիպեր։ Դանքրիի և Աղնէսի հետ զուղընթաց նա ստեղծում է անսպասի դիււային բնաւորութիւններ, ինչպէս ևն Հիօրդիս կամ Ռէքէկիան։

Ծերունի դրամատուրգը 1890-ին զրում է մի նոր դրամա, որի գլխաւոր հերոսուհին, համարձակ կարելի է տսել, հեղինակի ստեղծած կանացի ամենաբացասական տիպն է։ Դրաման կրում է հէսց գլխաւոր հերոսուհու անունը—«Հեղդա Փարլեր» («Hedda Gabler»)։

Հեղդան նօրվէգական մայրագաղաքի գրարձր շրջանի» ծնունդն է՝ զեներալ Գարլէրի դուստրը։ Այս տեսակ մի բարձր-աստիճան զինուորականի իննամքի տակ նա, ի հարկէ, ազատ էր ընտանեկան հոգսերից և շարունակ անօիշտ ու անմտազրաղ՝ բացառապէս իւր հաճոյքին էր նուիրուած։ Նա դեղեցիկ էր, բնաւորութեամբ կենդանի, «աղաւահանդէսների մի թագուհի», որ իր գրաւիչ շարժուածքներով երեկոները՝ բօմանտիկական երգներանգ ճաճանչների տակ՝ գիտէր կրկնակի կաշկանդել երիտասարդ սրաերը։ Հեղդայի ծուղակն ընկած այսպիսի որսներից մէկն էր կլլէրտ Լէօֆիրօդ, նորաւարտ մի ուսանող, վերին տստիճանի ընդունակ և տաղանդաւոր, բայց «աշխարհիկ» զօրեալ հակումների տէր, կեանքի տիզմով վարակուած, որ և վերջ ի վերջոյ այդ տղմի մէջ պէտք է գտնէր իր գերեզմանը։

Լէօֆրօրգը շուտ-շուտ էր այցելում Հէդդային. և երբ ծեռունի գեներալը պատուհանի մօտ նստած իր թերթն էր կարդում՝ երիտասարդ զոյզը «անկիւնի բազմոցի» վրայ, կողքիողքի կամ ալբօմն էին քրքրում կամ մի այլ պատկերազարդ հրատարակութիւն և միաժամանակ երկար-երկար «փսփսում»: Լէօֆրօրգը իր սիրոյ բացատրութիւններն էր անում՝ չը քաշուելով երբեմն և իր կեանքի առօրեայ արկածներն էլ պատմել Ո՞րքան գրաւում էր այս պատմութիւնը Հէդդային և ո՞րպիսի նիւթ էր մստակարարում նրա, առանց այն էլ ուժեղ զգայականութեանը. և նա ամբողջովին սկանջ գարձած՝ լսում էր Ե' asirt Լէօֆրօրգին: Բայց Հէդդան ինչքան էլ ներքուստ տապակուէր՝ իր ցանկութիւններին տնսանձ թոփշքներ տալ չէր կարող: Երեւակայական ամենահեշաւոր պատկերներով նա ընկունակ էր իրան բաւականացնել, սակայն գործնական հասարակ մի քայլ անելու համարձակութիւնից զուրկ էր: Զէ որ նա «beau monde»-ական միթնոլորտումն էր սնուել, ուր ձեզ և արտաքին փայլը իսկական կեանքը խեղդամահ անելով՝ «բարեկրթութեան» դիմակի տակ բազմում են ամենազօր կերպով: Իրրեւ ձեւականութեան մի հլու ստրուկ՝ նա սարսափում, ահաբեկում է հասարակաց կարծիքի, կամ ինչպէս ինքն է ասում, «սկանդալի» մոայլ ուրուականից: Երբ Լէօֆրօրգը իր համարձակութիւնների և լիտի պահանջների մէջ արդէն շատ է առաջ դնում՝ այս «սկանդալի» երկիւզն է, որ զրգում է Հէդդային ատրճանակ վերցնել: Սակայն նա այս զէնքով յանդուզն երիտասարդին միայն սպառնալ կարող է և ուրիշ ոչինչ. իսկ զբնդակահար անելու մի դէպքում: Զէ որ զրա հետ անմիջապէս կապուած է մեծ «սկանդալ»:

Լէօֆրօրգը իր յարաբերութեանն այս ընթացքը տալուց յետոյ՝ ստիպուած էր հեռանալ Հէդդայից և իր բախտը ուրիշ անկիւններում որոնել: Իսկ Հէդդայի երիտասարդութիւնն արդէն բոլորուելու վրայ էր—նա 29 տարեկան էր գարձել. մի կողմից ծերունի հայրն այլ ևս գոյութիւն չունէր: Հետեւաբար նա անշուշտ պէտք է մտածէր իր ապագայի և կեանքի աւելի բարեկեցիկ յարմարութիւնների մասին:—«Պարերից յովնել էի. Ժամանակս էլ անցնում էր»—այսպէս է խոստովանում նա իր ապագայ ամուսնու բարեկամ Բրակին:

Իսկ ումն է ընտրում այս աշխարհիկ կինը—երիտասարդ սլրիվատ-դօցէնտ Եօրգէն Տէսմանին, որ կատարելապէս մասնագիտութեան մի մարդ էր, վերին աստիճանի համեստ և կանոնաւոր կեանք վարող: Այնպէս որ Հէդդան յոյս ունէր, որ նա իր աշխատափրութեամբ «գեռ շատ կը յառաջադիմէ»: Եթէ

Հէդդան չունենար ապագայի այս հեռանկարը, ի հարկէ, ձեռք չէր մնենի Տէսմանի պէս մարդուն։ Նա համոզուած էր, որ իբրև գիտնականի մի ամուսին իր զիրքը սնշուշտ այժմեանից աւելի է բարձրանալու իր այս փառասիրական տենչերի մէջ նա այնքան անհամբեր էր և միաժամանակ միամիտ, որ կարծում էր, եթէ Տէսմանը գիտական ասպարէզում՝ յաջողութիւն չունենայ՝ կարող է նուիրուել քաղաքական գործունէութեան և ապագայում նոյն իսկ մինխստը դառնալ:

Սակայն ձանձրոյթը և հիասթափութիւնը չուտով է պաշարում Հէդդային։ Հարսանեկան ճանապարհորդութեան ժամանակն անգամ նրա ամուսինը իր մասնագիտական գործերովն է զրադուած—վեց ամիս շարունակ նիւթեր է հաւաքում իր «Բրաբանդեան անայնագործութիւնը միջին դարում» աշխատութեան համար։ Զը նայելով այս հանդամանքին՝ Տէսման իր համեստ միջոցներով ոչ մի ջանք չէ խնայում իր փափկակեաց կոտը բաւականութեան համար ստեղծել ամնն տեսակ յարմարութիւններ իր ազնիւ և բարեսիրա քայլ իւլիանէի օդնութեամբ նա գնում է մի սիրուն վիլլա, ուր Հէդդան, հէնց ամուսնութիւնից առաջ, շատ էր ցանկանում ապրել։ Նա ինսամք է տանում և իր արտաքինի վրայ՝ մաքուր զգեստներ է հագնում, որպէս զի փողոցում «գեներալ Գարլէրի աղջկայ» հետ պատելիս՝ չամաչէ։ Նորահարսի սիրոյ համար նոյն զգուշութիւնը գործ է դնում և իւլիանէն։ Այս համեստ և տարիքաւոր կինը նոր զլխարկ և նոր հոգանոց է ձեռք բերում։ Սակայն այս բոլորը մաղաչափ անգամ չէր կարող գրաւել Հէդդային։ Նա անտեղի և նենզամիտ կերպով վիրաւորում է իւլիանէին, որին ուրիշ կերպ չէր անուանում, բայց եթէ «օրիորդ Տէսման»։ Իսկ գէպի իր ամուսինը, որին ուղղակի «Տէսման» էր կոչում, սիրոյ նշոյլ անգամ չէ ցոյց տալես։ Ընդհակառակը նա պաշարում էր ատելութեամբ և կատաղի մոլեգնութեամբ՝ երբ մտածում էր սիրչա և յաւիտեան մի և նոյն մարդու հետ լինելու։ Նա չափագանց ինքնակած և դիւրաղրգիռ էր դարձել։

Հէդդայի հոգեկան այդ տառապանքի ժամանակ յանկարծ երեւան է գալիս կյլերա լէօֆրօրդը։ Վերջինս իր բնաւորութեամբ և կեանքի եղանակով միանգամայն կերպարանափոխուել էր—այլ ևս ոչ հարթեցողութեան և ոչ անբարոյականութեան ձանապարհի վրայ էր։ Նա զգաստացել և բոլորովին իր մամնագիտութեանն էր նուիրուել։ մի նշանաւոր աշխատութեամբ, որ վերաբերում էր կուլտուրական պատմութեան՝ նա մինչև իսկ մեծ համբաւ էր վաստակել։

Բայց ի՞նչպէս առաջ եկաւ այս անակնկալ փոփոխութիւ-

նը: Լէօֆրօրդը հիւսիսում, կլփշտէդ անունով մի գիւղական դատաւորի ընտանիքում տնային ուսուցչի պաշտօն է ձեռք բերում: Այստեղ նա հանդիպում է մի կնոջ, որի ազդեցութեանն էլ նա պարտական է իր ամբողջ հոգիկան և բարոյական վերածնութեամբ: Դա կլփշտէդի երկրորդ կինը՝ թէա Շայզիկն էր: Թէան մի աղքատ օրիորդ էր, որ մտել էր կլփշտէդի ընտանիքը՝ իրրեւ նրա հիւանդ կնոջ օգնական: Վերջինիս մահուանից յևոյ կլփշտէդն առաջարկում է թէային ամուսնանալ իր հետ: Զնայելով, որ կլփշտէդը իրանից քսան տարով մոծ էր՝ այնուամենայնիւ անօղնական թէան «կեանքի» հոգսից ազատուելու համար ստիպուած էր ընդունել այս առաջարկութիւնը: Այս տեսակ ամուսինների մէջ, ի հարկէ, իսկական սէրը անմատածելի էր: Սակայն թէայի համար գոյութիւն ունի միայն մի բաղդաւորութիւն—նա կապւում է Լէօֆրօրդի հետ ընկերուկան» մաքուր զգացմունքներով: Նրան ներքուստ կերպարանափոխում և ապագայ փայլուն յաջողութիւնների ճանապարհն է հարթում: Լէօֆրօրդի վերոյիշեալ աշխատութիւնը նրանք համարեա միասին են գրում: իսկ այդ նոյն աշխատութեան շարունակութեան մոսին, որի ձեռուագիրն արգէն պատրաստ էր, ահա թէ ինչ է նկատում հէնց ինքը՝ Լէօֆրօրդ—«թէայի հոդին սաւառնում է այդ գրքի վրայ»:

Ահա այս ձեստագիրը ծոցը գրած՝ նա մուտք է գործում Քրիստիանիա: Սակայն թէան անհամերեր է, մանաւանդ կատկածում է՝ մի գուցէ մայրաքաղաքի միջնորդու նորից վարակէ պարկուած» Լէօֆրօրդին: Եւ աղնուասիրաւ կինը պահապան հրեշտակի նման ծածուկ վազում է Լէօֆրօրդի յետեւից: Բայց նա աւելի կտրական մի քայլ է անում—նա մօսապէս հեռանում է կլփշտէդից, որի հետ կենակցելը՝ առանց սիրոյ՝ իր համար մի խորին տանջանք էր:

Լէօֆրօրդի քաղաքը ժամանելու մասին Հէդան տեղեկանում է հէնց թէայից: Այս երկու կանույքը հին ծմնօթներ էին՝ դպրոցական ընկերուհիներ էին եղել: Եւ թէան աշակերտուհի եղած ժամանակ առուսկալի երկիւլ» էր կրում Հէդայից, որովհետեւ վերջինս ամեն անգամ նրան հանդիպնելիս՝ կատադի զայրոյթով նրա մազերը քաշում՝ էր—միայն այն պատճառով, որ թէայի գիսակներն աւելի դեղեցիլ էին քան թէ զեներալի աղջկան»:

Խեղճ թէան չը գիտէր, որ այդ նոյն նախանձի որդը զեռեռում էր Հէդայի կրծքում և որ վերջինս նրան մի անակնկալ գժբաղդութեան էր ենթարկելու: Զարամիտ զիտումներով նա իրան շատ մտերիմ է ցայց տալիս թէային—նրա հետ «դու»-ով

է խօսում, յիշում է դպրոցական տնցեալից և այլն։ Հեղդայի միակ նպատակն էր ծիչտ տեղեկութիւններ ստանալ Թէայի և Լ. օֆքորդի յարաբնրութիւնների, առանձնապէս վերջինիս ներկայ կենցաղավարութիւնն մասին։ Նախանձից և անդուսպ խանգից նա կրակ է կորում՝ երբ լսում է թէ՝ Լէօֆքորդը մի այսպիսի կնոջ ազդեցութեան տակ հրմտովին կերպարանուփոխուել է։ Թէան այնքան միամիտ է լինում, որ նոյն իսկ յայտնում է թէ՝ եկել է Լէօֆքորդի ետեւից, կասկածելով՝ մի գուցէ նա «ճանապարհից շեղուի»։ Շուտով կը տեսնենք թէ այս վերջին յայտնութիւնը ինչպիսի զէնք է գառնում խորամանկ Հեղդայի ձևովին։ Նա վճռում է իր ամբողջ ոյժով զոնէ մի անդամ էլ տիրապետութիւն ձեռք բերել Լէօֆքորդի վրայ։ Միակ միջոցն էր տիսնուել նրա հետո Տէսմանի համար այս տեսակցութիւնը նոյնպէս յանկալի էր, որովհետեւ նա իր վազուց երազած պրօֆեսորութեան մասին յանկարծ աննպաստ լուրեր է լսում— իրեւ թէ Լէօֆքորդի և իր մէջ մի և նոյն պաշտօնի համար մրցում պէտք է աւելի ունենար։ Տէսմանն ինչքան էլ աշխատակը լինէր, այնուամենայնիւ այս հանգամանքը նրա համար շատ անախորժ էր, որովհետեւ երկիւղ էր կրում Լէօֆքորդի մրցակցութիւնից։ Նա այնքան է յուսահատում, որ գաւուապարտում է իր անհեռատես վարմանքը—առանց յաջողութեան հաստատ յոյսերի՝ ամուսնանալ և շուայլ կեանք վարել։ Այս պատճեռով «արկածախնդրութեան» վերջ տալու համար նա սահմանափակում է իր ծախսերը—մինչեւ իսկ չէ գնում Հեղդայի զրօսանքի համար խոստացած ձին։ Սակայն Հեղդան յամենայն գէպս ունէր զուարձութեան մի միջոց—«գեներալ Գարլէրի ատորճանակը»։—«Ի սէր Աստուծոյ այդպիսի վտանգաւոր բաների ձեռք մի տար»—վախսեցած նկատում է Տէսման։ Սակայն նրա երկիւղը սմատեղի էր, որովհետեւ Հեղդան ատրճանակը «միայն օգումն էր արձակում»։

Լէօֆքորդը ընդունելով Տէսմանի հրաւերը՝ գալիս է այցելութեան։ Այդ միջոցին Տէսմանի հետ էր և իր բարեկամ Բրակը, որ մտագիր էր այդ երեկոյ Տէսմանի պատուին «ամուրիական» մի երեկոյի կազմել։

Տէսմանը Լէօֆքորդից տեղեկանալով վերցիշեալ անախորժ լուրերի անհիմն լինելը—որ վերջինս միանգամայն հեռու է իր հետ մրցելու դիտաւորութիւնից—ի հարկէ շատ է ուրախանում և առանձին հաճուքով է ընդունում Բրակի հրաւերը, որ իրան թոյլ է տալիս միաժամանակ հրաւերել նաև Լէօֆքորդին վերջինս սկզբում հրաժարում է, որովհետեւ նա եկել էր առանձնապէս իր նոր աշխատութեան ձեռագրից մի քանի հա-

տուածներ կարդալու Տէսմանին։ Լէօֆրօրդի հրաժարուելուն մեծ գրգռում է տալիս նաև Հէղդան, որ շատ էր ցանկանում միայնակ տեսնուել նրա հետ։ Նա յայտնում է թէ՝ տիկին էլփշտեղը նոյնպէս իր մօտն է և ոչ ոք չը կայ նրան տուն առաջնորդող—«Եթէ այդպէս է ես կը մնամ»—նկատում է Լէօֆրօրդը ի մեծ բաւականութիւն Հէղդայի։

Առանձնութեան մէջ Հէղդան պատմում է նրան իր անցեալի ուրախ և տիուր վերյուշերը։ Խոստովանում է, որ ինքը թոյլ է եղել, վախուռու և անհամարձակ՝ թէ Լէօֆրօրդի ասաջարկութեան ժամանակ ի թէ ատրճանակով նրան սպառնալիս Այժմ, երբ նա տեսնում է Լէօֆրօրդին զգաստացած և փառքի ու հոչակի ճանապարհին կանգնած, իսկ իր ամուսնու անյաջողութիւնների վերաբերմամբ հիասթափուած, ի հարկէ կրկրնակի է յուզեռում, կատաղում եւ ահա նախանձու կինը խորամանկ նենգամտութեամբ սկսում է իր վրէժի չարութեան գործը։ Նա փորձում է ամինից առաջ փունջով հիւրասիրել նրան։ Բայց որովհետև նա վաղուց էր դադարել խմելուց՝ այդ պատճառով հէնց տիկին էլփշտեղի ներկայութեամբ հրաժարւում է։ Իսկ Տէսման և Բրակիլ գնում են կողքի սենեակը խմելու։

—«Ուրիմն ես ողորմելիս ոչ մի ազգեցութիւն չունեմ ձեզ վրայ»—նկատում է Հէղդան ինքնազուսպ զայրոյթով։

—«Այս ասպարիզում, ամենին»—պատասխանում է Լէօֆրօրդ։

Բայց Հէղդան հետզհետէ արդէն ցոյց է տալիս իր թունալի խայթոցը։ Նա նկատում է թէ՝ խմելուց հրաժարուելը միանգամայն առնական չէ և որ նա այդ պատճառով իրան ծաղրի առարկայ դարձեց Բրակի և Տէսմանի մօտ։ Սակայն Լէօֆրօրդը անդրդուելի էր։ Եւ ահա Հէղդան իր խայթոցը հէնց այս անգրդուելիութեան, հաստատակամութեան դէմն է ուղղում։ Նա խորամանկ ակնարկներով յայտնում է թէ՝ տիկին էլփշտեղը կասկածով է վերաբերում դէպի Լէօֆրօրդի հաստատակամութիւնը։ Վնրջինս զայրացած՝ ահա թէ ինչ է նկատում տիկին էլփշտեղին—«Այս էր ուրեմն քո ընկերական հաւատքը դէպի ինձ»։

Այս խօսքերից յետոյ նա արագութեամբ վերցնում է բռժակը և հետնօրէն խմում տիկին էլփշտեղի կենացը։ Երկրորդ բաժակը նա դատարկում է Հէղդայի կենացը և չնորհակալութիւն է յայտնում նրան իր բաց արած «Ծշմարտութեան համար»։

Օգտուելով Լէօֆրօրդի այս տրամադրութիւնից՝ Հէղդան իսկոյն յիշեցնում է նրան Բրակի հրաւէրի մասին։ Լէօֆրօրդը

այժմ այլ եւս չէր հրաժարւում այդ հրաւերից։ Սակայն նա դուրս գալուց առաջ ուշքի է գալիս և դառնալով դէպի տիկին էլֆշտէզը նկատում է մեղմութեամբ—«Յիմարութիւն էր իմ կողմից, Թէա, խնդիրն այդպէս հասկանալ։ Դրա համար չը բարկանաս ինձ վրայ սիրելի, սիրելի ընկեր։ Դու կը տեսնես—դու և քեզ հետ ուրիշները—որ ես եթէ մի անդամ էլ ընկայ այնուամենայնիւ նորից բարձրացայ։» Իո օգնութեամբ, Թէա»։

Լէօֆրօրդը գնում է Բրակի և Տէսմանի հետ՝ խոստանալով երեկոյեան ժամը 10-ին զալ և Թէային առաջնորդել։ «Տասին ուրեմն նա գալու է», ինքնարաւական շեշտով նկատում է Հէղդան։ «Ես տեսնում եմ արդէն նրան խաղողի ողկոյզը մազերին. տաք և համարձակ...»։

—«Այն, եթէ այդպէս յետ գար»—չուարած հարցնում է տիկին էլֆշտէզ։

—«Այն ժամանակ, այն ժամանակ նա նորից ինքնիշխան կը լինէր. մի ազատ մարդ՝ իր ամբողջ կեանքի համար... Նա այսպէս պէտք է յետ գայ և ոչ թէ ուրիշ կերպ. կասկածիր նրա վերաբերմամբ՝ ինչքան կամենում ես, ես հաւատում եմ նրան։ Եւ այժմ ահա կը տեմնենք»։

Եւ երբ Հէղդայի այս խօսքերից յետոյ տիկին էլֆշտէզ երկիւղով նկատում է թէ՝ այդ բոլորի ետեւը մի բան կայ թագնուած—Հէղդան համարձակ կերպով պատասխանում է—«Այն, իրաւունք ունիս Ես կամենում եմ իմ կեանքում գոնէ մի անդամ իշխանութիւն ունենալ մարդկային մի ճակատագրի վրայ»։

—«Միթէ դու այդ չունես»—զարմացած հարցնում է Թէան։

—«Ես ոչ ունեմ և ոչ երբ և իցէ ունեցել եմ»։

—«Եւ ոչ էլ ամուսնուղ վրայ»։

—«Այդ բոլորովին չարժէր։ Օ՛, եթէ կարողանայիր երեւակայել թէ ես որքան աղքատ եմ։ Եւ դու պէտք է այդպէս հարուստ լինես (Նա կոքու կերպով կաշկանդում է Թէային)։ Ես հաւատացած եմ, որ քո մազերդ անշուշտ պէտք է պոկեմ։»

—«Թող ինձ. թող ինձ, ես վախենում եմ քեզանից, Հէղդա»։

Այսպիսի տեսարանից յետոյ Հէղդան այնուամենայնիւ Թէային ստիպում է մինչեւ Լէօֆրօրդի վերադարձը իր մօտ մնալ։ Սակայն վերջինս ոչ միայն մինչեւ ժամը 10-ին, այլ նոյն իսկ մինչեւ լաւսարացին յետ չէ գալիս։ Հէղդան առանց ամուսնուն սպասելու՝ հանգիստ քնում է, իսկ խեղճ Թէան սսակալի տանջանկներով ամբողջ զիշերը լուսացնում։

Վերջապէս առաւօտեան ժամը 7-ին գալիս է Տէսման։

Նա հիսցմունքով, բայց միւս կողմից ի հարկէ թագնուած նախանձով է խօսում Լէօֆրօրդի աշխատութեան մասին։ Սակայն առա ամենեւին չէ հետաքրքրում՝ Հէդդային։ Այն ինչ նրա ականջները սրուում են, երևսի վրայ չարախինդ զգացմունքի ժպիտն է փայլում՝ երբ նա ցաւակցութեամբ յայտնում է թէ Լէօֆրօրդը խմելու մէջ չափ չը պահեց և որ ինքնամոռաց վիճակի մէջ՝ նա իր ճառերում խօսում էր ինչ որ կնոջ մասին, որ իրան ոգեսրել է իր աշխատութեան ժամերին։

Նենգամիտ կնոջ ինքնարաւականութիւնն այն աստիճանի է համառում, որ նա հարցնում է Տէսմանին թէ արդեօք Լէօֆրօրդը «փաղողի ողկոյզ էր կրում իր մազերին»։—Չէ որ նրա ջերմ ցանկութիւնն էր, որ Լէօֆրօրդը նորից կատարելապէս Բաքոսին անձնատուր լինի Բաքոսեան պաշտամունքի հետեւանքն այն է լինում, որ նա ճանապարհին կորցնում է իր նշանաւոր աշխատութեան ձեռաղիբոր։ Տէսմանը պատահաբար նկատում է այդ և վերջնում պահում—նա զգուշութեան համար անմիջապէս չէ յանձնում Լէօֆրօրդին, որովհետեւ ենթադրում էր թէ այդ վիճակի մէջ նա կարող էր նորից կորցնել։ Իսկ վերջինս գործից անտեղեակ՝ հանգիստ՝ և խաղաղ կերպով դնում է մի զասի—երգչուհու՝ օրիսրդ Դիանայի սալօնը, ուր այդ գիշերը մի կասկածելի պարերեկոյթ էր կազմուած։

Զեռագրի կորուսաք և մանաւանդ այն հանդամանքը, որ այդ մասին, բացի Տէսմանից, ոչ ոք չը կիտէր—չափազանց ուրախայնում է Հէդդային։ Այնպէս որ մինչդեռ Տէսմանը՝ նախ քան իր մահամերձ քրոջ այցելելը՝ կամենում էր ձեռագիրը, որքան հնարաւոր է շուտ հասցնել Լէօֆրօրդին, որպէս զի նա անհանգիստ չը լինի—Հէդդայն չարամատութեամբ իրնդրում է իր մօտ թողնել, որովհետեւ նա այժմ հետաքրքրուում էր դրանով, ուզում էր «կարդայ»։

Լէօֆրօրդի գիշերային ճանապարհորդութիւնների մասին Հէդդան լսել էր Բրակից, որ իրեւ «տան բարեկամ» եկել էր զգուշացնելու, որ այդպիսի մարդու առաջ այլ եւս իրանց դմուրը բաց չանեն։ Սակայն կարձ ժամանակից յետոյ զալիս է և Լէօֆրօրդը։

—«Վերջապէս»—ուրախութեամբ առաջ զնալով՝ նկատում է տիկին ելքշտէդը։ Բայց այս ուրախութիւնը մի ակնթարթ է միայն տեւում։ Լէօֆրօրդը յայտնում է թէ «իրանց ճանապարհուներն այժմ բաժանւում են», որովհետեւ նա իր ձեռագիրը ապատառ պատառ էր արել։

—«Աստուած իմ, Աստուած իմ, սեփական երկը պատառէլ»—մրմնջում է շանթահարուած Թէան։

—«Ես իմ սեփական կեանքը քայքայեցի, ուր մնաց երկու։
—«Գիտես, լէօֆրօդ, որ դու այդ գրքով, կարծես, իմ
փոքրիկ զաւակս սպանեցիր»։

—«Այն, իրաւունք ունես. դա մի տեսակ որդեսպանու-
թիւն է»—խոստովանում է լէօֆրօդը։

—«Բայց ինչպէս կարող էիր. չ որ ես էլ իրաւունք ու-
նէի այդ զաւակի վրայ»։

Յետոյ լէօֆմօրզը «մտերմաբար» յայտնում է Հէղդային,
որ վերոյիշեալ խօսակցութեանն ականատեսն էր եղել, թէ ձե-
ռագիրը ինքը պատառ-պատառ չէ արել, բայց և այնպէս ոչըն-
չացրել է—«Թէան այդ անուանեց որդեսպանութիւն... Բայց
սեփական որդուն սպանելուց դեռ աւելի վատթար բան է տե-
ղի ունեցել։ Երեակայեցէք ձեզ, Հէղդա, մի մարդ, որ զիշե-
րային վայրենի արկածներից յետոյ վերադառնայ իր երեխայի
մօրը մօտ և ասէ—լսիր ինձ. ես եղել եմ այս ինչ և այն ինչ
տեղ։ Եւ մեր զաւակն էլ հետո էր, ուր որ ես էի։ Ահա յան-
կարծ նա անհետանում է, բոլորովին անհետանում։ Սատանան
գիտէ թէ ուժ ձեռքն է ընկել և ինչ են անում նրա հետո։

—«Բայց դա լոկ մի զիրք էր»—նկատում է խորամանկ
Հէղդան։

—«Թէայի մաքուր հոգին էր ամփոփուած նրա մէջ»։

—«Այն, այժմ հասկանում եմ»։

Եւ երբ լէօֆմօրդ յուսահատուած՝ մտածում է ռամնն բա-
նին վերջ տալ—Հէղդան դիւային ցանկութեամբ ահա թէ ինչ
է նկատում—«Զէլիք կարող այնպէս անել, որ դա զեղեցկու-
թեամբ տեղի ունենար»։

Եւ նա «ցիշատակի համար» տալիս է նրան իր ատրճանա-
կը—«Ճանաչում էք. դա մի անգամ ձեր դէմն էր ուղղուած»։

—«Դուք պէտք է այն ժամանակ գործածէիք»—խորհրդա-
ւոր կերպով նկատում է լէօֆրօդ։

—«Դէն, այժմ դուք գործածեցէք... միայն գեղեցկութեան
մէջ, էյլէրտ լէօֆրօդ, խոստացէք ինձ այդ»։

Եւ երբ վերջինս հեռանում է՝ իր ձեռագիրը գտնելու վեր-
ջին փորձն անելու—անխիզն Հէղդան գրասեղանի դարակից
հանում է նրա ձեռագիրը և մաս առ մաս վառարանի բոցերի
մէջն է նետում։—«Այժմ ես այրում եմ քո զաւակը, թէա, ...
դու, քո գանգուր մազերով։ Քո և էյլէրտ լէօֆրօդի զաւակը։
Այժմ այրում եմ, այրում եմ այդ զաւակը»։

Հէղդան այնքան յանդուղն և այնքան կեղծաւոր է գտըն-
ւում, որ իր յետին միտքը թագյնելով՝ սարսափահար եղած

Տէսմանին փորձում է հաւատացնել թէ նրա սիրոյ համար առաւ այդ քայլը.—«Ես չէի կարող հաշտուել այն մտքի հետ, որ նա քեզ նսեմաշնելու է»։ Եւ միամիտ Տէսման առ ժամանակ հաւատում է նրան և մինչեւ իսկ իրան շատ բախտաւոր է զգում, որ վերջապէս արժանացել է նրա սիրուն։

Նոյն օրը, մի քանի ժամկից յետոյ, Լէօֆրօրգը գտնուում է Դիանայի սենեակում գնդակահար եղած։ Վէրքը որովայնից էր։ Իսկ սպանուածի զրպանում գտել էին մի ատրճանակ «G» տառով։

Այս սպանութեան լուրը Հէդդային մեծ ուրախութիւն է պատճառում։ Նա հաւատացած էր, որ Լէօֆրօրգը ինքն է իրան գնդակահար արել և նոյն իսկ զլխոց կամ կրծքից—«Վերջապէս մի գործ... որի մէջ զեղեցկութիւն կայ»։ Բայց Հէդդան շուտով պէտք է հիասթափուէր։ Նա լսում է, որ Լէօֆրօրգը ոչ թէ ինքնասպան է եղել, այլ ուրիշից է սպանուել։ Իսկ թէ ինչպէս —զա գեռ անյայտ էր։ Միւս կողմից որովայնից վիրաւորուելը նրան մեծ զգուանք էր պատճառում—թէ ինչո՞ւ այդ յետոյ կը պարզուի։

Հէդդայի համար սարսափելի էր մանաւանդ, որ Լէօֆրօրգի զրապանում ատրճանակ է գտնուել։ Զէ որ ինքն էր այդ ատրճանակի տէրը։ Այս բանը լաւ յայնուի էր զատասատանական խորհրդի անդամ Բրակին։ Վերջինս, որ վազուց ուղում էր Հէդդայի և Տէսմանի հետ մի երրորդութիւն կազմել՝ օգտուում է զէպքից և ուշադրութիւն է դարձնում այն ծանր հետեւանքի վրայ, որին կարող է ենթարկուել Հէդդան եթէ ինդիրը ասպարէզ հանուի։ «Սկանդալ ահա ինչն էր սարսափեցնում Հէդդային։ Եւ Բրակի լոռութեամբ միայն նա կարող էր ազատուել և կանդալից»։

Բայց Հէդդայի համար անտանելի էր ուրիշի իշխանութեան տակ լինել, կորցնել իր ազատութիւնը և Բրակի նման մարգուց կախում ունենալ։

Մինչգեռ Հէդդան այսպիսի հոգեկան տանջանքի մէջ էլ՝ տիկին էլփշտէդ և Տէսման եռանդուն կերպով զբաղուած են Լէօֆրօրգի ըյուշարձանով։ Տիկին էլփշտէդ դեռ պահել էր կորած ձեսազրի սեազրութիւնը։ Տէսման իր բարոյական պարտականութիւնն է համարում ամեն ինչ մոռացած՝ նուիրել այդ սեազրութիւնը մշակելու գործին։

Հէդդան հեռուից նկատում է թէ ինչպիսի ինքնամուսաց ջանասիրութեամբ այս ազնիւ զոյզը աշխատում է հանդուցեալի ըյուշարձանով։

—«Երկուսդ այստեղ ինձ ոչ մի բանի կարիք չունէք»—
հարցնում է նա աշխատող զոյզին:

—«Ո՞չ, ոչ մի բանի: (Թառնալով դէպի Բրակ) Այսուհետեւ,
սիրելի խորհրդական, այնքան բարի կը լինէք Հեղդային
ընկերութիւն անելու»—նկատում է Տէսման:

—«Դա ինձ համար մի մեծ զուարձութիւն կը լինի» պատասխանում է Բրակ:

—«Շնորհակալ եմ: Այս երեկոյ ես յոդնած եմ, ուզում
եմ ներսը՝ բազմոցի վրայ հանգստանալ»—վրայ է բերում
Հեղդան:

Եւ ահա նա յանկարծ ներքին սեննակից դաշնամուրի
վրայ մի վայրենի պարեղանակ է նուազում: Տէսմանը խնդրում
է նրան, որ հանդիստ լինի՝ մտածէ իր հանգուցեալ քրոջ և
լէօֆբօրդի մասին:

Եւ նա խոստանում է կատարելապէս հանդիստ լինել:

Մի քանի բոպէից յետոյ վարագոյրի ետեւից, լուսում է
զնդակի մի ձայն: Ամենքը ներս են վազում և գտնում Հեղդային
զլիսից գնդակահար եղած:

—«Բայց Տէր իմ Աստուած. այդպիսի բան չեն անի»—
նկատում է Բրակը:

Սակայն սա Հեղդայի կեանքի ամենահամարձակ քայլն էր:
Մինչեւ այդ բոպէն նա վերին աստիճանի մեզկ էր և վախկոտ:
Այժմ արդէն բաժակը լցուած էր—իր սեփական յարկումն ան-
գամ նա մի աւելորդ մարդ էր համարւում: Ուրիշ ինչ էր մնում
անել, բայց եթէ զոնէ մի անգամ համարձակ լինել: Այս «հա-
մարձակութեամբ» նա վերջ է տալիս ոչ միայն իր կեանքին,
այլեւ իր արգանդի զաւակին, որ իր համար խորթ էր և ոչ թէ
սիրոյ պտուղ: Որքան աւելի բարձր էր լէօֆբօրդի հոգեկան
«զաւակը», որ իր հօր մահուանից յետոյ յաւիտեան պէտք է
առլէր:

Հեղդան զոհուում է իրրեւ ձեւականութեան ստրուկ և
«զեղեցկութեան պաշտամունքի երկրպագուու»: Եթէ նա իրրեւ
կին անպէտք էր, հասկանալի է թէ մի քանի ամսից յետոյ
ինչ էր լինելու իրրեւ մայր: Խնդրնածանաչ հեռատեսութեամբ
նա ժամանակին արձակում է իր սեփական դաւավձիւը—չար-
ժանանալ մայրութեան վիճակին:

Ինչ վերաբերում է լէօֆբօրդին՝ ունինալով Հեղդայի հետ
հոգեկան յայտնի ազգակցութիւն՝ նա այնուամենայնիւ անհա-
մեմտառ աւելի բարձր է կանգնած: Փայլում է սանդծաղործող
կարողութեամբ և խոչոր առաջնորդ, որ թէայի ազդեցու-
թեամբ արգասուառը պտուղներ է ատալիս, սակայն վերջ ի վեր-

ջոյ ալկօհօլի դոլորշիների և զղայական կոսիտ կրքերի թոյնով նսեմանում, խաւարում է:

Իր համարձակութեամբ և բարոյական կարողութեամբ որքան տարբերում է և թէան՝ Հէղդայից: Նա էլ վերջինիս նման ապրուափ հոգսից ապահովուելու համար ձեռք է տալիս չը սիրածին. մանաւանդ որ ինքը «շատ էժան էր»: Սակայն նա գիտէ նաև աներկիւղ զղջումով և համարձակ քայլով ուղղել իր սխալը—զնալ այն ճանապարհով, ուր իր սիրտն է առաջնորդում:

«Հէղդա Գարէրը» նոյնպէս թեր և դէմ մեկնութիւնների տեղիք է տուել: Ումանք նրա զլխաւոր հերոսուհու առաջ խունկ են ծխում իրեւ «չը հասկացուած մի զոհ»: Իսկ ումանք, նիցշէական թեթեւ հովերով բռնուածները, տեսնում են նրա մէջ արտասովոր մի երեւոյթ, ուժեղ մի զիծ: Սրանով նշանակում է «ոյժի» գաղափարն այլանդակել: Հէղդան, մեր կարծիքով, ոյժի ամենաաղջրմելի ծաղրանկարն է: Այն ոյժը, որ զուրկ է համարձակութիւնից և մեղկութեան պատեանովն է միայն փայլում—կատարելապէս աբսուրդ է:

Հէղդա Գարէրի նման մի տիպ կանանց ազատազրութեան թշնամիների ձեռքին մի զէնք էր:

Ֆրանսիացի մի քննադատ տեսնում է նրա մէջ «անողորմ հեղնութիւնը այն ազատազրութեան, որի քարոզիչն էր Նօրան»:

Վ. ՆԱԼԻԱՆԴԵԱՆ

(Կը օարունակուի)

ՄԱՏԵՆԱԹՈՍՈՒԹԻՒՆ

23) Ա. Ա., Բնագիտական գրոյցներ, № 1 բառաջարան, Բազու, 1902 թ., գին է 20 կոպ.

Այս գրքոյիը ազատ չէ այն պակասութիւններից, որոնք յատուկ են մեր թարգմանութիւնների մեծ մասին. բնագրի հարազատութիւնը, լիզուի ճշտութիւնը աւելորդ բան է համարւում մեղանում, ինչպէս և, յաճախ, հեղինակի անուան տեղ թարգմանչի անունն է զրբի երեսը զարդարում...

Ճիշտ է, պ. Ա. Ա. իր սեփական «յառաջարանի» մէջ, վերջում, յիշում է որ այս զրբի մէջ նա Շտավիս է հոչակաւոր բնագէտ Հիգալէի «Առաջնորդ բնագիտութեան» գրքոյկից մի կտոր թարգմանութիւն։ Բայց, մի՛թէ մի «յառաջարան», որ, ի գէպ է ասել, համարձակ կարելի էր և չը կցել Հիգալիի դրուածքին, քանի որ այդ վերջինը ինքն հէնց ամբողջապէս՝ ճիշտ գիտութիւնների մի հրաշալի ներածութիւն է*)—մի՛թէ, կրկնում ենք, մի «յառաջարան» իրաւունք է տալիս զրբի երեսը այնպէս կազմել որ թարգմանիչը հեղինակ հանդիսանայ...

Բայց թողնենք այդ փոքրիկ մնակառութիւնը մի կողմ, մանաւանդ որ այդ «հեղինակը» բաւականացել է միայն իր ա-

*) Զենք կարծում որ պ. Ա. Ա. այդ Ներածութիւնը անզիերէնից թարգմանած լինի. ուստի մեզ յայտնի է Մ. А. Аntonovich-ի թարգմանութիւնը. Ըստ առաջական համարակալու նախկին Հրատ. Ընկ.-ից Անտօնօվիչը յայտնի թարգմանող է և միշտ զրբերի շաղկի երեսին խոշոր տառերով տպում է. Պերեօլու տեղակացար...

նուան և ազգանուան սկզբնատառերով, և քննենք գրքոյկը անկախ այս հանգամանքից:

Հեօքսլիի Ներածութիւնը բաժանուած է երեք գլխի.

I. Բնութիւն և գիտութիւն, II Նիւթական առարկաներ և III Աննիւթ առարկաներ:

Պ. Ա. Ա. Թարգմանել է միայն առաջին գլուխը (այն էլ բաց թողնելով ամբողջ գլխի բովանդակութիւնը բնորոշող վերնագիրը): Հեօքսլիի Ներածութիւնը մի հրաշալի ամբողջութիւն է, ուր հոչակաւոր գիտնականը ընթերցողին քայլ առ քայլ տանուած է յայտնից դէպի անյայտը, սկսելով ամենատարրականն հասկացողութիւնների բացատրութիւնից և հասցնելով մինչև հոգեկան բարդ երեսոյթները: Սիստեմի խելացիութիւնը պարզ է:

Իսկ հայ թարգմանիչը հարկ է համարել տալ ընթերցողին միայն այդ «Ներածութեան» առաջին գլուխը և կցել դրան իր սեփական դատողութիւնները, ուր խօսւում է, ի միջի այլոց, այնպիսի բաների մասին, որոնք պարզւում են Հեօքսլիի գըրուածքում միայն յետոյ (օրինակ. գիտողութիւն, փորձ և եղակացութիւն): Մեզ թւում է որ շատ աւելի նաղատակայարմար կը լինէր Ա. Ա.-ի խառնավինթոր դատողութիւնների տեղ, որոնք բռնում են 25 երես, տալ Հեօքսլիի գըրուածքի նաև երկրորդ և երրորդ գլուխները, միայն, ի հարկէ, ոչ այնպիսի զարհուրելի թարգմանութեամբ, ինչպէս կատարուած է առաջին գլուխը:

Թողնելով հետաքրքրուողներին անձամբ համեմատել ամբողջ թարգմանութիւնը, մենք կը բաւականանք մի քանի նըմուչներ բերելով հէնց առաջին երեսներից.—Աշնա՞մ ո նից օ միք. պ. Ա. Ա. Թարգմանել է. ճշմարում ենք որ և է բան աշխարհիս մէջ» (26 եր.). Ըստած և սպոսնութիւններ և ոյժեր» (եր. 30), մոռանալով որ ո յ ժ ի հասկացողութեան մասին գիտմամբ Հեօքսլին ոչինչ չի ասում մինչև որ աստիճանաբար չի հասցնում ընթերցողին այդ հասկացողութիւնը ըմբռնելուն (երկրորդ գլխում, երես. 23, թարգմ. Անտօնօվիչի). Սպոսնութիւնների չեն: Առհասարակ ցերեմնիա անել բառերի ճիշտ նշանակութիւնների կիրառութեան մէջ պ. Ա. Ա. չը գիտէ. ուսաց յնա՞մ և առաջնորդութիւնը հաւասար կերպով թարգմանել է նրամարել և, ի հարկէ, երկու դէպքում էլ սխալ. և առեն է «գիտակցութիւն» և այլն և այլն:

Գուցէ պարոնը իւր ձեռքի տակ ունեցել է ոչ Անտօնօվիչի թարգմանութիւնը, այլ հետեւել է մի այնպիսի ուսւա-

թարգմանչի, ինչպիսին է և ինքը հայ թարգմանիչը: Բայց այդ էլ զարմանալի է. թարգմանութիւնից թարգմանել, այն էլ ընտրել անպատճառ վատ, անյայտ մի թարգմանութիւն...

Լ. Ա.

24) ԼԷՕ, ՍՅԵՒՓԱՅԻՆՈՒ ՆԱԳԱՐԵԿԱՆԸ, Ի ՀԱՍՏՈՐ, ԹԻԳԼԻՄ, ԵՐԿՈՒ ՀԱ-
ՄՊՐԻ ԳԻՆԻ Է 1 Ա. 50 Կ.:

Վերջին տարիներս նկատելի է մեր գրականութեան մէջ մի առանձին հետաքրաքրութիւն մեր մօտիկ անցեալով: Նոյն իսկ Միթարեանները, որոնք միշտ թունդ հնասէրներ էին, ակսել են իրանց օրգաններում տպել նորագոյն գրական գործիչների մասին կենսագրութիւններ և արդի գրականութեան նոր իրած տեսութիւններ:

Սյստէս, «Հանդէս Ամսօրիան» տպում է բժիշկ դօկտօր Նահապետ Ռուսինեանի շատ ընդարձակ և մանրամամն կենսագրութիւնը, «Բազմավիճակ» տուաւ մի շաբք յօդուածներ նույիրուած Քերովք Պատկանեանին, Էմինին, Գամառ-Քաթիւպային, Միքայէլ Նալբանդեանին, Ստեփանոս Նաղարեանին, Գրիգոր Արծրունուն, Ալիշանին և այլն: «Գեղունին» նոյնապէս յետ չէ մնում այդ հոսանքից: Սակայն այդ նոր ուղղութեան ամենաաչքի ընկնող ներկայացուցիչը, գէթ ուսւահայոց գրականութեան մէջ, ըստ իս, լէօն է: Նա, ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին ևս, սկսեց հայոց մատենագրութեան պատմութիւնը ոչ հին ժամանակներից, այլ միայն հայկական տպագրութեան սկզբից, XVII-րդ դարուց: Երկու հատորի մէջ նա դեռ չէ վերջացրել իր ասելիքը նոյն իսկ երեք դարի մասին: Բացի իր այդ երկու հատոր աշխատութիւնից, որի շարունակութիւնը, անշուշտ, միայն ժամանակաւորապէս է ընդհատուած, լէօն ձեռնարկել է կենսագրութիւնների մի ամբողջ սերիայի հրատարակութեան: Այդ կենսագրութիւններից լոյս են տեսել արդէն «Յովսէֆ Կաթողիկոս Արղութեան» և «Ստեփանոս Նաղարեանց»: Մենք չենք խօսում այսեղ, ի հարկէ, այն կենսագրական յօդուածների մասին, որ լէօն գրել է «Մուրճում» և «Մշակում»:

Մէծ ճաշակով տպուած և պատկերներով զարդարուած այդ հատորիկները մի մի գեղեցիկ ծաղիկներ են մեր գրական աղքատ բուրաստանում... Հեղինակի վիթխարի աշխատասիրութիւնը և ընտրած առարկայի մասին պարզ, մի և նոյն ժամանակ շատ մանրամամն զրելու ձեւը՝ դարձնում են այդ կենսա-

զըրութիւնները միաժամանակ թէ ուսումնասիրութիւններ և թէ ժողովրդի ընթերցանութնան համար վէպի պէս հետաքրքրական գրուածքներ։ Լէօն քաջ գիտենալով որ ամեն գործիչ ծընունդ է իր ժամանակի և միջնավայրի, լաւ հասկանալով որ տեղական, ազգային պայմանները չի կարելի կղղիացնել, կըտրել նոյն ժամանակի համամարդկային կեանքից—չի բաւականանում կենսագրութիւն գրելիս այս կամ այն գործիչի կեանքի անհատական գծերով, այլ հարցին նայում է աւելի լայն տեսակէտով։ Նա նախ տալիս է որոշ էպօխայի ընդհանուր գրական-հասարակական-բաղաքական ֆօնը, ապա այդ ֆօնի վրայ նկարում է հայկական միջնավայրի պատկերը և դրա մէջ տալիս է այս կամ այն գործիչի բնորոշ գէմքը իր մանրամասն գծերով։

Այդ զէմքը նկարագրելու համար լէօն սպունգի պէս ծըծում է մեր գրականութեան մէջ եղած բոլոր նիւթերը, ուշադրութիւնից բաց չը թողնելով նոյն իսկ ամենաշնչին նկատուլութիւնները Ծեծելով բոլոր նիւթերը իր ահագին յիշողութեան մէջ նա ապա մեծ սիրով և աշխայժով ցիրու ցան կտորներից մի գեղեցիկ ամբողջութիւն է տաեղծում։ Ընթերցողի առաջ դրած է լինում ոչ այս կամ այն գործիցի լոկ պատկերը, առանձին վերցրած, այլ մի զէմք նկարած որոշ էպօխը բնորոշող ֆօնի վրայ և ազգային կեանքի մէջ...»

Մի տեղ*) այսպէս է ձեւակերպում հեղինակը իր նպատակը. «Մեր ժողովուրդը—ես ամենից առաջ նրան եմ աչքի տուժի ունեցել—ոչինչ չը գիտէ իր անցեալի մասին։ Իմ ուժերիս ներածին չափ օգնել նրան մի մատչելի, կենդանի կերպով պատմուած գործով—այս էր իմ ամբողջ ձգտումը»։

Այդ ձգտումը իրագործուած կարելի է համարել, որովհետեւ լէօնի հրատարակած գրքերը լաւ տարածում են մեր ժողովրդի մէջ. մի փաստ որ ինքն ըստ ինքեան արդէն պերճախօս է...»

I. U.

25) Թժ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵՍՅՆ, Մրիսասարդուրիս և Շերուրին,
Պետերբուրդ, 1902 թ., գինն է 15 կոպ.։

Հեղինակի լոյս տեսած աշխատութիւնների թիւը հասնում է այս բրօշիւրով 22-ի. մի պատկառելի հրատարակչական ձեռնարկութիւն! Բժ. Բուգուղեանի գրելու ձեւը աւելի հրապա-

*) Հայկական Տպագրութիւն, Ա. հատոր:

բակախոսական-քարոզչական է, քան ժողովրդական-գիտական, Աֆօրիզմները, յորդորները, կշտամբանքը, խրատները բոնում են նրա բրօշիւրների բովանդակութեան զլիսաւոր մասը, իսկ ինզրի զուտ բժշկական-առողջապահական կողմին, համեմատաբար, երկրորդական տեղն է տրւում: Այնքան որքան մարդկանց առողջապահական գրութիւնը կախուած է անհատական ինքնօքնութիւնից, յորդորներից և խրատների իրագործութիւն, —անշուշտ քարոզը կ'ունենայ որոշ բարերար ազդեցութիւն. սակայն, տարաբախուաբար, մարդկանց աւողջութիւնը կախուած է նաև բազմաթիւ տնտեսական-հասարակական պայմաններից, որոնք մինչև որ արմատական փոփոխութեան չենթարկուին՝ զատ-զատ գործադրած ջանքերը միայն չնչին, պալիատիւ նշանակութիւն կարող են ունենալ: Այդ վերջին տեսակէտն էլ, երբեմն, շոշափում է իր բրօշիւրներում և յարգելի հեղինակը:

Մեզ թւում է սակայն որ այսպիսի գրուածքներում պէտք է ողքան հնարաւոր է քարոզչական կողմը քիչ տեղ բռնի և աւելի ոյժ տրուի հարցերի գիտական-փաստական կողմերին: Նոյնը կ'ասենք և այս գրքի մասին:

Բն.

26) Գ. ՇԵՐԵՆՑ, Մըրավայրեր, տեղագրութիւն Վասպուլականի նահանգի գլխաւոր եկեղեցեաց, վանօրէից և ուսումնարանաց, Թիֆլիս, 1901 թ., գինն է 40 կ.:

Հեղինակը, որ յայտնի է և իր «Վանայ Սազ» աշխատութիւնով և բնիկ վասպուրականցի է, նկարագրում է իր հայրենի վանքերը, եկեղեցիները և, շատ աննշան չափով, յիշում է և մի երկու ուսումնարանների մասին: Եթէ գուք թերթէք Պօլսի հրատարակութիւնները՝ այնտեղ ևս համարեա ամեն քայլափոխում կը գտնէք Փաքր-Ասիայի և Թիւրքաց Հայաստանի ղանաղան տեղերում ցիր ու ցան տարածուած հայոց վանքերի և եկեղեցիների նկարագրութիւնները: Ասենք, տաճկական գրաքննիչների համար արդէն «ազգային» խօսքն էլ մի ծանր քաղաքական յանցանք է, ուստի զարմանալի չէ երբ սուլթանի բէժիմի տակ հայ մարդիկ բացի վարդապետներից, տէրտէրներից, վանքերից և եկեղեցիներից և սուլթանի սալամլիքների նկարագիրներից, ներքին կեանքի որ և է ազգային խնդրի մասին անկարող են կարծիք յայտնել: սակայն անհասկանալի է, երբ Կովկասում ևս տաճկաստանցին մի ամբողջ զիրք է հրատարակում նուիրած

իր կարօտած հայրենիքի սրբութիւններին միայն... էջմիածնի «Արարատը» երեւի, ուրախութեամբ տեղ կը տար այդպիսի մի գրութեան, իսկ ժողովրդին կը հետաքրքրէր այդ աւերուած երկիրը իր այլ կողմերուի...

Հետաքրքրական է է զրբի մէջ հետեւեալ կտորը.

«1893—92 թուականներին և թէ առաջ իսկ՝ պաշտօնապէս չըջագայելով նահանգի ամրողջ գաւառները, գիւղերն ու աւանները, դոցա միջում գտնուած սրբավայրներն, վանքերն ու եկեղեցիք, որոց՝ այն թուականներում ես տեսայ չէն ու յղիացած ամեն բարիքներով, անշուշտ չի պիտի անմոռաց մնային իմ յիշողութիւնից, ինչպէս և նոցա աւերումն ու խորտակումն անցեալ 1895—96-ի հանրային անցքերին ժամանակի, պիտի զարթեցնէին ինձանում շատ տիսուր և ուրախ անցեալ յիշողութիւնները և ես ստիպուած կատարէի իմ պարտքն...: Դեռ այն թուականից սկսեալ (1891—92), ես տեղազրել էի ոչ միայն այդ սրբատեղեաց տեղագրութիւնն, այլ և իւրաքանչիւր վանքի դոյութեան — հիմնարկութեանց թուականները իրանց յիշատակադրիկովնել, արձանագրութիւններով, բայց աւաղ, վերջի տիսուր անցքերն, ինչպէս ջարդ ու փշուր արին մեր բնավայրի ամեն ինչ, նոյնպէս և իմ այդ թղթի կտորները—սիագրութիւնն—կուլ գնացին վերահաս հրձիգութեանց. և, ինձանում մնային լոկ յիշողութիւնները և տպաւորութիւնք:

Տիսուր և քստմնելի պարագաների տակ և ստիպուած տարագրուելով մեր բնավայրից, անշուշտ մեր ժամփից ու յիշողութիւնից չի պիտի անցնէին մեր հայրենի տիչարհի սրբավայրերն և այս վերջին տարիներում նոցակրած կրելութիւնքն, որոնք վեր ի վայր վրդովեցին մեր աշխարհի ամեն խաղանքն ու հանգստութիւնն, և զմբաղդ ժողովուրդը վտարանդեցին երկրէ երկիր, մերկ ու բոկուրն. ձեռը ծոց, անոք և անտէր թափառական

Վկայ են երկինք ու երկիր. Աստուած, հրեշտակ և համայն մարդիկ որ՝ այդ սրբավայրերը հազար ու բիւր մարդոց. լինէին դռքա հայ, թուրք, քուրդ, ասորի եւրոպացի, հանապաղօրեայ մշտառատ հաց ու ջուր սերով ու կարագովն մէկ տեղ անխորաբար տուել ու հիւրասիրել էին օրերով ու շաբաթներով: իսկ այժմ, նոյնպէս վկայ են՝ որ շատերն այդ սրբավայրերից զրկուած ու կողոպտուած ամեն կայք ու կենաքից և շատերն խորտակուած իրանց հաստատահիմն չէնքերից աւերակաց կարգն են:

գասուել, Վանահայր ու վանքականք. միաբանութիւնն ցրիւ ընկած և կամ ով գիտէ, ինչ եղանակաւ կենազրաւ են եղել անյայտ և անլուր»:

Աւերուած երկրի անթիւ հառաջանքներից մէկն է այդ...

X.

Ն Ո Ր Ս Տ Ա Ց Ո Ւ Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

- 1) Fr. Nic. Finck, Lehrbuch der neuostarmenischen Litteratursprache, Vagarshapat—Marburg 1902.
- 2) А. И. Митьковичъ, Городовое положнеие 11-го юна 1892 года, Тифлисъ, 1902 г., цѣна 90 коп.

ՆԵՐՓԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մեր գրական գործիչների և հասարակութեան մէջ փոխադարձ գժգոհութիւնը.—Ազ է արդարը և ովլ մեզատըրը.—Գրականութեան և հասարակութեան փոխադարձ կախումը.—Խօնչ է պահանջում ժամանակակից պարմաններում իր կոչման բարձրութեան վրայ կանգնած մի օրգան հրատարակելու համար.—Անսօր գանգատներ և կաղմակերպուած գործունէութիւն՝

զրած նպատակին համելու համար

† Քանդակագործ Մ. Անտովօլսկի. —† Դ. Պ. Խանօվսկի. —Զեմստվօնների կողմից անշարժ կայքերի մասին վիճակագրութիւնը ժողովելու հարցը.—Մուրհակների մասին նոր կանոնադրութիւն. —Ամուսնութիւնից գորս ծնուած զաւակների իրաւոնքները.—Գրադանու. բարտքմ. համար կտղմած Առանձին խորհրդակցութեան որոշումները

Կարելի է տաել որ հէնց այն օրից երբ սկսեց մեր կեանքում որոշ գեր կատարել տպագրական խօսքը՝ ծնուեց և փոխադարձ գժգոհութիւն մեր գրական գործիչների և հասարակութեան ընթերցող և, որ աւելի զարմանալին է, նաև ոչընթերցող մասի մէջ... Այդ գժգոհութիւնները շարունակւում են և այժմ երեւի, կը շարունակուեն գեռ եւս երկար ժամանակ, մինչեւ որ երկու կողմերն էլ, մանաւանդ «հասարակութիւնը», չը թողնեն իրենց միակողմանի վերաբերմունքը դէպի բուն հարցը.

Փորձենք պարզել այդ բուն հարցը:

Մեր գրական գործիչները գժգոհ են հայ հասարակութիւնից, որովհետեւ զա ցոյց է տալիս մի զարմանալի անտարբերութիւն դէպի մայրենի գրականութիւնը, ոչ մի հոգ չի տանում լաւագոյն պայմանների մէջ զնելու համար մեր գրականութեան զարգացումը։ Ճիշտ է, այդ հասարակութեան մէջ կայ հայոց գրականութեան բարգաւաճման «նախանձախնդիրների» մի փոքրիկ խումբ, որի անգամներից շատերը իսկի երբէք չեն էլ կարդում հայերէն գիրը, ամսագիր, լրագիր, սակայն այդ

խումբն է որ ամենաթունդ քննադատի դեր է կատարում մեր գրականութեան և գրական գործիչների նկատմամբ:

Իւրաքանչյուրը այդ ճնախանձախնդիրներից, մատը-մատին չը խփելով իր կողմից մի որ և է ձեռվագներու գործին, բաւականանում է միակողմանի և ինքնաբաւական դատախաղի փառաւոր գիրքով: Այդ դատախաղները մոռանում են որ իրենց պերճախօս յարձակումների պատկառելի մասը իսկապէս ուզզուած է հէնց իրենց փառաւոր անձների փայլուն անգործունէութեան վրայ. գրանք մոռանում են, որ դատախաղի դերում գուրս գալով՝ իրենց ցոյց են տալիս իրրեւ հասարակութեան և ամենահասկացողաւարը տարը և, հետեւապէս, ամօթ է չը հասկանալ որ մի ազգի գրականութիւն, մի ազգի գրական գործիչներ լուսնից ընկած մասեր չեն, այլ ծնունդ որոշ հասարակութեան, գրա մտաւոր-բարոյական կարողութիւնների ճիշտ արտադրութիւն: Մի հասարակութեան մէջ, որի «ամենազարդացած» տարրը գարնուրեցնում է իր քստմնելի ինդիֆերենտիզմով գէպի ազգային կեանքի համարեա միակ արտայայտութիւնը՝ մայրենի գրականութիւնը. — միթէ պէսք է զարմանալ որ հրաշք չի կատարւում և գրականութիւնը շատ և շատ հետու է կանգնած իդէալական պահանջներից:

Արդարամտութիւն չէ ուրանալ որ մեր գրական գործիչների լաւագոյն ներկայացուցիչները կանգնած են եղել իրենց ծնող հասարակութեան մտաւոր-բարոյական մակերեւոյթից շատ բարձր: Այդպէս են եղել Աբովիանցը, Նալարեանցը, Նալբանդեանցը, Արծրունին և այլն: Օտար երկրների մէջ մտաւոր-բարոյական աճում ստանալով, գրանք, վերադառնալով հայրենիք, ոչ մի ջանք չէին խնայում իրենց մակերեւոյթին բարձրացնելու համար իրանց ծնող ժողովրդին: Եւ ինչ օդնութիւն հասցրին դրանց՝ իրանց մեր հասարակութեան սեր կամ աղ համարողները. գրանք իւրեանց մեծամիւտ և ինքնահաւաւան բարձրութիւնից գիտէին միայն դատափետել, մանրակրկիտ խծրծանքով, անմիտ բամբասանքով գիտուարութիւններ յարուցնել, տրանջալ ինչպէս հրէաները արտնջում էին Մովսէսի գէմ որ նրանց համաց եղիստական գերութիւնից, իսկ Սւետեաց երկիրն համնելու համար օդապայ միջոցներ չը պատրաստեց այդ քնքոյց ստրուկների համար, որոնք անկարող էին անապատի նեղութիւնները յանձն առնել ապագայ երջանկութեան յոյսով: Եւ դիտէք որքան տանջանքներ կրեցին և մեր Մովսէաները. որքան ջանքեր գործ գրին այդ գործիչները յաղթելու համար «անամնացած» հասարակութեան անտարբերութիւնը, մաքառելու համար սրտացաւ նախանձախնդիրների անվերջ ազգոցների գէմ: Օգնողներ չը կային,

իսկ քննադատող—դատավիետողներ, խոչդուռ յարուցանողներ
—որքան կամիք:

Այժմ երբ այդ անցեալը անցած է, նորագոյն ճնախանձա-
խնդիրները» սիրում են իրենց դատախազական ճառերի մէջ
խորիմաստ ձեւով յայտնել—թէ «այլ էր առաջ, երբ գործում
էին...և այնս. թէեւ բաւական է այդ հին գործիչների կենսա-
գըրութեան հետ ամենաթեթև ծանօթութիւն՝ համոզուելու հա-
մար որ անցած իրականութիւնը նոյն իսկ աւելի զարհուրեկի
փաստեր է տալիս հայկական անտարբերութեան մասին:

Ուրեմն, հասարաւկութեան այդ սարսափելի անտարբերու-
թիւնը և մեր նախանձախնդիրների յիշատակած գերը կար և
առաջ, երբ գործում էին դրական ասսարէզի վրայ այժմ մեր
պարծանք կազմող անունները, որոնց տաղանդը ամեն կասկա-
ծից գուրս է:

Անցան մի քանի տասնեակ տարիներ. կեանքը մեր չուրջ
հիմովին փոխուեց. գոյութեան կոփուր աւելի եւս սաստկացաւ.
Կրթութիւնը աւելի տարածուեց մեր ժողովրդի մէջ. բարձրա-
գոյն ուսումն ստացածների թիւը այժմ հազարներով կարելի է
հաշուել. միայն Եւրոպայում ուսանում են 271 հայ ուսանող-
ներ, եռապատիկ պէտք է համարել Ռուսաստանի բարձրագոյն
դպրոցներում սովորող հայ երիտասարդների թիւը. մեր թե-
մական դպրոցները իւրաքանչիւր տարի 40—50 ուսումնաւարտ-
ներ են տալիս: Եւ այդ բոլորից յետոյ՝ ինչ,—փոխուեց մեր
հասարակութեան վերաբերութեանքը պէտի մայրենի գրականու-
թիւնը. դպարեցին մեր ճնախանձախնդիրները» լոկ պա-
րապ դատախազների դեր կատարելուց: Կարելի է ասել թէ
համար եւ առջնորդ գոյութիւնը. յամենայն դէպս, այդ փո-
փոխութիւնը անսահման չնշն է իր՝ հասարակութեան մէջ
եղած այլ փոփախութիւնների համեմատութեամբ: Թուանշաննե-
րով էք ուզում կը ունել այդ երեւոյթը—Լու. հայ հեղինակը մե-
զանում կարող է յոյս ունենալ որ տարին 300—400 օրինակ կը
տարածուի նրա լաւ հեղինակութիւնից, առանց արուեստական
միջոյների. համարեա միակ լրադիրը 30 տարի զոյութիւն ու-
նենալով պէտք է իր բիւղժէն կազմի նկատի ունենալով միայն
2400 բաժանորդ. 14 տարի հրատարակուող միալ ամսագիրը,
պէտք է 600 բաժանորդով հրաշքներ գործի... Թուերի դէմ
գժուար է առարկութիւններ անել:

Բայց, մեր «ճնախանձախնդիրները» այնուամենայնիւ տ-
ուարկութիւններ անում են և, ըստ երեւոյթին, այդ առարկու-
թիւնները շատ խորիմաստ են: Դրանք ասում են. «Տուէք աւե-
լի հետաքրքիր, աւելի լուրջ, աւելի բազմակողմանի, աւելի

մեծ ձաշակով և տաղանդով կազմած գրքեր, լրագիրներ և ամսագիրներ և կը տեսնէք որ մէկ անդամից կը տամնապատկուեն այդ թուերը»: Բայց եթէ այդ ճիշտ լինէր գոնէ տաղանդաւոր անհատների նկատմամբ՝ Արծրունու, Գամառ-Քաթիպայի և Բաֆփու—մնանք չը պէտք է կարողանայինք բերել հակառակ փաստեր. արդեօք հասարակութիւնը տուաւ դրանց այդ երազած թուերը—Ոչ Մենք զնահատեցինք դրանց միայն այն ժամանակ, երբ դրանք թողին մեր փուչ իրականութիւնը... Բայց դեռ այդ փաստը մի կողմ դնենք: Խելքը զիսին մարդը պէտք է իմանայ որ պատահական յօդուածների, սկսնակ փառասէրների կամ կուշտ բործուաների «պարապ վախտի խաղալիք» գրուածքների վրայ յոյս դնելով՝ չի կարելի պահանջել՝ իր կոչման բարձրութեան վրայ կանգնած պարբերական հրատարակութիւն. մանաւանդ ներկայումս, երբ ապրուստ հայթայթելը գժուարացի է, իսկ մեր գործիչները բախտ չունեն պատկանելու կրեսունների դասին: Միւս կողմից էլ ձրի աշխատակցութեան վրայ յոյս դնել նշանակում է ստանալ այն ինչ որ կայ. դրականաթիւնը պէտք է կարողանայ ապահովել գրողի գէթ համեստ պահանջները, որպէս զի այդ ասպարէզում պատահական հիւրեր չը լինեն գրողները: Ամեն մի «նախանձախնդիր» անշուշտ գիտէ որ գրողի օրգանիզմը, նրա ընտանիքը, տարարախտաբար, երակներով գոյցութիւն պահպանել անկարող են... Ուրեմն, դրանք պահանջում են աշխարհիս ամենատրդար բանը—վարձատրութիւն իրանց արիւնաքրտինք աշխատանքի: Սուրբ բան է ազնիւ աշխատանքի վարձատրութիւնը, շատ աւելի մաքուր, քան մակլերութիւնը կամ մոցիքութիւնը, որ չատերի համար ապրուստի պատուաւոր միջոցն է.... Միայն այդ պայմաններում կարելի է ունենալ լուրջ տանուող մամուլի համար անհրաժեշտ աշխատողների թիւ, կօնտինգենու: Հնտեւաբար, եթէ հասարակութիւնը կամ նախանձախնդիրները ցանկանում են որ հայոց լրագիրը, ամսագիրը համապատասխանեն լիդէալական պահանջներին, պէտք է նախ և առաջ դատարկ խօսքերը, պարապ գանդատները մի կողմ թողնեն և ցոյց տան որ գիտեն և իրանց պարտականութիւնը, գիտեն թէ ինչ է պահանջում հասարակական օգուտը:

Այժմ մեր ընթերցող հասարակութեան պահանջները շատ աւելի խիստ են բան առաջ: Եւ բնականաբար այդպէս էլ պէտք է լինի: Բայց զարդացնել միայն քննադատական կողմը, որ անհրաժեշտ է, և ընդունակ չը լինել բաղմակողմանի կերպով քըննել որոշ երեւոյթի պատճառները—դա ոչ մի բանի նման չէ: Մենք պէտք է վերջապէս, մի կողմ թողնենք ասիացու սովո-

րութիւնը—ամեն բան յոյս դնել վերին տնօրինութեան վրայ և ձեռներս ծալած սպասել հրաշքներ, լալ ու զանգատուել Մենք, ուրիշների առաջ պարծենալով, մեզ անուանում ենք Ասիայի եւրոպացիներ։ Այդ ինքնախարէութիւն չէ արդեօք, յարգելի պարոններ։

Եւրոպացին՝ երբ որոշ նպատակ է զնում իր համար՝ նախ բազմակողմանի կերպով ուսումնասիրում է պայմանները, հանգամանքները և ապա նպատակայարմար կ ա զ մ ա կ ե ր պ ո ւ թ ի ւ ն է տալիս իր զործ զրելիք ջանքերին, միջոցներ է ստեղծում որ իր աշխատանքը Միջիքեան ջանքեր չը դառնան։ Եւ նա կազմակերպուած գործունէութեամբ միշտ հասնում է իր դրած նպատակին, իսկ ասիացին բերանը ծոած միայն զիտէ ողբալ, գանգատուել և Ալլահից հրաշքներ սպասել… Դժգոհ էք։ —Գործով ցոյց տուեք որ կարող էք աւելի լաւ բան անել, ան փ ո փ ո խ թողնելով ներկայ բոլոր պայմանների համագումարը. մի բան որ մեզ թւում է անհնարին։ Պէտք է Ընդհակառակը հիմնովին փոխել առհասարակ այժմնան վ եր ար երմունքը զէպի գործը։ Ահա որն է զիսաւորը!

Լ. Ս.

25 յուլիսի.

Յունիսի 27-ին վախճանուեց հոչակաւոր քանդակագործ Մարկ Անտոկ լուկին։ Նա ծնուել է Վիլնա քաղաքի մի աղքատ հրէական ընտանիքում 1843 թ. հոկտ. 21-ին։ Դեռ մանուկ հասակում Անտօկոլսկին ցոյց էր տալիս մեծ ընդունակութիւն նկարչութեան մէջ։ Զքաւոր ծնողները նրան տուել էին մի փորազրիչ վարպետի մօտ իբրի աշակերտ։ Այդ արհեստանոցի կեանքը դուր չեկաւ ապագայ հանձարին, որ 13 տարեկան հասակում փախաւ իր վարեկանից և մի քանի տարիներից յետոյ դնաց Պետերբուրգ ու Փարագանեց մի կերպ մտնել Գեղարուեստից ճեմարանը։ Շնորհիւ քանդակագործ Պիմենօվի աջակցութեան 1862 թուականին տաղանգաւոր հրէայ պատանուն աջողուեց մտնել իր տենչած տաճարը։ Գեղարուեստից ճեմարանում Անտօկոլսկին բարեկամացաւ Շէպինի հետ ապագայ հոչակաւոր քանդակագործը և մեծ նկարիչը ուսանող ժամանակ միասին էին ապրում։ Անտօկոլսկին Ճեմարանում ամբողջապէս անձնատուր էր եղել իր սիրած արուեստին և շատ կարդում էր ու լուրջ պարապում իր ինքնազարգացմամբ։

Սակայն ճեմարանում քանդակագործութեան մէջ տիրող

րուտինան, հին ուղղութիւնը, չէր գոհացնում Անտօկօլսկուն, որ ձգտում էր իր քանդակագործութեան մէջ արտայայտել մարդու ներքին, հոգեկան աշխարհը՝ և ոչ միայն մարմնի արտաքին ձեւերը։ Դա նոր ուղղութիւն էր, որ գուր չէր գալիս բուտինայի սովոր միջակութիւններին։ Այդպէս էր բնորոշում իր ձրգտումը Անտօկօլսկին։—«Եւ եթէ ինձ հարցնէին թէ ով եմ ես. ես կը պատասխանէի. արուեստագէտ. ապրում եմ մի կեանքով, բայց նա լքցուած է այլ կեանքերով, ես զգում եմ ուրիշ մարդկանց զգացմունքները, նրանց բոլորին միատեսակ եմ սիրում, նրանք բոլորը ինձ համար թանգ են. ես ուրախանում եմ նըրանց ուրախութիւնով, բայց աւելի ես մօտ է ինձ նրանց վիշտը... Մարդիկ—իմ տաւիզներս (արփե) են, նրանց նեարգերը—ինձ համար լարեր են, իմ դիպչելով ես ցանկանում եմ զարթեցնել նրանց մէջ սէր, բարութեան զգացմունք»։

Եւ Անտօկօլսկին մարմարինին, բարին հաղորդեց իր այդ հոգին. նրա քանդակագործած զէմքերի գծերում կարելի է կարդալ հոգեբանական մի ամբողջ վերլուծութիւն, տիպերի բանաստեղծական-վիլխոսփայական մի հանճարեղ բնորոշում Այդպէս են նրա «Էվան Գրողնին», «Մեծն Պետրոսը», «Մեռնող Սովորտէսը», «Քրիստոսը ժողովրդի առաջ», «Մեֆիստօֆէլը», «Ապինօզան» և այլն։

—

Յուլիսի 12-ին մեռաւ Կիրիլ Պետրովիչ Եանօվսկին, 74 տարեկան հասակում։ Եանօվսկու պաշտօնավարութիւնը զլիստորապէս անցաւ Կովկասում, ուր նա 1878—1901 թ.թ. ուսումնարանական շրջանի հոգաբարձու էր։ Հանգուցեալը ծնուել էր 1828 թ. և բարձր կրթութիւն էր ստացել Կիեվի համալսարանի Ֆիզիկո-մաթեմատիկական բաժնում։ Իր մանկավարժական գործունէութիւնը նա սկսեց ուսուցչութեամբ Բովինեան զիմնադիայում, ապա տեսուչ նշանակուեց Քիչնելի զիմնադիայում և 1863 թուին կարգուեց Բնօարքիայի նահանգի ժողովրդական գարուների վերատեսուչ։ 1871 թուին նշանակուեց Պետերբուրգի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի օգնական, իսկ 1879 թուականին—Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու։ Հանդուցեալի նախաձեռնութեամբ հրատարակուած էր «Сборникъ матеріаловъ для описанія мѣстностей и племенъ Кавказа»։ Լոյս է տեսել նրա օրօք 25 հատոր։

Եանօվսկին մեծ գեր էր կատարում նաև միջնակարգ դըպթուիս, 1902.

բոցների բեֆօրմների մասնաժողովում։ Նա վերջին տարիներունշանակուել էր պետական խորհրդի անդամ։

«Մուրճի» մէջ (1901 թ., № 9) յիշատակուած էր որ զեմստվօների իրաւասութիւնից խլուած է մատակարարական գործը (քրոջ պրո-
վոլյուստի անձունուած է աղմինիստրատիւ հիմնարկու-
թիւններին։ Մայիսի 20-ին կայացաւ Բարձրագոյն հրաման, որ
1902 թուականի ընթացքում գաղարեցնուի Ռուսաստանի երկ-
րագործական գոտու մի քանի նահանգներում հողային կայ-
քերի մասին վիճակագրական տեղեկութիւններ հաւաքելը։ Այդ
պատճառով ներքին գործերի մինիստրի պատճառարանութեան
մէջ ի միջի այլոյ ասուած է։

«Զեմստվօյական հիմնարկութիւնների ոչ բաւականաչափ
աջող գործունէութիւնը հողային կայքերի գնահատական աշ-
խատանքի մէջ բացատրում է գիտաւորապէս նրանով, որ նը-
րանք չափազանց ընդարձակեցին իրանց դրած նպատակը։ Զեմ-
ստվօններից շատերը, չը բաւականանալով տեղեկութիւններ ժո-
ղովնելով, որոնք ցոյց են տուած օրէնքում և ֆինանսների մի-
նիստրի հրահանգում, նպատակ դրին յատուկ գնահատողների
միջոյով կատարել զնահատողական-տեսական հետազօտու-
թիւն խոշոր անշարժ կայքերի։ Երկրորդ պատճառը, որ արգե-
լում էր գործի աջող ընթացքին, կայանում է աշխատանք
կատարող անձանց անբաւարար կազմի մէջ։ Այդ անձննք մնա-
մասամբ բաւականաչափ պատրաստուած չեն իրանց առաջ դրած
պարտականութիւնների համար և, լաւադոյն դէպքերում, ունեն
միայն տեսական պատրաստութիւն, բայց անձանօթ են գնա-
հատական գործի պրակտիկական պահանջներին։

Բայց այդ, անհրաժեշտ վիճակագրական տեղեկութիւն-
ներ ժողովելու համար զեմստվօյական հիմնարկութիւնները
պէտք է ընտրէին աշխատողների մշտական կազմ, որը տմառա-
յին ամիսներում լրացնուում էր ժամանակաւոր աշխատակիցնե-
րով, յաճախ քաղաքական տեսակէտից ոչ անարատ անձերից։

Մուրճակը արդի առանձին յարաբերութիւնների
մէջ ահագին նշանակութիւն է ստացել. կեանքը պահանջում էր
որ աւելի որոշ, արագ ու դիւրին շրջառութեան ձև ստանար
վարկի այդ արտայայտիչը։ Ռուսական օրէնսդրութեան մէջ
մուրճակին մասին գոյութիւն ունեցող կանոնադրութիւնը
հնացած էր։ Մշակուեցին նոր կանոններ։ Այս մայիսի 27-ին
արգէն հաստատուել է մուրճակիների նոր կանոնադրութիւն
(ստավ օ ՎԵԿԵԸԼԱԽԵ), որ գործադրուելու է ամբողջ պետու-

թեան մէջ (բացի Ֆինլանդիայից և Հեհաստանից) 1903 թուականի յունուարի 1-ից:

Աւելի մեծ հասարակական նշանակութիւն ունի օրէնսդրական այն բարեփոխութիւնը, որ մազրուեց ապօրէն զաւակների՝ դրութիւնը որոշող օրէնքների մէջ: «Օրինաւոր ամուսնութիւնից գուրս» կամ «պոռնկութիւնից» ծնուած անմեղ զաւակները կրում էին յանցաւոր ծնողների թեխնւամտութեան կամ յափշտակման հետեւանքների ամբողջ ծանրութիւնը: Նոր օրէնքը աւելի մարդասէր հայեազգներով է զեկովարւում այդ անպաշտպան և անմեղ զոհերի նկատմամբ: «օրինաւոր ամուսնութիւնից գուրս» ծնուած երեխաներին նա իրաւունք է տալիս անուն և ապրուստ պահանջել իր ծնողներից: Օրէնքը հեշտացնում է մի և նոյն ժամանակ առաջօրէն» զաւակների որդեգրութիւնը:

Բարձրագոյն հաստատուած Խորհրդակցութիւնը, որ ուսումնասիրում է գիւղատնտեսական կարիքները, առաջարկել է տեղական կօմիտէաներին քննելու հետեւել կէտերը:

1) Գիւղատնտեսական դիտութեան և հմտութեան տարածումը, ինստրուկտօրներ նշանակելը, աչքի ընկնող տնտեսութիւնների նկարագրութիւնը և նրանց պարգևատրութիւնը, մանաւանդ եթէ դրանք պատկանում են դիւղայիներին:

2) Գիւղատնտեսական փորձերի բարւոքումը և զարգացումը, գիւղատնտեսներին ծանօթացնելը փորձերի հետեւանքների հետ:

3) Գիւղատնտեսութեան թշնամիների դէմ մաքառելը, օրինակ հեղեղատներից քանդուած հողերի, աւազների, ճահիճների, կենդանիների հիւանդութիւնների, բոյսերին վեասող կինդանիների և բոյսերի դէմ:

4) Աջակցել այն միջոցներին, որոնցով հնարաւոր է նուազեցնել հրդեհները և արդիւնաբերել ու տարածել շինութիւնների համար պիտանի չայլուող նիւթեր:

5) Հողային բարւոքումների պահպանութիւնը և ոռոգման դորձի կանոնաւորութիւնը, գիւղացիներին և կալուածատէրերին խրախուսելու եղանակները, որ պէս զի նրանք հողային բարւոքումներ անեն, անտառներ տնկեն, ջրամբարներ շինեն:

6) Գիւղատնտեսական սեփականութեան պահպանութիւնը. ի՞նչ միջոցներով հնարաւոր է հողերի խլումը ոչչացնել, անտառի կոտորումը, ձի փախցնելը, միրգ և բանջարանոցի ու դաշտերի բերքի զողանալը, նաև ծառերի կտրատելը նուազեցնել:

7) Ի՞նչ միջոցներով կարելի է հողաբաժինները փոխանակել, որպէս զի մէջամէջ հողային սեփականութիւնները մի տեղ ժողովուեն:

8) Տեղական ճանապարհների շինելը և պահպանելը, ի՞նչ յարաբերութիւններ կարող են լինել այս գործում պետութեան, գեմսավոյի, գիւղական հասարակութիւնների, ակցիօններական ընկերութիւնների և մասնաւոր կալուածատէրերի մէջ:

9) Կապալառութեան օրէնսդրութեան քննութիւնը՝ աւելի խելացի կարգ որոշելու նպատակով գիւղատնտեսական բարուգումներ առաջացնելու համար. պէտք է որոշել ժամանակամիջոցները բարւորումների, գիւղական հողաբաժինների և հանգատեղերի կապալառութիւնը:

10) Մանր կրեդիտի կազմակերպութիւնը:

11) Մելիօրատիկ կրեդիտի ընդարձակումը:

12) Գիւղատնտեսական ընկերութիւնների կազմակերպութեան և գործունէութեան հիմունքների սահմանը:

13) Ի՞նչ միջոցներով կարելի է տարածել գիւղատնտեսական կատարելագործուած սիստեմները և եղանակները, լաւ գործիքները, մեքենաները, պարարտացնելու նիւթերը, տունկերը: Ի՞նչ միջոցներով կարելի է այդ առարկաները արդիւնաբերել Ռուսաստանում: Ի՞նչ միջոցներով կարելի է նրանց գործադրել գիւղացիների տնտեսութեան մէջ:

14) Անասնապահութեան բոլոր ճիւղերի ղարդացումը թէ որակութեան և թէ քանակութեան կողմից: Ի՞նչ միջոցներով կարելի է գիւղացի ների մէջ տարածել բարւորումները:

15) Կաթնատնտեսութեան բարւորումը և զարգացումը. Ի՞նչպէս նպաստել նրա արդիւնքների վաճառահանութեան:

16) Գիւղատնտեսութեան առանձին ճիւղերի՝ օրինակ բանջարաբուծութեան, այգեգործութեան, մեղուաբուծութեան և նաև արգիւնագործական բյուսերի մշակութեան տարածելու և բարւոքելու եղանակները, մանաւանդ զիւղացիների մէջ գործադրութիւն տալու նպատակով:

17) Ի՞նչպէս զարդացնել այն արդիւնագործութիւնները, որոնք սերտ կերպով կապուած են զիւղատնտեսութեան հետ և բարձրացնում են նրա եկամուտները: Առանձին միջոցներ գործադրելու նոյնը զիւղացիների մէջ:

- 18) Գիւղատնտեսական արդիւնքների վաճառահանութեան բարւոքում՝ թէ երկրի ներսում և թէ արտասահմանում:
- 19) Հացահատիկների շտեմարանների շինութիւնները:
- 20) Երկաթուղու սակագները զիւղատնտեսական արդիւնքներ տեղափոխելու համար:
- 21) Ի՞նչ միջոցներով զարգացնել արդիւնքների փոխանակութիւնը զանազան մասերի մէջ և ներքին վաճառանոցների գործունէութեան բարձրացումը:
- 22) Գիւղատնտեսական արդիւնքների անմիջական մատակարարելը արքունական վարչութիւններին:
- 23) Գիւղատնտեսութեան և անասնապահութեան արդիւնքների տեղափոխութեան պայմանների բարւոքումը:
- 24) Միջոցներ գիւղական հողի սահմանում ցրուելու գիւղացիներին և նուազեցնելու մէջամէջ հողատիրութիւնը:
- 25) Ի՞նչ եղանակով գնել գիւղական հասարակութիւնների վրայ ծախքեր այն գիւղական ընտանիքների և անհատների համար, որոնք թողնում են գիւղը և գաղթում:
- 26) Տնայնազործութեան զարգացման օգնելը հում նիւթեր տալով, ինչպէս վաճառահաննել պատրաստած արդիւնքները, ծանօթայնել արդիւնագործներին լաւ նմուշների, կատարելագործուած եղանակների հետ:
- 27) Միջոցներ կանոնաւորելու գիւղատնտեսութիւնից գուրա աշխատանքները, տեղեկութիւններ տալով գների, աշխատանքի տեղերի և ուրիշ հանգամանքների մասին: Միջոցներ զիւղացնելու գիւղացիների համար զիւղատնտեսական աշխատանքներ գտնելը, բանուորներին երկաթուղով և ջրային ճանապարհներով տեղափոխելը, բժշկական և ապրուստի օգնութիւն կազմակերպելը այն տեղերում, ուր խմբւում են մշակներ:
- Այս կէտերը պէտք է քննութեան առարկայ լինեն տեղական կօմիտէտներում:

Ա. Բ Տ Ա. Փ Ի Ն ՏԵՍՈՒԹԻՒՆ

Նուապետեան զաշնակցութեան վերանորոգումը.—Փոխադարձ ապահովագրութեան սիստեմը Եւրօպայում.—Դաշնակցութիւններ և բարեկամական համաձայնութիւններ.—Անգլիայի դաշնակցները.—Անգլիայի զըսուուած դերակատարութիւնը Արևելեան հարցում.—Եւրոպական հառարական կարծիքի մէջ առաջ եկած փոփոխութիւնը.—Մակեդոնական հարցը.—Բրիտանէլում կալացած հակածքների կօնգրէսը.—Պատո, Օրմանեանի ճրաժարականը:

Պ օ լ ս ի թ ե ր թ ե ր ի ց. Կիլիկիայի կաթողիկոսական հարցը.—Սաի ժառանգությաց դպրոցը:

Զը նայած զանազան չարամիտ զուշակութիւններին, եռապետեան զաշնակցութիւնը նորից կնքուեց Գիրմանիայի, Աւստրօ-Ռւնգարիայի և Խտալիայի մէջ։ Մի և նոյն ժամանակ առանձին առանձին այդ պետութիւնները բարեկամական կապեր են հաստատում և իրանց հարեւանների հետ։ Խտալիայի և Ֆրանսիայի մերձեցման մասին առիթ ենք ունեցել խօսելու, ինչպէս և Աւստրիայի և Ռուսաստանի համաձայնութեան մասին Բալկանեան քաղաքականութեան նկատմամբ։ Որ գերմանական կայսրը ամեն առիթից օգտուում է շեշտելու համար նաև իր բարեկամական կապերի մասին ոռուսաց Թագաւոր Կայսրի հետ, այդ էլ տեսանք նախ կայսրի և Կայսրունու Ֆրանսիա այցելելիս և երկրորդ՝ հէնց նորերս, երբ հարեւան երկրների վեհապետները սիրալիք տեսակցութիւն ունեցան Բէվէլում։ Նոյն իսկ ֆրանսիայի հետ Վիլհէլմը աշխատում է պահպանել բարեկամական յարաբերութիւններ։ Բոլորը, երեւի, միշում են Վալդէկ-Ռուսսօի տեսակցութիւնը Վիլհէլմի հետ։

Ժամանակակից կուլտուրական մարդը լաւագոյն է համարում ամեն բանում իրան, ապահովելու տունը և ստացուածքը կրակից, ցանքսերը կարկանդաց, կեանքը, եկամուտները դժբախտ պատահարներից։ Նոյն հեռատեսութիւնը գործ են դնում նաև պետութիւնները։ ապագայ պատերազմներից իրանց ապահովելու համար նրանք ամեն տեսակ կօմքին իցիաներ են սարքում։

Եւրոպայում իրան մենամենակ էր զգում միայն Անգլիան, բայց նա էլ հեռու արեւելքում գտաւ իր զինակիցը յանձին Եապօնիայի, չը հաշուած այն գաղութային հանրապետութիւնները, որոնք դեռ պահպանում են մայր Անգլիայի հետ որոշ կապեր: Այդ գաղութների նախագահ—մինիստրները այժմ հաւաքուել են Լօնդոնում և, Զեմբերլէնի նախագահութեամբ, մի չարք նիստեր են ունենում: Թէեւ այդ ժողովների որոշումները դադտնի են պահւում, բայց, այնուամենայնիւ, ամենադէտ եւրոպական մամուլը կարողացաւ իմանալ որ այդ համաժողովի խորհրդածութիւնների զինաւոր որոշումներն առ այժմ հետեւեալն են. 1) իւրաքանչիւր երեք տարբին մի անգամ լինի համաժողով բրիտանական ինքնավար գաղութների առաջին մի նիստերի. 2) աւելացնել ծախսերի այն մասը, որ կրում են դադութները բրիտանական կայսրութեան պաշտպանութեան գործում. 3) Անգլիայից գաղութները ներմուծող մի քանի ապրանքների մաքսի ցածացումը:

Ահա այդ ինքնավար անգլիական գաղութները Աւստրալիայում, Ամերիկայում և Աֆրիկայում, որոնցից իւրաքանչիւրը իսկապէս մի մի անկախ հանրապետութիւն է, դրանք են հզօր Անգլիայի գաշնակիցները:

Քաղաքակիրթ մարդկութեան զանազան անկախ հատուածները այդպիսով լաւից ապահովել են իրանց գոյութիւնը զանազան պատահարներից, բայց դեռ ևս կան մարդկութեան նոյն առաջադէմ մտսի մէջ ազգութիւններ, որոնք չանքեր են գործ զնում իրանց գոյութիւնը պահպանել. այդպէս են Պրուսիայում լեները, Աւստրիայում չեխները, և Անգլիայում իրլանդացիները: Տիրողների ոյժի դէմ անլսելի է դրանց արդար բողոքի ձայնը: Այդ ձգտումները անկասկած զուտ ազգային հողի վրայ են, բայց առաւել ևս զարհուրելի է մի բռնութիւն, որ գարերից ի վեր տիրում է Եւրոպայի մի անկիւնում, քաղաքակիրթ ազգերի լուռ համաձայնութեամբ, և ոտնակոխ է անում ուղղակի մարդկային ամենատարրական իրաւունքները: Մեր խօսքը Թիւքիայի բէժիմի տակ հեծող Մակեղօնիայի մասին է: Ասիական նահանգների մասին խօսել անգամ չարժէ, որովհետեւ Եւրոպացու համար այդ հեռաւոր երկիրները կարծես դեռ միայն շահագիտական նշանակութիւն ունեն: Այդ է ցոյց տալիս արեւելեան հարցի պատմութիւնը:

Մի ժամանակ երբ Անգլիան ամենից ջերմ մասնակցութիւն էր ցոյց տալիս Արեւելեան հարցում՝ միւս պետութիւնները կասկածանքով էին վերաբերում դէպի նրա բարի նարաաւակները և ամեն կերպ աշխատում էին սառը ջուր ածել նրա

ոգեւորութեան վրայ։ Այժմ Անգլիան զբաղուած է իր ներքին խառն գործերով։ նա ամբողջապէս կուլ էր գնացել Աֆրիկական պատերազմի մէջ։ Եւ ինչ արեցին այս վերջին տարիների ընթացքում մեծ պետութիւնները՝ մակեդոնացիների գրութիւնը թեթեւացնելու համար։ Ոչինչ ստիպեցին սուլթանին Շիրազէ» հրատարակել։ Մի բան, որ Աբգուլ Համիլը պատարաստ է իւրաքանչիւր օր 24 անդամ անելու...

Սակայն Թիւրքիայի քրիստոնեաների համար մի միսիթարական փոխուսութիւն է նկատւում. այդ քաղաքական աղգերի հասարակական խղճի զարթումն է։ Մի ժամանակ դարձեալ միայն Անգլիայի մէջ էին գտնուում Թիւրքիայի քրիստոնեաների դառն վիճակով բուռն կերպով հետաքրքրուող անհատներ. հէնց Թիւրքիայի հայերն որքան հայասէր անգլիացիներ ունէին. մինչդեռ, օրինակ, Գերմանիայի նոյն իսկ ամենաարմատական կուսիակցութեան ներկայացուցիչները յանձին Լիբակնեստի բնաւ չէին ել ուզում լսել հայկական տանշանքների մասին։ Այժմ ամեն ինչ փոխուել է. այժմ ոչ միայն Գերմանիայի սոցիալ-դէմօկրատները, այլ և Ֆրանսիան, փոքրիկ Դանիան անդամ, ոոյց են տալիս խոր կարեկցութիւն դէպի չարատանջ թիւրքահայը։ Այդ նոր հոսանքը ունեցաւ իր միջազգային խոշոր արտայայտութիւնը Բրիւսսէլում կայացած հայասիրական անդրանիկ կօնգրէսում

Բնականաբար, Կ. Պալսում մեծ իրարանցում էր գյել Բրիւսէլում հայասիրական կօնգրէսի բացման լուրը։ Կօնգրէսի բացումից մի քանի օր առաջ սուլթանը հրաւիրեց պալատ հայոց պատրիարքին և պահանջեց, որ նա իր կողմից միջոցներ ձեռք առնէ, որպէս զի կօնգրէսը չը կայանայ։ Պատրիարքը զարմացր յայտնեց մի այդպիսի խնդիրի առիթով և ասեց, որ կօնգրէսը կազմում են ոչ թէ Թիւրքիայում ապրող հայերը, այլ հայերի բարեկամները արտասահմանում, որոնց համար իր միջամտութիւնը «չինչ նշանակութիւն չէ կարող ունենալ։ Երբ սուլթանն ակսեց պնդել, պատրիարքը յայտնեց որ հրաժարական կը տայ։ Սուլթանը տեսնելով, որ իր ցանկութիւնը չէ կարող իրագործուել պատրիարքի միջոցով, վճռեց զիմել բէլգիական կառավարութեանը։ Բայց այդտեղ էլ նա անաջողութիւն ունեցաւ, որովհետեւ Լէօպոլդ թագաւորը բարկացած է նրա վրայ Բրիւսսէլից թիւրքաց գեսական Կարաթէօդօրի-փաշային յետ կանչելու համար, որ վայելում էր Բէլգիայի թագաւորի թէ յարգանքը և թէ համակրութիւնը։

Սուլթանի ներկայացուցիչը, Թիւրքաց գեսականը, ամեն ջանք գործ դրեց խանգարել կօնգրէսի պարապմունքները

Բրիւսսէլում, բայց ապացուցուեց որ թիւրքիայում գործ զնուող խոչվոտները Եւրոպայում միայն ծիծաղ են յարուցանում: Եւ այդպէս ահա Բրիւսսէլում, յուլիսի 4-ից մինչև 7-ը, «Café de la Tourelle» դահլիճում, կայացաւ առաջին միջազգային հայասիրական կօնդրէսը: Այդ կօնդրէսին մասնակցողների մէջ մանաւանդ գարձնում էին իրանց վրայ ուշազրութիւն ժան Ժօրէս, Էզմօն դէ-Պրէսանսէ, Վեզէյլ, տիկին Սեվէրին, Գէննինգս, բարօնուհի Վաստելիդ, դանիական ֆինանսների նախկին մինիստրը Ժան Լուսգ, Բէրնար Լազար, Էլիզէ Ռէկիւ, Վանդէրվէլդ, Ֆիւրնէմօն, Հէկտօր Դէնի, Բէրտրան և ուրիշները: Նախագահում էր Գուզո-դէ-Լէնէ: Կօնդրէսը բացուեց նախագահի հետեւեալ ճառով: «Մէր կօնդրէսը, —յայտնեց Գուզո-դէ-Լէնէ, —միջազգային արդարութիւն զսրծ է: Մենք բոլորս ձգտում ենք այն բանի, որպէս զի կուլտուրական ազգերը օրէնքի պահպանները լինեն, օգուտ քաղելով իրանց ոյժից ոչ միայն նեղ-ազգայնական նպատակների համար, այլ և նրա համար, որ ստիպեն իրանց պարտաւորութիւնները հպատակների առաջ մոռացող կառավարութիւններին՝ յարգել քաղաքակրթութեան աւանդութիւնները»: Նախագահից յետոյ խօսեց Պիէր Քիյար: «Ասօրական մի թագաւոր, —սկսեց հոևտօրը, —նկարագրեց իր ճանապարհորդութիւնը այն նահանգների մէջ, որոնք վերջը Հայաստան զարձան: Այդ հին միապետը կոտորում էր իր ճանապարհի վրայ կանանց և երեխաններին, այրում էր զիւղեր, րոնում էր է տանջանքների էր ենթարկում տղամարդկանց: Համեմատելով այդ գաղանի դործերը այն բանի հետ, ինչ որ այժմ կատարւում է Հայաստանում, մենք տեսնում ենք, որ զանազանութիւնը մնի չէ: Պէտք է յիշել դիպլոմատիական այն դործողութիւնները, որոնց նպատակն էր բարւոքել հայերի վիճակը, սկսած 1856 թուից, այն ժամանակ կարելի էր յուսակ, որ մի շարք բէֆօրմներ վերջ կը դնեն թիւրքաց հայերի իրաւագուրկ դրութեանը: Այն ժամանակից կէս դար անցաւ: Դիպլոմատիան յաճախ բարձրացնում էր իր ճայնը ի նպաստ հայերի: Եւ ինչ երկու տարուայ ընթացքում (1894-ից 1896) 300,000 հայեր սպանուեցին, տանջուեցին և այլանդակուեցին: 1896 թուից զազանութիւնները գալարեցին, բայց հիմք կայ ենթադրելու, որ նորից սպանութիւնների և հրդեհների շրջանը կը սկսուի Հայաստանում: Հարկաւոր է ճիշտ միջացներ գտնել այդ դրութեան դէմ և ստիպել պետութիւններին միջամտելու հայկական գործերում: Ասում են, —բացականչեց Քիյար, —որ հայերը վաշխառութեամբ են պարապւում Այդ սուտ է: Հայ ազգաբնակութեան 90 տոկոսը գիւղա-

ցիսերն են կազմում: Անբարեխիղճ են այն մարդիկ, որոնք այդպիսի փաստերով են հանդէս դալիս հայերի դէմ, Այդ հարցը ոչինչ առարկութիւններ չը պէտք է յարուցանէ: Մէկ ուրիշ առարկութիւնն եւս այն է, որ մեր հակառակորդները հիմնուում են ստատիստիկայի վրայ: Նրանք ասում են, որ հայերը ընդամենը Յ միլիօն են թուով և դրուած են 12 միլիօն թիւրքերի միջնու: Մի և նոյն ժամանակ, սուկայն, մոռանում են, որ այդ ազգաբնակութիւնը իմբուած է որոյ շրջաններում և միայն շրջապատուած է թիւրք հարեւանների ծովով: Նոյն իրաւունքով գերմանացիները կարող էին միացնել իրանց երկրի հետ Շամպայնը և ասկա ասել, որ Շամպայնում ազգաբնակութիւնը փրանսիական չէ: բայց Եթէ դէն զցել այդ բոլոր առարկութիւնները, այնու ամենայնիւ գրական միջոցներին վերաբերեալ հարցը դեռ անլուծելի է մնում: Պէտք է արդեօք, պահպանել status quo, այսինքն անտարբեր նայել հայերի կոտորածների վրայ: Պէտք է արդեօք աշխատել Հայաստանը Ռուսաստանի հետ միացնելու համար: Պէտք է աշխատել ձեռք բերելու վարչական բէֆօրմիներ: Ես հակւում եմ դէպի վերջին լուծումը: Նա, իմ կարծիքով, ամենաարդարացին և գործնական է:

Առաջին նիստն աւարտուեց տիկին Սևիներինի ճառով մամուլի ընթացքի մասին հայկական հարցում: Երկրորդ նիստը սկսուեց փրանսիական տաղանդաւոր պատգամաւոր Փօրէսի հետեւեալ ճառով: «Մենք բոլորս յանցաւոր ենք հայերի առաջ: Ամօթ է կառավարութիւնների անգործութիւնը պատրուակ բերել, որով հետեւ կառավարութիւնները մեր մարմնից են և մեր ոգուց: Եթէ եւրոպական ազգերը անկեղծ ոգեւորուէին հայերին օգնելու գաղափարով, կառավարութիւնները չեն յապաղի նրանց հետեւելու»:

Բրիւսսէլի կօնդրէսում Քիյար կարդաց զանազան տեղերից ստացած ողջոյնները, որոնց թւում էդուարդ Բէրնչտէյնից, որը հաւատացնում է, որ նա և գերմանական սօցիալ-դէմոկրատները առաջուց ընդունում են կօնդրէսի վճիռները, և Փօրժ Կլէմանսօից: Ապա, Քիյարի առաջարկութեամբ, կազմակերպուեց միջազգային յանձնաժողով հայկական հարցի վերաբերմամբ, որի մէջ մտան՝ Ռւզո, Պրէսանսէ, Սամբա, Բերէլ, Բէրնշտէյն, Զօն Բէրնս, Կէյր Գարդի, Զէմս Բրայս, Էնրիկօ Ֆէրրի, Բէրտա Ֆօն-Սուտնէր: Ապա կօնդրէսն ընդունեց Փօրէսի պատճառաբանած հնտեւեալ որոշումն: «Կօնդրէսը, համոզուած լինելով, որ հայերի պահանջած բարենորոգութիւնները և երաշխաւորութիւնները կարող են իրագործուել առանց որ և զնաս հասցնելու Օսմանեան կայսրութեան հողային ամբող-

ջութեանը, համողուած լինելով նոյնպէս, որ հէնց իրան՝ թիւրքաց ազգաբնակութեան շահն է միանալ այդ բէֆօրմների գործին, յիշեցնում է Բերլինի զաշնագրի 61-դ յօդուածի բնագիրը. «Տ. Դուռը պարտաւորւում է անյապաղ իրագործել ամեն տեսակ բարւոգումներ, որոնք անհրաժեշտ կը համարուեն հայերով բնակեցրած նահանգներում և ապահովել նրանց հանդիստ գոյութիւնը քիւրդերից և չերքէզներից. Նա պարբերաբար հաշիւ կը տայ ձեռք առնուած միջոցների մասին պետութիւններին»: Կօնդրէսը հաստատում է, որ այդ յօդուածով Եւրօպան պարտաւորութիւն յանձն առաւ ապահովել հայ ազգաբնակութեան կեանքը և ապահովութիւնը, երթեւեկութեան ազատութիւնը, նրանց գոյքի խաղաղ վայելումը և խղճի ազատութիւնը: Կօնդրէսը յայտարարում է, որ Եւրօպայի և մարդկութեան պատուի համար հասել է ժամանակը, որ այդ յօդուածը լիակատար և ճիշտ իրազործումն ստանայ: Նա հրաւիրում է կառավարութիւններին և ազգերին գործել 1895 թուի մենօրանդումի մաքով՝ Թիւրքիայի գործերում՝ միարան միջամբտութեան միջոցով և յանձնարարում է իր մշտական միջազգային յանձնաժողովին կազմակերպել գործունեայ պրօպագանդա պարլամենտաներում, մամուլի մէջ և ներգործել հասարակական կարծիքի վրայ: Երկրորդ վճիռը, որ պաաճառաբանեց Պրէսսանսէ, ասում է, «Կօնդրէսը, ողջունելով այն միջոցները, որ նորես ձեռք առան Ռուսաստանը և Ֆրանսիան իրանց հիւպատոսութիւնների քանակութիւնը աւելացնելու համար Թիւրքիայում, հրաւիրում է իր այն անդամներին, որոնք մասնակցում են օրէնսդրական ժողովներում, պահանջել իրանց կառավարութիւններից նմանօրինակ միջոցներ»: Վերջապէս երրորդ որոշումը հրաւիրում էր բոլոր երկիրների մամուլը՝ նպաստել կօնդրէսի ընդունած որոշումների տարածմանը: Կօնդրէսը փակուեց, վճռելով եկոր տարի գումարուել էլի Բիւսսէլում և նշանակել Քիյարին իր մշտական քարտուղար:

Աւելորդ չէ առաջ բերել նաեւ «С. Петерб. Въдомости» լրագրի Բիրւսսէլի թղթակցի գրուածքը. «Կ'աւելացնեմ էլի միքանի խօսք հայասիրական հէնց նոր փակուած կօնդրէսի մասին: Բէլգիայի, Դանիայի, Ֆրանսիայի և Հօլանդիայի ներկայացուցիչներից ընտրուած յանձնաժողովը մշակեց առանձին պրօքրամ, որի համաձայն անհրաժեշտ է համարուած ամենից առաջ միացնել մէկ ընդհանուր գործունէութեան մէջ հայասիրութեան ցիրուցան արտայայտութիւնները Եւրօպայի բոլոր երկիրներում, և մի և նոյն ժամանակ ամեն ջանք գործ զնել հասարակական գործիչների ամենամեծ թիւ գրաւելու համար,

որպէս զի այդ գործիչները մասնակցեն առաջիկայ միջնորդութիւններին կառավարութիւնների և պարլամենտների առաջ հայկական հարցի վերաբերմամբ,—մասնաւանդ պէտք է զրաւել տպագրական խօսքի գործիչներին, որոնց աջակցութիւնը ամենալաւ դէնքն է համարուած ցանկալի նպատակին համելու համար: Ներկայացնելով ժողովի հաւանութեանը մի շարք միջոցներ վերոյիշեալ առարկաների վերաբերմամբ, յանձնաժողովը իր պարտաւորութիւնը համարեց յայտնել կօնդրէսի անդամներին, որ ներկայ լուսպէն արդէն երկու հաղարից աւելի անձինք, թէ Բէլզիայում և թէ Եւրոպական ուրիշ երկիրներում, անպայման համաձայնութիւն են յայտնել աշխատելու հայկական հարցի շուտափոյթ լուծման համար: Այդ անձինք զլխաւորապէս պատկանում են համալսարանական դասակարգին. Գրանսխական և գերմանական բոլոր յայտնի համալսարանները արդէն պարտաւորութիւն են յանձն առել կենտրօնացնել իրանց շուրջը մասնաւոր ձգտումները, աւելի կանոնաւոր աշխատանքի համար ի նպաստ հայերի: Այդ համալսարանական կենտրօնները ակնյայտնի առաջուցանում են, որ յարուցուած հարցը՝ թիւրքաց հայերին վարչական տեղական հիմնարկութիւններ տալու մասին՝ որոնք մատնացոյց են արուած Բերլինի Եւրոպական գողուածում, չունի ոչ քաղաքական, ոչ կանոնական, ոչ կրօնական, ոչ էլեկտրոնական առողջութեան և հաւանութեանը ներկայացրեց յանձնաժողովի մշակած հետեւեալ որոշումները. ա) Հիմնել ժամանակաւոր միջազգային մասնաժողով, որը կը զբաղուի թէ Եւրոպայի զանազան երկիրներում արդէն գոյութիւն ունեցող հայասիրական մասնաժողովների գործունէութեան միացման գործով և թէ նոր մասնաժողովներ ընտրելով այն երկիրներում, ուր այդպիսիք չը կան: Այդ որոշման առիթով կօնդրէսի անդամների մէջ ծագեց կարծիքների տաք փոխանակութիւն: Կօնդրէսի նախագահը անհրաժեշտ համարեց այդ առիթով բացատրութիւններ տալ և ծանօթացնել ժողովը յանձնաժողովի աշխատանքների հետ: Նախագահի բացատրութեան համաձայն, վերոյիշեալ որոշումը բացառապէս նպատակ ունի միացնել մասնաժողովների գործունէութիւնը խաղաղ պրօպագանդայի միջոցով ի նպաստ հայերի, բայ առաջ պէս մարդ գասիր ական հոգի վրայ: Այդպիսի մասնաժողովներ կը հիմնուեն ֆրանսիայում, Բէզզիայում, Աւստրիայում, Իտալիայում և Դամիայում: Հօլմանդիայում ու Շվեյցարիայում արդէն կազմուած մասնաժողովների հետ միասին կը զբաղուեն թիւրքաց հայերի պաշտպանութեան համար պրօպագանդայով: Այդ բացատրութիւննե-

րը հաւանութիւն զտան, և կօնդրէսը միաձայն ընդունեց յանձնաժողովի առաջին որոշումը. բ) Յանձնաժողովի առաջարկած երկրորդ որոշումը հետեւեալն էր. «Ի նկատի ունենալով, որ Բերլինի գանձագրի 61-րդ յօդուածը պարտաւորեցնում է թիւրքաց կառավարութեանը բէֆօրմներ մտցնել թիւրքաց Հայաստանում և, ուշագրութեան առնելով, որ նոյն գանձագրի այդ նոյն յօդուածով եւրոպական պետութիւնները պարտաւորում են հսկողութիւն ունենալ, որպէս զի այդ բէֆօրմները իրապէս մտցնուեն Հայաստանում, կօնդրէսը յանձնարարում է հայկական հարցին վերաբերեալ ժամանակաւոր միջազգային մասնաժողովին՝ գիմել Եւրոպայի հասարակական կարծիքին և խնդրել բոլոր եւրոպական կառավարութիւններին և ազգերին՝ պաշտպանել թշուառ հայերին թիւրքիայում»: Այդ որոշման առիթով, ֆրանսիական պարլամենտի անդամներ պ. պ. Ժօրէս և Պրեսսանսէ փառաւոր ճառեր արտասանեցին, որոնք ընդունուեցին ամբողջ ժողովի երկար և անընդհատ ծափահարութիւններով: Այդ ճառերից միտս պահեցի հետեւեալ հետաքրքիր տեղեկութիւնները. ֆրանսիական կառավարութիւնը, երկար տատանումներից յետոյ, վճռեց, վերջապէս դուրս գալ իր չէզաք գրութիւնից, և նրա վերաբերմունքի այդ փոփոխութիւնը գէպի հայկական հարցը տեղի ունեցաւ մի կողմից Ռուսաստանի պնդումների պատճառով, իսկ միւս կողմից՝ ֆրանսիական պարլամենտի անդամներից շատերի միջնորդութեան պատճառով: Որոնք պատկանում էին Ֆրանսիայի բոլոր քաղաքական կուսակցութիւններին: Այդպիսով ֆրանս-ռուսական գանձակցութիւնը պատրաստում է իրական պտուղներ բերել ի նպաստ ճնշուած ազգերի առհասարակ, իսկ հայերին յատկապէս: Ֆրանս-ռուսական գանձակցութեան այդպիսի մարդասիրական ուղղութիւնը կազմում է մարդասիրութեան մի գեղեցիկ արտայայտութիւն, և համեմատած ուրիշ երկիրների եսաւ Եւրոպայում, մսնաւանդ գերմանական կառավարութեան աշկարայ բարեկամութեան հետ գէպի թիւրքաց իշխանութիւնները—գանձակցութեան այդպիսի ուղղութիւնը առիթ է տալիս նախորդութեալ, որ, վերջապէս, սահման կը զրուի թիւրքական կամայականութեանը Հայաստանում: Արդէն այն գիտակցութիւնը, որ Ռուսաստանը և Ֆրանսիան գիտաւորութիւն ունեն՝ փոխարինել իրանց նախորդութեալ օբեկտիվ վերաբերմունքը գէպի հայերի զրութիւնը աւելի բացիօնալ գիտաւորութիւններով, լաւաղոյն յոյսերով է լցնում հայասէրների սրտերը գէպի հայերի ապագան: Ակիզը զնելու համար՝ ֆրանսիական կառավարութիւնը վճռեց Հայաստան ուղարկել տասն և մէկ

գիպլօմատիական գործականեր, որոնց պարտաւորութիւնը կը լինի հետեւել այն բոլորին, ինչ որ տեղի է ունենում այնտեղ, և հաղորդել կմնարօնական կառավարութեանը Պարիզում իրանց անձնական դիտութիւնները, նոյնպէս և ցուցմունքներ այն միջոցների վերաբերմամբ, որոնք անհրաժեշտ են հայ տղաբը- նակութեան կեանքը և զոյքը լիակատար կերպով պաշտպա- նելու և ապահովելու համար։ Ֆրանսիական կառավարութեան արտաքին քաղաքականութեան մէջ երեւցած այդ նոր ուղղու- թեամբ հայասէրները առ այժմ պէտք է գոն լինեն, որովհետեւ ներկայ բոլէում բոլոր նրանց հոգսները, բոլոր նրանց աշխա- տանքները միայն մի նպատակ ունեն այն է պաշտպանել հա- յերին խմբական կոտորածից եւ որովհետեւ Ռուսաստանը նոյնպէս որոշեց մեծացնել իր հիւպատոսական գործականների թիւը Հայաստանում, ուրեմն պէտք է յուսալ, որ ոռուսաց և ֆրանսիական գործականների պաշտպանութեան տակ՝ այնտեղ կը տիրեն խաղաղութիւն և անգորրութիւն, որոնք անհրաժեշտ են հայ ժողովրդի խաղաղ գոյութեան համար։ Մի քանի վիճա- բանութիւններից յետոյ կօնզրէսը փոփոխեց յանձնաժողովի այդ երկրորդ որոշումը և միաձայն հաւանութեամբ բնդունեց։ Բայց դրանից կօնզրէսը միաձայն բնդունեց և հետեւեալ որոշումնե- րը։ — գ) Կօնզրէսը գոհութեամբ առնում է ի տեղեկութիւն այն հաղորդագրութիւնը, որ Ռուսաստանը և Ֆրանսիան որո- շել են մեծացնել իրանց դիպլօմատիական և հիւպատոսական գործականների թիւը Հայաստանում և հրատիրում է կօնզրէսի այն անդամներին, որոնք պատգամաւորներ են եւրոպական ու- րիշ երկիրների պարլամենտներում, միջնորդութիւններ յարու- ցանել իրանց կառավարութիւնների առաջ՝ ձեռք առնելու նոյնպիսի միջոցներ, որպիսք ձեռնարկել են Ռուսաստանը և Ֆրանսիան։ — գ) Կօնզրէսը խնդրում է եւրոպական ամբողջ պար- բերական մամուլին, ի նկատի ունենալով ժողովի մարդասիրա- կան նպատակները, տպել կօնզրէսի թէ ներկայ որոշումները, և թէ այն բոլոր հաղորդագրութիւնները, որոնք կուղարկուեն հայկական հարցին վերաբերեալ միջազգային մամնաժողովի կողմից։ Այդ որոշման առիթով շատ հետաքրքիր վիճաբանու- թիւններ սկսուեցին Պարիզի ժուլդալիստների և բէլզիական պատգամաւորների միջեւ։ Բանից երեւաց, որ Պարիզի լրա- գիրների տէրերից շատերը անպայման հրաժարում էին տանը որ և է բան ի նպաստ հայերի, հայկական հարցը լուսնեան էին տալիս ամենքը միստեմատիկ կերպով և, շատ կարելի է Պա- րիզի մամուլի յայտնի ժամանակ այդ շահասիրական ուղղութիւնը մինչեւ անգամ հնարաւորութիւն տուեց թիւքքաց իշխանու-

թիւններին կատարել 1894 և 1896 թուերի գազանութիւնները անպաշտպան հայերի գէմ... Տիկին Սեվերին կծու և արհամարհական խօսքերով նկարագրեց այդ մամուլի յատկութիւնները: Տիկին-հռետորի խօսքերը պարզնւատրուեցին ժողովի երկար և անընդհատ ծափահարութիւններով: Կօնզրէսին չը գիտեմ ինչու համար ներկայ գտնուող „Եսսարաբեզ“ լրագրի թղթակիցը passa ու տասնակառ ժամանակակիցը առողջութիւնը կազմում է հայասէրների պարբերական ժողովներ հրատիրել և հիմնել Բրիւսէլում կենտրոնական միջազգային յանձնաժողով հայոց հարցին վերաբերեալ, մի և նոյն ժամանակ մասնաժողովի գործերի վարչութիւնը դրուեց արքիյարի, Պարիդի «Pro Armenia» լրագրի գլխաւոր խմբագրի վրայ, այնպէս որ այդ շաբաթաթերթի հրատարակութիւնը նոյնպէս կը փոխադրուի Բրիւսէլ: Վերջը կօնզրէսը ընտրեց ժամանակաւոր կօմիտէտների անդամներ Եւրոպայի դանազան երկիրներում: Բ է լ գ ի ա. արդարադատութեան նախկին մինստր Լևէն և սևանատօրներ Լաֆօնտէն և Ռւզո-դէ-Լէնէ: Դ ա ն ի ա—տիկին Գէննինդս, ար. պ. Հագէ և Բէնէդիկէտն:— Տիկին Գէննինդս, գոնիւական կօմիտէտի զլիսաւոր աշխատողներից մէկը, կօնզրէսի փոխ-նախագահուհի ընտրուեց: Գ ե ր-մ ա ն ի ա—Լիւդվիկ Փօն-Բար, Ֆէրստէր, Բէրէլ և Բէրնշտէյն: Ա ն գ լ ի ա.—կանօնիկոս Սկօսոս Օլլէնդ, Ռոդմունդ, Հաքրի Նօրդման, Մալմոլմ Մակ-Լոլ, Բէրնս, Կէր Հարրի, Զէմս Բրայս, Պէրսի Բունատինդ Ստեփինսոն:—Հ օ լ լան դ ի ա. Տրէլստրէ, Լաֆտինդ, Դէվալ Մալէֆիտ, Ֆօնտէր-Ֆլուգտ, կանօնիկոս Շէպման: Ի տ ա լ ի ա — Էնրիկօ Ֆէրրի, Մօնէտտա: Շ վ է յ ս ա-ր ի ա—Լարդի, Դէկուսափուս: Ա ւ ս տ ր ի ա—Բարօնուհի Փօն-Սուանէր: Եւ ապա տեղի ունեցաւ կօնզրէսի փակումը»:

Մենք տեսանք թէ ինչ վոփոխութիւններ է առաջ նկել Գերմանիայի սոցիալ-դէմոկրատների հայեացքների մէջ թիւրքահայերի վիճակի նկատմամբ: Ահա և մի ուրիշ կոչ, որի մասին տպուած է „Ը. Պետ. Ենդ.“ լրագրում, որից երեսում է թէ նաև թիւրքիայի բարեկամ Գերմանիան, գոնէ նրա մի մասը, գիտէ սուտը ճշմարտութիւնից ջոկել: Թիւրքիայի բարեկամները Գերմանիայում, ի նկատի ունենալով Բրիւսէլի հայասէրների կօնզրէսի բացումը, հրատարակել են հետևեալ կոչը, որի տակ ստորագրել են շատ յայտնի անձինք: «Քրիստոնեայ հայերի անխիղճ ջնջումը,—ասուում է այդ կոչի մէջ,—անընդհատ շարունակում է: Փորձը ցոյց

*) Այսինքն՝ „մի քանի անախորժ բոպէներ անցկացրեց“:

է տուել, որ Թիւրքիան միշտ զիջող է գտնուել այն դէպ-քերում, երբ եւրոպական պետութիւնները եռանդով և միա-համուռ ջանքեր են գործ դրել ազդելու նրա վրայ: Ստիպել եւրոպային յայտնել այս կերպով իր կամքը—ահա այս է Բրիւս-սէլի կօնդրէսի նպատակը: Մենք յայտնում ենք մեր սրտագին համակրանքը հայ տանջուռղ ազդաբնակութեան վիճակի վերաբերմամբ և դիմում ենք մեր հայրենակիցներին, և առանձնա-պէս մամուլին՝ խնդրելով աջակցութիւն յոյց տալ Բրիւսէլի կօնդրէսի ձգտումներին և հայերի բողոքին ամեն տեսակ բըռ-թիւնների դէմ»:

Սակայն այս բոլորը դեռ ևս աւելի պլատօնական, քան գործնական նշանակութիւն ունի. թէս անտարակոյս է այդ բուռն հասարակական բողոքի ազդեցութիւնը նաև եւրոպական դիպլոմատների վրայ: Դրան ապացոյց այն որ, ինչպէս հաղոր-դում է «Petite République» լրագիրը, արտաքին գործերի մի-նիստր Դէլկասէ, համաձայն իր խոստաման, որ տուել էր մի քա-նի պատղամաւորներին, ուղարկեց Մուշ քրանսիական հիւպատոսարանի պաշտօնեային՝ տեղի վրայ քննելու համար քիւրդերի և հայերի միջն այնտեղ ծագած ընդհարումները: «Երա Արմենիա» լրագիրը հաղորդում է նոյնպէս, որ Դէլ-կասէ վճռեց մնացյնել քրանսիական հիւպատոսութիւնների պաշտօնեաների կօնտինգէնտը Փոքր-Ասիայում, մանաւանդ Մեծ և Փոքր Հայաստանում».

Ֆրանսիայի օրինակին հետեւեցին և կը հետեւեն անշուշտ միւս մնձ պետութիւնները: Այդպիսով մի աղօտ լոյս է սկսում երեւալ թիւրքահայերի մուայլ հորիզոնի մի անկիւնից...

Պօլսից հեռագրում հն. Հայոց պատրիարք Օրմաննեանը հրաժարական տուեց, որովհետև Բ. Դուռը անհետեանք թողեց նրա բողոքը հայերի ճնշման դէմ և միջոցներ չառաւ, մինչդեռ շատերը հայերից սարսափելի ճնշումների պատճառով ստիպուած են կրօնափոխ լինել:

I. U.

27 յուլիսի.

Պ Օ Լ Ս Ի Թ Ե Բ Թ Ե Բ Ի Ծ

Սայ Ժառանգաւորաց վարժարանը ասկէ առաջ երրէք այն-չափ ամուլ եղած է որչափ որ է հրմայ: Քանի մը զարգաց-եալ և քիչ շատ հմուտ եկեղեցականներ՝ որոնք հոն ուսած են, և որոնք այլ և այլ պաշտօններով հոս հոն կը գտնուին, ինքնին

մէյմէկ ապացոյց են թէ այդ հաստատութիւնը ունեցած է իր փայլուն ատենները։ Ատիկա աւկայն անցեալն է, և երբ մարդ ներկան աշքի առջն բերէ, ցաւով պիտի ստիպուի հաստատել սա պարագան թէ այսօր այդ երբեմնի փայլին յետին մէկ նշոյն խսկ չէ մնացած վարժարանին վրայ, թէ հին արդիւնքին մէկ պղտիկ, աննշան մասին խսկ չի գար արդարացնել անոր գոյութիւնը։

Կաթողիկոսական վերջին ընտրութեան առթիւ մասնաւորաբար չեշտուեցաւ այս պարագան, և շատեր այն ատեն գրեցին թէ Սսոյ աֆոսին վրայ բազմող կաթողիկոսին զլիաւոր պարտականութիւններէն մէկն ալ պէտք է ըլլայ նաև Ժառանգաւորաց վարժարանին կազմակերպումը։ Արմաշի Դուռեւ վանքին օրինակը մէջտեղն է, և ամէն մարդ գիտէ որ եթէ երբեք չկրցաւ վարչական ամէն կարողութիւններով օժտել իր շրջանաւարտները, — բան մը որ արդէն մաս չէր կազմեր իր ծրագրին, — գոնէ յաջողեցաւ ըստ ամենայնի հմուտ, լուսամիտ և զարգացեալ եկեղեցականներով օժտել կղերը։ Ճիշտ այդօրինակ արդիւնք մը կը սպասուէր նաև Սսոյ Ժառանգաւորաց վարժարանէն, եթէ երբէք շարունակուէին այն ջանքերը՝ որոնցմով երբեմն բաւական նշանակելի դիրք մը յաջողած էին տալ անոր։ Հոս ալ յարատեութեան ոգիին պակասն է որ կը յայտնուի, միշտ իր անփոխնելի արդիւնքովը։ Ժառանգաւորացը այսօր պարզ որբանոցի պէս բան մը դարձած է, կը թական ողորմելի ու գերազանցագէս սահմանափակ ծրագրով մը, որ կրկին պէտք եղածին պէս չի գործադրուիր ուսուցչական կարող խումբի մի չգոյութեան պատճառաւ։ Այս պայմաններուն մէջ ալ ի՞նչ տեղի կը մնայ զարմանալու որ ամէն մարդ պաղ անտարբերութիւն մը միայն ցոյց կուտայ այդ կրթուկան — եկեղեցական հաստատութեան նկատմամբ։

Բայց կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան Պատրիարքական պատուիրակ կէօմրիւքնեան Մովսէս եպիսկոպոսի պաշտօնը հաստատող գիրէն, Դատաւկան նախարարութեան կողմէ Պատրիարքարանի զրկուեցան զանազան գործերու համար պատրաստուած մէկ քանի թաղրիրներ։ Պատրիարքարանը հեռագիր մը ուղղելով Պիլէճիկի առաջնորդզարանը, պիտի յանձնարէ Առաջնորդ Տ. Մովսէս եպիսկոպոսի որպէս զի անմիջապէս Պոլիս գայ, հարկ եղած հրահանգները ստանալով Ատանա մեկնելու համար։

Մովսէս եպիսկոպոսը յուլիսի 5-ին հասել է Պօլիս։

† ԱՐՄԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՏԼՆԵԱՆ

Յուլիսի 8-ին, գիշերը, վախճանուեց Վիէննայի Միսիթարեանների արքահայր, հոչակաւոր հայ գիտնական Արսէն արքեպիսկոպոս Այտընեանը, մօտ եօթանասուն և ութ ամեայ տարիքում։ Իբրեւ տաղանդաւոր գիտնական, իբրեւ բարի մարդ և պատկառանք ազգող հոգեւորական՝ հանգուցեալը առանձին յարգանք էր վայելում թէ եւրոպական գիտութեան ներկայացուցիչների և թէ բարձրաստիճան անձերի շրջանում։ ալեզարդ Ֆրանց-Յովաչֆ կայսրը, Հովոմի պապը, Աւստրիայի առաջին մինիստր Կեօրքէրը, Վիէննայի քաղաքագլուխ Լիւկէրը և այլ նշանաւոր մարդիկ առանձին համակրանք և յարգանք էին ցոյց տալիս հայր Այտընեանին, ուստի նրա մահուան բօթը լսելով՝ շտապեցին խոր ցաւակցութիւն յայտնել։ Խոկ հայ ազգը վազուց ի վեր սովոր է ըստ արժանւոյն պարծանքով յիշել Արսէն Այտընեանի սիրելի անունը։

Հայր Այտընեանի ամենաազլիւաւոր գործը, որ անմահացրեց նրա անունը, անշուշտ, նրա հոչակաւոր հետազօտութիւնն է, «Ա. ր դ ի հ ա յ ե ր է ն ի» ծագման, էութեան, պատմութեան ու ներկայ վիճակի մասին։ 1866 թուականին լոյս տեսած նրա այդ քիննական քերականութիւնը մի յեղափոխիչ նորութիւնն էր հայ լեզուի գիտութեան համար։ Աւելի քան 800 մանրատառ էջերում Այտընեանը, եւրոպական գիտութեան մեթոդով և լեզուաբանական խոր փիլիսոփայական հայեացքով զինուած, հետազօտում էր մի հարց, որի մասին այդ ժամանակ մեր գրականութեան մէջ սաստիկ բանակով կար, բայց երկու վիճող կողմերն էլ հեռու էին խոր գիտական տեսակէտներից։ Այտընեանը առաջինն էր, որ մտցնում էր հայ լեզուազիտութեան մէջ գիտական—էվոլիցիօնական մեթօդ և հետազօտողի քննա-

կան ոգի։ Եւ այդ յեղափոխութիւնը կատարւում էր մի վանքում, մի վարդապետի՝ ձեռքով և այնպիսի ժամանակ, երբ Միթթարեան միաբանութեան անդրանիկ հատուածը, Վենետիկի միթթարեանները, գեռ միամտօրէն հաւատում էին որ Աղամին ու Եւան դրախտի մէջ գրաբար էին խօսում... Այդ քննական ոգին, հետազօտելու գիտական մեթոդը Այտղնեանի չնորհիւ գառաւ յետոյ Վիէննայի միսիթթարեանների բնորոշ գիծը, որով նրանք տարբերուում էին Վենետիկի հայ գիտնականների միամիտրանաստեղծական և հինը իդէալականացնող ուղղութիւնից։

Հայութեան այդ մեծ կորուստի առիթով մեր խմբագրութիւնը հեռագրով յայտնեց իր խոր ցաւակցութիւնը Վիէննայի միաբանութեան։

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գուրան, Բ. տարի, թիւ 9: Մեր հողագործ դասը ոչ միայն թիւրքիացում և Պարսկաստանում, այլև Կովկասում, տարարազդաբար, անշափ տղէտ է ու անընթերցասէր և պահանջ չի զգում ունենալ՝ իր աշխատանքը դիւրացնող մի մասնագիտական թերթ։ Խնչուիս երևում է „Գութանի“ այս համարի ծանուցումներից, նրա բաժանորդների թիւը բաւական սահմանափակէ և, բացի այդ, եղածներն ել չեն փայլում իրենց պարտաճանաշութեամբ, ստիպելով յաճախակի յիշեցնել ապառիկների մասին... Զը նայած „ՀԱՅԱՎԱՏՈՂ ԳԺՈՎԱՐԱՎԹԵԱՆՑ“ պ. Գ. Մեծատորեանը չի լուսահասում. «Քետն անցնողը առուին մէջ չի խելտուի—քաջակերում է ինքնիան ՝ “Գութանի” հիմնադիր—տնօրէնը։ Հայկական կեանքի 40—50 տարուայ մօտիկ անցեալը ցոյց է տալիս որ յաճախ ջախջախիչ է, հասարակական ձեռնարկութիւնների բարատիւթեան տեսակէտից, հայի քատմնելի անտարբերութիւնը և հասարակական օգտի անդիտութիւնը։ Խնչուշտ չը պէտք է լուսահասուել, բայց մի և նոյն ժամանակ ցոյց դնել միայն անհատական զոհարերութիւնների վրայ նշանակում է հրաշքներ սպասելու նշ, պէտք է ամեն կերպ աշխատել որ զարթնի մասսալի մէջ հետաքրքրութիւն դէպի տպագրական խօսքը, ցոյց տալ որ, օրինակ, „Գութանից“ մեր

հողագործը, զիւղացին, կարող է օգուտ ստանալ, բարուտքելով թերթի խորհուրդների համաձայն իր նահապետական, ողորմելի տնտեսութիւնը։ Խսկ դրա համար պէտք է „Գութանը“ մօտ կանգնի մեր իրականութեան, կապ պահպանի մեր երկրագործ զասակարգի կեանքի հետո Մեղ թւում է որ, օրինակ, վատ չէր լինի այդ նպատակով, «Գութանում աւելացնել գիւղ աւ գատ ն տ ե ս ա կ ա ն ք ր ո ն ի կ և մի բաժին, որի մէջ խմբագրութիւնը պատախաններ տար բաժանորդների կողմից արուած զիւղատնտեսական օգնութիւն ստանալ մասնագէտներից։ Այդ երկու բաժինների ներմուծումով, կարծում ենք, աւելի կենդանի ու սերտ կազ կը ստեղծուէր „Գութանի“ և մեր երկրագործ դասի մէջ։ Դրանով հանգէսն աւելի մեծ ժողովրդականութիւնն կը ստանար նրա լարատեսութիւնը։ Բաւական է որ իւրաքանչիւր հայկական զիւղ նոյն խսկ մի մի բաժանորդ տար այդ թերթին։ Սակայն չպէտք է մօռանալ և մի բան. ինչպէտ ասել էինք մի անգամ (1901, № 3), որպէտ զի «Գութանը» մատ-

Նելի լինի մասսային՝ պէտք է նրա բաժանորդագինը պակասեցնել. իսկապէս, դժուար է սպասել որ 10—12 լտարիկ աետրակների համար (10—16 երես խրաքանչիւրում) 6 ոռորի վճարի մեր զիւղացին, իր թշուառ բիւթէից: Ի հարկէ հաւաքական ոյժով կարող էր ամեն մի զիւղական համայնք բաժանորդ գրուել, կարող են զտնուել նոփրատուններ և այլն, բաց հէնց ալժմ յուր զնել, այդ բաների վրայ նշանակում է խարուել. ուրեմն, մատչելի, հետաքրքրական, ժողովրդական զարձնել հանդէսը—ահա միակ իրական միջոցը:

„Գոթանից“ այս համարի բովանդակութիւնը հետևեալն է. —Երութեագիտական կրթութիւն. —Ճահճներու կազմութիւն դիւրացնող և յառաջ բերող զիխաւոր պատճառները. —Երամի հիմնդութիւնները. —Թիստուելիք ծուերը. —Ծխախոտի մշակութիւնը:

Գեղարվեի, պատկերազարդ հայթերթ։ Ա. տարի № 4, 5, 6, յունիս։ Անցեալ զեկումբքերի 1-ից Վենետիկի միթիթարեանները, իրրկ նաև մաշտակագիւ յաւելուած *) երկու ամիսը մէկ անգամ հրատարակում են այս շինուած պատկերազարդ հանդէսը, „որի մաքուր հասոյթի կէսը՝ առանց կրօնքի խորութեան պիտի յատկացուի ազդիս որբիկներուն։ Գեղունիի արուաքինը իր գեղեցկութեամբ լիշեցնում է եւրապական պատկերազարդ ամենաշնորհի հրատարակութիւնները։ Սակայն բովանդակութեան մէջ այնքան էլ ընտրութիւն և սիստեմ չի նկատում։ Այս համարում ուշագրաւ է

*) „Բազմավէլքի“ բաժնեառողջների համար գեղաւունի տարեկան բաժնեառողջների 3 ֆր.

Հրապետի Հայոց արդի գրականութիւնը՝ օրի մէջ բնորոշ ու խոշոր գծերով ուրուազգուած է Թիւրքիայի հայոց արդի գրականութեան ծաղման և զիխաւոր արտայալտութիւնների պատկերը, աւելի մանրամասն կանգ առնելով 1850—1880 շրջանի գործիչների վրայ—Աւելի մակերսութեային է ուստահայոց գրականութեան մասին արած դիտողութիւնը (օրինակ, հրապտրակագութեան մասին), սակայն ընդարձակ տեսութիւն ուստահայոց արդի մատենագրութեան վրայ յօդուածագիրը թողնում է աւելի պատճե զէպքի:

Մեզ թւում է որ վաստ չէր լինի
եթէ, “Գեղունին” տար և ընթացիկ
ժամանակակից համաշխարհային
կեանքի քաղաքական, հասարակա-
կան, դրական և գիտական երևոյթ-
ներից և անցքերից իլլիտարասիօ-
ներով զարդարած համառօտ տե-
սութիւններ, ինչպէս այդ անում են
երրոպական պատկերազարդ թեր-
թերը։ Դրանով կը լրանար մեր
պարբերական հրատարակութիւն-
ների այն ահագին բաց տեղը, որ
զանազան հին ու մին կիլչեներով
թուղթ մրտուղ մեր հրատարակիչ-
ներից ումառք իդուր են ջանում
լքցնել։ Գեղունին ցոյց տուեց որ
նա կարող է փառաւոր կերպով
լրացնն ալդ պակասու

ԱՆԱՀԻՔԻ, մայիս: «Արդի հայեց
բէնը՝ լոգուածի մէջ նորից և նո-
րից արձարծում է աշխարհաբարի
զարգացման, կանոնաւորութեան
մասին։ Վերջին ժամանակներս
այդ հարցը շատ է խօսեցնել տուել
իր մասին մեր մամուլի մէջ։ Պ.
Զավանեանի տեսութիւններին մենք
չենք հետեւի, մանաւանդ որ նա
զիսաւորապէս խօսում է արեւ-
մըտեան հայերէնի մեւերի և կանոն-
ների մասին։ Մենք միայն կը վեր-
դինենք նրա մի քանի զատողու-

թիւնները սուսահայերի մասին, ցոյց տալու համար թէ ինչպէս են մեզ ճանաչում թիւրքահայերը։ Պ. Զօպանեան շատ դրական կերպով հաւատացնում է որ մենք, սուսահայերս, գործ ենք ածում ևսիփիողիա, պետադիմիա, տեմպերատուր, կրիտիկա, պէտիա։ Ներջին երկու բառերը, այո՛, մեզանում գործածական են, բայց հետաքրքրական կը լինէր իմանալ թէ ո՞րտեղ է պ. Զօպանեանը տեսել որ առհասարակ առսահայը գործ ածէր ևսիփիօղիա, պետագոխիա, տեմպերատուր բառերը, քանի որ մենք վաղուց անփոխու գործ ենք ածում դրանց համանիշ հայերէն բառերը — հոգեբանութիւն, մանկավարժութիւն, բարեխառնութիւն։ Առաջին անգամն ենք տեսնում որ լուրջ ուսումնասիրութեան չաւակնութիւն ունեցող մի յօդուածում փաստերը ստեղծաէին երեւակալութեամբ։

Ցանկալի չէր միթէ որ սուսահայերի մասին խօսողը զո՞նէ քիչ ծանօթ լինէր նրանց զործերին։ Պ. Զօպանեան ասում է թէ Ս. Նազարեանցը կազմել է սուսահայերի աշխարհաբարը Թիֆլիսի բարբառի վրայ, մինչդեռ ամեն մէկին յայտնի է որ մեր լեզուի հիմքը արարատեան բարբառն է և ոչ թէ Թիֆլիսինը Դուցէ պ. Զօպանեանի համար Թիֆլիսն էլ Արարատ է, բայց այսպիսի բան մտածելուց առաջ նա պիտի փոքր ինչ տեղեկանար, դոնէ հարց ու փորձ անէր, և այն ժամանակ կ'իմանար, որ Թիֆլիսի բարբառի և արարատեան բարբառի մէջ առնուազն զանազանութիւն շատ կայ։

Խօսելով ներկայ աշխարհաբարի երկու բաժանումների մասին (արեւմտեան և արեւելեան), պ. Զօպանեան արձակում է հնտեւեալ վճիռը։ Ծթէ կայ արեւելեան աշխարհաբար, ևսուր պատասխանա-

տուն է, քիչ մը, Ս. Նազարեանցը, այն միջոցին ուր արեւելեան հայերէնը հիմնեց, արեւմտեան հայերէնը՝ թէպէտ ոչ բոլորովին կազմուած արդէն ունէր սակայն ամբողջ դրականութիւն մը, և ուսանաց գորդութիւնը լեզուվ մը որ շատ մօտ էր արեւմտեան հայոց լեզուին։ Եթէ Նազարեանց արեւմտեան հայերէնն ընդգրկած ըլլար՝ յարգելով անոր անդրանիութիւնը՝ այժմ միակ գըրական լեզու մը կանենային հայերը. բայց Նազարեանց կուգէր գրաբարախառն հայերէնին դէմ պայքարելու։

Այս պարբերութեան մէջ մի հաստ ողիղ բառ չը կայ։ Կայ նախ և առաջ Նազարեանցը արեւելեան լեզուի „հիմնող“ չէր և չէր էլ կարող լինել. անհատը լեզու հիմնող չէ, միայն ժողովուրդը կարող է արդպիսի բան անել։ Նազարեանցից առաջ աշխարհաբարը գրողներ ունեցել ենք. ահա „Պէրք Հայաստանին«, ահա աշխարհաբար աւետարանը, «Արարատ» շաբաթաթերթը. դրանցից ո՞րն է ցոյց տալիս թէ շատերը ոկը գրէին լեզուվ մը որ շատ մօտ էր արեւմտեան հայոց լեզուին։ Խլդակիսի բան չէր կարող լինել, քանի որ արեւելեան հայերի ժողովրդական, խօսակրական լեզուն ունի այն առանձնայատկութիւնները, որոնք զանազանում են մեր այժմեան դրական լեզուն արեւմտեանց։ Այս տարբերութիւնը արհնաստական չէ, Նազարեանցի կամ մի ուրիշի ստեղծածը չէ, այլ բուն ժողովը դրական լեզուի յասկութիւններից է բղխում։ Նազարեանցը պայքարում էր, ճիշտ է. բայց ոչ «գրաբարախառն հայերէնի դէմ», ինչպէս կարծում է պ. Զօպանեանը, այլ իսկական, զուտ գրաբարի դէմ. ինքը Նազարեանցը հէնց գրաբարախառն աշխարհաբարի կողմա-

կից էր. բաւական է հենց մի երես կարդալ նրա գրուածքներից, ալև բանը հասկանալու համար ու այսպիս, նազարեանցը ոչինչ պատասխանաւութիւն չունի. լեզու բաժանողը նա չէ եղել, նա միայն տեսաւ որ լեզուն վաղուց բաժանել է ինքը ժողովուրդը և ընդունեց այդ պատմական եղելութիւնը, լաւ իմանալով որ երկու լեզուից, երկու ծաղկից, ինչպէս ինքն էր առում, վնաս ըը կայ և պէտք է թոյլ տալ որ ժամանքը կարգադրէ այդ հարցը - նադարեանցը մինչև իսկ ուզում էր թիւրքանաւոց լեզուի մի քանի ձեւերը փոխառնել, բայց այդ չաջողուեց նըրան, ինչպէս չաջողուեց նաև Սուփանէին, որ մի քանի բան մտցրել էր իր «Հայկական Աշխարհի» մէջ, բայց միայն ինքն էր գործ ածում:

Պ. Զօպանեան առաջարկում է որ ոռոսհայերը և թիւրքահայերը իրարից փոխ առնեն իրանց լեզուական հարատութիւնները: Դա լաւ միտք է. և ոռոսհայերը, պէտք է խոստովանել, անում են այդ բանը, ընդունում են թիւրքահայերից բառեր, ոճեր և նույն թիւրքահայերը: Ահա ինքը Զօպանեանը խօսում է տառապարձութեան մասին: Նա խոստովանում է որ մեր ընդունած տառապարձութիւնը աւելի ճիշտ է, որմնեք տառերի հին հընչումը հարազատօրէն պահել ենք: Մի են նոյն ժամանակ ինքը ալ. Զօպանեանը ոչ միայն գրում է Կամպէթթա, Ճէլմա Պրայս, ալլեւ պահանջում է որ այդպէս էլ գրեն ուրիշ թիւրքահայերը: Ուրիշ պատճառաբանութիւն չը կայ, բացի միայն նրանից, որ եթէ գրափամբէտտա, ինչպէս որ ճիշտ է, թիւրքահայերը կը կարդան «Կամպէճա: Բայց մի՞թէ անկարելի է զրա զէմ մի բան անել: Խոսահայերն էլ 10—20 տարի առաջ ունէին այդպիսի տառապարձութիւն

և հնչումներ. բայց դպրոցները վերացրին այդ պակասութիւնը, վերականգներով տառերի հարազատ և իսկական հնչինները: Թիւրքահայերը նոյն այսպիսի մի ապացուցուած, անվիճնելի ճշմարտութիւնը չն ազում ընկունել ուսահայերից, մի՞թէ նրանք ընդունակ կը լինեն լեզուները և թէ ոչ միացնելու, գոնէ մօտեցնելու համար որ և է զիշողութիւն անել: Լեզուական շօվինիզմը զեռ պօլսեցիների ամենահիւանդու կողմնէ: ապացոյց. Ծափթիի «Նազ-Փուշը», թարգմանուած «Յնահիւի» մէջ թիւրքահայ լեզուով: Աւելի հեռու գնալ անհեթեթութեան մէջ հազիւթէ կարելի լինի և լեզուների միացման մասին այժմ անկարելի էլ է լուրջ կերպով խօսել:

Русская Мысль, Европа: Тюльпанъ №. 90909 տպագրել է մի հետաքըրքական յօդուած սխիօնիզմ և Քրիստոնեաներու վերնագրով: Ցայտնի է որ վերջին տարիներս հրէական ազգի մէջ սկսուել է մի շարժում, որ կոչում է սխիօնիզմ և որի նապատակն է հայրենիք սուեզել աշխարհի չորս կողմերում ցրուած հրէաների համար և մտաւոր ու կոլտուրական մի լեզափոխութիւն առաջացնել ալդ հին ազդի մէջ: Հրէական հայրենիքը, ինչպէս յայտնի է, կայ, դա Պալեստինն է: Հաւաքիլ այգտեղ հրէտութիւնը, հազարաւոր տարիների թափառումներից յետոյ հաստատել այն հոգի վրայ, ուր հազարաւոր տարիներ ապրել էին Աբրահամի որդիները — ահա ինչ է ոգում սխիօնիզմը: Վերջին տարիներս շատ և շատ խօսուեց հրէական ալդ շարժման մասին: արտասահմանում իրաքանչիւր տարի կազմում են սխիօնիաների ժողովներ, ուր քննուում են այդ համահրէական ընկերութեան հարցերը: Ի հարկէ, զլխասոր հարցը ալն է՝

թէ որքան իրագործելի է սիօնիզմը Հաւատում ևն շատերը թէ կարելի է հրէաներին նորից իրանց պատմական հայրենիքը դարձնել Բայց կան և այնպիսիները, որոնք այդ բանին չեն հաւատում, ևն կատարի ունենալով թէ հրէական աղջը ինչ ահազին դեր է կատարում քըրիստոնեաց աշխարհում, սիօնիզմը հետաքրքրական, կարեռ հարց է ոչ միան զուտ հրէական տեսակէտից, այլ և քրիստոնեայ աղջերի շահերի տեսակէտից ևն չպէս են վերաբերում քրիստոնեաները սիօնիզմին:—Այս հարցը վճռելու համար երկու տարի առաջ մի հրէայ գործիչ նամակներով դիմեց երոպական նշանատոր մարդկանց, խնդրելով նրանց յայտնել իրանց կարծիքը: Նոյն այդ մտքին հետեւլով, դօկտօր Գօրդօն դիմել է ոռու զրոյներին, որոնց պատասխաններն էլ այժմ հրատարակել է նա:

Պատասխաներ ուղարկել են պ.պ. Միթսայլօվսկի, Գոլցեվ, Կորուչնկօ, Գօրկի, Միլիկով և ուրիշները: Սկզբոնքով ամենքը համակըրում են հրէական աղջին, բայց գալով սիօնիզմին, մի քանի խնդր գտնում են որ այդ շարժման նպատակը անիրազորելի կամ շատ գժուար իրագործելի է: Ումանք ցոյց են տալիս քաղաքական գժուարութիւնները, օրինակ Թիւրքիայի րէժիմը. ոմանք դրամական գժուարութիւնները: Պ. Գօրդօն պատասխանում է այդ առարկութիւններին, և, ի միջի այլոց, յայտարարում է որ սիօնիստական շարժումը սույնի կողմից ոչինչ արգելքի չի հանդիպի: Մի շատ զգացուած, կարծ նամակ զրել է յայտնի ոսու զրոյ Գօրկի: Մեզ համար հետաքրքրական է պ. Պ. Յոսոմեանցի պատասխանը: Ահա ինչ է զրել երիտասարդ գրողը.

«Զարաբախտ հրէայ ժողովրդի հակատագիրը լիշեցնում է ինչ

ժողովուրդը, որ նոյնակէս ենթարկուած է ամեն տեսակ ճնշումների: Բայց մինչդեռ հայերը թողնում են Թիւրքիայում իրանց դաշտերը, հըրէաների մէջ ծագում է հակառակ ուղղութեամբ ուժեղ շարժում դէպի հայրենի Պալեստինը, որպէս զի լամա և ազնիւ աշխատանքով ծաղկեցնէ նրան: Աջողութեան առհաստչեայ կարող է լինել կօսպերատիվ սկզբունքը, որ դրուած է իրեն հիմք ալդ աշխատութեան: Սիօնիստները հասկացան կօսպերացիայի, մասնաւորապէս երկրագործականի, մեծ նշանակութիւնը և ձեռք առան նրան, իրեն կռուի մի ուժեղ զէնք բնութեան և հասարակական աննըսպաս սպայմանների դէմ: Ես, իրեն հայ, կարող եմ ափսոսալ հայերի կենտրօնախոյս շարժման մասին, իսկ իրեն կօսպերատօր—ուրախանալ որ կօսպերացիան իր ձեռքն է առել ամենախելօք աղջը աշխարհում:

Այս առիթով զօկուոր Գօրդօն ասում է որ որքան էլ ծանր լինի հայերի վիճակը, նրանց պիտի միխթարէ այն միտքը, թէ նրանց համակրում է ամբողջ քրիստոնեաց աշխարհը, որ վաղ թէ ուշ կը լուծէ հայոց հարցը, մինչդեռ հրէաներին ոչ ոք չէ խղճում, նրանց սպաշտանողները չը կան:

Ի վերջոյ չօգուածագիրը հետեւեալ եղանակացութիւններն է անում. «Նյատէս են նայում սիօնիզմի վրայ քրիստոնեայ հասարակութեան առաջաւոր մարդկիը թէ մեղանում է թէ Սրբամուտքում: Նրանց մեծամասնութիւնը, ինչպէս աեսնում ենք, համակրում է նրան, իրեն օրինաւոր բողոքի դէպի հըրէաներն ունեցած անարդար վերաբերմունքի դէմ, և տեսնում է նրա մէջ, ինչպէս և մենք, միակ միջոցը, որով կարելի է դուրս գալ այն ողորմելի և տիսուր դրութիւ-

Նից, որի մէջ զտնում են հրէաները համարեա ամեն տեղ: Բայց բոլոր համակրողները չեն համաձայն մեր տեսութիւններին՝ Սիօնիզմի նպատակի իրագործման հնարաւորութեան մատին: Մի քանիները կասկածում են, ցոյց տալով թէ մեզանից կախուած հանգամանքները և թէ աշնպիսիները, որոնք մեզանից չեն կախուած նայց աշխարհի վրայ ոչինչ մշտական, յափուենական բան չը կայ. որքան էլ կարեւոր և էական լինեն այդ պատճառները, նրանք միայն ժամանակաւոր են, անցողական: Որքա՞ն յանախ մենք կեանքի մէջ համողում ենք, որ այսօր հեշտ կատարելի է այն, ինչ դեռ երէկ բոլորովին անհնարին էր թւում: Կ'անցնեն տարիներ: Սիօնիստական գաղափարը, ինչպէս ուզիդ և արդար,

էութեամբ, աւելի և աւելի կողմանակիցներ կ'ունենայ և կը գայ ժամանակ, երբ ոչ միայն առանձին մարդիկ, բայց և ամբողջ հասարակութիւններ և ազգեր կը հասկանան մեր դրսթեան անբնականութիւնը և կը խռատովանեն որ մի ժամանակ մեղ վերաբերմամբ անարդար են եղեւ: Այն ժամանակը կը լինի ոչ միայն մեր յաղթանակը, այլ և բարի և արդարութեան գաղափարի յաղթանակը Խակ մինչև այդ, ուզանելով այդ լուսասոր ապագային, որ պիտի վերջապէս գայ մեղ համար, մենք կը շարունակենք աշխատնլ մտաւոր և բարուական կատարելագործութեան վրայ և հաստատ ու համողուած կը դիմենք այն նպատակին, որ զծել ենք մեղ համար:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Մուրճ» ամսագրի հրատարակութեան իրաւունքը պ. Կոնստանդին Կրասիլնիկեանը այս յուղիսի ծ-ին ծախեց (16 հազարով) պ.պ. Լ. Սարգսեանին և Աւ. Պօղոսեանին, որոնք արդէն ներկայացրուած են ուր հարկն է իրանց իրաւունքի մէջ հաստատուելու համար:

ՀԵԽՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Հ Ի Ւ 8 Ա Ի

(L r w a q w r w k w h u o u w k w g i l u n f i b r)

ԳԻՆՆ Է ՅՈ ԿՈՊԵԿ

Ծախւում է Թիֆլիսում, «Գուտտենբէրգ» գրավաճառահողում:

۱۰

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեր կեանքը, գրականութիւնը անզեալում

ՀԱՅՆԻ ԵՐԿՐՈՒԹՅՈՒՆ - XVIII մարտ

U n w g h u m w

Գիշե է 1 թ. 50 կ.

Ծախում է Թիֆլիսում, «Մշակի» խմբագրատանը եւ «Գուտենբերգ» գրավանառանցում:

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՒ ԴԱԳՐՈՒԹԻՒՆ

U P S t U P U

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԱՄՍԱՀԱՆԴԵՍ

Օրդան ԽՍ-րդ դարու հայ կանանց

ակուի իր սեփական տպարանին մէջ։ Բաղկացած
32 մեծադիր երկսիւնեակ էջերէ։

Տէր և անօրէն-խմբագիր՝

ՕՐ. ՄԱՆԻ ՊԵՂԵՐԵԱՑ

b q h w t n u h n a m a p

Տարեկան բաժանորդագինն է. զրչ. ողջ . . . 40

Վեցամսեայ 25

Երաւանի համար

Տարեկան Գրանկ 12

„Artémis“, le Caire, Egypte.

«Գուտտենբերգ» գրավաճառանցում վաճառւում են
Ա. Պողոսեանի գումարով հրատարակուած հետեւեալ
գրքերը.

Եօրն ագռաւ.

| | | | |
|---|-------------|--------------|----------|
| Կարեն ու Մանեն կամ | Գատկերազարդ | Փոխազրեց | կ. |
| Քոյր եւ եղբայր. | մանկական | Լուսն Մելիք- | 40-ամյան |
| Պատիկ ու նետիկ. | Հեքիաթներ: | Աղամեան: | |
| Անդարդ Հանեսը. | | | |
| Խօնչ է ասում սենեակը, թարգմ. Զ. Տէր-Գրիգորեան | . | 10 կ. | |
| Եասի արկածները, թարգմ. Պ. Պոչեան | . | 40 » | |
| Պառաւ ծիրը, թարգմ. Միկ. Եղիս. Սարգսեան | . | 3 » | |
| Խղճով դատաստան, թարգմ. Ստ. Մալխասեան | . | 5 » | |
| Արդար ձերունի, թարգմ. Ա. Մխիթարեան | . | 15 » | |
| Մաքսիմկա, | » | 15 » | |
| Խլիանկա, թարգմ. Պ. Հովուեան | . | 10 » | |
| Գումարով առնողներին զիջումն կը լինի: | | | |

Դիմել.—Տիֆլոս, Կոկոշի մագազ. „Գուտտենբերգъ”,
Լորисъ-Մելիկовская, 11. Գ. Գալուստյան. 4—3

ՄԱՅՐԵՆԻ ԽՕՍՔ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԶԵՌՆԱՐԿ

կրսեր դասարանների համար

համառօտ բառգրքով:

Կազմեցին

Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆ եւ Լ. ՍԱՐԳՍԵԱՆ

Գինն է 70 կրտեկ

Դիմել՝ Թիֆլիս, «Կենտրոնական» և «Գուտտենբերգ»
գրավաճառոցները:

«Գուտտենբերգ» եւ «Կենտրոնական» գրավաճառանցներում ծախում են «Մուրճ» ամսագրի հետեւեալ հրատակութիւնները.

Բ. կ.

| | |
|---|--------|
| 1. Լ. Տօլստոյ, «Յարութիւն», վէպ, թարգմ. Տ. Յ. | . 1 50 |
| 2. Ալ. Դոդէ, «Ֆրոմոն», վէպ, թարգմ. Տ. Յ. | . 1 — |
| 3. Լէօ, «Հայկական Տպագրութիւն», II հատոր | . 1 50 |
| 4. Բժապ. Վ. Արծրունի, «Ամուսնութիւն» | . — 75 |
| 5. Վ. Միքարեան, «Լալուարի որսը», պօէմա | . — 40 |
| 6. Պուշկին, «Յաւերժահարսը», թարգմ. Կ. Կրասինիկանի | — 15 |

| | |
|--|-----|
| 15. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Նուպետեան դաշնակցութեան վիրանորոգումը. — Փոխադարձ ապահովագրութեան սիս- տեմը Նըրովայում. — Դաշնակցութիւններ և բարեկամա- կան համաձայնութիւններ. — Անզիայի դաշնակիցնե- րը. — Անզիայի զարուած դերակատարութիւնը Արեւել- եան հարցում. — Նըրովական հասարակական կարծիքի մէջ առաջ եկած փոփոխութիւնը. — Մակեդոնական հար- ցը. — Բրիտանէլում կայացած հայասերների կօնզրէսը. — Օրմաննեան պատ. հրաժարականը 1. Ա. | 234 |
| Պ օ լ ս ի թ ե ր թ ե ր ի ց. Սաի Ժառանգաւորաց դպրոցը. — Կիլիկիայի կաթողիկոսական հարցը | 244 |
| 15. † ԱՐՍԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՏԸՆԵԱՆ | 246 |
| 16. ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ | 248 |
| 17. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ | 254 |
| 18. ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ | 255 |
| 19. ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ «ՕՐԱՄՈՒՏԻՆ», ՎՀԱԿ Ի. Ս. Տուրգենևի. 113—128 | |

ՀԱՐՈՒԵԱԿԻՈՒՄ է 1902 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մահմէ

ԳՐԱԿԱՆ ՀԱՍՏՐԱԿԱՆ ԵՒ ՊՐԵՄԻՆԱՆ

U. S. G. S. 9-17

(Ես ու յիշան, Ի-լոդ տարի)

Խորագութեան անդամներն Ի՞ն պ. Լեհու ՍէրԳԱՆՆ, Ակո
և Ա. Ազարյաննեան

የኢትዮጵያውያንተኩሪ

Թթվապատճենում տարեկան 10 առր. Արտադրություն՝ 12 առր.

կէս տարին 6 " " 7 "

«Մուրճ» ամսագրին կարելի է զբուղ Թիվը՝ խամաց՝ խմբագրասահմանը՝ № 16) և «Գրատպահներու ոռոք գրամականությունը»:

(Ճամբարական փողոց, թ. № 16) և ռուսական երրորդ զույգաձևությունը՝
Քաղաքանի պ. Մ. Տեղ-Գանինի, լեհանի մօտ, Անդրքանիկը լնկ. զործա-

Литературная рецензия на статью: "Редакция журнала 'Мурчъ'".

$\frac{1}{2}$ " " " " " " " 3 " "
 $\frac{1}{4}$ " " " " " " " 2 "

non-specific gene expression in peripheral blood monocytes.

ԽԱՐԱԳՈՎԻ ԿԱՅՈՒՆԵՐ

1. Խմբագրութիւնը լատուկ՝ վեցդրում է լողուածափիրներից՝ զրել պարզ, մանաւանդ թուրք, լատուկ՝ մանուշներն ու օտար լատերը, և թիրթի միամին մի երևսի վրայում:
 2. Զբնդունուած մեծ լողուածները պահուում են Խմբագրաւանը և ամիս, իսկ վորքը լողուածներն ու բանասառի զմբութիւնները չեն վերաբարձրուած և նուազիրը կատ առանալու համար պէտք է ուղարկի ճանապարհուածները:
 3. Գրուածքների վարձարութիւնն չափը որոշուում է Խմբագրութիւնը
 4. Խմբագրութիւնը իրան է վերապահուում աւշտիկուած լողուածները վիտիխալու կամ կրամուելու իրաւունքը:
 5. «Պարգի» համարը չը ստուգուելու դեպքում պէտք է Խմբագրութիւնը ավելինքիթիւն առա մինչեւ խաջորդ համարի լուս տեսնելու Աղ անգեկանիթիւն անհամարեց է կցել անդամական պատուին դրասեննեակի հաւասար դիրը (նցօտօներուել), որ ամասարի համարը չի լանձնուած գանգոսուուորին: